



(1)

28(3)

Ա-74

*Handwritten signature*

# ՀԱՍՈՒՆԵԱՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երեսուն և հինգ ամեայ Պատմութիւն  
Գեր. Հատունեան Անտոն վարդա-  
պետին, սկսեայ 'ի Քաջանայութենէն  
մինչև ~~Գ~~ Պատմութիւնն

~~ԿԻԼԻԿԻՅ՝~~

Ի Յ. ԱՍԿԵՐԵԱՆԷ

1868—ՌՅԺԸ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
Տ Փ Ի Ի Ա

*Handwritten:* A 17012


41

1453

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОМ 16 Октя

~~ЦИСЛ  
БИБЛИОТЕКА  
Историческая и Литературная~~

1453



ՍՏՈՒԳՎԱՄ Է  
1952 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կառաջարանութիւն.

1. Ընդհանրապէս Հայոց Ազգին Յիմակուան  
Լիճակը: 2. Պատրիարքութիւնը: 3. Կը-  
տնքը, և Գաւանութիւնը . . . . . 5.
1. Հռովմէական Հայոց ծագումը: 2. Իրենց  
բունական խտրութիւնը: 3. և անոնց Պատ-  
րիարքութեան սկիզբը . . . . . 8.
1. Հռովմէական Հայոց երկու իրաւասա-  
ութեան բաժնուիլը: 2. Կ. Պօլսոյ բաժ-  
ին մէջ իրենց ազգային կառավարութիւնը:  
3. Եւ անոնց երկպառակութեան պատճառը . . . . . 11.
1. Նուրիճան Անտոն վարդապետին տեղը  
ախաղհան Գէորգ վարդապետին Եպիսկո-  
սոս օծուիլը: 2. Եւ այս պատճառաւ Ազ-  
ովին աքսորը, և Ազգին անտանկի տա-  
ապանքը . . . . . 17.
1. Տերութենէն Հռովմէական Հայերը զատ  
ազգ ճանչցուիլը: 2. Առաջին ազգային ժո-  
ով ուր Նուրիճան Անտոն վարդապետին  
ռաջին Նախագահ ընտրուիլը: 3. Եւ Իշ-  
անապետին և Երեսփոխանաց ընտրու-  
իւնը . . . . . 21.
1. Հռովմէական Հայոց ներքին և արտաքին  
սկու իշխանութեանց բաժանումը: 2. Ազ-

- գային կանոնադրութիւնները: 3. Յիսուս  
Փրկիչ եկեղեցւոյն շինութիւնը: 4. Դար-  
ձեալ ներքին խռովութիւնները . . . . . 25.
8. 1. Հասունեան Անտոն վարդապետին ծը-  
նունդը և քահանայութիւնը: 2. Ազգապետ  
պատրիարքաց ընտրութիւնը և փոփոխու-  
թիւնը: 3. Իրեն Աթոռակալութիւնը: 4.  
Մահ Առաջին Նախագահ Նուրիճան Ան-  
տոն Գերապայծառին . . . . . 31.
9. 1. Ընտրութիւն երկրորդ Նախագահին և  
Պօլսոյ: 2. Նախագահ Մարուշեանին և  
Պօլիս գալուստը: 3. Գեր. Հասունեանին  
Աթոռակալութիւնը, և ի Գաղատիայ քրն-  
նիչութեան երթալը . . . . . 40.
10. Գեր. Հասունեանին ճանապարհորդութիւնը  
ի վիէնա: 2. Եւ Օգնիչ Եպիսկոպոս ձեռ-  
նադրուիլը . . . . . 48.
11. Գեր. Հասունեանին Ազգապետական պատ-  
րիարքութիւնը . . . . . 55.
12. Գեր. Հասունեանին Նախագահութիւնը . . . . . 61.
13. Գեր. Հասունեանին երկքամեայ Պատրիար-  
քական իշխանութեան ժամանակը . . . . . 66.
14. Համազգեաց Ընկերութիւն . . . . . 76.
15. Մօնախնուս վիշէնցիոս Ֆերրիէրի. արտա-  
քոյ կարգի դեպքան և Առաքելական քննիչ  
Պիոս Թ. Ս. Քահանայապետին . . . . . 83.
16. 1. Բարձրագոյն Գրան երկուց պաշտօնէից  
ներկայութեամբ Համազգեաց Ընկերութեան

- վէճին լրմննալը: 2. Արկին անգամ Օգոստոսփառ. Ապոսեր հրամանը Երկոտասանից ժողովոյն հաստատութեանը համար: 3. Գեր. Հասունեանին ինքնակամ հրաժարումը Պատրիարքական իշխանութենէն. . . . . 92.
17. Սէլվիեան վարդապետին Պատրիարք ընտրուիլը . . . . . 101.
18. Մայր Եկեղեցւոյն՝ և ուրիշ եկեղեցիներուն. Աղքատանոցին և Հիւանդանոցին վերայ . 107.
19. 1. Աղքատանոցին իշխանաց փոփոխութիւնը: 2. Երկոտասանից Ազգային ժողովոյն ընտրութիւնը: 3. Օրենսդիր ժողովքը, և Ազգային կանոնադրութեանց նորոգութիւնը 118.
20. 1. Գեր.՝ Հասունեանին Հռովմէն դառնալը: 2. Գաւառական Եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը: 3. Համազգեաց ընկերութեան համար Նախագահ Քարտինալէն բերած թուղթը. . . . . 128.
21. Նախագահական Աթոռոյն առջի և հիմակուան իշխանութեանց տարբերութիւնը . 142.
22. 1. Հինգ Մխիթարեան վարդապետաց արտորը: 2. Թեմական Եպիսկոպոսաց Բ. Դռնէն արգելուիլը: 3. Գաղղիոյ Հասարակապետութեան միջամտութիւնը, և Եպիսկոպոսաց իրենց թեմը երթալը . . . . . 145.
23. 1. Մխիթարեան. Հարամատենին զրուելուն պատճառը: 2. Գեր. Հասունեանին ի վերջ Ասիայ ճանապարհորդութիւնը: 3. Չարա-

- ժառանգին հրատարակուելուն կերպը. . . . . 155.
24. 1. Ազգային ընդհանուր ժողով: 2. Մխիթարեանց հաստոցն վրայ Եկեղեցականաց սմանց առած վճիռնին . . . . . 166.
25. 1. Լատին Արքեպիսկոպոս Մ. Իլէրոյին միջամտութիւնը: 2. Տօն Գասպարոյին երկրորդ յայտարարութիւնը, Սէլվեան Ազգայեալին հետ թղթակցութիւնը: 3. Տօն Գասպարոյին Տերութեան յատեան կանչուիլը, և անոր Հաովմ քաղաք փախուստը: Եւ այս պատճառաւ երկու Եպիսկոպոսական իշխանութեանց մէջ բանակցութիւնները . . . . . 176.
26. 1. Ազգային յանձնարարական ժողով: 2. Դարձ Գեր. Հասունեանի ի Գաղատիոյ ժողովը և հրատարակած կանդակին անտուր կերպը: 3. Լատին Եպիսկոպոս Մ. Իլէրոյին Մխիթարեան պարսաւազրքին շինուելուն վրայ կարգած օրինաւօր դատաստանը. . . . . 200.
27. 1. Սէլվիեանին Ազգայեա Պատրիարքութենէն իյնալը: 2. Վասն ընտրութեան Պատրիարքին Ազգային ժողովը ի Տերութենէն արդիւուիլը: 3. Մէկ քանի ժողովքներ առաջի արտաքին գործոց Պաշտօնէին: 4. Առաքելական քննիչ Բատրէ կաւաէ, և Մ. Իլէրոյին, և Գեր. Հասունեանին Հոովմայէն կոչուիլը. . . . . 220.
28. 1. Կակոնեան Հ. Նիկողայոս վարդապետին Ազգայեա Պատրիարք ընտրուիլը:



2. Գարձ Գեր. Հասունեանին ի Հռովմայ: Ասոր համար Ազգային ժողովը, և պատահած խռովութիւններն: 3. Գեր. Հասունեանին տարօրինակ յաղթանակ հանդեսը . . . 231.
29. 1. Ըստ հրամանի Տերութեան յերկուց կողմանց Ազգային ժողովը: 2. Ի կողմանէ Տերութեան Յանձնաժողովոյն կարգուիլը: 3. Գեր. Հասունին բանադրանքը, և Եկեղեցական պատիժները: 4. Ազգին տուած Յայտագիրը, և Հասունեանց պատասխանը. . . 265.
30. 1. Հռովմայէն եկած հրահանգները, և պարտազորքին դատապարտութիւնը, և Ամբրոսիոսեանց Հռովմ երթալը: 2. Բ. Դոնէն եկած հրամանագիրին պատրուաիլը. Հասունեանց Պատրիարքարանը կոխելը և գոցուիլը: 3. Խաղաղասերք ոմանք ղԳեր. Հասունը Ազգին հետ հաշտեցնելուն ջանքը. . . 308.
31. 1. Ազգին աղերսագիրները, և հրատարակած յայտարարութիւնը, Տերութեան որոշողութիւնը Ազգիս երկու բաժնուելուն համար: 2. Գաղղիոյ Գեապանին միջամտութիւնը: Պիոս Թ. Շրջաբերականը: 3. Առանձին խորհրդածութիւն . . . . . 328.
32. 1. Բողոք ընդ դէմ Գեր. Հասունի: Ի Հռովմ գրուած աղերսագիրներ: 2. Բանք Ռեչիտ Բաշային. և ժողով Ազգային: 3. Գեր. Հասունի հրատարակած թուղթը, և անոր դէմ պատասխանը . . . . . 343.

33. 1. Ազգային ժողով: 2. Երկոտասանից ընտ-  
րութիւնը: 3. Սէլվիանին Եպիսկոպոս ձեռ-  
նադրուիլը: 4. Գեր. Հասունեանին Բ. Դըռ-  
նէն ընդունած Պէրաթը: 5 Է. Ազգապետ  
Նիկողայոս Պատրիարքին մահը . . . . . 358.
34. 1. Պատրիարքին ընտրութեան համար Բ.  
Դռնէն եկած հրամանագիրը: 2. Ընդհա-  
նուր ժողովոց կանոնադրութիւն մը շինուե-  
լուն հաստատութիւնը, և Յանձնարարական  
ժողովը: 3. Ընդհանուր ժողովոց կանոնա-  
դրութեան հաստատութիւնը: 4. 120 Երես-  
փոխանից ընտրութիւնը. . . . . 376.
35. 1. Գեր. Հասունին հաստատած «Ազգային  
կրթութեան ժողովը»: 2. Հռովմայէն ան  
ժողովոյն խափանումը . . . . . 386.
36. 1 Տերութեան հրամանը վասն հաստատու-  
թեան առ ժամանակեայ Ազգային ժողովոյն  
2. Ժողովոյն ցրուելուն պատճառները: 3.  
Ոսկերերանի եկեղեցոյ շինութիւնը: 4. Գեր.  
Հասունին ընթացքը . . . . . 392.
37. 1. Գեր. Հասունին Կիլիկիոյ թեմին մէջ  
միջամտութիւնը: 2. Ութերորդ Պետրոս  
Կաթողիկոսին ջանքը Գեր. Հասունին հետ  
զաջնադրուելու, և իրեն մահը: 3. Մ. Վա-  
լերիան զԵպիսկոպոսները յընտրութենէն  
արզիւելը. և Գեր. Հասունին Կաթողիկոս  
ընտրուիլը: Ս. Պապին գրուած թուղթը:  
4. Գեր. Հասունին ի Հռովմ երթալը և կա-

- Թողիկոս հաստատիլը. դարձ Նորա ի Կ. Պօլիս, և իրեն օրհնութեան հանդէսը . . . 427.
38. 1. Սեղան. Աթոռակալ և խորհրդականներ: 2. Ազգային ժողով Յայիսկոպոսարանն: 3. Ժողով ի սուն Մըսըրլը Պօղոս Պէյին: 4. Ընդհանուր ժողով յեկեղեցին Ոսկեբերանի, և ազերսագիր ի Գուռն . . . 462.
39. 1. Յուաթ Բաշային խօսակցութիւնը: 2. Գալուստ Մ. Վալերկային ի Կ. Պօլիս: 3. Ժողով մեծամիծ իշխանաց: 4. Անընդունելի առաջարկութիւն Մ. Վալերկային: 5. Կոնդակ Գեր. Հասունին, և իրեն ճանապարհորդութիւնը . . . . . 501.
40. Վերջարանութիւն. . . . . 515.

107 . . . . .  
 108 . . . . .  
 109 . . . . .  
 110 . . . . .  
 111 . . . . .  
 112 . . . . .  
 113 . . . . .  
 114 . . . . .  
 115 . . . . .  
 116 . . . . .  
 117 . . . . .  
 118 . . . . .  
 119 . . . . .  
 120 . . . . .

121 . . . . .  
 122 . . . . .  
 123 . . . . .  
 124 . . . . .  
 125 . . . . .  
 126 . . . . .  
 127 . . . . .  
 128 . . . . .  
 129 . . . . .  
 130 . . . . .  
 131 . . . . .  
 132 . . . . .  
 133 . . . . .  
 134 . . . . .  
 135 . . . . .  
 136 . . . . .  
 137 . . . . .  
 138 . . . . .  
 139 . . . . .  
 140 . . . . .

# ՀԱՍՈՒՆԵԱՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

---

### 1.

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

---

Անցեալ տարւոյն վերջերը Ազգային լրագիրները բաւական հրատարակեցին Գեր. Հասունեանին Վիլիկիոյ Պատրիարք ընտրուիլը: — Այս ընտրութեան վրայօք Բրօքականտային որոշմունքները, և այս որոշմանց վերայ Քահանայապետական կոնդակները: — Բարձրագոյն Գոնէն ընդունած Պատրիարքական Պէռաթին անսովոր կերպը: — Ընդհանուր Ազգային Ժողովոյն մէջ ան ամէն ապօրինաւոր զործողութեանց դէմ Ազգովին բողոքը, և Ժողովոյն ցրուիլը: — Ազգը Բ. Գրան աղերսագիր տալը:

— Բ. Գռնէն Ազգին տրուած պատասխանը ըլլալու Բօնֆօրտաթօյին վրայօք և այլն. —

Ասոնք կսեմ Ազգային լրագիրները ինչչափ վեր ի վերոյ պատմեցին նէ ալ, միւս կողմանէ Եւրոպական լրագիրներն ալ, Հասունեանց կողմէն, իրենց տրուած հատուածները ըստ այնմ հրատարակեցին, որով յուզված վէճին ուրիշ կերպարանք մը տալով, բուն Ազգային խնդիրը ի՞նչ հիման վերայ հաստատված էր, զանիկայ բոլորովին հասարակաց աչքէն ծածկեցին: Ասոնցմէ մէկն ալ եղաւ այս տարի Հռովմ քաղքին մէջ տպուած, Յիսուսեանց Չիվիլիթիւ ԲԱԹՕԼԻԲԱ ըսուած ուսումնական տետրակը\*, որուն երկրորդ հատորին մէջ Կ. Պօլսոյ իրեն թղթակցին զրած հատուածը կը հրատարակէ: Այս հատուածին մէջ Ազգային խնդիրը ի՞նչ բանի վերայ էր. — Ազգը ի՞նչ բանի համար Գեր. Հասունեանին այսչափ հակառակեցաւ. — Կիլիկիոյ Պատրիարքական Աթոռոյն հարիւր յիսուն տարուան ՚ի գործ վարած իրաւունքերը որոնք էին, և թէ ի՞նչպէս այսօրուան օրս անոնք բոլորովին ջնջուեցան և այլն . . . :

\* Ի Հռովմ ի տպարանի Չիվիլիթա Բաթօլիքա, Ի 6 Յունիսի 1868, յերես 637 թիւ 2:

Ասոնց վրայ ամենևին մէկ բառ մը չը յիշատակելէն իզատ, արդի յուզուած վէճին կէս մեջքէն բռնելով, Գեր. Հասունեանին բռնած ճամբան գովելով օրինաւոր կը ցուցնէ. և զազդայինները հեղնելով, պախտրակելով կը յաւելու թէ՛ Դրոյր ձմեռը քիչ մը տաքցած էին Դայսպիտի խօսակցութիւններով. իսկ հիմայ Դգարնանային հրաւերքին հետեւելով ըստ սովորութեան քաղքիս գիւղերը կը տարածուին, և ժողովակները կը ցրուին և այլն<sup>6</sup>: Աս տետրակին պատասխանը իւր տեղը պիտի տրուի: Ահա թէ այս տետրակը, և թէ ասոր նման հատուածներ եւրոպական լրագրաց մէջ հանապազօրեայ տեսնելով, ուստի դիտաւորաբար ի գիտութիւն եւրոպական Ազգաց հարկադրեցանք մենք ալ համառօտիւ Գերպատ. Հասունեանին վարքը՝ սկսեալ իր Քահանայութենէն, մինչև կաթողիկոսական իշխանութեան հասնելը պատմելու, որ երեսուն և հինգ տարուան միջոց է:

Այսչափ տարուան մէջ Գեր. Հասունեանին բռնած քաղաքականութիւնը մեկիկ մեկիկ բացայայտ ցուցնել, որ իր նպատակին հասնելու համար որպիսի<sup>6</sup> միջոցներու ձեռք զարկաւ, որով և այսչափ ժամանակ Հռովմէական Հայոց

աճառանելի տառապանաց, և մեծամեծ խռովութեանց և թշուառութեանց պատճառ եղև:

Եւ ահա ասոր համար այս գրած գիրքերնուս անունը, ՀԱՍՈՒՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ զրինք, որպէս զի Եւրոպացիք այս գիրքը կարդալով, և Գեր. Հասունեանին վարուցը աղէկ մը տեղեկանալով ըստ այնմ ուղիղ գատաստան կըտրեն, և այնպէս իրենց միջամտութիւնը յօգուտ և ոչ ի վնաս Ազգիս բանեցնեն:

Համառօտ ըսինք, վասնզի կուզէինք աւելի ընդարձակ անոր ժամանակակից պատմութիւնը յօրինել, իր ատենը պատահած Ազգային խռովութեանց համար տպուած թէ գիրք, և թէ յայտարարութիւնները կարգաւ զամէնքը տպել, բայց շատ երկար ըլլալուն զանց ըրինք: Որովհետև մեր մտարը Գեր. Հասունեանին համառօտ պատմութիւնը գրել էր, սակայն որչափ համառօտ գրենք ըսինք, քանի սր տարիները յառաջացան, և Ազգին թշուառութիւնները ետևէ ետև յաջորդեցին, այնչափ ալ հարկը ստիպեց որ զանոնք մի ըստ միոջէ բացայայտուցնելու համար քիչմը ընդարձակել, եթէ ոչ անխմանալի կըլլար մեր այս գրած պատմութիւննիս:



Մենք մեր ժամանակը ինչ որ տեսանք և լսեցինք պանոնք համառօտիւ ի գիր անցուցինք: Ասոնցմէ դուրս աղէկ գիտենք որ դեռ Հասունեան քաղաքականութեան վերաբերեալ շատ յայտնի պատահած, և կամ գաղտնի գործուածներ կան, զորոնք ով որ գիտէ ի ճշմարտութենէ կը պարտաւորի ժամանակակից պատմագրութեամբ տպագրելով հրատարակել հասարակութեան ՚ի գիտութիւն և ՚ի զգուշութիւն ազգայնոց, թէ հիմակուան, և թէ մեզմէ ետքը եկողներուն համար:

## 2.

1. Ընդհանրապէս Հայոց Ազգին Հիմնական Վեճովը:—

2. Պատրիարքականութիւնը:— 3. Կրօնքը և Դատականութիւնը:

1. **Գիր.** Հասունեանին պատմութիւնը չըսկսած պէտք է նախ՝ ընդհանրապէս և համառօտիւ Հայոց Ազգին վրայ տեղեկութիւն տալ, ու ետքը մասնաւորապէս և զխաւորարաջ Հր. Ռովմէական Հայոց ծագումը զուրցնել:

Արդ՝ այսօրուան օրս Հայոց ազգը մինչև ց<sup>4</sup> միլիօն կը հասցնեն, Հայաստան աշխարհքն

երեք տէրութեանց բաժնուած ըլլալով Հայոց ազգն ալ գլխաւորաբար երեք տէրութեանց մէջ կը բնակին, բայց մեծագոյն մասը Օսմանեան Պետութեան հովանաւորութեանը ներքե կն:

2. Հայոց ազգին Պատրիարքութիւնը թաթէոս և Բարդողիմէոս առաքելոց աթոռին վերայ հաստատուած ըլլալով, յերրորդ դարուն աշխարհածանօթ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռօք բովանդակ Հայոց ազգը կաւապաշտութենէ 'ի Քրիստոնէութիւն դարձաւ:

3. Ընդհանուր Հայոց ազգին կրօնքը և հաւատոյ դաւանութիւնը, սա վերջին ժամանակ, Պեստարապիոյ Գեր. Արքեպիսկոպոս Այվազովսի Գարրիէլ վարդապետին ՝ Քրիստոնէական վարդապետութիւն ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ շինած զբքին մէջ կը բովանդակի, որ 1858-ին հրամանաւ Տեառն Յակօրայ Պատրիարքին Կ. Պօլսոյ տպագրեցաւ հայերէն լեզուաւ Փարիզ քաղաքը: Աւր որ Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ ըստ ամենայն մասանց հաւատոյ ուղղափառ վարդապետութիւնը յայտնի կը տեսնուի: Երիտ Անձնաւորութիւն Ամենասուրբ Ներորդութեան — բղխումն Հոգւոյն Արքոյ և այլն . . . . . (տես

երես 5): Մարդեղութիւն Որդւոյն Աստուծոյ  
և Նորին անշիթի Աստուածային և մարդկա-  
յին երկու բնութիւնները (տես երես 28): Ա-  
ռանձնական և ընդհանրական գառաստան մե-  
ռելոց (տես երես 36): Եկեղեցւոյ եօթն խոր-  
հուրդները (տես երես 39): Եւ այլ ամենայն  
Մասունք հաւատոյ կաթողիկէ Եկեղեցւոյ:

Իսկ Պատրիարքաց իշխանութեանը վրայ  
գրելով նոյն Քրիստոնէական վարդապետու-  
թեան գրքին մէջ, կը խոստովանի Հռովմայ Քա-  
հանայապետաց յաջորդաց Պետրոսի Առաքելոյն  
Նախապատուութիւնը Պատրիարքական Աթոռ-  
ներու մէջ, և անոնց Քահերեցութիւնը ի Տիե-  
զերական ժողովս: Իսկ Հայաստանեաց Եկեղեց-  
ւոյ բացարձակ գլուխ, ինչպէս Յունաց և այլոց  
արեւելեան Ազգաց Հայոց պատրիարքն է կսէ, ո-  
րուն միայն է սեփհականեալ իրաւասութիւնը  
'ի վերայ ամենայն Հայազգեաց թէ Հովուաց և  
թէ Հովուացելոց (տես երես 50):

Ընդհանրապէս և համառօտիւ Հայոց ազ-  
գին մեծագոյն մասին, վրայ այսչափ հարկաւոր  
ծանօթութիւն տալէն վերջը, դտունանք Հը-  
ռովմէական Հայոց ծագման վերայ:

### 3.

1. Հառովմէական Հայոց ծագումը. — 2. Իրենց կրօնական խորութիւնը. — 3. Եւ ո՞նո՞ց Պատրիարքութեան «իւր բը»:

1. Այսօրուան օրս Հռովմէական Հայք հասցիւ ութսուն հազար կամ առ առաւելն հարիւր հազար հոգւոյ կը հասնի ու չի հասնիր. Հռովմէական Հայք կը կոչուին որովհետեւ ընդ իրաւասութեամբ Հռոմայ ֆահանայապետաց ներքէն են:

Ասոնց ծագումը եօթեւտասներորդ դարուն սկիզբները եղան. Խաչակիրներուն ժամանակէն մնացած Ասիային կողմերը Վատին քարոզիչները սկսան հոս հոն քարոզել, և աշխարհականներէն և եկեղեցականներէն զոմանս որսալով, ու իրենց օրինաւոր Պատրիարքներուն իշխանութենէն հանելով զանոնք Հռովմայ ֆահանայապետաց իրաւասանութեան տակը բերին ձգեցին: Ասկից սկսաւ ահա աղետալի հետեանք, ընտանի կռիւք, եղբայր եղբօր վըրայ յարձակիլ՝ ինչպէս որ Եւրոպացիք մէկ քանի դար առաջ ստանկ կրօնական կռիւներու մէջ շատ անգամ փորձ աւին:

2. Բայց և այնպէս Հռովմէական Հայր Օսմանեան Տէրութեան մէջ, ընդ իշխանութեամբ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքին ներքեւն էին: Եւ թէպէտ անխտիր ազգային եկեղեցիներուն կերթային, և հոն իրենց քահանայից խօստովանելով կը հաղորդուէին. սակայն երբոր Հռովմայս արտաքին հաղորդակցութիւնն ալ անցեալ դարուն կէսերը արգիլեց, անկից ետքը կամաց կամաց Ազգային Եկեղեցիներէն հեռանալով, Ղատին եկեղեցիներուն սկսան բոլորովին երթալ և կամ մասնաւոր տուներու մէջ իրենց հոգևոր պաշտամունքները կատարել. բայց 'ի վերայ այսր ամենայնի ժողովրդական իրաւունքները միշտ ամէն տեղ բուն Ազգային ժողովրդապետաց ձեռքը մնացին, այսինքն Մկրտութիւնը, Կրօշմը, Պսակը, և Մեռելոց թաղումը մինչև 1830-ին, որ ժամանակ որ Հռովմէական Հայոց Բ. Դռնէն շնորհուեցաւ առանձին զըլուխ և եկեղեցի ունենալ:

3. Յամին 1740-ին երբոր Արիկիոյ Հայոց Ղուկաս պատրիարք և Կաթողիկոսը վախճանեցաւ, 'ի Սիս քաղաք և Խօթը ամիս Պատրիարքական աթոռը պարապ մնացած ժամանակը, Հռովմէական Հայերը եկեղեցական և աշ-

խարհական. այս ժամանակ իրենց յարմար առիթ սեպելով, չորս կողմէն Բերիա (Հալէպ) քաղաքը (որ ան ատենը ուրիշ ամէն քաղաքներէն ապահով էր). ժողովեցան և երեք Ազգային եպիսկոպոսօք, նոյն քաղաքին Անդէպցի Արժիւեան Արրահամ եպիսկոպոսը՝ կաթողիկոս Հայոց և Պատրիարք Կիլիկիոյ ձեռնադրեցին, ու անուանեցին զանի Արրահամ Պետրոս Առաջին. և զրեցին զիր ազգային ամենայն ժողովականաց ստորադրութեամբ. Ժ.Գ. Պենէտիկոսս Պապին:

Քիչ ժամանակէն վերջը նորընտիր կաթողիկոսն անցաւ Հռոմ զնաց և Պենէտիկոս Ժ.Գ. էն Պապիուն առաւ իրր Ազգային Պատրիարք՝ բացի ամէն Պատրիարքական իրաւունքներէն, այլ և այլ առանձնաշնորհութիւններով ալ զանի ձոխացուց: Երբոր Արրահամ Պետրոս Ա. Պատրիարքը Հռովմայէն կը պատրաստուէր անմիջապէս Կ. Պօլիս երթալ և հոն իր աթոռը հաստատել, որուն համար Ս. քահանայապետէն Աւրոպական դեսպանաց յանձնարարական թուղթեր ընդունուէր էր. ահա Միքայէլ Արքեպիսկոպոսն ՚ի Սիս, Կիլիկիոյ Հայոց օրինաւոր Պատրիարք կընտրուի: Ս. Արրահամ Պատրի-

արքը չի կարենալով երթալ 'ի Կ. Պօլիս, կըստիպուի Ղիրանան՝ իբրև ապահովագոյն և ազգին մերձաւոր տեղւոջ Հայոց միանձանց վանքին մէջ իր բնակութիւնը հաստատելու, և ասկից բոլոր Տաճկաստանին մէջ իրեն սեփական Հռովմէական Հայերը, որոնք այն ժամանակ հազիւ երեսուն հազարի կը հասնէին, Առաքելոց ձեռօքը զանոնք հովուելու :

#### Է.

1. Հռովմէական Հայոց երէւ իրաւաստանութեան Բժնորհը. — 2. Կ. Պօլսոյ Բժնին մէջ իրենց ազգային խառնաբոսութիւնը. — 3. Եւ անոնց երէպտաւորութեան պատճառը:

1. Միջայէլ Պետրոս Գ, պատրիարքին օրը, Բրորականապին\* մասնաւոր ժողովքովը Հռովմէական

\* Բրորականատա-տէլլա-Ֆէտէ, Տարածումն Հաւատոց, կտուի մասնաւոր Քարտինալական ժողովքը, որ հաստատուած է այնպիսի ազգաց համար, որոնք ղեռ ազգովին Ս. Պապին իրաւաստանութեան ներքե չեն: Այս ժողովքը ունի մէկ զպրոց մ ալ, ուր վերոյիշեալ ազգաց աղաքները կրթելով, և պէտք եղած քահանայական ամէն ուսմանըները սովորեցնելով,

մէական Հայերը հողևորին կողմանէ երկուքի բաժնուեցան. Կ. Պոլսոյ թէմը լատին պապական վիքարին իրաւասանութեանը յանձնուեցաւ, իր շրջակայ գաւառներովը մէկտեղ ուր որ նոյն վիքարը կը հրամայէր :

2. Այս բաժնին հովմէական Հայերը ընդհանուր արևելեան ազգաց սովորութեան համեմատ՝ եկեղեցականք և աշխարհականք ազգային ժողովով իրենք իրենց հովիւ մը կընտրէին, զորն որ կամ լատին վիքարին, և կամ ուղղակի Հռովմայու կառաջարկէին : Եւ նոյն վիքարն ալ Բրօքականտային հաճութեամբ Ազգին վրայ զանի եպիսկոպոս կը ձեռնադրէր, որոնց ցանկը կարգաւ կը դնենք հոս :

Ա. Սէրասեան Աթանաս Եպիսկոպոս,  
յամի . . . . . 1758

Բ. Մըսրրլեան Անտոն վարդապետ, որ  
հրաժարուելով իրեն յաջորդեց. . 1779

---

Քահանայ կը ձեռնադրեն ու իրենց հայրենիքը կը յուղարկեն : Ուսման ընթացքնին բոլորովին լատիններէն է. Հայազգի աղոց համար որչափ ալ որ մասնաւոր ուսուցիչ սահմանուած է, ան ալ շարաթը մէկ կամ երկու անգամ մէկ մէկ ժամ դաս տրուելուն պատճառաւ, Հայերէն լեզուին մէջ ընդհանրապէս տրկար են :



Գ. Սօֆեալեան Սահակ վարդապետ որուն օգնիչ տրուեցաւ Հռովմէն Աւգերեան Ստեփան վարդապետը. 1784

Դ. Աւգերեան Ստեփան վարդապետը պաշտօնէն ելնելով, դարձեալ Մըսրոյեան Անտոն վարդապետը Ազգին վրայ Եպիսկոպոս օծուեցաւ. . 1806

3. Երկայն է ասոնց պատմութիւնը և աղետալի. համառօտութիւնս չի ներեր ասոնց վըրայ առանձին խօսելու, ինչպէս որ ան ժամանակուան, մանաւանդ 1700-ին վերջերը և 1800 ին սկիզբները Կ. Պօլսոյ բաժնին Հռովմէական Հայերը զլսաւորարար մէկ մէկու դէմ՝ վերջին աստիճան հակառակ երկու կողմ բաժնուած էին, իրենց առաջնորդ եկեղեցականաց հետեւելով, վասն զի մէկ կողմի եկեղեցականները ազգի ազգի զխօութեամբ, իմաստութեամբ, և աշխատութեամբ վառուած՝ կը ջանային զազգը զխօութեամբ արուեստիւք և զբաւորական աշխատութեամբ ծաղկեցնել, իսկ միւս կողման եկեղեցականները՝ առաջիններուն համբաւին և փառաց վրայ չարաչար նախանձելով՝ սկսան զանոնք բամբասել և զրպարտել, որպէս թէ հերձուածողաց և հերետիկոսաց կը մօտիկնան,

և անոնց հաւատքը կեղակարծ և երկբայական կը քարոզէին. որով և ռամիկք տգէտք և լեզուակորոյս լատինասէրք՝ ժողովուրդը իրենց որսալով՝ ինքը զինքնին Հռովմայու հաւատարիմ՝ ամենաջերմեռանդ և հարազատ որդիք կը խոստովանէին, և իրենց յառաջագիմու թեանը համար ամէն կերպ հնարք կը բանեցնէին, թէպէտ և ասկից Ազգին մէկ մասին և կամ ընդհանուրին մեծամեծ միասններ հասնի, հոգերնին չէ, բաւական է՝ որ իրենց փառասիրութիւնը և չար նախանձը կըշտանայ: Այս չար նախանձուն չար սերման չարագոյն պտուղն երևցաւ. որ այնչափ աղետից և թշուառութեանց ալ պատճառ եղաւ, զորն որ կամչնամ դրելու. Աւգեր գերապայծառին օրը աղքատաց սնտուկը անգամ երկուքի բաժնեցին, և քաղաքացւոց Ղուսաւորչեան եղբայրութեանը հակառակ Աղէմէսեան եղբայրութիւն մ' ալ հաստատեցին, և եկեղեցւոյ դուռները հակառակ միմեանց աղքատաց գանձանակներով կայնեցան յամօթ և 'ի նախաախնա ազգին: Արդ՝ այս կերպ եկեղեցականաց փառասիրութեան կոյր զկուրայն գործիք ըլլող ժողովրդեան ինչ ըսելու է:

Գրէ թէ այս չար նախանձէն հեռուեցաւ  
այն ազնուալի և ողբոց արժանի անցքը, որ  
անցաւ անկմամբ՝ ազգասէր և բարեբար մեծի  
Տանն գերդաստանին Տիւղեանց, յամին 1819,  
դիտատու թեամբ և զբաւմամբ ընչից յարբու-  
նիս, ընդ որ աշխարհ ամենայն և ողջոյն Ազ-  
գը ի սուգ և յարաստու էին : Նախանձոտք  
վրէժխնդիրքն ի կոչունս և ի յընթրիս նստան  
յուրախութիւն իւրեանց. . . Ողբալու ժա-  
մանակ, վասն զի այս ժամանակ, ինչպէս որ ա-  
մենուն յայտնի է, Տաճկաստանին մէջ Հայոց  
Ազգին ընդհանուր կռաւիարութիւնը գրէ թէ  
մեծատանց ձեռքն էր : Եւ այս մեծատունները  
երկուքի կը բաժնուէին, անոնք՝ որ ուղղակի  
Վեհափառ կայսեր ծառայութեան մէջ էին,  
կայսերական Տան յատկացեալ բարեօրտութեան  
նման՝ իրենք ալ սամենուն բարիք ընելը իրենց  
պարտք և պտախ կը սեպէին : այն ասոնցմէն  
Ազգին շատ մեծամեծ բարիքներ ծնան և կը  
ծնանին օր ըստ օրէ, իսկ միւս Մեծատուն ըս-  
ուածները Վիւլխանէին Սրէնադրութենէն ա-  
ռաջ յանկարծակի ՚ի ստորին և ՚ի ցած վիճակէ  
բարձր իշխանութեան, և հարստութեան հաս-  
նելով, այսինքն դերձակութենէ և կամ ՚ի

քիւրքճիութենէ ֆաշաներուն և Աէգիրներուն  
ծառայութեան մէջ մըտնելով, անոնց զբա-  
մափոխ սարրաֆութեամբ հարստութիւն զի-  
ղելով, ասոնք կըսեմ երբոր Մեծատանց կար-  
գը կանցնէին, իրենց Տիրոջներուն նման ան-  
զուսպ և բռնաւոր կամքերնին ազգիս վըրայ  
թաղաւորեցնել կուգէին, և իրենց խօսքին Աս-  
տուծոյ պատգամի պէս հնազանդութիւն կը  
պահանջէին, և անմիտ, անկիրթ, տգէտ բնու-  
թիւնովը, և իրենց չար նախանձովը շատ ան-  
գամ, յանիրաւի մէկզմէկու վրայ կը յարձակէին,  
և անխիղճ անողորմարար մինչև իրենց հա-  
մազգի եղբարց, աքսորի- բանտարդելութեան,  
տուգանաց և մահուան իսկ կաշխատէին: Աս-  
կից կրնաս հետեցնել Ազգիս կրած անասնելի  
և լալու արժանի թշուառութիւնները, քանի՞  
քանի արդեօք բնտանիքներ ասոնց չար նախան-  
ձուն զոհ եղան. որոնց յիշատակը անխիճիք և  
ողբովք զբուեցան ազգային պատմութեան մէջ:  
Սակայն այսպիսի Մեծատուններէն ալ ոմանք  
եղան՝ թէպէտ և շատ քիչ, որոնց Աստուա-  
ծասէր և ազգասէր յիշատակը օրհնութեամբ  
և զովութեամբ պիտի յիշուին յաւիտեանս  
ժամանակաց, ինչպէս Հոովմէական Հայոցմէ


Տունն Ալլահճվերականց և Տունն Քնկրու Սիմոն  
 աղայի և այլոց: Բայց ասոնց հակառակ ան առ-  
 ջի բարբարոս և անխիճեալ խմորէն զանգուած-  
 ները այն այսօրուան օրս ծերացան և ցնդելու  
 ալ մօտեցան, սակայն տակաւին իրենց խիտ,  
 դաժան, և նախանձոտ բնութիւննին բնաւ եր-  
 բէք չի փոխեցին ազդիս մեծ վնասներ տալով-  
 նին: Եւ ահա յիշեալ նախանձոտ եկեղեցականք  
 ոմանք իրենց շողոքորթութենով այսպիսի սար-  
 բաճներուն մօտիկցան, որոնց չար նախանձովը  
 լեցուած և առ երեսս ցուցրցած կրօնամոլու-  
 թիւննին՝ իբրև Աստուծոյ հաճելի և բնգու-  
 նելի պատարագ մատուցանելին անխիղճ իրենց  
 նոյն եկեղեցականները կը քարոզէին, և զանոնք  
 կը գովէին իրենց անձնատէր և փառասէր շա-  
 հուն համար:

5.

1. Նոր-բիճան Անդան վարդապետին աւելը վաճառէան  
 Գեորգ վարդապետին Եպիսկոպոս օծուելը. — 2. Ե-  
 այս պատճառաւ Աղգոյէն աչարը, և Աղգոյէն անդա-  
 նելի պատարագներ:

1. Երբոր Կ. Պօլսոյ թէմին զԱգային Եպիս-  
 կոպոս Մըրըրէան Սեփարդ վարդապետը 1824

2865  
 17012



ին հանգեաւ ՚ի Տէր, ժամանակէ մը ետքը Աստուածատուրեան Մանուկ Ամիրային տանը մէջ Ազգային ժողով եղան, այս ժողովքին մէջ չորս վարդապետաց վրայ քուէ ձգեցին. այսինքն, Նուրիճան Անտոն վարդապետ, Մարուշ Պօղոս վարդապետ, Սէլվեան Յովհաննէս վարդապետ, և Փափազեան Գէորգ վարդապետաց վրայ: Եւ որովհետեւ Կարնեցի Նուրիճան Անտոն վարդապետը՝ աշակերտ Բրօքականտայի, ուրիշներէն աւելի քուէ ունենալուն համար, զանիկայ Լատին Առաքելական Ալիքարին առաջարկեցին Եւսիսկոպոս ձեռնադրելու համար: Եւ իրաւցընէ այս անձը բարւոյ հոգւոյ վիճակեալ զրէ թէ ընդհանուր ազգին սէրը իրեն գրաւած էր, իր արտաքին զեղեցիկ և փառաւոր տեսքը, պայծառ դէմքը, ալեօր, և սպիտակ ալիքը, իւր սրտին անկեղծութիւնը, հոգւոյն հեզութիւնը խոնարհութիւնը, խաղաղասիրութիւնը, և այլ ամէն առաքինութիւնները զորանք որ Պօղոս առաքեալը մէկ եւսիսկոպոսին համար կը պահանջէ, առաւելօքն հանդերձ Գ. Նուրիճանեանի վրայ կը փայլէին՝ ուստի իրաւցնէ այն բարձր աստիճանին ալ արժանի էր: Եւ ազգը այսու ընտրութեամբ կը յուսար մօտ տարիները

երջանիկ օրեր տեսնելու: Այլ աւանդ թշուառութեանս, ահա նախանձոտք և փառասէրք յարեան, անդադար գրեցին Հռովմայ ամբաստանութիւն, զիզելով սուտ սուտի վրայ, զըրպարտութիւն զըպարտութեան վրայ, իբր թէ Նուրիճան Անտոն վարդապետը Բրօքահանտայի սէրէն բոլորովին օտարանալով, ու աւելի ազգասիրութեամբ փառուած՝ աւելի հերձուածողաց կողմը կը մօտենայ . . . և այլն և այլն . . .

Եւ երբոր Ազգը կը սպասէր որ առաքելական Վատին Վիքարը, Մ. Գօրէզին, Նուրիճան Անտոն վարդապետը Եպիսկոպոս ձեռնադրէ, ահա յանկարծ անոր տեղը փափազեան Գաղատացի Գէորգ վարդապետը կը ձեռնադրէ:

2. Ասկից յառաջ եկան մէկ մէկու դէմ սոսկալի թշնամութիւններ, անհաշտ հակառակութիւններ, ընտանի կռիւներ, որոնց դառն և արտասուելի պտուղն եղաւ 1828-ին, որ ժամանակ, Տէրութեան կողմանէ սաստիկ հրաման ելաւ, նախ Գաղատացիք իրենց հայրենիքը դառնալ ու հոն բնակելու, և քիչ մը ետքը դարձեալ հրաման ելաւ որ բուն Քաղաքացիներն ալ Ասիային ներքին կողմերը քաշուին:

Ահ թշուառ և աղետալի տեսարան, ահա

ողորմելի Հռովմէական Հայ Ժողովուրդը — Կ. Պօլսոյ, իրենց հայրենիքը սիրելի մայրաքաղաքնին ձգելով տուներնին ակերնին հարստութիւննին և ամէն ստացուածքնին կորսնցնելով, դառնաշունչ ձմեռնային կղանակին մէջ, ան սոսկալի գետերը, ահագին խոր ձորերը, ձիւնապատ լեռները, անշէն անապատները անցնելով՝ կանայք, աղջկունք և ստնդեայ մանկունք Ասիոյ ներքին քաղաքները և զիւղերը լեռներուն մէջը երկու երեք տարի բնակեցան, որ ուրիշ բանի համար չէր՝ եթէ ոչ Ապիսկոպոսաց ընտրութեան մասին Ազգային իրաւունքը պաշտպանելու համար. որով զոհ կզան նախանձոտ և ազգատեայ եկեղեցականաց, անոնց՝ որ ՚ի Հռովմ և ուրիշ քաղաքներու մէջ հանդիտա կեանք կանցնէին, իսկ իրենց ժողովուրդը զրէ, թէ եօթ և ութ հարիւր միլիօն Ֆրանք տու ժելով՝ վերջին ազգատութեան և ողորմելի վիճակի հասած էին:



## 6.

1. Տէրութեան շնորհակցան շնորհը ըստ ազգ ճան-  
չցուելը. — 2. Առջին ազգային ժողով որք Նա-  
րեճան Անտոն շնորհակցան առջին Նախագահ ըն-  
բուելը. — 3. Եւ իշխանակցան որք Նախագահաց  
ընտրութեանը:

1. 1830-ին Սուլթան Մահմուտ արքայն  
առանձին հրովարտակաւ Հառվմկական Հայերը  
զատ Ազգ ճանչնալով, և առանձին Պետութով  
Ազգապետ զլուխ մը շնորհեց նայն Ազգին և հը-  
րամայեց որ արտօրեաները դառնան իրենց հայ-  
րենիքը:

2. Ո՛հ ուրախալի տեսարան, . . . դունդա-  
դունդ վազեցին եկան փառեցան միմեանց զը-  
կախաանեցան, և մէկմէկ սազաուելէն վերջը՝  
հաշաութեան ձեռք ձեռքի աուին, երգմնցան  
մուանալ և թաղել յախաննական լուսթեան  
մջ այն ամէն թշուաուսթիւններն ու ազգա-  
կործան կողմնակցութիւններն, սրանց հեան-  
ւանքն եզած էին ամէն կրած աղետալի անց-  
քերնին: Եւ իրայցնէ, անմեղ և բարեմիտ ժո-  
ղովուրդը սրաի մաօք և հաստասու թեամբ ու խ-

տեցին, ալ ասկէ ետե չի խարուիլ և չը հետեւ  
 իլ բնաւ այնպիսի փնասակար եկեղեցականնե-  
 րու: Վերջապէս իմացաւ Հռոմալ այն եկեղե-  
 ցականաց ազգի ազգի հնարքները, սուտումուտ  
 գրուածքները անվաւեր ստորագրութիւնները,  
 Լատին Վիքար Մ. Քօրեզիյին խարուիլը որով  
 Ազգին կամացը հակառակ Փափագեան Գէորգ  
 վարդապետը ձեռնադրեր էր: Ուստի Ը. Պիոս Ս.  
 Քահանայապետը ածապարեց փութաց նախ  
 օրհնութեան թուղթեր տարածել համօրէն  
 սքսորելուց: Երկրորդ՝ յամին 1830 Յուլիսի 6  
 ին Կ. Պօլսոյ թէմը նախագահական Աթոռոյն  
 հաստատութեամբը պատուեց: Երրորդ՝ Գու-  
 ցիանթի վարդապետին ձեռօք հրաման խաւ-  
 րեց որ ազգային ընդհանուր ժողովով արժա-  
 նաւոր անձ մը ընտրեն որպէսզի նախագահա-  
 կան աթոռին վրայ նստելով՝ կարող ըլլայ խա-  
 ղաղութեամբ Աստուծոյ ժողովուրդը հովուելու:

Ուստի 1830-ին Փետրուար 15/27 առաջին  
 Ազգային ժողով գումարուեցաւ 'ի Կ. Պօլիս Ֆէ-  
 նէռ թաղը, քահանայ և աշխարհական իննը-  
 սունը վեց հոգի: Այս ժողովիս մէջ չորս քա-  
 հանայից վրայ վիճակ ձգեցին:

Ա. Նուրիճան Անտոն Վարդապետին Այս՝—Ո՛չ  
 վըրայ . . . . . 87 7 09.

- Բ. Փափազեան Գէորգ Գերապոյճաւ Այո՛ — Ո՛չ  
    սին վերայ . . . . . 08    » 88.  
Գ. Մարուշ Պօղոս վարդապետին    » 23    » 73.  
Դ. Սէլվեան Յովհաննէս վարդա-  
    պետին վերայ. . . . . 46    » 50.

3. Ասկից վերջը Հռովմ երթալու թուղ-  
թին գաղափարը Եւքէնձեան Մեսրոփը ազան,  
Թնկրու Կ. և Ս. Անտոն և Պօղոս ազաններուն հետ  
մէկտեղ յօրինելով և կարդացուելով ու ամէն  
ժողովականներէն ստորագրուելով Հռովմ խըր-  
կուեցաւ: Գարձեալ այս ժողովքին մէջ ընդ-  
հանուր Ազգին հաճութեամբ, և հաւանու-  
թեամբ, նախ՝ Իշխանապետ ընտրեցաւ Բարձ-  
րադատիւ Տիւզեան Յակոբ Զէլէպին. երկրորդ՝  
աստը գործունեայ Երեսիոխան ընտրեցին.

Կեօչէք Անտոն Աղա, Պիլէզեկիճի Պօղոս Ա-  
ղա, Խիւտավերտի Պետրոս Աղա, Քըլճը վի-  
ջէն Աղա, Թնկրու Կ. Անտոն Աղա, Սաքանան  
Մէլքոն Աղա, Ազնաւորեան Գէորգ Աղա, Մը-  
սրբեան Գրիգոր Աղա, Պօղուձու Խաչատուր  
Աղա և Արդար Յակոբ Աղա:

Այս աստը երեսիոխանք Իշխանապետին  
հետ մէկտեղ պատասխանատու էին Բ. Գրան  
աւջին Ազգին կողմանէ ամէն Ազգային դոր-

Տողութեանց համար : Երբոր Ազգային ժողովոյն ընտրութեան թուղթը Հռովմ հասաւ՝ Պիոս Բ. Պապը իտիոյն նորոգ հաստատուած Նախագահական ակտոսին վրայ, զՆուրիճան Անտոն վարդապետը Արքեպիսկոպոս ձեռնադրեց, և ամենայն իշխանութեամբ և Ազգին իրաւունքներով ու առանձնաշնորհութեամբ զանիկայ ձոխացոյց, որոնցմէ գլխաւոր էր Նախագահական թէմին հարկաւոր անսած Վաւառներուն վրայ մինչև ց 10 եպիսկոպոսներ օրհնել իր նախագահական իշխանութեանը ներքև : Եւ հրամայեց ֆախազեան Վէորգ Վերապայծառին ալ որ Եզմիր իր եղբօրը տունը նստի : Ասանկով Ս. Քահանայապետը այն ժամանակ Ազգին ընտրութեան իրաւունքը ձանչցաւ և ի գործ ալ դրաւ :

Այլ աւանդ թշուառութեանս, ողորմելի ժողովուրդը դեռ նորոգ աքսորէն Կ. Պօլիս դարձած՝ իրենց սրակն անհաշա թշնամութիւնը, հակառակախրութիւնը, ազդակործան կողմնակցութիւնը արմատէն խլելով և ազքատաց սնտուկն ալ միացնելով՝ եղբայրաբար մէկ սիրտ և մէկ հոգի միաւորուած Ազգին յառաջագիմութեան, զարգացման և պայծառութեանը կը

նայելին: Ասոր հակառակ Հռովմ քաղաքը Ազգային եկեղեցականաց հակառակասիրութիւնը, և անհաշտ թշնամութիւնը օրաւոր կը սաստկանար և դրէ թէ վերջին ծայրը հասած էր: Ասոնք ամէն ջանք ի դործ դրին, փուճճ ընդունայն պատճառանքներով, շինծու թուղթերով, սուտ ստորագրութիւններով, Բրօքականային մէկ քանի պաշտօնատէրները ձեռք ձրղեցին, որոնցմով այն դաւառական Ապիսկոսոսաց ձեռնագրութեան դործադրութիւնը առ ժամանակեայ խափանեցին, մինչդեռ Գեր. Նուրիճանը Հռովմ քաղաքն էր: Այս առաջին յաջող քայլէն, այն նախանձոտ և ազգատեաց եկեղեցականք ողի ասնելով՝ սկսան դարձեալ զլուխ վերցընել, նորէն Ազգին մեծամեծ վընասիւքը իրենց բաղդին յաջողութեանը միտ զնել:

## 7.

1. Հռովմէական Հայոց ներքին և արտաքին երկու խանութեանց բաշտոնաճը. — 2. Ազգային խանութարարութեանները. — 3. Յիսուս Փրիլիլ եկեղեցոյն շինութեանը. — 4. Գարջեալ ներքին խառվարութեաններ:

1. Նուրիճան Անտոն Ա. Նախագահ Արքեպիսկոպոսը, երբոր Հռովմէն Կ. Պօլիս հասաւ,

Օսմանեան տէրութիւնը զտնի գլուխ ազգին  
Ծաննալ շուրջ, ուստի յամին 1830 Դեկտեմ-  
բեր 22, Ազգային ժողովով ընտրեցաւ առա-  
ջին ազգայեալ, Չուխուրեան Յակոբոս վարդա-  
պետը, որ ազգին կողմէն Բ. Դրան ներկայանա-  
լով, Խիլայի Աէռաթիւ, և զանազան առանձ-  
նաշնորհիք պատուեցաւ, և այսպէս ի սկզբան  
ազատութեան Ազգիս իշխանութիւնները եր-  
կուքի բաժնուեցան ներքին և արտաքին զատ  
զատ առանձին գլխով:

2. Ասկէջ ետև եղան երկրորդ և երրորդ  
Ազգային ժողովներ, որոնց մէջ քուէարկու-  
թեամբ հաստատուեցան յետագայ ազգային  
կանոններ:

## Կ Ա Ն Ո Ն Ք.

- Ա. Ա՛յսն ընտրութեան Ազգապետին, և երեքի  
բաժնուած Ազգապետական զմեիներ:
- Բ. Ա՛յսն ընտրութեան Ա. երատեսուչ Իշխա-  
նապետին:
- Գ. Ա՛յսն ընտրութեան Ընդհանուր Արեւիտե-  
լան գործակալաց:
- Դ. Ա՛յսն ընտրութեան Ազգապետական վո-  
լանորդին:

- Ե. Վասն ընտրութեան Զորից դատաւորաց  
Զ. " " " Սիւթեպետից և Իշխանացն եկեղեցեաց:
- Ե. Վասն ընտրութեան Իշխանաց աղքատանոցին և հեւանդանոցին:
- Ը. Վասն ընտրութեան Հաստատութեան և օրինաւոր վաւերականութեան կտակաց:
- Եւ այլք պիտանի և օգտակար կանանց արոց, ելից, և մտից որոնք մի ըստ միովն զբունեցան օրինաց զբքին ձջ բոլոր ժողովականաց ստորագրութեամբբ: Եղանիկ օրնր, պղանրե Երջանիկ օրեր, և սկեզնն զար, յարուժ Երկու ալևոր ծերունի հոգևոր գլուխները՝ Նախագահ և Ազգապետը, ազգաւոր Իշխանապետ Երեսօխտան գործակալները, ասանց հետ ձկանեղ բոլոր ժողովուրդը, ձկ պիտ ձկ հոգի ընդհանուր Ազգին բարութեան և յաւանդողիմութեանը հոգւով և մարմնով կը ջանային: Մէկ կողմանէ դեր, Նուրիմաճ առաջին Նախագահը, ըստ հոգևորական պարտուց և բարձր պաշտաման իւրոց իրեն բոլորախը իմաստուն և սուտրինի վարդապետները ժողկելով, անանց խոհական խորհրդովը կարգ և կարգադրութիւններ կը սահմանէր և ժողովըրդեան բար-

ւոյն համար օգտակար օրէնքները կը հաստատէր:

Եկեղեցական պաշտամունքները, Ազգային Տէսերը, և արարողութիւնները անթերի կատարելու կը պատուիրէր. և ինքը անձամբ գիշերային ժամերգութեանց կանխելով ժողովուրդեան հոգևոր և մարմնաւոր բարութեանցը համար միշտ կաղօթէր:

3. Միւս կողմանէ Ազգապետ Իշխանք, Երեսփոխանք և ամենայն ժողովուրդը, ամէն ջանիւ Ղալաթիա Յիսուս Փրկիչ եկեղեցւոյ հիմը կը դնեն: Այս եկեղեցւոյ շինութեանը համար պատուաւոր անձինք, և փառիկասնունդ երիտասարդք գիշերանց հոգն ու մօլորը ծովը կը թափեն: Տիկնայք իրենց սնտուկը կը պարպեն, կոյս աղջըկունք օսկեթել մազերնին կը կտրեն եկեղեցւոյն շինութեանը կրնծայեն:

Աօծուի Աստուծոյ Կենդանւոյ եկեղեցին, Նա ինքն Բարձրեալն Աստուած որ կը փառաւորուի ի մէջ սրբոց իւրոց միաւորելոց ի մի սիրտ և ի մի հոգի, առ ի փառաւորել զՆա ինքն զՊարգեիչն ամենայն բարեաց: Ղասն զի ան անմեղ ժողովուրդը՝ որ հարիւր տարիներէ ետե Ղատին եկեղեցիներու մէջ բնաւ չէր տե-



սաձ իր Ազգային եկեղեցւոյ պայծառութիւնը, իր հայրենի լեզուով Աստուծոյ փառաբանութիւնը, իր սքանչելի ծէսերը և ահաւոր արարողութիւնները որ չէր կրնար բնաւ կշտանալ: Աւստի գիշերանց հեռու անդերէն կանայք և աղջկունք բեռնաւորեալ շարականօք և ժամագիրքերով գունդագունդ եկեղեցիին դուռները ձեռք կառնէին: Աշխանազուն և աղնուական երիտասարդք իրենց բաղձանքէն միայն շարժեալ կը վաղէին դպրութեան համար, և իրենց գեղեցիկ և հրեշաակային քաղցր երգերով զԱստուած կը փառաւորէին, ահա՛ այսչափին հասած էր ժողովրդեան ճշմարիտ Աստուածպաշտութիւնը: Այ՛ ս՛ զրաճնիս առասպել չեն շինծու պատմութիւն չեն, ասոնք ամէնքը մեր օրերը եղան կատարեցան, մեր աչօքը տեսանք: Բայց մե՛ղք, որ շատ քիչ տեւեց Ազգին այս անմեղ վիճակը, այս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ անդորր նախանձելի խաղաղութիւնը:

4. Ասան զի այս ժամանակ հետզհետէ եկան, ժողովեցան ան նախանձոտ և փառասէր եկեղեցականք, որոնք պզտիկուց Վատին դպրոցներու մէջ քահանայական ուսմունքնին սովորած, Վատին եկեղեցւոյ մէջ աչքերնին բացած,

անոնց ծխերուն և արարողութեանցը բնաանացած, իսկ իրենց հայրենի լեզւին ծխից և արարողութեանց բոլորովին ազխտացեալ իրենց համարմունքնին ժողովրդեան առջին կորսունցուցած էին. պէտք էր միւս կողման հրմուտ և վարժ և կեղեցականաց աշակերտիլ, վասն որոյ նախանձնին կրկնապատկեցաւ. սկսան սուտ ումուտ, ծուռ և մոլար վարդապետութեամբ հակառակութեան շար որոմն և սերմն ցանել անմեղ ժողովրդեան մէջ, տգէաները իրենց կողմը սրտայու համար:

Աթերբորդ Պիոս Պապէն, և ՔՁ-դ Գրիգոր Պապէն անթերի կատարուելուն հրամայուած հայրենի ազգային ծխից և արարողութեանց վրայ սաստիկ վէճ՝ յարուցին, զոր օրինակ վարագուրին վրայ, բնծայավերաբերութեան վրայ, ճերագրութեան վրայ, և կեղեցական հանդերձներու վրայ, խաչակնքելոյ վրայ և այլն և այլն . . որպէս թէ ժողովուրդը ասոնցմով հերեախոս և հերձուածող եղան, ուստի սկսան բողոք բողոքի վրայ զրել ի Հռովմ:

Աւերբոր ասոնք այս ամէն խռովութիւններն ու դայթակղութիւնները՝ օր աւուր կը սաստիկացնէին ժողովրդեան մէջ, և ահա՛ այս

ժամանակ իրենց բուն ձեռասունն աշակերտ ըստ  
ամենայնի համամիտ, և համախորհուրդ Բրօ-  
բականտային դպրոցէն կը վայլէր՝ Հասունեան  
Տէր Անտոն վարդապետը, որուն ազգատոհմին,  
ճննդեան և սննդեան պատմութիւնը առանձին  
գլխով հոս կը գրենք, որ սոյն այս ձեռք զարկած  
գործոյս՝ բովանդակիչ և գլխաւոր վախճանն է:

3.

1. Հասունեան Անտոն վարդապետին ծնունդը և գու-  
նանայութիւնը. — 2. Աշգտայէտ պատրիարքոց ընդ-  
բութիւնը և փոփոխութիւնը. — 3. Իրեն ուխտա-  
նշարութիւնը. — 4. Մահ Աստղին Նախագահ Նա-  
րեճան Անտոն գերապայծառին:

1. Գեր. Հասունեանին հայրը Եաղուզ  
(Յակոբ) Իպն Եուսէֆ, մականուանեալ ՀԱՍՍՕ  
Ասորի ազգէն, Բէրիա (Հալէպ) քաղաքը կը բը-  
նակէր, և սանտալձիութեան արհեստին կը ծա-  
ռայէր: Իր բաղձը աւելի լաւացնելու համար  
մէկ քանի բեռ Հալէպու սէվայիներ և մետաք-  
սեղէններ մէկ տեղ առնելով եկաւ Կ. Պօլիս  
մայրաքաղաքը: Հասսօ Յակոբը իւր գործունեայ

աշխատութենովը որ աւուր առաջ երթալով  
քիչ ժամանակէն վերջը փեսայացաւ, բու-  
շաքձեան Եղիազարին, որուն աղջիկը Գէրէզինա  
իրեն հարս առնելով: Եւ որովհետեւ այն ժա-  
մանակ մայրաքաղաքիս մէջ ծիսից խորութիւն  
այնչափ չլլալուն, Յակոբ Հայոց պսակը և ծէ-  
սերը ընդունեց. և փոխանակ Ասորոց բառին  
Հասսո՝ կոչուեցաւ հայերէն բառիւ Հասուն:  
Արդ՝ Հասունեան Յակոբայ ծնան երեք մանչ  
զուակք, Յովսէփ, Անտոն, Անդրէաս, և աղջիկ  
մի Սոֆի անուն:

Անտոնը 1825-ին առեւնները Գօլէճցի քա-  
հանաները Հռովմ քաղաքը Բրօքահանտային  
դպրոցը խաւրեցին քահանայ ըլլալու համար:  
Երբոր հասաւ Հասունեան Անտոնը Հռովմ Բր-  
քօքահանտային մեծաւորները պատճառելով իրր  
թէ առանց իրենց հրամանացը և կամ ըլլալուն  
չընդունեցին զանիկայ իրենց դպրոցը, զուցէ  
անոր դէմքին գծադրութենէն թերեւս զուշա-  
կեցին ապագայ Եկեղէցւոյն քաշելու տառա-  
պանքը:

Ուստի ազգային քահանաներէն Տուրսու-  
նեան Հ. Բարսեղ և Յովնանեան Հ. Կարապետ  
արդապետները՝ իրենց բնակարանը ժողուելով,

անոյա զըրին Սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն զըպ-  
րոցը, ուր հինգ վեց տարի մնաց. և յետոյ  
վերոյիշեալ վարդապետաց ջանքով և աղա-  
չանքովնին ժ.Յ. Լէօն քահանայապետը հաճե-  
ցաւ Բրօրականտային դպրոցը ընդունելու: Հոս  
երեք տարիի չափ կարդալէն ետքը քահանայ  
ձեռնադրուեցաւ:

Պեր. Հասունեանը 1833-ին ատենները  
հայրենիքը դառնալով, իւր բնակարանը դրաւ  
Ղարաթեա Յիսուս Փրկիչ Մայր եկեղեցւոյն վա-  
նատան մէջ: Ասոր չորս կողմը բոլորեցան, շքու-  
ջապատեցան այն հակառակասէր եկեղեցական-  
ները, որոնք իրենց ձեռքերնին դործիք և պա-  
տըրուակ առնելով՝ եկեղեցւոյն ծեսերը և ա-  
րարողութիւնները անվերջանալի կռիւներու մէջ  
ընկըղմեր էին: Եւ ահա տսոնց աղէկ կրճա-  
ւայէր Տէր Անտոն Հասունեանը, զիշեր ցորեկ  
գրելով Բրօրականտային պաշտօնատեարց: Եւ  
ասոր թելադրութեամբը՝ այն ազգատեաց եկե-  
ղեցականները աւելի համարձակութիւն առ-  
նելով՝ Նախագահին դէմ խիզախեցին. և լա-  
տին քահանաներնալ այս խռովարարներուն օգ-  
նեցին իրենց շահուն համար:

2. Այս ժամանակ յամին 1834 Ապրիլ 17

Հանդեաւ ի Տէր առաջին Ազգապետ Հռովմէական Հայոց Չուխուրեանն Յակովբոս վարդապետը: Ազգային ժողովով ընտրուեցաւ՝ երկրորդ Ազգապետ Չուխաճեանն Յարութիւն վարդապետը, որ ի շնորհս և միջնորդութեամբ Արսեմափայլ և Բարձրապատիւ իշխանապետին Տիւղեանն Յակոբայ Չելեպոյն՝ Բարձ. Գանէն պատուեցաւ Պատրիարքական իշխանութեամբ հաւասար Հայոց, և Յունաց պատրիարքաց: Նոյն Ասեմափայլ իշխանապետին միայն ազդու և հզօր միջնորդութեամբը, Ազգիս սեղանաւոր Սարրաֆներնալ իրենց Սարրաֆութեան Խույրութլու Պէրաթնինն Տէրութէնէ ընդունեցին: Իրաւցնէ ազգասէր, և վեհազն իշխանապետին զիշեր և ցորէկ ջանքը ու փափաքը ուրիշ բան չէր՝ և թէ ոչ իր սիրելի Ազգին բարիք ընել, և թշուառութեան ամմէն կերպին օգնել: Երանի թէ այն բարերարեալ Սարրաֆները Հանգուցելոյն օրինակին հետևելով՝ սիրեցեալ Ազգին իւրոյ ետքի ժամանակները ապաշնորհ չի գտնուէին: Յամին 1835 Ապրիլ 17 վախճանեցաւ երկրորդ Ազգապետ և առաջին Պատրիարք Չուխաճեանն Յարութիւն վարդապետը. և Ազգային ժողովով երրորդ Ազգապետ Պատրիարք

ընտրուեցաւ Ներսէրձեան Հ. Գրիգոր վարդապետը՝ Վիէննայու Մխիթարեան միաբանութենէն: Այս ժամանակ Գեր. Հասունեանը դադանարար, իսկ իր համախօհքն յայտնապէս ընդդէմ Նախագահին կը դործէին: Վերջսպէս Գեր. Նուրիճանը վասն հասարակած բարւոյն այս խռովիչները շահելու մտօք՝ իր աթոռակալ Սէլվեան Յովհաննէս վարդապետը փոխեց՝ և անոր տեղը դրաւ Շիշմանեան Անտոն վարդապետը, ասիկայ երբոր իր Աթոռակալութեան սահմանէն շատ դուրս ելլելով իրեն տիրոջը Գեր. Նուրիճան Նախագահին ալ սկսաւնէ խորոտալ և սպառնալ, պետք եղաւ իրեն իշխանութենէն հանել՝ և յանձնել դարձեալ Սէլվեանին Աթոռակալութիւնը: Հասունեանք Գեր. Նուրիճանին այս ըրածին դէմ այնչափ բողոքեցին, և ամբաստանեցին Սէլվեանին վերայօք, որ մինչև Հռովմայէն հրաման եկաւ Գեր. Նուրիճանին փոխել իր Աթոռակալը: Ասկէ ետև Գեր. Նուրիճանն ալ քահանայից ցանկին մէջ գրել տուաւ թէ «Աթոռակալ ոչ դոյ»: Հասունեանք ատով ալ դոհ չեղան Վիէննայի Յ. Մխիթարեանները ձեռք առին, շոհեցին, փայփայեցին, մեծամեծ խոստմունքներ տուին,

ուրիշ Ազգային Միաբանութիւնները մէկդի ձգելով զիրենք միայն գործածելու և այլն . . և անոնց սիրտ և յոյս ալ տուին ըսելով որ, ոչ ոք ձեզի դէմ կրնայ ելլել, քանզի Աւստրիոյ կայսրը, և առաջին պաշտօնեայ Մէթէռնիք իշխանը քանի որ ձեր բարեկամներն են : Այսպիսի շողոքորթութէններէ ոմանք խափուելով՝ սկսան յայտնապէս ընդդէմ հրամանաց Նախագահին գործել, դժբաղդարար մէկն ալ բարեմտութեամբ խափուած նորընտիր Ազգապետ Պատրիարք Էնքսէրճեան չ. Գրիգորը եղաւ որուն քանի անգամ Գեր. Նախագահէն հրաման գնաց ձայնաւոր Պատարագ մատուցանելու. պատասխանեց թէ՛ Պատարագին սկիզբը պէտքէ որ խաչակնքեմ, և ձերարեբութեան ժամանակ ժողովողեան վերայ չի խաչակնքեմ և այլն . . : Ասոնց վէճը այնչափ սաստկացաւ և չափը անցաւ, որ նոյն իսկ Հասունեանք սկսան կամաց կամաց հեռանալ և բոլորովին աներեւոյթ ըլլալ : Ազգը տեսնելով երկու իշխանութեանց մէջ վերջին աստիճան հսկառակութիւնը, Մեծապատիւ Գլճեան ազգասէր Գրիգոր իշխանագուն երեսփոխանը Ազգին կողմանէ Պատրիարքին ներկայանալով յայտնեց իբն



Հարկաւ իր հրաժարականը Բ. Գրան ասլու՝  
Էնքսերձեան շ. Գրիգոր վարդապետը հազիւ  
ուժ ամիս Պատրիարքական պաշտօնը վարած  
էր՝ հրաժարեցաւ իր իշխանութենէն, և անոր  
տեղը ազգային ժողովով շորրորդ Ազգապետ  
Պատրիարք ընտրուեցաւ Վենետիոյ Մխիթարեան  
միաբանութենէն Ասայեան շ. Կարապետ վար-  
դապետը: Եւ քիչ ժամանակէն Վեցմատեան շ.  
Միքայէլ վարդապետին ալ հարկ եղաւ Մայ-  
րաքաղաքէս հեռանալ: Ահա այսպէս Յ. Հարք.  
Վենետիկանք անդիտութեամբ Հասունեանց փա-  
ռասիրութեան և նախանձուն զոհ եղան. իրենք  
ալ ետքը իմացան, և աղէկ ծանչցան իրենց  
խափուիլն ու սխալիլը, որ Հասունեանք միայն  
իրենց շահուն և օգտին համար ձեռքերնին  
գործիք էին առեր զանոնք, որոնք՝ նեղութեան  
և փտանդի մէջ ընկած ժամանակնին՝ ձեռք չի-  
տայէն և չօգնելէն ի զատ, սկսան պախարակել  
և բամբասել զանոնք, ահաւատիկ այս է հի-  
մակեան ժամանակիս իմաստութիւն և քաղա-  
քականութիւն բաւժնին:

3. Բայց Գեր. Հասունեանը ինչպէս որ զրու-  
ցեցինք աներևութարար կը գործէր, մինչդեռ իր  
համախոհները անպատկառ յայտնապէս ընդ-

դէմ Գեր. Նախագահին կը պատերազմէին: Եւ այնչափ զրեցին Հռովմային, մինչև Գեր. Նուրիձանին յանդիմանութեան թուղթ ալ բերել տուին, Վերջապէս այս ամենայն Հասունեանց հակառակութենէն, թշնամութենէն, սրտազողէն այն Ս. ալևոր ծերունի առաջին Նախագահ Նուրիձան Տէր Անտոն Արքեպիսկոպոսը, ծանր հիւանդանալով, պէտք եղաւ Հասունեանին ձեռքը յանձնել այն ամմէն Նախագահական իշխանութիւնները Բրօքականտայէն եկած հրամանին համեմատ: Որ և այս իշխանութիւնը ձեռք ձգելու համար, մէկ կողմէն ազգին վախ կուտար, և առաջուց ասոր ձարը տեսնելու է՛ կըսէր, չըլլայ թէ յեա մահուան Նախագահին Ազգին հողեօրական վերատեսչութիւնը Վատին Ապիսկոպոսին յանձնուի: Միւս կողմանէ իրեն համախոհ քահանաները կը վախցընէր, ըսելով՝ որ թերևս Գրիգոր ԺԶ. Պապը պարապօրդութեան աթոռոյն ժամանակ, Մխիթարեաններէն մէկը տեղապահ կընարէ: Ուստի երբոր ինքը Բրօքականտային առջին Ազգին կողմանէ Վատին Ապիսկոպոսին տեղապահ ըլլալուն անկարելիութիւնը առաջ կը բռնէր. միւս կողմանէ համախոհներն ալ զինքը աթոռ

ռոյն պարապօրդութեան ժամանակ յառաջա-  
դոյն տեղապահ ընտրուելուն կաղաչէին: Աեր-  
ապէս իրենց դիմանց և փափաքանաց հասան,  
որուն համար Հռովմայէն առանձին թուղթ  
եկաւ Գեր, Հասունեանին: Այս աթոռակալու-  
թեան և տեղապահութեան ժամանակ Ազգին  
աւելի հաճելի ըլլալու համար սկսաւ Եկեղե-  
ցականաց դէմ չափէն աւելի խստութիւններ  
բանեցնել, կախակայել, բանադրել արգիլել  
և այլն . . . մինչև իր անխոհեմ ճանբովը Տէր-  
տէրեան Տէր Կարապետին տաճկընալուն ալ  
պատճառ եղաւ:

4. Յամին 1838 Յունվարի 20 հանդեաւ  
ի Տէր Ս. և ալևոր ծերունի Նուրիճան Տէր  
Անտոն Արքեպիսկոպոս, և առաջին Նախագահ  
Կ. Պօլսոյ. իրաւցնէ նահատակ եղաւ ան հա-  
կառակորդ Եկեղեցականաց ձեռքէն. իր ան-  
դիւա և պատուական անձը՝ իբրև հովիւ քաջ  
դրաւ իր սիրելի հօտին վրայ, բոլոր ժողո-  
վուրդը ի սուք և ի տրամութիւն նստաւ, ար-  
տասուալից աչօք շատ օրեր ողբացին՝ և պիտի  
ողբան զանի մինչև յաւիտեան:

9.

1. Ընդդրութեան երկրորդ Նախագահին Կ. Պօլսոյ. —
- 2 Նախագահ Մարտշեանին Կ. Պօլսոյ Գալաստաք. — 3
- 4 եր. Հաստանեանին Ալեոսախալալեանը. և ի զաղա-  
սիայ յանիշտութեան երևալը:

1. Յամին 1838 փետրվար 2 չորեքշաբթի առ ուր զուժարեցաւ ընդհանուր Ազգային ժողով ի Յիսուս Փրկիչն Ղալաթիոյ. ուր ժողովեալք էին Ազգապետ Գեր, Պատրիարքն, Տեսուչ Իշխանապետն, Գործակալք, Երեսփոխանք, Ամիրայք, Ազնուականք և Ներկայացուցիչք, իշխանք աղքատանոցին, եկեղեցականք և այլն և այլն . . . շատմը խորհրդածու թիւններէ վերջը և ուղելով միշտ խաղաղութեան, սիրոյ, և եկեղեցւոյ օգտին առելի հետեիլ, ամենուն հաճուհաւանութեամբ, Հանգուցելոյն տեղը իրենց հոգևոր զլուխ միաբերան ընտրեցին երկրորդ Նախագահ զԳեր. Մարուշ Պօղոս վարդապետը: Եւ այս ընտրութիւնը ըստ Ազգային վաղեմի օրինաց համեմատ, Հռովմայ ևս ծանուցուելուն վերայօք՝ նոյն ժողովքին Մահալարը, և Մաղպաթայն կարգաւ ստորագրեցին, և ըստ այնմ ի գործ դրին:

## ԱՆՈՒԱՆՔ ՍՏՈՐԱԳՐՈՂԱՅ.

- Հայր Կարապէտ Վ. Եսայեան, Պատրիարք.  
Ստեփան Վ, Բէհլիվանեան Վ.է.քիլ.  
Յակովբ Տիւղ. Իշխանապետ.  
Յովսէփ Տալուժ.  
Անտօն Կէօզէքեան.  
Երամ Աբրահամեան.  
Յովհաննէս, Յ. Թընկուեան.  
Յակովբ, տամաթ, Բէքմեղեան.  
Վիշէն Գըլճեան.  
Պէտրոս Թընկուեան.  
Անտօն Ասկէրեան.  
Պօղոս Պիլէզիկճեան.  
Յարուժիւն Թընկուեան.  
Պէտրոս Եաղլըքճեան.  
Գէորգ Ազնաւուրեան.  
Յարուժիւն Կէօզէքեան.  
Պէտրոս Մարուշ.  
Ամիրայ Յովսէփ.  
Պէտրոս Տալուժեան.  
Յարուժիւն Կիւղէլեան.  
Անտօն Աբելեան.  
Մկրտիչ Թալուքճեան.

- Անտոն Թընկուեան. Կ.  
Մինաս ձէպէճեան.  
Ավիք Էնտազեան.  
Գրիգոր Թընկըռ Աստուածատուրեան,  
Անտոն Քարաքաշեան.  
Աստուածատուր Թորոսեան,  
Պետրոս Քանթարեան.  
Բէթրաք Ղազարոսեան.  
Կարապետ Սամուէլեան.  
Յարութիւն Մուրատեան.  
Անդրէաս Հասունեան.  
Ստեփան Ղազարոսեան.  
Յակովբ Չէրքէշեան.  
Նաում Ֆարրա.  
Անտոն Անանեան.  
Անտոն Երկանեան.  
Կարապետ Հաճի Ստեփանեան.  
Մկրտիչ Ազարեան.  
Մէլգոն Սարանեան.  
Մարկոս Ակոբօ՛Ֆեան.  
Պօղոս Արապեան.  
Յովհաննէս Քույումճեան.  
Յակովբ Տըվազ.  
Յովհաննէս Խւչ Քարտաշեան.

Հիւմրիւ զ Հիւմրիւ զեանն.

Անտոն Բէքմէզ.

Յովհաննէս Զէմպէրէքձեան.

Իշխանք Աղքատանոցին.

Երկրորդ Նախագահին ընտրութեան Ազգային Ժողովոյն թուղթը երբոր Հռովմ հասաւ, իսկոյն Գրիգոր ԺԶ. Պապը Կ. Պօլսոյ երկրորդ Նախագահ հաստատելով զՄարուշ Պօղոս Վարդապետը՝ շուտով Կ. Պօլիս երթալու հրամայեց. և Ազգին գրած թղթին մէջ արդարացի գանգատով ալ բռաւ իրր յղուք առաջին հին սովորութեանը յարմար երեք անձ մեզի պիտի առաջարկէիք, իսկ այս անգամ մէկ անձ մը միայն ներկայացուցիք և այլն . . .

2. Իսկ երբոր հասաւ Մարուշ Գերապայժառը Կ. Պօլիս. Ազգը բոլոր սիրով ընդունեց զինքը՝ իրրև հայր գորովագութ. որ և ընտրեց իրեն Աթոռակալ զՀասունեան Անտոն վարդապետը, ինչպէս որ հարկը կը պահանջէր:

Առջի օրէն պատեցան Մարուշ Գերապայժառին չորս դին, Հասունեան Տէր Անտոն Աթոռակալ, Ատաբձեան Տ. Տիմոթէոս, Շիշմանեան Տ. Անտոն, Արանկիւլ Տ. Յովսէփ, Օթձուեան Տ. Յովսէփ, Հալաձեան Տ. Անտոն, Տէվ-

բիշեան Տ. Յլիզոր և այլք, որոնք իրենց ան-  
համարոյր բնութեան յարմար կը յորդորէին զա-  
լեոր Նախագահը ընել, հրամայել, կախակա-  
յիլ և այլն . . . ինչոր իրենց խելքին կը փշէր-  
Բայց այն ծերունին առաջուցմէ Ազգին բնա-  
ւորութեանը հմուտ և փորձառու ըլլալով,  
աղէկ կը տեսներ անոնց բըռնած ծանրան ուր  
կը հասնի. ուստի ինքը խոհեմութեան, խա-  
ղաղութեան և սիրոյ ճամբէն ամենեւին չէր  
հեռանար միշտ վերջը մտածելով : Ասոր հա-  
մար պէտք էր իրենալ իր հանգուցեալ նա-  
խորդին պէս շարչարուիլ ի Հասունեանց ան-  
տի, որոնք որ զիշեր ցորեկ պատճառ կը բըն-  
տըռէին կըռուելու հետք : Եւ ահա իրենց մէկ  
յարմար առիթմալ պատահեցաւ . բայց այս  
առիթը չէ պատմած՝ յառաջագոյն սա պէտք է  
զիտնալ, որ երբոր Հոռովմեական Հայերը Տէրու-  
թենէն զատ Ազգ ճանչցուեցան, Ազգը իրեն  
եկեղեցականներուն զգեստին ձեն ալ ուղեց տալ .  
այսինքն զլուխնին քառակուսի խաչ դտակ, և ա-  
նոր վըրայ ծածկոց ըստ հին արևելեան սո-  
վորութեան, անոնք՝ որ պաշտօնաւարք էին,  
կամ ի ծայրագոյն վարդապետութեան ի վեր  
ամբարձեալ, խաչ գրտակաց վըրայ մետաքսեայ



բարակ քօղ (պիւրիւնձիւք) կը ծածկէին. իսկ մնացածը մետաքսեայ ծանօթէս:

Նախագահ Մարուշ Գերապայճաւը աեսնելով երկու միաբանութեանց արժանաւոր ընտիր երկու անձերը. այսինքն Մխիթարեան միաբանութենէն շիւմրիւղ Հ. Գէորգ (որ հիմնայ Աբբա հայր է) և Անտոնեան միաբանութենէն Յովնանեան Հ. Կարապետ վարդապետաց, առաքելական ջանքն ու վաստակնին, շնորհեց երկոցունց. մէկ տեղ ծանօթէսի տեղ բիւրիւնձիւք ծածկել:

3. Ասկից Հասունեանք ի խոր խոցեցան, նրասան ի ժողով Գեր. Հասունեանին քովը, և ապստամբեցան Նպիսկոպոսէն, թուով իրր տասը, որոնց պարագլուխն էր Հալաճեան Տ. Անտոնը, ինքն իրենց բռնի դրին քօղ՝ բիւրիւնձիւքները, և սկսան արձակ համարձակ պրտրտիլ փողոցները, ազգին զայթակղութիւն տալով: Աղորմելի Նախագահ կապառնայ ապստամբաց պատիժ տալու բայց Գեր. Հասունեանը դէմ կը դնէ, ասելով, չես կրնար պատժել. որով ծերունի Նախագահին ձեռուրները կը կապէ, և ապստամբք իրենց բաղձանացը կը հասնին. և սակէ ետև Աթոռակալ Հասունեանը մնացած ամ-

մէն քահանայից ալ առ հասարակ կը հրա-  
մայէ պիւրիւնճիւկով ծածկել գլուխնին:

Այս ատեններս Գաղատիոյ ողորմելի ժո-  
ղովուրդը կը հէժէր, կը չարչարուէր, և կը կե-  
ղեքուէր մէկ քանի անմիտ, նախանձոտ և ազ-  
գատեաց քահանայից ձեռքէն, որոնք իրենց թե  
և թիկունք առնելով զՀասունեանն, կը գոր-  
ծէին ինչոր կախորժէին. որոնց պարապլունիս  
նոյն քաղքին առաջնորդ Առաքելեան Տէր  
Կարապետն էր: Ժողովուրդը ասոնց ըրած զրկա-  
նացը չիկրնալով ալ համբերել, Նախագահ  
Մարուշ գերապայծառին բողոքեցին. Հասու-  
նեանք որչափ որ աշխատեցան այս ապստամ-  
բութեանց առջևը առնել չիկրցան: Ասան զի  
Գերապայծառ Նախագահը սրարտաւորեցաւ  
մէկ քննիչ մը առաքելու խոովեալ ժողովուրդը  
խաղաղացնելու համար:

Գեր. Հասունեանը այս պաշտօնը կամովին  
յանձն առաւ, և 1838-ին վերջերը Գաղատիայ  
հասաւ. բայց ափսոս . . . ժողովուրդեան ու-  
րախութիւնը քիչ տեւեց: Այս քննիչը անխիղճ  
եկեղեցականաց կողմը բըսնեց, և Աստուծոյ ժո-  
ղովուրդը կրկին անգամ գերութեան մասնեց.  
Հարաւային դասնաշունչ հովը փրչելով ալ-

կոծեալ ծովի պէս զանոնք խռովեց, և յետոյ  
շուտով փախաւ եկաւ ի Ա. Պօլիս: Ահա ասկից  
ետքը ան փառասէր եկեղեցականները ձեռք  
ձեռքի տուած ծանրացուցին իրենց լուծը ողոր-  
մելի ժողովրդեան վերայ: Գաղատիոյ առաջնորդ  
Առաքելեան Տ. Կարապետ. Պահատուրեան Տէր  
Պէտրոս, Արքեպիսկոպոս Տ. Գրիգոր, Բէքմեզեան  
Տ. Յովսէփ և այլն. մէկը Աւլու Կաթողիկոսի պէս  
պատգամ կուտայ, միւսը կամ ծեծ, և կամ  
բանադրանք կըպօռայ, և մին աղքատաց արիւնը  
ծրծելով իր քսակը միայն լեցընել կընայի-  
րնչ ևրկընցնեմ խօսքս, քիչ ժամանակէն վերջը  
Գաղատիակէն տատուերկու տուն ուսանաւոր մը  
կլաւ. որ Հասունեանէն սկսեալ ամենուն ան-  
խիղճ ընթացքը զատ զատ տունով կընըկա-  
րադրէ, և վերջը ողորմելի ժողովրդեան թշուա-  
ռու թխներ, և եկեղեցականաց ոմանց անդթու-  
թիւնը գեղեցիկ կատարադրէ, և ահա քեզի  
Հասունեանը

» Ե. քմէքձի պաշընըն թաղարէր Խոսս Աւու,  
» Վ. իբարբմ արիւնքէք շքարար օյուու:

» Ա. իրի յիւ տալանըպ իւրքիւ թախ քօյուու,

» Պար նէչարուք քաչար կէօսթէրմէզ պօյուու:

Եւ այս ուսանաւորին վերջին երկու տեւ-

ներն ալ գննեք հոս, որպէսզի Վեր. Հասունեա-  
նին քննիչու թէնէն յառաջ եկած նոյն ժողո-  
վողեան այն եկեղեցականաց վերայ ստացած  
գաղափարնին կատարեալ հասկըցուի:

» Իմանարդ բութ բէրէզ ութանրո հիճապտան,  
» Հարամքեար հիլէսպազ խաֆ չէքէր ինսաֆ-  
տան,

» Քարանդք կիճէլէր մահ օլուր շէֆաֆտան,

» Ինսաֆարդ բարազլար քօքքմազլար Ալլահտան:

» Ե՛ս բապպի, սէն քութար շու ձէմասթը,

» Քիւլ օլաու քալմաուր մէսէս միւրաաթը.

» Զալալլը քօեունլար քայս կթաի բահաթը,

» Զուլումքեար էլլէրտէն սանա տրը Ֆիրեաուր:

## 10.

1. Գեր. Հասունեանին ճանապարհորդութիւնը է վեհ-  
նա. — 2. Եւ Օգնիչ Եղիշոպոս յեանադրութիւնը:

1. Բայց Հասունեանք իրենց անճնասէր նը-  
պատակին հասնելու համար, մէկ քանի տարի,  
գարնանային ժամանակ՝ առջի ամսառները պէլ-  
ուսաու անտառներու մէջ խորհուրդի կը նըս-  
տէին, ուր որ Գեր. Հասունեանը օղափոխութեան

Համար զիւղագնացութեան կերթար: Բայց այս  
ժողովքները երկուքի կը բաժնուէին: Առաջ-  
նոյն մէջ միայն երեք հոգի, Հասունեան Տ.  
Անտոն, Շիշմանեան Տ. Անտոն, և Ատարձեան  
Տ. Տիմոթէոս: Իսկ երկրորդականները էին, Աս-  
լանկիւլ Տ. Միքայէլ, Տէվրիշեան Տ. Գրիգոր, Հա-  
լաձեան Տ. Անտոն, Օթձուեան Տ. Յովսէփ, պրզախ  
Մարգարեան Տ. Յովսէփ և այլն . . . Այս ժո-  
ղովներուն մէջ շատ խորհրդածութիւններ,  
խօսամունքներ, և դաշնադրութիւններ եղան,  
ուր գլխաւորաբար հաստատուեցաւ: Նախ՝ Նա-  
խագահական իշխանութեան յաջորդութիւնը  
ձամբովմը իրենց ձեռքը ձրգելու ճրգնիլ, և  
այս բնականապէս կը վիճակէր Հասունեան Տ.  
Անտոնին: Երկրորդ՝ թէ որ ասիկայ յաջողելու  
ըլլայ անկէ ետե թէմական եպիսկոպոսաց ձեռ-  
նադրութեան գործադրութիւնը ջանացուի  
ձեռք բերելու, և առաջին ձեռնադրուելունը  
անտարակոյս ան երկու առաջին խորհրդական-  
ները պիտի ըլլային: Երրորդ՝ որովհետեւ իրենց  
առաջ երթալուն Ազգին կողմանէ բոլորովն յոյ-  
սերնին կարած էին, սպա այս բանիս յաջողու-  
թեանը համար իրենց յոյսը պէտք եղաւ Հը-  
ռովմ քաղաք Բրօրականտային պաշտօնատեարց

ումանց վըրայ դնել, ասոնց առջին ինքը զն-  
քնին միշտ ցուցընել՝ զուտ Հռովմէական կա-  
թօլիկ . . Սուրբ Աթոռին իրաւանց, և իշխա-  
նութեանց ըստ ամենայնի պաշտպան . . ամե-  
նաջերմեռանդ, և հլու հպատակ ամենայն հրա-  
մանաց և ակնարկութեանց նոցին, վերջապէս  
հաւատարիմ, և ամենահնազանդ ծառայք Բրօ-  
բականտայի, ըստ որում ըսին՝ մէկ անգամ  
Հռովմային վտահութիւնը որ վաստակելու ըլ-  
լանք, այնուհետեւ ամմէն բան մեզի կը դիւրա-  
նայ, և անոր ձեռքով ուրիշ տերութեանցն ալ  
զօրութիւննին, և օգնութիւննին, կտանանք:  
Չորրորդ՝ այս իրենց վառառէր նպատակին դիւ-  
րաւ հասնելու համար իրենց կողմը մէկ քանի  
հատ երեւելի և հաւատարիմ աշխարհականներն  
ալ որսացին. որոնց զլիսաւորը եղաւ Քրնկոեան  
Յովհաննէս Աղայն, որդի Յովսէփայ, արհեստիւ  
Գրամատիոխ Սեղանաւոր, այս է, Սարրաֆ, այս  
մարդը անտեսակ մեծատուններէն էր, որոնց վը-  
րայ 4-դ թւոյն մէջ պատմեցինք: Այս անձին  
հետ մէկ տեղ Գ. Հասունեանը, և Աստարձեանը  
քանի՞ քանի՞ անգամ արդեօք զաղանի խոր-  
հուրդինստեցան Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյն  
մեծ սենեկին մէջ՝ Օգնիչ Եպիսկոպոսու թիւնը

ձեռք ձըգելու համար՝ իրենք աղէկ զխտէն։  
Եւ ասիկայ աւելի դիւրութեամբ ձեռք ձը-  
գելու համար Հասունեանք իրենց կողմնա-  
կիցներուն անդադար վախ կուտային՝ իբր թէ  
Մարուշ Նախագահին կենդանութեան ժա-  
մանակ յառաջագոյն՝ թէ որ ապահով բանիմը  
գլուխ չի կապուի, թէրևս Նախագահին մա-  
հուանէ վերջը Հռովմ Աէնէակոյ Մխիթարեան  
Միաբանութենէն փախազեան Նըքնատիոս Գե-  
րապայծառը հանգուցելոյն տեղը կը յուղարկէ  
ըսելով ողորմելի պարզամիտ ժողովուրդը, իրենց  
փառասէր վախճանին, և անձնասէր օգտին ա-  
ղէկիմը կը ծառայէցուցանէին. ուզած թուղ-  
թերնին գրել տալով և բոլորովին նման փա-  
փազեան Գէորգ Գերապայծառին ժամանակ ե-  
ղածներուն պէս (տես թիւ 5),

Հինգերրորդ՝ եղած հաստատութիւնները  
ձեջերնին գրէ թէ երդունցան, որ հոգւով չափ  
ջանան, որ և իցէ Ազգային ոյժ և զօրութիւնը  
տկարացընել, օրենք իրաւունք և կանոնները  
բառնալ ոչնչացնել, և գլխաւորաբար Միաբա-  
նութեանց ազգայնութեան հոգին և ազգէ-  
ցութիւննին՝ որ ճամբով ըլլայնէ թող ըլլայ  
Բրօրականտային ձեռք բոլորովին տկարացընել,

որուն ամբաստանելով և զըսարաւելով միշտ՝  
թէ Ազգը իրենց ձեռքը զործիք առնելով իրեն  
իշխանութեանը դէմ կը զինին և այլն և այլն . . .  
որպէս զի այնուհետեւ ըստ ամենայնի արձակ  
համարձակ կարող ըլլան իրենց փառասէր նը-  
պատակին անարգելք հասնիլ:

2. Ասոնց ամենքը այսպէս կարգի դնելէն  
վերջը, սիսան գանգասները շատցնել անդա-  
դար գրել ի Հռովմ Մարուշ Նախագահին վը-  
րայ. թէ ծէրէ, անկարէ, և իր թէմը չէ կա-  
րող կառավարելու, ուստի հարկաւ Օգնիչ Նախա-  
կոպտսի մը կարոտ . . և այնչափ զրեցին, և  
Զանաղին վատահամբաւել գանիկայ, որ մինչև  
հաւանեցուցին զԲրօրականտան որ կանչեց ի  
Հռովմ զՎեր. Հասունեանը: Մեյմալ յան-  
կարծ երկու օրուան մէջ Գանուրի վերայէն  
դէպ ի Վէննա Վեր. Հասունեանին ճամբորդու-  
թիւնը կը լսուի. ո՛ւր, ո՛ւր կը վազէս կերթաս  
ո՛վ մարդ, կեցիր մէկ անգամ, մտածէ թէ ար-  
դեօք այս կոչումը Աստուծո՞ւ է, կամ թէ  
իր Նախախնամութիւնը զքեզ այս բարձր ա-  
հագին և սոսկալի պաշտաման արդարեւ կոչէր է:  
Նւ ահա ի՞նչ կը նայիս, մէկ երկու շաբթէ ետքը,  
կէս ճամբան կառքէն իյնալը, երեք օր կիսա-



մահ ինքը զինքը չի ծանշնայը, չորս կողմը կոտորակը, մահուան դուռը հասնիլը, ու նորէն Կ. Պօլիս դառնայլը մեկ եղաւ: Այս երկրորդ անգամ Աստուծակ իրեն եղած ազգարարութիւնը բաւական պիտի ըլլար զինքը արթնցնելու. բայց ի՞նչ օգուտ, կարծէս թէ միշտ Աստուծոյ կամացը դէմ կը խիզախէր: Վասն զի երբոր երեք չորս ամսուան մէջ ինքը զինքը հազիւ գտնալով՝ նորէն ծամբորդութեան ձեռք զարնելու վերայ էր, ահա՛ քեզի երրորդ անգամ ազգեցութիւն Աստուծոյ կողմանէ: Յրմը Ազգային Պատրիարքարանը մէկ քանի հոգւով զաղտնի ժողովակներ ընելէն վերջը, ուրախութեամբ իր սննեակէն դուրս կելլար, կարծես որ աներևոյթ ձեռքէմը կը զարնուի, սանգուխէն զլիսի վար կէլնայ, զլուխը կըճաթի, ոտքը կը սախթի, կիսամահ կըվերցնէն կը ասանին Շաշեան էզաճի Վիշէնին տունը. հոն հազիւ հազառոզութիւն գտնալով, կսկսի նորէն ձեռք զարնել իր դիտած նպատակին ժամ մի առաջ հասնիլ. ողորմելի՛ տեսարան մարդկային վառասիրութեան:

Յանկարծ այս երկրորդ անգամ Հռովմ երթալու Գեր. Հասունեանին, ծանապարհորդու-

Թիւնը քաղաքիս մէջ լըսուեցաւ, իբր թէ Հը-  
ռովմէն կանչուեր է հարկաւոր գործքի մը հա-  
համար: Ուստի 1842-ին սկիզբները Հռովմ  
քաղաքը, կը հասնի, ամենայն դաղանու թեամբ,  
և սուանց հաւանութեան Ազգին, յամին 1842  
Յունիս 7-ին Օգոստոս Նպիսկոպոս ձեռնադրուե-  
լով, և իր նպատակին յաջողութեամբ հան-  
նելու կերպ կերպ հրահանգներ ընդունելով և  
յիշեալ տարւոյն Սեպտեմբեր 21 ամսապարե-  
լով կը դառնայ կուգայ Կ. Պօլիս: Ազգին Պատ-  
րիարքարանին մէջ իր բնակութիւնը հաստա-  
տելով:

Այս ժամանակ ինչպէս որ վերը պատմե-  
ցինք, Կ. Պօլսոյ Նախագահ Արքեպիսկոպոսը Գեր-  
Մարուշեան Պօղոս վարդապետ, և Ազգապետ  
քաղաքական Պատրիարքը Մխիթարեան միաբա-  
նութենէ՞ Նսայեան Է. Կարապետ վարդապետը  
էր: Երկու արևոր ծերունիներ ձեռք ձեռքի  
առլաճ և Ազգին բնաւորութեանը հմտացած,  
ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ կը հովուէին զժողո-  
վուրդ Տեառն. խաղաղութիւնը, և միաբանական  
սէրը առ հասարակ տիրած էր ժողովրդեան վը-  
րայ: Բայց մե՛ղք որ սա ցանկալի խաղաղու-  
թիւնը ընդ երկար չի տևեց: Գեր. Հասունեանը

Դաւիթին որդոյն նման Արիստղովէն կեղծ դի-  
մակը իր երեսը անցուց, եկողին զացողին սիրաւը  
շահելու համար, անկողմնասէր անշահասէր  
ընութիւն ցուցընելով. կը ցաւէր կը ցաւակցէր:  
Ազգին մեջը մարդ չի մնաց կըսէր, որ տղքա-  
տաց գործը տեսնէ: Երբեմն եւ չեմ խառնուիր  
կըսէր, երբեմն քու սիրոյդ համար աշխատիմ  
կըսէր: Երկու գլուխ ունինք մէկ ըստկի չեն ար-  
ժէր, երկունքն ալ ցընպեր են. թէ որ իրենց  
պաշտօնը կարող չեն կատարել՝ թող ձգէն,  
հրաժարին քան թէ Ազգին գործերը առանք  
երեսի վըրայ մնան ևսյն ևսյն . . . :

## 11.

Գեր. Հասունեանին Աշխարհագրութեան Գոտրիա գործը:

Բայց Գեր. Հասունեանը իր վերջին դիտած  
կէտ և նպատակին դիւրաւ հասնելու համար  
ամէն յաջող միջոցներուն ձեռք կը զարնէր. և  
անոնք որ հակառակ և խոչնդոտան էին իրեն,  
կամ բոլորովն գետինը կը զարնէր և կամ զա-  
նանք իր կամայք ծառայեցնելու և կատարեալ  
գործիք ընելու կը ջանար: Եւ որովհետեւ ամէն

բանէն տուաջ Ազգին արտաքին Պատրիարքական իշխանութեան աչքը նետած էր, վասն այսու սորիկ նախ՝ աշխատեցաւ Պատրիարքարանէն հետացնել Աեքիլ Զմիւռնացի Բէհլիվանեան Ստեփան վարդապետը, այր գործունեայ և համբաւաւոր, սիրելի ազգին և ազգաց և առաջի Մեծի դրան, որև վեց եօթը տարի շարունակ իր պաշտօնը կը վարէր և քաղաքական Պատրիարք ընտրուելու մօտ էր, և Գեր. Հասունեանին ասանկ գաղտնի գողունի գործողութեանցն ալ հակառակ էր ան ատէն: Ուրախ պէտք եղաւ զանի գլորել, ու ամբաստանութիւն ամբաստանութեան, զըսարտութիւն զըսարտութեան վըրայ . . . մինչև բռնադատել զԳեր. Նախագահը կախակայելու զանիկայ թէ որ պաշտօնէ՛ն չի հրաժարիր: Աերջապէս Բէհլիվանեանին հարկ եղև կամայ և ակամայ հրաժարիլ իր պաշտօնէն:

Ի՛նչ Գեր. Հասունեանը այս ժամանակ ջանաց և Բէհլիվանեանին տեղը, իր յառաջընթաց կարապետը Նախագահական Սթոուակալ Աստարճեան Տէր Տիմոթէոսը, երբեմն միաբան կաթողիկոսարանին Արիկիկոյ՝ ընտրել տուաւ: Ազգը այս փոխանորդին զաժան, խիստ, և անտանելի

ընաւորութեանը ալ չի կարենալով համբերել  
որուն ժամանակ լրագիրներուն մէջ առաջին  
անգամ եղև Ազգերնուս պաշտօնատեարց ա-  
նունը բամբասուիլը, եօթնամանայ իշխանութե-  
նէն ետև հանեց զանի իր պաշտօնէն, և անոր  
տեղը անցաւ Ազգին ընտրութեամբ՝ Ամսէր-  
պօյեան 2. Մովսէս վարդապետը ի Մխիթա-  
րեան ուխտէ, որ արդարութեամբ, խոհեմու-  
թեամբ, և ամենայն սիրով հոգ կը տանէր ժո-  
ղովրդեան օգտին: Բայց ասիկայ փուշ եղաւ Պեր-  
շասունեանին աչքին, վասնորոյ միշտ ջանացաւ  
որ պատրիարքարանին գործերը շփոթ խառն ի  
խուռն առաջ երթան: Պատրիարքարանին մէջ  
աւելնքն ալ սկսան հրամայել. Պեր. Նախագահը  
հոն, Օգնիչ Եպսկոպոսը և աթոռակալը հոն,  
Յիսուս Փրկչին մեծաւորը և քահանաները հոն,  
ամեն գլխէն մէկ մէկ կերպ ձայն և հրաման  
կելլէր. ետքը սկսան Ազգապետ Պատրիարքին  
վերայ զանգատները շատցնել՝ թէ ծեր է, ազ-  
գին գործերը նայող չիկայ և այլն . . . ուստի  
Ազգապետ Պատրիարք Եսայեան 2. կարագէտ  
վարդապետին ալ հարկ եղաւ իր հրաժարա-  
կանը տալ:

Ժողովեցան առանձին մեծամեծ իշխանք

Իշխանապետին հետ մէկտեղ, Ազգին խաղաղութիւնը չի վերջովեւում համար անկողմնասէր անձ մը փրնարուեցին, և գտան Անտոնեան Միաբանութենէն՝ Յովնան Հ. Կարապետ վարդապետը:

Գեր. Հատունեանը տեսնելով որ իրեն տեղը ուրիշը պիտի փառաւորուի, ամեն կերպ հնարք և միջոց ձեռք առաւ իր համախոհներուն հետ մէկտեղ, որոնց զխաւ որն էր՝ Քրնկրբեան Յովհաննէն. վերջապէս ամէն արգելքներուն յաղթելով Յամին 1845 Պատրիարքական իշխանութիւնը ձեռք ձրղեց, որուն հոգւով չափ կը փափաքէր իր խորհուրդներուն կատարմանը համար:

Ազգին արտաքին իշխանութիւնը ձեռք առաւ ու չառաւ, առաջին գործքը եղաւ, իր փոխանորդ (վէ. քիլին) ընտրութիւնը Ազգին ձեռքէն յափշտակել, և զբաւ Քէհլիվանեան Տ. Ստեփանը, որ բոլորովին իր կողմը անցեր էր. յետոյ սկսաւ կամաց կամաց անզգալի եղանակաւ իր Տէսրօթական վարչութիւնը հաստատել Պատրիարքարանին մէջ. ընդդէմ Ազգային կանոնաց, դատաւորները ինքը ընտրեց, և Իշխանապետ Տի. գեան Յակովբ Զէլէպիլին ակնաձուլութենէն, այս պաշտօնին՝ Քրնկրբեան Տի. զ

Միքայէլ աղային հետ մէկտեղ՝ Չամիչեան Պօղոս աղան կարգեց, որոնք քիչ ժամանակէն շուտով ձրգեցին փախան. ըստ Ազգային կանոնաց մէկ կտակին վաւերութեանը համար երկու իշխանաց վկայութեան տեղ՝ իրմէ խրկուած պարզ քահանայիմբ ստորագրութեամբ կտակը կը հաստատուէր ևայն ևայն . .

Բայց Գեր. Հասունեանը այս Պատրիարքական իշխանութեամբ ալ չիկրցաւ սիրաբ կրչտացնել. ուղեց՝ որ ժամ մի առաջ Նախադահական իշխանութիւնն ալ ձեռք անցընէ. ուստի նախ առաջին մեծամեծ իշխանաց գանգատները շտացուց. թէ ծերացիք ու ցնդերէ, և չի կրնար կոր իր իշխանութիւնը դործածել . . . :

Գեր. Մարուշը օր մը օգափոխութեան համար Պիլէգլեկձի Պօղոս աղային տունը եկած էր, իրեն հետ մէկ տեղ առնելով զԳեր. Հասունեանը, Շիշմանեան Տ. Անտոնը, Աստարձեան Տ. Տիմոթէոսը, և զՄարգարեան պրզտի Տ. Յովսէփը, հոն կը հասնին, և ծերունի Նախադահին չորս զին կը սպատէն և կը շարուին. կազմար զրիչ մէջ տեղ կուգան: «Քու խղճիդ հանդարտութեանը համար՝ (կըսէն մէկ բերան) յՔեզի յանձնուած հոգւոց փրկութեանը հա-

մար, և Եկեղեցւոյ շինութեան և պայծա-  
ռութեանը համար պէտք է՝ որ այսօր Նախա-  
դասական իշխանութենէդ հրաժարիս . . . ր

Այս անդուր և բռնական առաջարկութեան  
վերայ, ալևոր ձերունին անբարբառ նայեցաւ  
մեյմը իրենց երեսը, և ետքը աչքերը գոյելով  
ինքն իրեն մտածեց, և իսկոյն միտքը եկաւ շնորհ  
քաղաքը՝ նախորդ Գեր. Նուրիճանին համար ա-  
սոր նման իրեն ըրածները: Ապա յանկարծ ոտք  
ելաւ, և անոնց պատասխան մը չի տալով նստաւ  
նաւակը, և սրտազողէն նաւակին մէջ կա-  
թուած ինջնալով. ու մէկ քանի օր ապրելով  
ի 22 Յունիսի 1846 հանդեաւ ի Տէր երկրորդ  
Նախագահ Կ. Պօլոսյ Մարուշ Պօղոս Արքեպիս-  
կոպոսը, որուն վերջի օրերը շատ ցաւալի եղեն:  
Քանի որ Գեր. Հասունեանին վերայ ոչ հայրա-  
կան գութ, և ոչ հովուական շնորհքը կը աես-  
նէր կողբայր Աստուծոյ ժողովուրդը. և իր բեր-  
նով իսկ շատերուն խոստովան եղև՝ թէ վայ  
ուրեմն խափուեցանք և սխալեցանք . . . . :



## 12.

Գեր. Հասանեանին Նախագահութեանը:

Հանգուցեալ Գեր. Մարուշ Արքեպիսկոպոսին յուզարկաւորութեան հանդիսին համար, երբոր բոլոր Ազգը ի Յիսուս Փրկիչ Մայր եկեղեցւոյն մէջ ժողոված էին, և ձայնաւոր Պատարագը, նա ինքն Գեր. Հասունեանը կը մատուցանէր, ահա Աթոռակալէն ապրսպրուած Սարկաւազներուն բերնէն ձայն մը կը լսուի յիսուս առաւել զԱրհիպիսկոպոսն մեր զՏէր Աստոն Նախագահ և այլն: Այս ձայնը իսկոյն թէ եկեղեցականաց և թէ ժողովրդեան մէջ մեծ շքուկ և շիտթութիւն պատճառեց, եկեղեցւոյն մէջ մէկզմէկու զարմանալով կը հարցունէին, թէ ի՞նչ է աս որ կը լսեմք: Ասոր վերայ ոմանք ի քահանայից պատարագին մէջ զանիկայ յիշեցին, ոմանք ալ չը յիշեցին, ըսելով, ո՞վ հաստատեց զանի Նախագահութեան և այլն. . . :

Իսկ ժողովուրդը աւելի ևս զայրանով, ո՞ր է ո՞ր է Ազգին իրաւունքը կը զօչէին, զորնոր թէ մեր նախնիքները, և թէ մենք այնչափ նշուութեամբ, չարչարանօք, հալածանօք և մա-

Հուամբ իսկ պաշտպանեցինք, Գեր. Նուրիձա-  
նին ժամանակը. իսկ արդ՝ այս մարդուն փառա-  
սիրութիւնը վերստին կուզէ՞ անենել—1828-ին  
պատահած ազգին թշուառութիւնները և կոր-  
ծանումը, և այլ ասոր նման խօսքեր:

Աստի Յամին 1848 ի 6 Օգոստոսի՝ եղև  
ընդհանուր ժողով՝ ի Յիսուս Փրկիչ Մայր եկե-  
ղեցւոյն մէջ, ուր ժողովեցան, նա ինքն Գեր.  
Հասունեան երեսուն և վեց վարդապետօք յա-  
մենայն կարգէ և ի տեսակէ, և Հարիւրի չափ  
ազգին երևելի Աւագանի մեծամեծները, և  
երեսփոխանները: Նախ առաջին՝ Գեր. Հասու-  
նեանը ուզեց՝ որ Հռովմայէն իրեն տրուած կոն-  
դակը կարդացուի. առաջ Վատին լեզւով, ետքը  
տաճկերէն թարգմանութիւնը կարդացուեցաւ.  
որուն համառօտեալ խմատն այս էր: Կոնդա-  
կին զօրութեամբը կը հրամայէր Գեր. Հասու-  
նեանին որ՝ չերբոր և. Պօլսոյ Նախագահը վախ-  
՝ ճանկու ըլլայ, նոյն ատենը դուն (Գեր. Հա-  
՝ սունեանը) ԱՆԱՐՁԱՐԱՅ թէմբ թողլով և. Պօլսոյ  
՝ Նախագահու թիւնը ձեռքդ առ. . . . . ու թէ  
՝ որ մէկը այս իշխանութեանդ դէմ կենալու  
չըլլայ, քու զօրութիւնդ անսնց ցրցուր: Իսկ  
՝ թէ որ զանոնք չէս կրնար զսպել, մեզի խմա-

չցուր որ մենք սննքը զսպելու կարելի միջոց-  
ները ի գործ գնենք և այլն . . . » :

Այս կոնդակը գրուած էր ան տարին երբ  
7 յունիսի 1842 Հռովմ քաղաքը օգնիչ Ապիս-  
կոպոս ձեռնադրուեցաւ, որ ամենայն գաղտնու-  
թեամբ իր քովը սրահած է եղեր: Կոնդակը  
կարդացուելէն վերջը, քիչ մը ժամանակ խորին  
լռութիւն, և ախուր արամութիւն ժողովա-  
կանաց տիրելէն վերջը, այր իւրաքանչիւր մէկ  
մէկու հետ սկսան շքնշեւ. բայց գլխաւորա-  
բար ժողովականաց աչքը Բ. Տիւղեան Յակոբ  
Չէլէպիյին, և Ատուածատրեան Աբրահամ Ամի-  
րային ուղղէր կրնայէին, որոնք առանձին մէկ  
մէկու հետ կը խօսէին: Եւ իրաւցնէ այս երկու  
ստորուական Անձերը ըստ իմաստնոյն Ատուա-  
ծատէր և խաղաղատէր հոգւոյ վիճակեալ էին.  
տեսնելով մէկ կողմանէ Գեր. Հասունեանին  
կարդացուցած կոնդակը, և միւս կողմանէ Ազ-  
գին իրաւունքին փճանայը, այս երկու հակա-  
ռակաց ծայրէջ մէջ տեղը դաննելու համար, Բ.  
Յակոբ Չէլէպիյն համոզողական բանիւք ժամէն  
աւելի՛ իրեն չքնաղ հանձնարովը ղեղեցիկ մէկ  
առննախօսութիւն մը ըրաւ, որուն համառօտ  
իմաստն այս էր: « Գերադայժառ Տէր՝ ըսաւ,

նախ և առաջ այս կոնդակին զօրութեամբ  
նախադասական ընտրութեան համար Ազ-  
գային իրաւունքը ոչնչացած կը սեպուի, և  
որովհետեւ Ազգին իրաւունքն ալ պաշտպա-  
նել մեզի անհրաժեշտ պարտք մի է: Ապա եթէ  
Դուք, և Յ. վարդապետը և Ազգային Մ. Երես-  
փոխանք և Աւագանիք հաճելու ըլլան՝ թէ  
Ս. Քաջանայտակոն, և թէ Բրօրականտային  
Վ. Քարաինային երկու թուղթ գրուի, բո-  
ղոքելով ազգային իրաւանց այս անգամ բռ-  
նարարուելուն վերայ. և թէ ասկից ետքը ըստ  
առաջին վաղեմի հին սովորութեան՝ Ազգիս  
երեք անձանց առաջարկուածներէն մէկը ըն-  
տրուի և այլն . . . » :

Ետքը Ալահվերտի Արբասամ Ամիրայն վի-  
քար Եպիսկոպոսաց ժամանակէն սիսեալ, մինչև  
երկրորդ նախադաս Մարուշ Գերապայժատին  
օրը՝ ամմէն ազգային Եպիսկոպոսաց, և նա-  
խադաս Արքեպիսկոպոսաց ձեռնադրութիւնը  
միշտ Ազգին հաճութեամբ և հաւանութեամբ  
ընտրուելին մէկիկ մէկիկ հաստատեց . . . Ապա  
Բ. Յակոբը Չէլէպին հարցուց Գեր. Հասունեա-  
նին: Գերապայժատ Տէր, Ազգին իրաւունքը  
պաշտպանելու համար բողոքե՞նք, և այս թուղ-

Թերը գրուի՞ն: Պատասխանեց Վեր. Հասու-  
նեանը՝ Բ. Չէլեպի. Ազգին իրաւունքը ո՞վ չու-  
զէր պաշտպանել, ըստ ամենայնի արդար և  
իրաւացի խօսեցար, Թո՞ղ գրուին Թուղթերը:  
Իսկ Բ. Յակովբ Չէլեպին՝ բոլոր ժողովականաց  
ալ մի ըստ միօջէ հարցուի ըսած ժամանակը  
եկեղեցականք և աշխարհականք ամենքը միա-  
բերան սկսան գոչել: Քաջ է խորհուրդը Բ. Չէ-  
լեպոյն, և ըստ ամենայնի իրաւացի, մենք մեր  
իրաւունքէն ամենեին չենք անցնիր, և ասոր  
համար կը բողոքենք . . . :

Դարձեալ Բ. Յակովբ Չէլեպին ըսաւ ՝ իսկզ-  
բաննէ Ազգերնիս ներքին և արտաքին երկու իշ-  
խանու թեանց բաժնուած զատ զատ գլխով կա-  
ռավարուիլը ամենքնուդ յայտնի է. իսկ այսօր-  
վան օրս այս երկու իշխանու թիւնները ինչ-  
չափ մի և նոյն անձին Վեր. Հասունեանին վը-  
րայ միացերնէ ալ, ի վերայ այսր ամենայնի ա-  
սանկ ըլլալովը Ազգը ամենեին իր առջէ իրա-  
ւունքը չէ կորսնցուցած: այսօր կուզէ կը  
միացնէ, վաղը ուզէ կը բաժնէ. ուստի եաքի  
եկող Նախագահները Ազգին արտաքին Պատ-  
րիարքական իշխանու թիւնն ալ պահանջելու  
մէկ ժամանակ իրաւունք չունենայնին ալ պէտք

է հարկաւ յիշատակուի՝ Հսովմ գրուելու  
թուղթերուն մէջ . այս առաջարկութեան  
վերայ ալ բոլոր ժողովականք համեցան:

Եւ այս ամէն հաստատութիւնները Խըլ  
ձեան վիշէն ադան ի գիր առաւ, և նոյն ժո-  
ղովքին Մաղսաթայն՝ Սթոռակալ Տէր Տիմո-  
թէոսէն սկեալ ամէն ժողովականք ստորա-  
գրեցին. և մէկ քանի օրէն Հսովմ խորհուելու  
երկու թուղթերը Նաալերէն, և դրարաւ Հայե-  
րէն, Նախագահին գիւանը գրուելով. և բոլոր  
ժողովականաց, եկեղեցականաց, և աշխարհա-  
կանաց կողմանէ ստորագրուելով Ս. Քաջա-  
նայսպետին և Վ. Քարափետալին խորհուեցան:

## 13.

Գեր. Հասունեանին երէտմեայ Պարբերատման էջեւ  
նախեան ժամանակը:

Երբոր Գեր. Հասունեանը այսպէս Ազգին  
ներքին և արտաքին իշխանութեանց պէր ելաւ,  
այ սակէ կարը նայէ դու, այնքան սարխեբէն ի  
վեր մտածումս խորհուրդները գիւրու թեանք  
առաջ սանելու մտք՝ իրեն յարմար երկու  
դործ իքներ ընտրեց, զանանք երկու իշխանաւ-

Թեանցը փոխանորդ կարգելով . այսինքն իր  
աթոռակալ Աստարձեան Տ. Տիմոթէոսը, և Ազ-  
գասպետական փոխանորդ Զմբուհացի Բէհլիւ-  
նեան Տ. Ստեփանը. որոնցմով իրեն միասն-  
տական ինքնիշխան կամքը միայն առաջ քա-  
լելու սկսաւ: Իսկ թէ որ առջի բերանը քիչ մը  
ակնածութիւն և երկիր ռեւեր այն անձէն,  
որ արգելք կրէր արձակ համարձակ քալելու,  
զանի ալ Աերին Նախախնամութիւնը մեր մե-  
լաց պատճին համար իր քոզը առաւ, այն է  
Հանգուցեալ Բ. Յակոբ Չէլէպին, որուն մահուան  
վերայ ազգք և ազնիք կուլային, և կողբային  
սնանկ անգիւտ զանձ մը կորսնցընելուն պատ-  
նաւաւ: Իսկ յետ մահուան հանգուցեալ Եւ-  
սանասպետին, Գեր. Հասունեանը ուզեց իր մը-  
տերիմ խորհուրդակիցը՝ այսինքն Քրնկըզեան  
Յովհաննէս Ազան, Ազգին վերայ Եշխանասպետ  
կարգել, որ մինչև այս ժամանակ Հասունեան  
կողմնակցութեանց պարագլուխը իր կրօնին զի-  
մակը յայանի վար չէր առած Բ. Յակոբը Չէ-  
լէպոյն ակնածութենէն: Այլ Ազգը բնաւ կը-  
րէք զանի չընդունեց, և ասկէ ետքը Հանգու-  
ցելոյն տեղը Իշխանասպետ ինչպիսի չընտրուե-  
ցան նէ ալ, այսու ստեղծայնի Ազգային ընտրա-

նուր ժողովոց մէջ Քահարէցութեան պատիւը միշտ Տիւղեանց, կամ Ալլահվերտեանց գերդաստանին պահուած մնաց: Ասոր վերայ Քընկըրեան Յովհաննէս Աղան սաստիկ զայրացաւ. որովհետեւ իր փառասիրութեամբը ամենուն պատգամ տալ կուզէր, և Ազգին վերայ ինքնիշխան տիրել կը փափաքէր, ըստ օրինակի Ք. Տիւղեան Յակովբայ Չելեպուոյն: Բայց թէ Հանդուցելոյն շնաշխարհիկ առաքինութիւններէն, և աշխարհածանօթ հանձարէն, ինչչափ օտար ըլլալը ամենուն յայտնի է. թէպէտ և Հասունեանք իրենց ապագայ շահուն համար զանկայ միշտ կը դովէին առաջի օտար ազգաց և իշխանութեանց ի մեծ վնաս Ազգիս:

Գեր. Հասունեանին Ազգապետ Պատրիարքական իշխանութիւնը հազիւ երեք տարի տեւեց, այս ժամանակ մանաւանդ վերջի տարիները ուրիշ բան չէիր տեսնիր՝ բայց եթէ նա ինքն Գեր. Հասունեանը Նախագահ, Ազգապետ Պատրիարք, Իշխանապետ իշխան, փոխանորդ, զանձապետ դատաւոր և այլն . . . մէկ խօսքով ինքնիշխան տէր ամենայնի: Երկայն է աս միջոցիս պտտմութիւնը, սակայն հարկ կը համարիմ համառօտիւ վեր ի վերոյ վերայէն անցնելու:



Արդ՝ երբոր Գեր Հասունեանին պատրիարքութեան ժամանակ մանաւանդ վերջին տարիները ինչպէս որ վերը յիշեցինք, քսան տարուան մէջ գործածուած՝ Ազգային ամմէն կանոնները օրէնքները և իրաւունքները դադրած էին: Երբոր դատաստանին սենեակը զոցուած, աղքատաց գործերը երեսի վերայ ձգուած, և իրաւունքները ոտքի տակ դացած էր. երբոր Պատրիարքութեան սեպհական երեքի բաժանուած զբմնին կտորները ճամբովը ձեռք ձրղած էր. երբոր պատրիարքարանին իշխանաց ընտրութիւնը Ազգին ձեռքէն յափշտակած ինքը իր ուզածները կը դնէր. Երբոր իր տան ներքին սենեակը քաշուած, իր ստորագրութեամբը յայտադիրները պատերուն վերայ կը կախուէր թէ՛ «բոլոր շարթուն մէջ հօգևոր և մարմնաւոր հասարակաց գործքերը նայելու համար, երկու օրուան մէջ՝ երկ երկու ժամ որոշեր եմ:»

Երբոր այսպէս ընդհանուր Ազգին գործը իր փոխանորդներուն ձեռօքը կը գտանար, և Պատրիարքարանին մէջ ուրիշ բան չէր տեսնուէր՝ բայց եթէ նենգութիւն, բանութիւն, խարէութիւն և հարստահարութիւն: Երբոր Պատրիարքարանը ծանր պարաքի տակ ձգուած

էր. երբոր Մայր եկեղեցին յափշտակած ընդ-  
դէմ Ազգային կանոնաց ինքն իր ուզած եկե-  
ղեցւոյանները կրնարէր, և անոր հաշիւը ա-  
մեննին Ազգին չէր ցուցընէր: Արբոր աղքատա-  
նոցը, հիւանդանոցը և ուրիշ եկեղեցիները  
ձեռք ձրգելու համար՝ կերպ կերպ հնարքներ  
կը մըտածէր, և անոնց մեծաւորներն ինքն իրմէ  
կրնարէր, ոչ Միւթէվէլլներուն և ոչ իշխա-  
նաց սուաջարկու թեանց ականջ կը կախէր, ինչ-  
պէս և սաջի Նախագահներուն ժամանակ սո-  
վորութիւն էր: Արբոր Հողևոր եղբայրութիւն-  
ներուն ժողոված վերջին դումարի հաշիւը ա-  
ւանց մէկու մը զխանալու իրեն միայն կերթար:  
Արբոր Աննեան ընկերութենէ, և ուրիշ Աւ-  
րոսլոյ կողմերէն այսչափ տարիներէ ի վեր  
ընդհանուր Ազգին օգտին համար խրքելու  
ստակներուն հաշիւը և դումարը ինքն միայն  
զխաէր: Արբոր իր նախորդներէն ձրգուած եկե-  
ղեցւոյ օրենքները, իրաւունքները, ձեւերը և  
արարողութիւնները ըստ քմաց կը ծաւր և կը  
ծածրոկէր: Արբոր ամեն բանի մէջ հաւատքն  
ու կրօնը կը խանուէր, և իր կամայը դէմ  
եկողներուն նորով և բանդրանք կողաւնար:  
Արբոր ինքը իր Աթոսին վերայ հաստատուն

մնալու համար Ազգին մէջ անհնարին խօսվու-  
թիւններ և աստաճայնու թիւններ կը սերմա-  
նէր, և Ազգիս մեծամեծ իշխանները մէկգմէկ  
կը ձգէր: Երբոր ընտանիք ընտանեաց, հայր  
որդոցն՝ որդին հօրը, և եղբայր եղբօրը հեռ  
մէկգմէկ կը ձգէր: Երբոր գիտուն և խահեմ եկե-  
զիցսկանները կանարգէր և կը հալածէր, և  
անոնց տեղ հակառակակէր ազգատեաց երթ-  
աստարդները կը յառաջացընէր: Երբոր ոչ յե-  
կեղեցականաց անգամ ժողովք մը և ոչ խոր-  
հուրդական մը ունէր: Ինչպէս որ ասոնք ամէնքը  
յաջօրդ գլուխներուն մէջ բացայայտ մեկինկ մե-  
կինկ սլխախ տեսներ:

Ա երջասպէս մէկ խօսքով՝ երբոր այն միա-  
պետական հոգին կատարեալ աիրած էր, մէյնալ  
յանկարծ կը նայիս Ազգը իր վնասակար, և  
մահարեր խոր քունէն կարթըննայ, մահառիթ  
թմրու թիւնը մէկ զի կը ձգէ, իր թշուառու-  
թեան, գերութեան, և մօտալուս կործանման  
վերայ՝ աչքերը արաստուանքով լեցուած մէկ  
անգամ կը նայի, ալ այնուհետև չիկրնար համ-  
բերել: Ամէնքը մէկ բերան ընդ հանուր Ազգային  
ժողովք կուզեն, որուն անունը անգամ ժամա-  
նակէմը ի վեր խափանուած, և անհէտ եղած էր:

Ուստի 1848 փետրվար 29-ին ընդհանուր ժողովքին մէջ այն վերոյիշեալ ամէն թշուառութիւնները, և Ազգին այժմեան ողորմելի վիճակը մեկիկ մեկիկ յառաջ բերելով, ամէնքը միաբերան կը կանչէին թէ՛ ՚հարկաւ Արքունի ՚Կայսերական հրամանագրով Ազգին արտաքին ՚Պատրիարքական իշխանութեանը համար երկոտասան անձինքներէ բաղկացեալ Ազգային ՚ժողով մը հաստատուի ՚:

Երբոր այս ազգօգուտ առաջարկութիւնը բոլոր ժողովքը ընդունելու և որոշելու վերայ էր, մէյմ ալ ինչ կը նայիս, Գեր. Հասունեանին երեսին գոյնը կը դառնայ, իր Պատրիարքական Պէռաթը առաջ կը քշէ, և ի բանկախութիւնը հաստատել կուզէ. իր հոգեւորական իշխանութիւնը պատճառելով չափաւոր սահմանադրութեան տակ չուզէր մտնել: Ուստի Ազգը այս նիւթիս վերայ շատ մը վիճելէն ետքը, աւելի իրեն Արքեպիսկոպոսական պատիւը պահել ուզելով ուրիշ օր ընդհանուր ժողովքի մը գումարման կը ձգէ, առանց խնդրութեան առաջարկուած խնդրոյն, և վէճին խողաղութեամբ, և խոհեմութեամբ վախճան մը տալ: Բայց պարտաբան, քանից ինչպէս կարելի է ինքնիշխանութեան

վարժուող անձը հաւանութիւն տայ երկոտաս-  
սանից ժողովոյն հաստատութեանը: Վասն այսո-  
րիկ առանց Պատրիարքի, Գեր. Հասունեանին,  
ի 2—և ի 5 Մարտի երկու անգամ Ազգային  
ժողովք եղան ի Յիսուս Փրկիչ ժողովոց մեծ  
սենեկին մէջ:

Եւ երբոր ժողովքին կողմէն եկան իրեն,  
Եաղըքճեան Պէտրոս Էֆէնտին, Երամեան ան-  
տոն աղան, Մանասեան Սրապ աղան, և Սա-  
մանճեան Մկրտիչ աղան, ու իմացուցին երկու  
ժողովոց վերջին որոշմունքները. այսինքն, Ար-  
քունի հրովարտակաւ երկօտասանից ժողովոյն  
հաստատութիւնը: Ան առէն Գեր. Հասունեանը  
առջի բերան քաղցրութեամբ վարուեցաւ. ես  
ալ կուզէմ ըսաւ Ազգին բարեկարգութիւնը,  
խօսք տուաւ Ազգին կամբը կատարելու, և սի-  
րով յուղարկեց զանոնք: Ետքը իր ասանը մէջ  
յեկեղեցականաց և աշխարհականաց՝ ժողո-  
վակները շատցուց, մինչև Ազգին մէջ տարա-  
ձայնութիւն ձրգեց, և իր թեակիոյներուն ձե-  
ւօք, հինգ վեց գաղափար մեծամեծ թուղթեր  
քաղաքին մէջ տարածուեցան, որոնց զլուխը  
զրուած էր. ՚թէ մենք հիմնական Ազգիս ըն-  
թացքէն դոհ ենք, նոր կարգադրութիւն, և

ասհմանապրուծիւն, շինք ազէր: Աստի  
 ինչպի վար, ցած սամիկ մարդիկ կային, թէրս-  
 խանէին համալ ծամալը, քէմէր ալթըրին Վի-  
 հօները, խաներուն միջ պէքեար օտարական-  
 ները:

Թէ որ Վաթօլիկ ես նէ, կըսէին, Արբա-  
 ղան Պապին կամ Նունցիօին \* կը հաւա-  
 տասնէ, այս թըղթին վերայ ստորադրէ, ինչու  
 որ, հաւատոյ բան կայ և այլն . . . :

Աստարձեան Աթոռակալը մէկ կողմանէ, և  
 Բէհլիվանեանը միւս կողմանէ, ղրշեր ցորեկ կաշ-  
 խատէին Ազգը խօսվելու և սարաձայնութիւն  
 ձըգելու:

Երբոր Ազգը տեսու՝ որ Ղեր. Հատունեանը  
 իրենցմէ ժամանակ որսալով, գործողութիւնը  
 բերաւ այս կարգը հասուց. ի 20 մարտի ղի-  
 շերուան ժամանակ իրեն շխտակ դացին, Արա-  
 մեան Անտոն աղային հետ մէկտեղ Սաման-  
 ձեան Մկրտիչ աղան, երկար խօսակցութենէ  
 վերջը, պատասխան առին թէ, հիմկու հիմայ  
 ես բան մը չեմ կրնար ընել, քանի որ Ազգը

\* Մ. Զերիերին, որ այս օրերս Ս. Պապէն ար-  
 տաբոյ կարգի ղեսպան եկած էր:

երկու կողմ մէկ մէկու հակառակ բաժանուած է:

Ուստի 22 Մարտի 1848, պարտաւորեցաւ Ազգը Բ. Գրան աղերսագիր մը տալ, և խնդրել Կայսերական հրովարտակաւ երկոտասանից Ազգային ժողովոյն հաստատութիւնը: Երկու օրէն վերջը, ի 24 Մարտի, Հասունեանք ևս տուին աղերսագիր:

Այս աղերսագիրերը Բ. Գրան տալէն վերջը, երկու կողմէն շատ մը ժողովքներ եղան. Ազգայինք Աւագանի մեծամեծ իշխանք առանձին, և Հասունեանքն առանձին: Եւ երբեմն յերկուց կողմանց տասնական անձինք որոշուեցան, սակայն չիկրցան վերջ տալ առաջարկեալ օրինաւոր խնդրոյն վերայօք: Վերջապէս ի 5 Մայիսի Արտաքին գործոց պաշտօնեան, երկու կողմէն տասը հոգի, և Գեր. Հասունեանք իրեն կանչեց, և զանոնք ի սէր և ի խաղաղութիւն յորդորեց:

Հոս Գեր. Հասունեանք և իրեն կողմնակիցները, չքանի որ, ըսին, Համազգեսաց ընկերութիւնը չի վերնար, անհրնար է մեզ առ չնոր բարեկարգութեան հաւանութիւն տալ, և այս բանիս վերայ պրնդեցին կեցան: Իսկ Ազգայինքն պատասխանեցին, թէ ան ընկերութիւն

ըսածնիդ ինքն իր զլիսուն զատ մէկ բան է, և այս Ազգային կարգադրութեան ամենեին չի վերաբերիր, ինչ սլաածառու ան ընկերութեան վերնալուն այսչափ կը պնդէք: Աերջապէս Բ. Պաշտօնեայն արձակէց զանոնք խրատելով որ երթան ժողովին սիրով և խաղաղութեամբ մէկ մէկու հետ միաբանին և այլն . . .

**Ե**ւ որովհետև հոս տեղս Համազգեաց Բնկերութեան վերայօք խօսք եղաւ, նոյն ընկերութեան վերայ պէտք է առանձին զլիսով առաջուց մեր ընթերցողներուն համառօտի ծանօթութիւն տալ, ուստի թէ Ազգին, և թէ Հասունեանց տուած աղերսագիրերը Տէրութեան Աերին ատեանին մէջ թողլով, գանք յիշեալ Բնկերութեան համառօտ պատմութիւնը դրելու որուն Վեր, Հասունեանը որչափ հակառակ կեցաւ, և ջրբուելու աշխատեցաւ:

## 14.

Համազգեաց Ընկերութիւն:

Քաղաքապետ և ուսումնական ազգասէրներէն ոմանք, տեսնելով հիմկուան Արօպաց-



ւոց մտաց լուսաւորութիւնը, վաճառականութեան, և արուեստից ծաղկիլը, հարստութիւնները. և ասոր հակառակ Ազգիս տգիտութիւնը, և վերջին աղքատութիւնը, կուզէին և կը փափաքէին Ազգովին ասոր ճար և ճարակ և դարման մը մատուցանել՝ մէկ կարգաւորեալ ընկերութեամբ մը: Որպէս զի Ազգիս աղքատ և անտէր տղոցը ըստ բաւականին զիտութիւն, ուսմունք և արուեստ սորվեցնէն, որ ետքը կարող ըլլան զիւրաւ իրենց ապրուստը ճարելու:

**Այս** ժամանակ Վէնէտկոյ Մխիթարեան միաբանութենէն, Մինասեան 2. Պետրոս վարդապետը Կ. Պօլիս կուգայ. իր ձեռասուն աշակերանները Ազգին այս բողձանքը իրեն կը յայտնեն, և կաղաչեն որ՝ շէնքով շնորհքով այս ընկերութեան համար մէկ կանոնադրութիւն մը գրէ:

**Յամին** 1846-ին սկիզբները եօթանասուն և վեց հոգի առաջին անգամ ժողով գումարելով՝ կարդացին շինուած կանոնադրութիւնը, և որովհետեւ այս ընկերութիւնը ընդհանուր Ազգին համար էր, ասոր համար անունը դրին **ՀԱՄԱԶԳԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**, որուն վախճանը

այս յետևեալ տասն գլխարկու թեան մէջ պարունակած էր, իրենց Յայտարարութենէն քաղելով :

Ա. Ամէն ընկեր մէկ սիրտ և մէկ հոգի ըլլալով միաբանութիւն ընել :

Բ. Օգտակար գիրքեր յօրինելով, թարգմանելով, և զանոնք սպաղարիով ամենուն տարածել :

Գ. Մանջ և Աղջկանց լարոյական կրթութեանը համար՝ քաղաքներու և գեղերու մէջ դպրոցներ հաստատել :

Դ. Երկրագործութեան արհեստը Ազգին մէջ ծաղկեցնել :

Ե. Հայրենի հնութիւններն ու սովորութիւնները քննել և վնասը ել :

Զ. Հին ձեռագիրներ և դրամներ ժողովել :

Է. Ինչպիսի տաճարութիւն, Անեղանեաց, բուսականաց և այլն :

Ը. Ծաղկած ազգաց ամեն սեսակ արուեստից ուսմունքը սովորեցնել :

Թ. Եւրոպական վաճառականութեան օրէնքները Ազգին մէջ տեղն ի տեղօք մտցրնել :

Ճ. Մետաղագործութիւն :

Այս ընկերութիւնը երեք տեսուչ ունէր

տասուերկու խորհուրդական. — տանն և երկու խաղաղարար. — չորս զանձապէտ. — երկու գրագիր. — երեք գննիչ գրոց, որոնց երկուքը աշխարհական Տէրութեան դէմ եղածները քննելու իսկ երրորդը Եկեղեցական Քահանայ մը որ Ազգապիառ Հաւատոյ դէմ գրուածները սրբագրելու: Կանոնագիրք մ' ալ շինուած քառասուն և մէկ կանոնով: Եւ քուէարկութեամբ որոշուած ամմէն գործողութիւնները սխիտի ըլլան՝ նոյն Ընկերութեան նպատակը, վախճանը և հոգին:

Եւ որպէս զի այս Ընկերութիւնը ըստ օրինաց, Ազգային իշխանութենէն ալ ձանջուած և հաստատուած ըլլայ, իրենց յայտարարութիւնը չի տպելէն առաջ, ձեռագիր Կանոնագիրքնին տարին յանձնեցին Ազգապետ Պատրիարք, Գեր: Հասունին և աղաչեցին որ Գերագոյն իշխանաց Ժողովոյն ներկայացնէ:

Գեր. Հասունեանը տարիներէ առաջ իր միապետական ամբարտակին յատակագիծը դրծած, և նոյն շէնքին առաջին դրան մէջ իրեն Պատրիարքական իշխանութեամբը հազիւ ոտքը կոխած. Ազգային ամմէն զօրութիւն փճացնելու համար կերպ կերպ հնարքներ ղիշեր ցա-

բեկ մտածած ժամանակ, ահա՛ յանկարծ դի-  
մացը կելլէ՛ մէկ սահմանադրական Համազգեսաց  
Ընկերութիւն մը: Տեսուչներ, խորհրդականներ,  
խաղաղարարք, գանձապետք, զբաղիւրներ և այլն . .  
որոնց անունը անգամ թերևս իրեն զգուելի  
էին: Եւ ասոնցմէ աւելի գլխաւորաբար Ազգին  
մէջ, Մխիթարեան հոգմնակցութիւն մը կը աես-  
նէք՝ որնոր իրեն բոլորովին անտանելի էր:

Ասոր համար ասջի բերան հոգւով չտի  
ջանաց՝ նոյն ընկերութիւնը ծնած ժամանակը  
խեղդել: Բայց երբոր այս Ընկերութեան կանոն-  
ները գերազոյն իշխանաց ժողովոյն մէջ կար-  
գացուեցաւ. իշխանները անոնց մէջ Վեր Հա-  
սունեանին այնչափ հակառակելուն երևելի բան  
մի չի տեսնելով՝ ապա ըսին. որովհետև քանի  
մը Ազգասէր և սրատուաւոր անձինք, և ու-  
սումնասէր երիտասարդք, սասնկ օգտակար ըն-  
կերութիւն մը կանգնելու վարկերէն, հիմնց  
ասոնց հակառակիլը, և արդիւիկը խելացու-  
թիւն և խոհեմութիւն չէ և այլն:

Չեր, Հասունեանը կամնց սկսանց հաւա-  
նութիւնն սուսա ժողովոյն այս որոշմանը: Ա-  
պրիլիս 1848 Մարտ 16 Համազգեսաց Ընկերու-  
թեան յայտարարութիւնը՝ հօթանասուն և վեց

ստորագրութեամբ ասուեցաւ: Ասկից ետքը քիչ  
ժամանակուան մէջ, ընկերութիւնը սկսաւ օր  
աւուր ծաղկիլ և պայծառանալ, իր անդամ-  
ները Ազգին երեւելի և պատուաւոր անձինքնե-  
րեն կը շատնային, իր համբաւը լըքազիրներուն  
մէջ կը գոյուէր, երիտասարդաց հանձարը բա-  
նասիրական ձառերով կը մշակուէր, գիտու-  
թիւն և ուսման սէրը առաջ կերթար: Եւ ամ-  
մենէն աւելի ցանկալի և փափաքելին անիկայ էր՝  
որ ան կրկին անիծեալ չար սերմը շատ տարիներէ  
ի վեր փառասէր և նախանձոտ եկեղեցականներէն  
ցանուած, և Ազգիս մեծ ուլալու արժանի ան-  
տանելի թշուառութեանց պատճառ եղած, այն  
արմատ անիծից չար սերմը կսեմ, այս է Քա-  
ղաքացւոց, և Քաղաքացւոց մէջ արնկուած  
անհաշտ թշնամութիւնը, կամաց կամաց ար-  
մատէն կը խլուի, անհետ կըլլայ. և ամենքն ալ  
մէկ սիրա և մէկ հոգի Ազգին ընդհանուր ազ-  
քատութեան, և որդւոյ կրթութեան միայն  
օգնելու կը ջանան: Ազգին մեծամեծները և Նա-  
խագահ Մարուշեան Պօղոս Արքեպիսկոպոսը  
այս ըսածներս յայտնի տեսնելով կուրախա-  
նային, սիրով կը վարուէին, և չէին ուզեր նո-  
րէն ատելութեան, և թշնամութեան ազգա-

կործան կողմնակցութիւնը Ազգին մէջ դարձեալ նորոգել:

Բայց Գեր. Հատունեանը բոլորովին անոնց հակառակը կը մտածեր, ուստի երբոր Նախագահութեան խրամը (հէնտէկը) դիւրութեամբ ցաթկեց՝ Ազգին ձեռքէն զանիկայ յափշտակելով. և երբոր Բ. Տիւղեան Յակովբ Չէլէպին հանդեաւ ի Տէր, ալ այնուհետև մեկ է մը ակնածութիւն չի մնաց, սկսաւ ընկերութեան վերայ կերպ կերպ աղանետել, զրպարտել տարածայնութիւն ձրգել, հաւատքի և կրօնքի կերպարանք տալով՝ հաւատացելոց խղճմտանքը տակն ու վրայ ընել:

Երկայն է ասոնց ողբայի պատմութիւնը, զոր կատարեալ հրատարակեց, նոյն ինքն Համազգեաց Ընկերութիւնը, (Չատագովութիւն Համազգեաց Ընկերութեան) տետրակը 1851-ին տպելով. ուրուն մէջ Գեր. Հատունեանին ձեռքէն չորս հինգ տարուան մէջ կրած տառապանքնին մեկիկ մեկիկ գրուած է. կաղաչենք մեր ընթերցողներուն, որ զանիկայ գլխէ ի գլուխ կարգան. ինչու որ մեր համառօտութիւնը չի ներեր ամբողջ զանիկա պատմելու: Այսչափս ալ հարկաւոր սեպեցինք, վասն զի յետագայ

պատմութեան շարունակութեանը մէջ, երբեմն  
երբեմն նոյն Համազգեաց Ընկերութիւնը պիտի  
յիշատակուի: Արդ՝ այս Ընկերութեան վերայ  
այսչափ հարկաւոր տեղեկութիւն տալէն վերջը,  
կանցնինք մեր պատմութիւնը շարունակելու:

## 15.

Մ Շ Ն ի ն է օ — Վ ի շ է ն ղ ի օ Ս Ե ր ր ի Ե ր ի . ար աս Գ ոյ Ի ար Գ ի Գ Ե ու  
պ ու ն և Ա ս ո ս Գ Ե Լ ա Ի մ ո ն Գ ն ն ի չ Պ ի օ ս Թ . Ս . Ք ա հ ա ն ա յ ա ու  
պ Ե ո ի ն :

Երբոր Ազգը կը ջանար կայսերական հրո-  
վարտակաւ Երկոսասանից ժողովոյն հաստա-  
տութեանը, այս ժամանակ Յամին 1848 Յուն-  
վար ամսոյն սկիզբները, Մ. Ֆէրրիէրին արտա-  
քոյ կարգի Պապական դեսպանը Կ. Պօլիս եկաւ,  
մէկտեղ էր նաև Մ. Վէսպասիանին Բրօքա-  
կանտային մէկ Պաշտօնեայն ալ:

Պիոս Թ. Ս. Քահանայապետին անուներ և  
համբար, և Աւետարանական ազատ ընթացքը  
արևմուտքէն մինչ ի արևելքին ծայրը հասած  
ըլլալով ամմէնէն առաջ Կ. Պօլսոյ Հռովմէա-  
կան Հայազգի ժողովուրդը Առաքելական քննի-  
չին մօտեցան, մանաւանդ այս ժամանակ երբոր

Գեր. Հասունեանին անտանելի Միսսիտական իշխանութեանը տակը կը հեծէր, կը հառա-  
չէր և հոգեոց կը հանէր: Վասն այսորիկ, կարգ  
առ կարգ եկեղեցականք, Աւագանի մեծամեծ  
իշխանք, ծեր և տղայ, ամէն հասակէն աչքեր-  
նին լեցած զԱնիկայ բարեկերպ գային: Եւ իրենց  
սերը աւելի ցուցրնելու համար՝ մեծամեծ իշ-  
խանք փառաւոր կոչունք սեղան մընալ իրեն  
տուփն. ուր որ առաջիկայ գտնուեցաւ Արտա-  
քին դործոց պաշտօնեաց Յ. Ապի բաշայն, և  
այլ երեկելի անձինք Յամանեան Պետութեան:

Բացց մե՛ղք, ասխո՛ս, շատ մեծ խափուե-  
ցաւ: Մ. Ֆերրիէրին իր պաշտօնին մէջ, սկիզ-  
բէն մինչև վերջը անանկ մտորք մը երեւցաւ՝  
որ իրաւացնէ երկու սակի շէր ածէր. ինչ-  
պէս որ անգացի Եւրոպացիք մեջերնին առակ  
բրերէին ու կսէին «ուն ու օմօ տէնեօ փառէ  
պակօրբրի» այր փոքրոքի և ծանծայամիտ:

Աստի այս միջոցիս Գեր. Հասունեանը եր-  
կինքէն մէկ օգնութիւն մը իրեն փրկուելու  
ամէն, ահա երկրիս փոքոց գառաւ, գառաւ այն  
մէկ առարեւական քննիչ մը Մ. Վէտպասիանիյին  
հետ մէկ տեղ, որ Քաղաքիս մէջ մասածօրէն  
մինչև վերջին ելած օրը՝ Հասունը ըսաւ Հա-



սուն միայն լըսեց, որ և առանց գիտութեան  
Գեր. Հասունեանին անհնար էր մասնաւոր մե-  
կումը Առաքելական քննիչին ներկայանալ, և  
կամ անոր մտանալ: Վասնորոյ Ազգիս՝ օրի-  
նաւոր քննութիւն մը չըրաւ. ոչ գլխաւոր իշ-  
խանները իրեն կանչելով՝ անոնցմէ Ազգին ընդ-  
հանուր վիճակին տեղեկացաւ. ոչ յեկեղեցա-  
կանաց ամէն կարգէն զատ զատ իրեն կան-  
չելով տեղեկութիւն առաւ, ինչպէս որ ընդ-  
հանուր քննիչին գործ և պաշտօնն է: Եւ այս-  
պէս ուրիշ մեկումը ամենեւին ականջ չի դրաւ,  
և չի հարցուց, բայց միայն Գեր. Հասունեանին:

Եւ որովհետեւ՝ ինչպէս որ զրուցեցինք, այս  
օրերը Ազգը Արքունի հրամանագրով Երկոտա-  
սանից ժողովոյն հաստատութիւնը կը ջանար  
ձեռք բերելու: Եւ Գեր. Հասունեանը այս հաս-  
տատութիւնը արգիլելու համար, Համազգեաց  
Ընկերութեան վերայօք բողոքած էր. և նոյն Ըն-  
կերութեան քննութիւննալ Հաստատութիւնն Առա-  
քելական քննիչին յանձնուած ըլլալով, 1848  
Մարտ 30 ին Ընկերութեան առաջին պաշտօ-  
նատերներէն՝ վեց եօթը անձինք նոյն քննիչին  
կանչուեցան: Պէտք չէ հոս երկրորդել՝ որ Գեր-  
Հասունեանը այս Ընկերութեանը վերայօք Առա-

քերտկան քննիչին որպիսի՞ անդեկու թիւն տուած  
ըլլայ:

Արդ՝ երկու կողմէն երկայն խօսակցու-  
թիւններէ վերջը, Պաշտօնատեսարք Գեր. Հա-  
տունեանին շարունակ երկու տարի զիրենք հա-  
լածելով՝ փշացնելու համար ի գործ դրած  
կերպ կերպ հնարքները, և Օսմանեան տէրու-  
թեան իրենց համար անցնիլը պատմելնէն վերջը  
ըսին, մեր այս կանոններնիս Ս. Քահանայապե-  
տին խաւրելնուս պատճառը ուրիշ բանի հա-  
մար չէր բայց եթէ քննէն, տեսնէն թէ որ  
ասոնց մէջ ընդդէմ հաւատոյ, Տէրութեան, և  
ընդդէմ բարի վարուց հակառակ բան մը կայ՝  
զանոնք մեզի յայանեն և այլն և այլն . . :

Իսկ Առաքելական քննիչը ասոնց պատաս-  
խան տուաւ ու ըսաւ, ՝ ևս ամենեւին այն ձևը  
չըսած զբրպարտութիւններուն չեմ հաւատար-  
ք և այս Հոովմ խաւրած կանոննիդ ալ մէկ դի-  
մարդելով, եկէք անշոյն Ապրիլիպոլիսն (Հա-  
տունեանին) բողբոլին յանձնուեցէք, որ ուրիշ  
կանոն մը չինէ և տայ ձեզի և այլն . . :

Հայր Սուրբ՝ ըսին Պաշտօնատեսարք, մենք  
առանց հաւանութեան ընկերութեանը չենք

կրնա՞ր բան մը խօստանալ, ասիկայ ըսելով բաժնուեցան մեկզմեկէ:

Իսկ առաքելական քննիչը քանի որ Տէրութեան մեծամեծ պաշտօնատեարց հետ տեսութիւն կրնէր, միշտ Գեր. Հասունեանը գովելով անոր վերայ իրենց պաշտպանութիւնը կը խնդրէր: Բնդ հակառակն Ազգին և Ընկերութեան բըռնած ճամբան վնասակար և խնդիրքնին մերժելու կը ջանար:

Եւ այդպէս Մ. Ֆէրրիէրին քաղաքէն շնչալէն մէկ քանի օր առաջ 1848 Ապրիլ 14-ին Գեր. Հասունեանը իր խորհրդակից մէկ քանի քահանաներովք՝ երկու և երեք անգամ առանձին ժողովքներ ըրաւ առաջի առաքելական քննիչին, ուր որ իրեն շատոնցունէ գծած յատակադճին, և յապաղայ շինելու շէնքին կատարման՝ պակասց հարկաւոր նիւթերն ալ պատրաստելու կը հոգար:

Եւ որովհետեւ աղքատաց Իշխաններուն շատոնցունէ ընդ ահամբ կը նայէր, ինչպէս որ վարը կատարեալ պիտի պատմենք, և աղքատանոցը, և հիւանդանոցը հոգևոր իշխանութեան վերածելով, անոնց հաշուազիրքը և սնտու կը ձեռք բերելու կը ջանար: Աւան այսո-

րիկ 1848 Ապրիլ 14 Գեր. Հասունեանը աղքատաց Իշխանաց կը ծանուցանէ, որ ամսոյս 16-ին Առաքելական քննիչը — Աղքատանոցին քննութեանը պիտի գայ: Ազգը երբոր ասիկայ լըսեց, զարմացաւ մնաց: Մայր եկեղեցին՝ և ուրիշ եկեղեցիները չի քննած կրսէին, շիտակ Աղքատանոցը կը վազէ, ուստի Ազգը աղքատանոցին իշխանացը ասպարըեց, որ հաշուէգիրքերը չըլլայ որ ցուցնեն, ըստ օրինաց թող Ազգէն պահանջէ ըսին:

Որոշեալ օրը Առաքելական քննիչը Գեր. Հասունեանին հետ միատեղ՝ Ոսկերերանին Մատուռին սանկ մեյմը վեր ի վերոյ նայելով, շիտակ վեր կելլէն, սենեակին դռները կը դարձունէն, և Իշխանները ներս կը գոցէն, թէ դատախազ, թէ դատաւոր, և թէ թարգման նախն Գեր. Հասունեանը կըլլայ: Եւ հոն Մ. Ֆէրրիէրին Աղքատաց սնտուկին հաշուէգիրքը Գեր. Հասունանին ձեռքը յանձնելու կը պնդէ: Իշխանները կարմնան կրմնան, Ազգէն, կրսէն խնդրեցէ.ք. մենք ասանց Ազգին հաճութեան և հաւանութեան չենք կրնար յանձնել: Առաքելական քննիչը ասանց պատասխան չի տալով՝ խկոյն մեծ հաշուէգիրքին ձեռք կը նետէ,

և զեր. Հասունեանը անոր օգնելու կը նայի:  
Իսկ Թօրթաշեան Յովհաննէս աղան ընդ Ղա-  
զարոսեան Պօղոս աղային՝ նոյն հաշուէզրքին  
միւս ծայրէն բըռնելով մեկզմեկու ձեռքէն  
յարիշտակելու ջանացած ժամանակին. Մ. Ֆե-  
րիէրին կսկսի թշնամանել և անսրգել զանոնք.  
և զեր. Հասունեանը ինչ կընէք կըսէ, ասանկ  
մեծ մարդու մը զէմ կայնիլ կըլլայ, և կըլոր-  
դորէ որ Հաշուէզիրքը Քննիչին ձեռքը յանձ-  
նէն: Բայց ան երկու Խշխանները ազգասիրա-  
կան ոգւով վառուած, և զօրու թիւննին կրկնա-  
պատկած վերջապէս այն մեծ հաշուէզիրքը  
երկու Արքեպիսկոպոսներուն ձեռքէն կը կոր-  
զն . . . ինչ զեղեցիկ մրցանակ: Արբոր Մ.  
Ֆերրիէրին չի կրցաւ բանադատել Խշխանները՝  
որ ազգասաց սնաու կին հաշուէզիրքերը իրեն  
յա՛նձնէն, բարկութեամբ, թշնամանելով, և ա-  
նարգելով ձրզեց զնաց: Ա. ահա՛ այսպէս այն  
Աստուածատէր, բազմաշխատ այնչտի տարիներէ  
ի վեր ձրի Աստուծոյ օիրոյն համար միայն բրած  
մեծամեծ ծառայութեանց սրտուղը, անարգուե-  
լով զաղեցին. և այն՝ Առաքելական քննիչէմը:  
Ասկէ ետեւ ելան գնացին Վանահանայ դրո-  
բոցներու քնննութեան: Երկու օրէն ետքը ի

28 Ազգիլի Առաքելական քննիչէն հրաւերք  
եկաւ Ազգին մեծամեծ իշխաններուն: Բայց  
մե՛ղք, Ազգը անկից սկսաւ հեռանալ, իրենց  
առջի սէրը ինչչափ որ մեծ և փառաւոր սեղա-  
նով մը յայտնի ցրցուցին նէ, այնչափ ալ ետքը  
իրմէ պաղկեցան. մանաւանդ շատ սատոխ վըշ-  
տացան՝ երբոր լըսեցին աղքատաց անաուկին  
հաշուեղիբքը Վեր. Հատունեանին ձեռքը յանձ-  
նել ու զելը: Վասն այսորիկ Ազգին այն մեծա-  
մեծ երևելի իշխանները, Սամանեան Պետու-  
թեան պաշտօնատեարք, որոնց ձեռնառու օգնա-  
կանութեամբ մինչև այսօրվան օրս Ազգերնխ-  
տոքի վըրայ կայնած էր, և իրենց բարեբար  
անմահ յիշատակնին օրհնութեամբ միշտ կըլ-  
լար, որոնց քաղաքական հանձնարը ամէն ազ-  
գէն զոյրած էր, մէկ խօսքով Ազգին կենդա-  
նութիւնը իրենց ձեռքն էր. սասնք կսեմ Մ.  
Ֆերրիէրիլին հրաւիրանայը չի գացին, որով  
այն հրատարակուած կարգադրութիւններն ալ  
Ազգովն չընդունուեցան:

Ա. Ի 4 Մայիսի ըստ հրամանի Վեր. Հա-  
տունեանին, ամենայն Հայազգի կաթողիկէ եկե-  
ղեցականները, առաջի Առաքելական քննիչին  
եկան ժողովեցան, ուր ընթերցաւ նախ՝ հաւ-

տատու թիւն ժողովրդապետաց ի Մայրաքաղաքիս, զանազան թաղս բաժնելով :

Երկրորդ՝ որովհետեւ եկեղեցականք, վասն անտաննելի բնաւորութեան Ատարձեան Աթոռակալին բողոքեալ էին, ուստի Հաճի Գաւթութեանը անոր տեղը յաջորդէց :

Երրորդ՝ վասն նորին իսկ Գեր. Հասունեանին ամբաստանեալ էին, թէ ինքն իշխան առանց խորհրդոյ, առանց խորհրդականաց, և առանց ժողովոց իրեն կամայք յարմար կը գործէ, ուստի երկու եկեղեցականաց ժողով հաստատեց. բայց մե՛ղք որ՝ Մ. Յէրբիէրին Հռովմ սաք չի կոխած, ժողովները շուտով ցրուեցան, ինչու որ Գեր. Հասունեանին միապետական իշխանութիւնը, մէկ ժամանակ չեր կրնար արգելաւիլ, թող թէ ժողովոց հաստատութեան գլուխ ծոկի :

Չորրորդ՝ կտակաց հաստատութիւնը և անոնց վերայ հսկողութիւնը, և ճիշտ գործադրութեան պահպանութիւնը, ներքին եկեղեցական իշխանութեան վերածեր էր, ինչպէս որ Հասունեանք կը փափայէին՝ Եւ բայց ասանցմէ Նախագահական թէմին աւելի պայծառութեանը, և յառաջապիսնութեանը համար, ա-

աաջուցմէ, դրուածներ, և ստորագրու թիւներ  
իրեն արուեցան, որ Յրօքականտային ժողովոյն  
ներկայացնէ զանոնք. որպէս զի ետքէն Վեր. Հա-  
սունեանին սնանց գործադրութեան հրաման-  
ները ընդունելու մեծ զիւրիւ թիւն ըլլայ՝ ինչ-  
պէս որ սխտի տեսնենք վարը:

Արդ՝ Մ. Ֆէրրիէրին իր Առաքելական քննու-  
թիւնը մեր Ազգին վերաբերեալ այսպէս կա-  
տարելէն վերջը, մեկ երկու օրէն ետքը ելաւ  
գնաց:

Անիկայ Հոտիմ՝ երթալու վերայ ըլլայ,  
մենք ալ մեր Ազգային պատմութիւնը շարու-  
նակելու նայինք:

## 16.

1. Բարչրափոյն Ղրան Եւէոսոյ գաշաճելից ներկայուա-  
լեւեմէն Համալ գեաց ընկերութեան վեճին շեշտուելը. —
2. Արիին անփամ Օփոստոփառ : այսեր հրամանը Սրիո-  
սասանից ժողովոյն հաստատութեանը համար. — 3. Վեր.  
Հասանեանին ինքնալու հրաժարումը Պարթաւոսիան  
իշխանութեանէն:

1. Ինչպէս 13-դ թւոյն մեջ ըսեր էինք՝  
թէ Ազգը Մեծի Ղրանն աղերսագիր առեւր էր  
երկուսասանից ժողովոյն հաստատութեանը հա-



մար, նոյնպէս Հասունեանք ալ ասիկայ խափա-  
նելու համար աղերսագիր տուած էին. և թէ  
այս երկու աղերսագիրերն ալ Տէրու թեան Բարձ-  
րագոյն Ատեանք ելած էին:

Առդ՝ որովհետև Ա. Ե. Կայսրը որ գիշեր  
ցերեկ իր ամեն հպատակաց երջանկութեանը  
կը փափաքի, իսկոյն ԻՐԱՏԷՆ, իր յօժար կամքը  
յայտնած և հրամայած էր: Ուստի մէկ քանի  
անգամ Գեր. Հասունեանք Բ. Դանէն կանչուե-  
ցաւ: Գեր. Հասունեանք պատասխան տուաւ  
ու ըսաւ, ՝ Ազգիս մէկ մասը բնաւ չէն ընդու-  
նիր այս նոր կարգադրութիւնը, քանի որ Հա-  
մազգեաց ընկերութիւնը չի վերնար: :

Ա. երջապէս Բ. Դուռը ձանձրանալով այս  
կերպ պատասխաններէն, նախ 1848 Յունիսի  
28-ին Բ. Էմին Էֆէնաին առաջին թարգման  
Արքունի Գրան. երկրորդ անգամ 6 Յուլիսի  
Թահրիրաթ Մուտուրի Սայիա Էֆէնաին Պատ-  
րիարքարանը խաւրեց, որոնք երկու Ազգային  
ժողովոց մէջ ընկերութեան վէճը այս կերպ  
լրմնացին:

Ազգիք: երեւի իշխանները, զՊեր. Հասու-  
նեանք իրեն ընտրած ութ տասը քահանանե-  
րով ժողովքի հրաւիրեցին. իրեն հետ մէկտեղ

բերելով իր ուղած 24 աշխարհականներ՝ որոնք բոլորովին հակառակ էին Համազգեաց ընկերութեան:

Նոյնպէս ընկերութեան Պաշտօնատեսարց ալ ծանուցին՝ սահմանեալ օրը իրենցմէ քսան և չորս հոգիով առաջիկայ զըննուին:

Առաջիկայ ժողովքին մէջ՝ Էմին էֆէնտին, նախ և առաջ Հասունեանց աղերսագրին մերժուիլը յայանեց, երկրորդ՝ Արքունի Հրովարտագրով Երկոտասանից ժողովոյն հաստատութեանը համար Ազգին առւած աղերսագրին համեմատ՝ Օգոստափառ Կայսեր ԻՐԱՏԷՆ, բացորոշակի կամբը իմացուց: Այսինքն՝

Ա. Ազգը ներկայացնող Երկոտասանները Ազգին ընդհանուր երեսփոխաններէն քուէով պիտի ընտրուին:

Բ. Այս ժողովքը առանձին զմուռ պիտի ունենայ:

Գ. Պատրիարքներուն, թախրիբը, առանց երկոտասանից զմուռոյն ոչինչ պիտի համարուի:

Դ. Երկոտասանից ժողովոյն քուէով որոշուած՝ մեծազոյն մասին կարծիքը պիտի հաստատուի:

Ե. Պատրիարքը այս ժողովոյն մէջ որչափ որ  
ալ Նախագահ պիտի նստի, այլ ի վերայ  
այսր ամենայնի ժողովքէն կախում պիտի  
ունենայ:

Պաշտօնեայն ասոնք յայտնելէն վերջը, մինչև  
ցայսօրս կայսէր հրամանը ի գործ չի դրուե-  
լուն պատճառը հարցուց: Համազգեաց Ընկե-  
րութիւնն է ըսին պատճառը: Ան ատէնը կ'մին  
է՛ջէնտին Ընկերութեան կանոնադիրքը ծայրէ  
ի ծայր կարգաց: Ետքը Ալլահվերտի Աբրա-  
համ Ամիրայն այսպէս սկսաւ խօսիլ: «Գերա-  
պայծառ Տէր, Ազգը այսչափ ժամանակէ ետե,  
ազգային օրինաց և սահմանադրութեանց  
ետեէ ինկեր է, և ինչան այս օրս չի կրցաւ  
մէկ կերպով ձեռք բերել, պատճառելով միշտ  
Համազգեաց Ընկերութիւնը: Այն Ընկերու-  
թիւնը կսեմ, որ չորս հինգ հարիւր հոգիէ  
բաղկացերէ, որոնց մեծագոյն մասը պատուաւ որ  
անձիքն և այլն, որ և ընդհանուր Ազգային կար-  
գադրութեան հետ ամենևին վերաբերութիւն  
չունի: Բայց որովհետև գործքերը այս աստի-  
ճան և կան հասան, ուստի կազաչեմ զՁեզ՝ որ  
այսօր աս ժողովքին մէջ՝ ամենուն համար-  
ձակութիւն արուի, որպէս զի հողւոյ հա-

Էկառակու թիւնը մէկ դի թողլով, ազատօրէն  
ճշմարիտը զուցէն՝ որով դժբաղդ Ազգերնիս  
ալ զիչ մը ժամանակ Խաղաղութեան երես  
սեսնէ: Տէրութեան կողմանէ ահաւասիկ Բ.  
Էմին Էֆէնտին. իսկ հոգեօրի կողմանէ՝ Չեր  
Ամենասրբազնութիւնը և յարզելի վարդա-  
պետները և այլն: »

Ասկէց ետքը Ընկերութեան կանոնները մե-  
կիկ մեկիկ կարգացուեցան, քննուեցան, և եր-  
կու կողմէն վճարանութիւնը սկսաւ: Ընկե-  
րութեան կողմանէ հինգ հոգի միայն կը խօ-  
սէին. Սահմանձեան Վերաիչ աղան, Տալու թ  
Յ: Բահոր Էֆէնտին, Սինապեան Ալթա պէյ, Արա-  
մեան Յովսէփ ալտ, և Թիւրքնոձեան Կարա-  
պետ Աղա:

Գեր. Հասունեանը Բ. Դրան առջին ինքը  
զինքը սրաշտպանելով և դամ խառվութիւնները  
իր կողմնակիցներուն վերայ կը ձգէր, ըսելով որ  
Ազգին մէկ մասը այս Ընկերութիւնը չէն ու-  
զէր և այլն: Բայց այս ժողովքին մէջ յայանա-  
պետ երեցաւ, որ այն ուղարմելի և անմեղ ժա-  
ղովուրդը դրոյզողը սով է և զէր: Վասն զի Հա-  
սունեանը նեղի գալով, և չի կարենալով միւս  
կողման սրտաստիանել, իրենց խօսակցութեանց

միջ սկսան թոթովել, և վերջէն Մըսրղեան  
Պետրոս աղան ճշմարիտը խոտովանեցաւ ըսե-  
լով. «եսուրիշ բան չեմ ճանչնար և չեմ գի-  
տէր, և չեմ ալ հասկընար, բայց եթէ Պերա-  
պոյժաւ ինչ որ զուրցելու ըլլայ նէ անիկայ  
«գիտեմ և այն. » այս ըսելով աշխարհականները  
մէկ գի դաշուեցան, և Պեր. Հասունեանը վար-  
դապետներով մեկտեղ առաջ անցաւ: Եւ այն  
երկու ժողովքներուն մէջ Նեառնին բնազան-  
ցու թենէն, ու Արիստոտելին արամարանու թենէն  
աւելի, ամէն մէկ ընկերութեան կանոնին կե-  
տերը, շէշտերը Արգոսեան աչօք նայելէն և  
քննելէն վերջը, հազիւ ուրեմն գանուեցան Ֆէր-  
րիէրեան բաց ըսուած դռները. այսինքն

Ա. Այս Համազգեկաց ընկերութեան մէջ միայն  
Հսովմէական Հայրերը պիտի գրուին:

Բ. Ընկերութենէն առաջարկուած, և Պեր.  
Նախագահէն ընտրուած չորս հաս քննիչ  
գրոց պիտի ըլլան:

Գ. Եկեղեցականներէն չորս խորհրդական, և  
երկու խաղաղարար պիտի ըլլան:

Վ. Երջապէս Երկուսասանից Ազգային գերա-  
զոյն ժողովքն ալ այս ընկերութեան վերայ  
պիտի հսկէ:

**Ա**հա՛ ձեզի, բարեմիտ ընթերցողք, այնչափ  
երկամեայ խռովութեանց, զըսարտութեանց,  
դայթակղութեանց, անհաշտ թշնամութեանց,  
ատելութեան, կուռոյ և անլուր մասնութենէ  
ետքը՝ սա երկու և երեք բաները գտնուե-  
ցան, . . . Ողբայլ՝ ժամանակ, իրաւցնէ յիշե-  
լու է հոս այն առակը որ կըսէ.

Երկնէք լեառն ահազին

Աշխարհ ամենայն կայր ի գննին.

Եւ ծնաւ զՄուկն բանաքին:

Հասունեանք իսկ զտրմացան, մնացին մինչև  
մէկզմէկու կը հարցնէին այս ի՞նչ կերպ բան է:  
Այս ի՞նչ կերութիւնը՝ շէրէտիկոսական է մեզի  
կը քարոզէին. վերջէն անաստուածութեան պիտի  
ելլէ կըսէին և այլն. և սկսան զայթակղիլ,  
յայտնի տեսնելով՝ որ իրենք բարեմտութեամբ  
Եկեղեցականաց ոմանց հակառակութեան, և  
փառասիրութեան գործիք եղեր են:

Վէրջապէս այն երկու ժողովոց մէջ Հա-  
մազդեաց ինչկերութեան կանոնները քննուե-  
ցան, որբազրուեցան, և այն ամեն հաստա-  
տութիւնները, Բ. Գրան երկու պաշտօնեաները  
ստորագրեցին, և Գեր. Հասունեանին (պահ-  
պանիչովը), իրարմէ սիրով բաժանուեցան: Ազդը

ՈՒՑ շունջ մը առաւ այս ընկերութեան գործը  
ըմնցընելէն ետեւ: Ես ասանկ կարծեմ որ Սուլ-  
թան Մուրատին Պաղտատը առնելը, և Առա-  
ջին Նաբոլէոնի Մօսքուա մրանելը աւելի դիւ-  
րին կզան, քան թէ այս Համագգեաց ընկերու-  
թեան վէճին լուծելը: Բայց ասոնք ամենքը  
պարտազ, պարտազ պատճառներ էին. Գեր. Հա-  
սունեանը իր ձեռքը գործիք և պատրուակ  
էր առէր զանոնք, որուն պատճառաւ ողորմելի  
ժողովուրդը՝ ծովու նման անդադար խռովու-  
թեան ալիքներուն վըրայէն կը ցատթկէր, և  
Հանգարտութեան երեսը երբէք չէր տեսնէր,  
խաղաղութեան երջանիկ օրերը իրմէն բոլորո-  
վին հեռացած էին:

2. Ասկից ետքը Բ. Դուռը Գեր. Հասու-  
նեանին՝ ըստորում Ազգասէտ Պատրիարք, միշտ  
կը պնդէր ժամ մի առաջ Ազգին խնդիրը, ու  
կայսէր հրամանը ի գործ դնելու: Ի՞նչ դժուա-  
րին բան մանաւանդ Գեր. Հասունեանին, որ  
միայն խնքնիշխան հրամայել, տիրել և ամսէ-  
նուն պատգամ ապլ կուզէր, կարելի՞ է որ հի-  
մայ Երկոտասանից ժողովոյն հաւանութիւն  
առայ՝ և զլուխ ծրուէ: Ուստի ինչչափ բունադա-  
տեցաւ նէ ալ՝ Վ. Կ. Ս. կայսէր հրամանը ի գործ

դնելու համար ի 10 թղթատուի 1848, Ազգային  
ընդհանուր ժողովը դումարել, ի վերայ այսօր  
ամենայնի այս ժողովքին մէջ արիւն քրանե-  
ցուց զԱզգը իր կողմնակիցներով, մինչև որ հա-  
ղիւ երկայն վիճաբանութենէ յաղթուելով ամ-  
մէնը մէկ տեղ վերը յիշուած թիւը՝ յի-  
շեալ երկուսասանից ժողովոյն հիմնական հինգ  
կանոնաց վերայ հաւանութիւն տուին: Ասիէ  
ետե ամէն մարդ սկսան երկուսասան անձինք-  
ները ընտրելով զրի անցունել, որ քուէար-  
կութեան ձրգէն: Մինչև հոս թէպէտ և վի-  
ճաբանութեն, բայց ամէն բան խաղաղ ըստ կարգի  
առաջ կերթար:

Մէյմալ յանկարծ չեմ գիտէր ուսկից  
դրողեալ, Գեր. Հասունեանին եղբայրը Անդրէաս  
աղան ոտք կելլէ, — խորդախութիւն, խորդա-  
խութիւն կայ քուէից մէջը — կը պոռայ իր  
կողմնակիցները ասոր կը ձայնակցին, և ժողովքը  
տակն ու վերան կըլլայ, և խռովութիւնը կը  
սաստկանայ: Եւ երբոր Մեծամեծ Խշիւանները  
հոգւով չափ խաղաղացնելու կաշխատէին-  
Գեր. Հասունեանը ըստ որում Նախագահ ժո-  
ղովոյն, ոտք կելլայ և ժողովքէն դուրս ելա-  
լովը՝ ժողովականք ալ կը ցրուին:



3. Բայց ինչ օգուտ Բ. Գուռը կը պնդէր  
Կայսէր Տրամանը ի գործ դնել. և թէպէտ  
Գեր. Հասունեանը ինքը զինքը պաշտպանելով  
խառն ի ճաղանչ կողմնակցութեանց վըրայ  
եղածները կը ձգէր. թէ չէն ուզէր նոր Ազգա-  
յին կարգադրութիւն: Այլ երբոր Օղոստատիան  
Կայսէր Տրամանը այս երկրորդ անգամ Գեր.  
Հասունեանին վըրայ սաստկացաւ նէ, այն առէն  
նեղի զալով աւելի աղէկ սեպէց, Պատրիարքա-  
կան իշխանութենէն կամովին Տրաժարիւլ, իր  
մարմնոյն տկարութիւնը սխառձառելով, քան թէ  
իր ձեռօք նոր կարգադրութիւնները ի գործ  
դնել, և Ազգային օրինաց և կանոնաց տեղի և  
հաւանութիւն տալ:

## 17.

Աւելիեան վարդապետին Պատրիարք ընտրուելը:

Գեր. Հասունեանին Պատրիարքական իշ-  
խանութենէ Տրաժարումը, թէ՛ Տէրութիւնը  
և թէ՛ Ազգը սիրով ընդունեցին: Բայց իր յա-  
ջորդը քանի որ առաջուց չէր պատրաստաց  
նչ երբէք Տրաժարեցաւ:

Կարնեցի Սէլվիեան Յովհաննէս վարդապետը, Առաջնորդ Կարնոյ, և Արդուինի, այր փառասէր և անհաստատ ի ճանապարհս իւր. Կ. Պօլսոյ մեծամեծներուն կըռ թնամ՝ Հասունեան կողմնակցութեան առ ժամանակ քիթ կընէր: Բայց երբոր Գեր. Հասունեանին Պատրիարքութեան ատէնը, Սէլվիեանին վերայ, թէ եկեղեցականաց և թէ աշխարհականաց կողմանէ, զանդտաներով և ամբաստանութիւններով՝ Ազգին թէ պատրիարքական, թէ Նախագահական և թէ Բրօքականացին զիւանները լեցուեցան նէ, պէտք եղաւ ան ատէնը Սէլվիեանին վերայ, Աստարձեան Տէր Տիմօթէոս Ա. թոռակալը. Սթճուօղլու Տէր Յովսէփին հետ մէկ անշ Քննիչութեան խաւրել: Ան ատէն Սէլվիեանը իր յարգը և պատիւը չի կորսնցընելու համար, խոնարհեցաւ և անցաւ բոլորովն, Հասունեանին կողմը:

Եւ որովհետեւ այս ժամանակ Ազգային բարեկարգութեան նախանձախնդիր և յառաջադէմն էր, Բ. Ալլահվերտեան Արբասամ Ամիրայն, ասոր Գեր. Հասունեանը իւր կողմնակիցներուն ձեռօք կերպով մը առաջարկեց Ազգին Պատրիարք ըլլալու, իրեն քաղաքակիցը Գ. Յովհաննէս Սէլվիեան վարդապետը Ամիրայն Սէլվիեանին

առջև ընթացքը յիշելով շուտով համ և հաւան եղև այս առաջարկութեան. ինչու որ կրօնէր, անիկայ միայն կարող է գեր. Հասունեանին գէժ դնել: Բայց չէր դիտէր՝ թէ անիկայ գեր. Հասունին կողմը անցնելով, անոր կամայք, և ակնարկութեանցը բոլորովին պիտի ծառայէր:

Արդ՝ Յամին 1848 թ 26 նոյեմբերի, եղև Ազգային ընդհանուր ժողով առաջարկութեամբ Բ. Դրան պաշտօնեայ Քեաթիպ Էֆէնտին. ուր պաշտօնեայն Բ. Դրան հրամանագիրը կարգաց որ, նախ՝ Տէրութեան կողմանէ թէ՛ Համագրեաց Ընկերութեան, և թէ՛ Ազգային Երկտասանից ժողովոյն ընտրութեան ընդունուիլը յայտնելէն վերջը, ըստ Ազգային օրինաց՝ նորոգ Պատրիարքին ընտրութեանը կը հրամայէր: Այս ժողովքին մէջ թէպէտ և ինչչափ այլ և այլ անձինք առաջարկուեցան նէ ալ, այսուամենայնիւ երկու կողմ միացան, և քուէարկութեամբ ընտրուեցաւ, վեցերորդ, Ազգապէտ Պատրիարք Սէրվեան Յովհաննէս վարդապէտ. որ տարւոյն վերջին օրը Բ. Դունէն Ազգապետական իշխանութիւնը ընդունելով, 1849 տարւոյն առջև օրը, Մայր Եկեղեցւոյն մէջ ձայնու որ

Պատարասը մատոյց: Մէկ երկու շարաթ անց-  
նելէն վերջը, ընդհանուր Ազգային ժողով մը  
դուժարելով իր խօսքը ասանկ սկսաւ:

— Տեարք իմ, ու թը կամ տասը տարիյի չափ  
— կայ, քանի որ այս Քաղքէս ելայ, և դար-  
— ձեալ ձեր ամենուդ հաճու թեամբը հոս եկայ:  
— Բայց մե՛ղք, որ այս մեր Ազգը ինչպէս որ  
— ձգեցի ամենեին անանկ չի աւսայ այլ ողոր-  
— մելի և թշուառ վիճակի մը մէջ դտայ: Աւ-  
— տասը պատճառը երկու բանի համար ըլլալը՝  
— ամենքնուդ յայտնի է, այսինքն, առաջինը Հա-  
— մազդեաց ընկերութիւնը, և միւսը Արկատա-  
— սանից ժողովոյն հաստատութիւնը: Վահու-  
— թիւն Աստուծոյ, ևս չեկած այս երկու խնդիրն  
— ալ լուծուեր լըմնցերէ, թէ՛ Վեր, Նախագա-  
— հին կողմանէ, և թէ՛ Տէրութեան կողմանէ  
— ընդունուելով. ուստի ևս ալ բոս ամենայնի ըն-  
— դունամ եմ: Ասկէ ետե սիրելիք, սէր, և միա-  
— բանութիւն, որպէս զի պարմելի Ազգերնիս իր  
— առջի կենդանութեանը վերստին դառնալով,  
— ասոր ազգաց առջին ալ իր համբաւը տարա-  
— ճու ելով, խաղաղութիւն, և ճշմարտութիւն  
պարզեօղ Տէրը վաստարանեն և այլն . . .

Իսկ Վեր Հաստանանը Պատրիարքական իշ-

խանութենէն հրաժարելէն վերջը իր գիւղա-  
զնացու թեան բնակարանը խառը գեղ մէկ քանի  
ամիս առանձնացաւ: Եւ որովհետեւ այս տարի  
Պիոս Թ. Պապը, Բաղդաւազուց հզօր զինու զօ-  
րութեամբ իր թագաւորութիւնը դարձեալ  
ձեռք ձգած էր. Գեր. Հասունեանք այս գէպքը  
իրեն յաջող առիթ աանելով ուլախակցու-  
թեան պատճառաւ իրեն այցելութեան երթալ  
ուզեց: Եւ որպէս զի իր այս ճանապարհոր-  
դութիւնը աւելի փառաւոր և շքեղ ըլլայ,  
Բ. Գանէն խնդրեց՝ որ Տէրութեան կողմանէ ալ  
պաշտօնական եղանակաւ մը իրեն յանձնարա-  
րութիւն ըլլայ, ի ուրախակցութիւն Ս. Քա-  
հանայապետին: Բայց Բ. Գուսը այս խնդիրքը  
չընդունեց նէ՛ կրկնորդը առաջարկէց, (խնայե-  
սոր լսուեցաւ այն ասէն) որպէս թէ Սամանեան  
Պետութեան մէջ գտնուող Պապական փոխա-  
նորդները, այն է՛, Տէլէկաթօ Արօսաօլիքօները,  
Արեւելք կերպ կերպ իրենց անխոհեմ գործ-  
քովնին՝ աւելի շինթութեան պատճառ կըլլան  
կոր. ուստի Հոսովալու կառավարութեան ինքն  
խնայունէ՛ որ Բ. Գուսը կը բաղձայ, թէ այս  
պաշտօնները Սամանեան Տէրութենէն ճանցուած  
խրաբանչիւր տեղուց, գաւառի և ազգի, տե-

ղական Հռովմէական Պատրիարքներուն, և Նախագահներուն և կամ Արքեպիսկոպոսներուն յանձնուի: Ատենանս, մարդուօ փառասիրութիւնը, ինչպէս խելքէ մտքէ դուրս բաներ մտածել կուտայ:

Բայ ասոնցմէ, իբր Ազգին կողմանէ շարադրուած մէկ թուղթ մը, մէկ քանի Ազգիս մեծամեծներուն ներկայացուց ստորագրելու համար. այս թուղթը թէպէտ Ս. Պապին ուրախակցութեան թուղթ էր, բայց վերջերը մթին և ծածկարար խօսքեր գրուած բլլալուն պատճառաւ, ոմանք թուղթին մէջ ինչ գրած բլլալը շիմանալով ստորագրեցին. ոմանք զեր. Հասունին խօսքին խափուելով թէ Ազգին իրաւունքները հաստատեմ պիտի ըսելուն համար, յօժարակամ ստորագրեցին. ոմանք կարդալով զայն թուղթը, Մահ է ի Սանի աստ, ըսին և չստորագրեցին, որովհոհե այն թղթին զօրութեամբ Հռովմայու առջև գրէ թէ ինքն զինքն լիագոյն իշխանութեամբ կատարեալ փոխանորդ ներկայացուցեր էր . . . Ասոր նման և աւելի ազդու ուրիշ մէկ թուղթ մ' ալ բովանդակ Նախագահական թէմին Աղէրին կողմանէ իր խորհրդակից քահանաները ստորագրէր էին:

Այս թուղթերով Յամին 1849 Օգոստոսի  
23 ճամբայ ելաւ՝ դէպ ի Կայէթա այցելու-  
թեան Ս. Քահանայապետին:

Ո՛վ Տէր Աստուած, ցրուէ զխորհուրդն  
Աքիտորեայ: Արդեօք ի՞նչ խռովութիւններ այս  
ճամբորդութենէ վերջը, Ազգին մէջ պիտի տես-  
նենք: Բայց թողունք հիմայ անոր՝ որ յուսա-  
լից առաջասաներով լեցուած իր ճամբորդու-  
թիւնը ընէ, և մենք դառնանք մեր պատ-  
մութիւնը շարունակելու:

## 18.

Մայր եկեղեցոյն՝ և սրիշ եկեղեցիներուն. Աղաթա-  
նոյն և Հիւսիսայնոյն վերայ:

Նախ և առաջ ինչպէս որ ամենուն  
յայտնի է, ինչչափ Ազգային Եկեղեցի, Աղքա-  
տանոց, Հիւանդանոց կան, ամէնքը Ազգին սեփ-  
հական ինչքերը են. ինչպէս որ ասոնց շինու-  
թեանը համար Տէրութեան տուած հրամա-  
նագիրերը (Ֆէրմանները) յանուն Ազգին կը  
զրուին: Եւ ըստ կանոնի և սովորութեան արե-  
ւելեան Ազգաց, նոյն վերոյիշեալ անդերուն վը-  
րայ՝ Ազգին կողմանէ Մութիւնը, և իշխաններ

կը դբուին. և այս Մութէվէլլին իշխաններուն հետ մէկտեղ Ապխսիոպոսէն հաւանեալ և իրաւասութիւն ընդունած քահանայն, Եկեղեցական իշխանութենէն կը խնդրէին՝ կարգել զանի Մեծաւոր, այս ինչ Եկեղեցւոյն, աղքատանոցին, և կամ հիւանդանոցին վըրայ: Այս կանոնը մինչև երկրորդ Նախագահ Մարուշ զերապայծառին օրը տեւեց:

Իսկ Գեր. Հատունեանին իշխանութեան ժամանակը, Եկեղեցին հողէոր իշխանութեան կը վերաբերի ըսելով, նախ՝ Մեծաւորները իր ուզածները գնել սկսաւ: Երկրորդ՝ զրած Մեծաւորներուն ձեռք Եկեղեցւոյն իշխանաց հետ այնչափ կըռուրակեցաւ՝ որ մինչև ինքն իրեննին թողուցին փախան, և ետքը իր ուզածները կամ կըդնէր, կամ չէր զընէր: Այսքան տարի է Մայր Եկեղեցին իր ձեռքը անցուցած, Ազգը գեռ ասոր հաշիւը չէ տեսած:

Որ Աստուածապաշտ Ազգային մը Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյն, երկու Նախագահներուն ժամանակ առջի փառքը տեսած ըլլալով, հիմակուան ողորմելի և թշուառ վիճակին վըրայ սիրտը թունաւ չէլէ, ու աչքի արցունքներ չի թափէ:



Հանգուցեալ այլևոր ծերունին, երանելին այն Նուրիճան Անտոն Արքեպիսկոպոս առաջին Նախագահը, իր ծերութեան հասակին ամենեւին չի նայելով՝ գիշերանց Պէյօղլուէն ինջած ժամանակ, Աստուածասէր և բարեպաշտ ժողովուրդն այլ՝ Քաղաքին միւս ծայրերէն, գեղերէն գիշերանց, գունդագունդ, այր և կին, աղքատ մեծատուն, աղջկունք երխտասարգք և տղայք անգամ՝ Եկեղեցւոյն դուռը իրմէն առաջ ձեռք կառնէին: Ասոնք և ասոնցմէ աւելի տեսանք մեր աչքովը. վըկայ են գրէ թէ բովանդակ Ազգը: Իսկ հիմայ, իսկ հիմա, ո՛հ թշուառութեանս, ժողովուրդը նոյն բնատուր Աստուածապաշտութեան տէրն է, բայց ո՛ւր է այն քաջ հովիւր, և հովուապետը, ո՛ւր է այն՝ սխրալի Աստուածապաշտութիւնը, որ Եկեղեցւոյ գոնէ Տաղաւար տօներուն Աստուածային պաշտամանց և ժամերգութեանց ներկայ գանուելովը բարի օրինակ ըլլար ժողովրդեան \* :

---

\* Թէ որ այս մօտ տարիներս Աստուծոյ նախախնամութեամբը Ազգիս մեջ Աստուածասէր և բարեպաշտ Իշխաններ չէին երեցած, ինչպէս Տիւղիանք, Աւարիւրեանք, Սամանճեանք, Հիւրմիւղեանք, Ղա-

Բայց ինչո՞ւ խօսքս կերկրնցունեմ և ընթեր-  
ցողացս զգու թիւն կուտամ. Գեր. Հասունեանը  
իր քաղաքնադիտութեամբը ծովէ ի ծով, աշ-  
խարհքէ յաշխարք, թագաւորութենէ ի թա-  
գաւորութիւն կը վազէ զօրութիւններ զգին-  
լով, Ազգին միութեան կապերը քակելու, և  
ի պայծառութիւն Նկեղեցւոյ վառուած ճրագ-  
ները մարելու կը ջանայ:

---

զարտեանք ևայն, ևայն, շատնցունէ արդեօք Հա-  
յաստանեայց Նկեղեցւոյ այն Արարողութիւնները, Նկե-  
ղեցեաց պայծառութիւնը, և Աստուածային ժամեր-  
դութիւնները, անհողութեամբ Հովուաց, և Հովուա-  
պետաց բոլորովին դադրած, և լւած էին: Եւ այսօր-  
վան օրըս թէ որ մէկ քանի Ազգային Նկեղեցիներ-  
րուն մէջ Աստուածային ժամասացութիւնները և Արա-  
րողութիւնները տակաւին կը կատարուին, ասոնց հա-  
մար պէտք է զլիսաւորարար և առանձին շնորհս մա-  
տուցանել առատաձեռն բարերարութեանց և փու-  
թոյն բարձ. Կէօչէք Յակովբայ Լ.Ֆէնտիլին, որ Աս-  
տուածսիրութեամբ վառուած Նկեղեցեաց պայծա-  
ռութեանը հոգ կը տանի: Բայց ափսոս, որ քիչ ա-  
տէնէն այն Ազգային Արարողութիւններն ալ Լատի-  
նասէր Պաշտօնէից անհողութեամբ կամաց կամաց  
բոլորովին խափանուին. և անոնց տեղը օտարօտի,  
և կամուռ աղօթք և արարողութիւնք պիտի յաջորդեն:

Մայր Եկեղեցւոյն այս ողբայլի վիճակը պատմելէն վերջը, համառօտիւ անցնինք, Աղքատանոցին, և Հիւանդանոցին վերայէն ալ :

Պատմութեանս 4. թուոյն մէջ յիշեցինք թէ 1830 տարիէն առաջ Ազգը երկուքի բաժնուելով, Աղքատաց սնտուկն ալ երկուքի բաժանուած էր: Քողարացւոց աղքատաց տեղը հիմնուածն Պէյօղլու Ոսկերերան Եկեղեցւոյն տեղն էր, երկոտասան իշխան Ազգէն դրուած էին, ու մէկ կանոնագիրքմ' ալ ունէին՝ ու թսուն տարի առաջուց շինուած:

#### ԱՆՈՒԱՆՔ ԻՇԽԱՆԱՅ

Մէրամէթձի Յովսէփ Աղայ.

Ճէլալի Յակոբ . . . . . 7

Մաղլըմ Բայանան Անտոն . . . . . 7

Ղաղարոս Մ. Անտոն . . . . . 7

Թօփթաշք Յովհաննէս . . . . . 7

Ղաղարոս Պօղոս . . . . . 7

Արղար Յակովբ . . . . . 7

Խորասանձը Յովսէփ . . . . . 7

Մաքրղ Յակովբ . . . . . 7

Սահաթձի ձիօրձի . . . . . 7

Աւետիս օղլու Աւետիս . . . . . 7

Սաղահան Յարութիւն . . . . . 7

Երբոր 1830-ին Ազգը ազատութիւն դրանելով աշտորէն եւ դարձան, եկան միացան

սիրով: Այս իշխաններէն երկու հողի. Արդար  
Յակովբ արային հետ՝ Մէրամէթճի Յովսէփ  
աղան ելլելով, անոնց սերը Վաղատացոց ար-  
քատաց իշխաններէն, Չէրէնխմոսեան Չէրէնխմոս  
աղան, և Աբել Անտոն աղան մտան:

Եւ այսուհետև ամենքը մէկ սիրա և մէկ  
հողի, ան ահռելի մեծ կրակէն ետև, շուտով  
շինեցին արքատանոցը. քիչ մը ետքը Ճանտախ-  
աին տուած սոսկալի կոտորածին չի կրնալով  
համբերել, Ղաղարոսեան Մ. Անտոն աղան Սա-  
քաեան Յարութիւն արային հետ մէկտեղ.  
Խարժա Ամիրային փեսայ Համի Յարութիւն  
արային ձեռօր հիմակուան Սուրբ. Յակովբայ  
Հիւանդանոցին սեղը՝ երեսունու վեց հազար  
դուռու ծախու առին, և սկսան Ազգին բա-  
րերարութեամբը շինել այն մեծ հիւանդանոցը  
Նուրիճան Գերասարցճառ առաջին Նախագահը  
կտակ մը չէր հատուակեր թէ որ ամենէն ա-  
ռաջ արքատանոցին, և հիւանդանոցին բան  
մը չէր հանուէր, որ և ստիկաց Ազգային կա-  
նան եղած էր, (հիւնաց ասոր սեղը Սօթն Խոցին  
Աղբայրութիւնը անցած է): Բոլոր Ազգը մեծէն  
մինչև սղոթիկ դոհ էին, անոնց այս չափ աա-  
րիներէ ի վեր ըրած մեծամեծ հաւատարիմ

Ճառայութեանցը համար, որոնք իբրացնէ  
տուներնին տեղերնին, ընտանիքնին զաւակնին,  
առուտուննին և գործերնին անգամ մէկ դի  
ձգած, գիշեր ցորէկ կաշխատէին թշուառ աղ-  
քատաց համար: Եւ ամէն տարի կէքը մուտքը  
անունով ամէն մարդուն առածը՝ հաշուե-  
ղիւքը անցնելով Ազգին ցոյց կուտային: Եւ  
քանի որ Պէյօղլու Ազգային մէկ Եկեղեցի չե-  
կար. Արբոյն Յակովբայ մատուռը գունդագունդ  
ժողովուրդը կը վազէր, Աստուածային ժամեր-  
դութեան, և ձայնաւոր Պատարագին ներկայ  
դանուելու, ինչպէս կըրեմն ի Յիսուս Փրկիչ կը  
վազէին:

Իշխանները տեսնելով որ այնչափ հեռու էն,  
մանաւանդ ձեռնային ժամանակ դժուար կըլ-  
լայ ժողովուրդեան մինչև հոն գալը: Աղքատա-  
նոցին մէկ կողմի սրահները վերէն ի վար բա-  
ցին, վեց եօթն հարիւր հոգի ածնելու շարժ  
մէկ մատուռ մը շինեցին, յանուն Արբոյն Յով-  
հաննու Ոսկերեքանի: Եւ որովհետև արդէն  
ամէն կիրակի մէկ Պատարագ մը աղքատաց հա-  
մար կը մատուցուէր, Սուրբ Յակովբէն ալ մէկ  
երկու քահանայ հոս փոխադրելով. անանկ մի-  
տուննին գրած էին Իշխանները, որ այս ճամ-

բով թէ Ազգին, և թէ աղքատաց սնտուկին  
օգտակար և շահաւոր ծառայութիւն մը ըրած  
կըլլան. բայց խարուեցան:

Գեր. Հասունեանը Ոսկերեբան մատուռին  
շինութիւնը կատարուելուն պէս, ասոր վըրայ  
մէկ մեծաւոր մը կուզէ ըսաւ, իր մտերիմ խոր-  
հրդակից Շիշմանեան Տէր Անտոնը Մեծա. ոչ  
դրաւ: Իշխանները առջի բերան արմըցան մը-  
նացին, ետքը անոյշ տեղը կապելով, Շիշմա-  
նեանին հասկըցուցին՝ որ մենք անանկ ամբը-  
շէք, և կամ շատ մը Պատարագցուներ չենք  
կրնար տալ. մեր վախճանը այս մատուռէն օգուտ  
քաղել է, չէ թէ Մատուռին օգնել: Իրաւունք  
տուաւ առջի բերանը, ետքը Ազգին բազմու-  
թիւնը Կիրակի և լուր օրեր գունդադունդ վա-  
զելնին պատճառելով, քահանաները շատոցուց,  
մինչև Կիրակի օրեր տասն և չորսէն աւելի  
քահանայից թողակ կը արուէր, թող Մատու-  
ռին առանձին ծախքը: Իշխանները այս ծախ-  
քին չի կարենալով դիմանալ՝ բողոք ըրին Մե-  
ծաւորին, անիկայ աղքատաց սնտուկին հա-  
շիւր տեսնել կուզէր, ձանձրացան Իշխանները,  
եկու տես ըսին, մենք գաղտնի բան չունինք:  
Քիչ մը ետքը սկսաւ բռնադատել՝ որ այս աղ-

քատաց գործը Նախագահին հողեորական իշխանութեանը ալ վերաբերելով, կուզէ ինքը մեյմը հաշուազիրքերը տեսնել, և ըստ այնմ հոգ տանիլ աղքատաց գործին և այլն . . . :

Վերջապէս իշխանք չի կարենալով ալ հանդուրժել, ամենքը մէկ տեղ իրենց հրաժարականը Ազգին տուին: Ազգը բողոքեց Գեր. Մարուշին, Շիշմանեանին բռնած ասպօրինաւոր գործոցը վերայ:

Անկաւ Շիշմանեանը իշխանութենէն, և իշխանները նորէն հաստատուեցան, ի խոր խոցեցաւ Գեր. Հատունեանը՝ իր խորհրդակցին անկմանը վերայ, բայց առ ժամս լսեց: Աւերբոր Պատրիարքութեան իշխանութեան հասաւ, ուզեց աղքատաց իշխաններուն կանոնազիրքը մեյմը տեսնել, և ինքն մէկ ուրիշ կանոնազիրք մը շինելով, և հողեոր իշխանութեան վերածելով Նախագահական իշխանութեան տակ ձգելու աշխատած էր:

Այս նոր կանոնները առաջարկուած ժամանակ, իշխանները պատասխանեցին՝ ըսելով առանց Ազգին հաւանութեան ուրիշ կանոնազիրք մը չենք կրնար գործածել:

Այս չեղաւ նէ՛ ուրիշ բանիմը ձեռք զար-

հաւ, աշխատեցաւ որ Սուրբ Յակոբը՝ իշխանս ներուն ձեռքէն ճամբով մը առնէ: և որովհետև Սուրբ Յակոբայ հիւանդանոցին թէ շէնքին, և թէ չորս կողմը քարաշէն պատ քաշուելուն համար, Ազգային անձէ մը վաշխով ստակ առնուած էր, և շահը տարուէ տարի վըրան դիզուելով 150,000 զուռուշի հասած էր: Ազգային ժողովք մը գումարեց այս պարտքը վըճարելու համար՝ ըսաւ, Գաղղիացի վարպետ մը պատրաստ է նոյն տեղը դպրոց շինելու համար, չորս տարուան վարձու պիտոր բռնէ: և ժողովքին Սեփագոյն մասը, Գեր. Հասունեանին այս առաջարկութեանը, Ազգին ինչչափ անարգանք ըլլալը, և թէ կրակներուն ժամանակ, և թէ ուրիշ Քաղքիս թշուառ պատահարներու ատէն ինչչափ օգտակար պատրաստ տեղ մը ունենալը մեկիկ մեկիկ ցուցնելով՝ մերժեցին նոյն առաջարկութիւնը, և յիշեալ պարտքը երեք անգամուան մէջ ժամանակ կըտրելով Ազգովին հատուցին: Այս ալ որ չեղաւ, ուրիշ մէկ գործիս՝ ալ ձեռք զարկաւ, որ նոյն իշխաններուն բոյնը, բոլորովին ցրուէ:

Յամին 1847 Աւագ ուրբաթ առտու, քարողէն վերջը, Ազգային ժողով զուճարեց, ուր



Պէյտղլու Չարաղլը Պաղտասար աղային տունը՝  
երեք հազար քասկի ծախու առնելու առա-  
ջարկութիւնը բռաւ, և այս տեղը ծա-  
խու առնելը դիւրացնելու համար աղքատա-  
նոց Ոսկերերանին տեղը ծախելու խորհուրդ  
կուտար. և թէ հիմկու հիմայ սրահներուն  
մէկը բանալով ժողովուրդը մատուռով մը շա-  
տանայ, և մնացած սենեակներուն մէջ՝ իրենք  
բոլոր եկեղեցական պաշտօնատեարք բնակին,  
իրբ իրենց պտորատա Սէմինարեամը որուն հա-  
մար միայն կաշխատուէր:

Ժողովքը մտածելով և յայտնի տեսնելով  
աղքատաց Իշխաններուն ցրուիլը, որով աղ-  
քատաց գործքերը երեսի վըրայ պիտի մնան,  
այս առաջարկութիւնն ալ մերժեց ու հաւա-  
նութիւն չի տուաւ:

Երբոր աս ալ չի յաջողեց, չորորդին՝ իր կողմ-  
նակից քահանաները ձեռք զարկին. որոնք կը-  
տակներով աղքատաց սընտուկին ձղուած, և  
ձգելի բարերարութիւնները, կերպով մը Եօթը  
Խոյին եղբայրութեանը դարձուցին, որով շատ  
մեծ մնաս կրէց աղքատաց սընտուկը: Բայց  
Աստուածասէր և Ազգասէր Իշխանները՝ Ազգիս  
և աղքատաց սիրոյն համար այս ամենուն համ-

բերու թեամբ կը տանելին վասն Աստուծոյ:

Եւ զեր շատուեանին ժամանակ երբոր Պատրիարքարանին մէջ ինչպէս որ պատմեցինք թիւ 13. ոչ վէքիլ ոչ իշխան, ոչ դատաւոր կը տեսնուէր, ամէնքը աղքատաց իշխաններուն զիմեւով, իրենց վէճը արգարու թեամբ և սիրով կը լըմնային, և զրէ թէ Ազգին Պատրիարքարանը Ոսկերեգան աղքատանոցին մէջ փոխադրուած էր: Եւ սա վերջին ժամանակ Մ. Ֆէրբիէրի Ս. Պապին Առաքելական ֆննիչին ձեռօք շի կրցաւ նէ զանոնք ցրուել, (տես թիւ 15) Աէլվեան պատրիարքը իշխանութեան հասած օրը, իրեն առաջի պատուերը եղաւ՝ աղքատաց իշխաններուն փոփոխութիւնը, և իրեն շինած կանոնադրութեան գործադրութիւնը, որոյ հրամանին կատարուծը յետագայ թւոյն մէջ կատարեալ պիտի տեսնենք:

## 19.

1. Աղքատանոցին իշխանաց փոփոխութիւնը. — 2 իբրև դատան Ազգային խորհրդին ընդդրութիւնը. — 3 Օրէնսդէք խորհրդէ, և Ազգային Ինտնարքութեանց նորոգութիւնը:

1. Աէլվեան Պատրիարքը Ազգայնատեփան իշխանութիւնը առնելէն վերջը, աղքատանոցին

Իշխաններն ալ իրեն այսելու թեան կերթան, և  
խօսակցութեանց մէջ՝ կը պատմէն, որ այս մէկ  
քանի տարի Ազգին խառնութեան պատճառաւ  
որչափ ներդրութեան մէջ ալ կը գտնուին՝ հաս-  
տատուն եկամուտները չէն ուղեր բնաւ ծա-  
խել և այլն . . . Իշխանաց պաշտօնի խօսքը Ազ-  
գայեանին բաւական եղան: Մէկ քանի անձինք-  
ներէ բաղկացեալ ինքն իրեն ժողովակ մը կազ-  
մեց, սկսաւ ամիսներով Ազգատանցին քսան  
տարուան ելքը մուտքը հաշուէր իրքը ծայրէ  
ի ծայր մանրամասն հարցնելով քննելու: Շա-  
բուանակ հինգ վեց ամիս շարաւթը մէկ կամ եր-  
կու անգամ մէկիկ մէկիկ քննելէն վերջը՝ երբոր  
տեսան թէ այսչափ տարի աղքատները աղէկ  
ինամուտէն վերջը, մէկ միլիօն դուռու չէն ա-  
ւելի (բայ ի Ոսկերերանէն և Սուրբ Յակօբէն)  
արժէք ունեցող աեղ, երկիր, կալուած եկա-  
մուտ տեսան նէ, գիտէս այս իշխաններուն քսան,  
երեսուն, և յիսուն տարուան այսչափ աշխա-  
տութեանցը փոխարէն ինչ հատուցում ըրաւ  
նորրնաիր Պատրիարքը, ով մեծի ամարգու-  
թեան, մէկ շնորհակալութիւն մընալ չընե-  
լով, անոնցմէ մէկ երկու հողի միայն ձգելով  
նորէն իշխաններ ընտրեց: Բայց ան նոր ընտ-

րաճներն ալ հրաժարեցան, ուստի աղքատաց  
գործը միայն երկու հոգւոյ ձեռք մնաց, ինչ-  
պէս կը բաղձար Պեր. Հասունեանը:

Սէլվիեանին թէ այս անգամուան, և թէ յե-  
տագայ ընելու հաւատարիմ ծառայու թեանցը  
փոխարէն, Պեր. Հասունեանը Հռովմայէն իրեն  
(Բռէլաթօ Տօմէսթիքօ) ըսուած պատուանունը՝  
խաւրել կուոայ, զորնոր (Ս. Քահանայապետին  
Արքունեացը դահերեց) թարգմանեցին և հրա-  
տարակեցին Եկեղեցւոյ գոները: Իսկ Ազգը եր-  
բոր իմացաւ Սէլվիեանին այս անխոհէմ և  
անարդար գործողութիւնը սկսաւ զարմանալ,  
և իրարու կը հարցնէին, այս ինչպէս բան է, թէ  
որ Ազգին հաշիւները կուզէ տեսնել, ինչո՞ւ  
Մայր Եկեղեցիէն չսկսիր. ինչո՞ւ իր նախորդէն  
Պատրիարքարանին դիզուած և ձգած պարտ-  
քին հաշիւը չի քննէր: Ուստի Ազգին մէկ քանի  
երեւել և պատուու որ անձինք, Շաշեան ծե-  
րունի Արքունական բժիշկ Մանիել աղան, Սա-  
մանձեան Մկրտիչ աղան, Արամեան Յովսէփ ա-  
ղան, Քիւլպէնովեան Արապետ աղան, և Խա-  
րախաշ Մկրտիչ աղան. ներկայացան Սէլվեան  
Պատրիարքին, և համարձակութեամբ մը ըսին.  
— Ազգապէտ Վարդապէտ, յայտնի է Ձեզի ընդ-

„Տանուր Աղղին իղձը և փափաքը, Երկոտա-  
„սանից ժողովոյն հաստատութեանը համար,  
„որուն վերայ Տէրութեան հաւանութիւնը, և  
„թագաւորին հրամանը (իրատէն) ալ արդէն  
„իսկ գիտէք, ութ և ինն ամիս է Ձեր իշխա-  
„նութեան հասնելիդ. Աղղին փափազը, Տէ-  
„րութեան հրամանը, մէկ ժամ առաջ կա-  
„տարելու աէղ, աղքատաց հաշիւները մանրա-  
„մասն քննեցիք, որ այս գործը Երկոտասանից  
„ժողովոյն կը վերաբերէր. . վերջապէս կը խընդ-  
„րենք՝ որ ժամ մի առաջ Ազգային ընդհա-  
„նուր ժողովը գումարուի, և Երկոտասանները  
„ընտրուին, որպէս զի Աղղին գործքերը կար-  
„գով և կանոնով առաջ երթան և այլն . . . . :

2. Գեր. Հասունեանին Հսովմ երթալէն  
մէկ քանի շաբաթ վերջը. 1849 Սէպտեմբէր  
ամսոյն մէջ ընդհանուր Ազգային ժողովք եղաւ,  
և քուէարկութեամբ Երկոտասանները ընտրուե-  
ցան, որոնց անունները ասոնք են:

- Ա. Տիւզեան Միհրան Պէյ.
- Բ. Ալլահվերտի Աբրահամ Ամիրայ.
- Գ. Թընկըռ Յովհաննէս Էֆէնտի.
- Դ. Խըրձը Վիչէն Աղայ.
- Ե. Կէօչէք Յարութիւն Էֆէնտի.

Չ. Խուշում ձեան Յովհաննէս Աղայ.

Է. Սինապեան (Ֆրան) Աղա պէյ.

Ը. Սինապեան Գասպար Պէյ.

Թ. Տէօլլէթեան Ֆէյրաա Աղայ.

Ժ. Հասունեան Մուսա Չէլէպի.

ԺԱ. Աէօլլէք թովմա Աղայ.

ԺԲ. Մանիէլեան Յարութիւն Աղայ :

Այս ժամանակ իրաւացնէ մեր Ազգին Համար ոսկեղէն դար սեպուեցաւ, կարծես որ Ազգը երազ, և կամ երկնային աեսիլ մը կը տեսնէր իր առջև գերութիւնը յիշելով. ինչու որ նոր ընտիր Արկոտասանից մեծագոյն մասը, արք երեւելք, խաղաղասէրք, և Տէրութեան իսկ ծանօթք, և պաշտօնատեարք, իրենց ընտանիքը, առ և տուրը, հողը և ամէն գործը մուսաղաճ Ազգին օգուտը միայն կը մտածէին: Ամէն ուրբաթ առտուանց կանոխ Պատրիարքարանը գալով, աղքատ և հարուստ ամենեւին խարութիւն չընելով, արդար դատաստան կրկորէին, և մեկմեկու հետ հաշտեցնելով բողոքովն գոհ կարձրկէին: Միւս կողմանէ համարձակութիւն տրուած էր, ամէն չափու և հասակի, արանց և կանանց աղերսագիրնին ընդունելով, և գաաաւերնին տեսնելու համար

օր և ժամ կրկարէին: Վատաստանին օրերը երբեմն մինչև զիշերուան ժամը մեկին և կամ երկուքին հազիւ կըլլամբննար՝ Աբրաշամ Ամիրային արդարասէր երկայն մտու թեամբը: Ըստ որում Վեր, Հասունեանին օրէն զիզուած, և երեսի վըրայ մնացած էին այն ողորմելիներուն գործքերը:

Բայց ասկից այս Վերագոյն ժողովքը կը մաս-  
ժէր ժամ մի առաջ Սամաթեայի, և Պէյօղ-  
լուի եկեղեցիները, և Ազգին Պատրիարքարանը  
շինել. և ասոնց ամենքը զիւրու թեամբ զլուխ  
հանելու համար, բովանդակ Ազգին իրենց վը-  
րայ ցրցուցած սէրը, վստահութիւնը, և հա-  
մակրութիւնը՝ իրենց մեծ յոյս կուտային. որով-  
հետև քիչ ժամանակուան մէջ այն առջի հա-  
կառակութիւնը, թշնամութիւնը, և երկպա-  
ռակութիւնը զրէ թէ Ազգէն անհէտ եղածի  
պէս էր, և ասոնց տեղը եղբայրական և միա-  
բանական սէր տնկուած: Մեծ ու պզտիկ սկսան  
առ հասարակ զարմանալ թէ այս ինչ հրա-  
շալի փոփոխութիւն է, միայն Աստուծոյ մատնէ  
կսէին:

3. Այս երկուտասանից ժողովոյն մէկ ան-  
մահ յիշատակաց արժանի գործն ալ այս եղաւ,

որ Ազգին առջի օրէնքները միակամ և միա-  
խորհուրդ քննելով, հիմնական ժամանակին  
յարմար նորոգելու և շինելու համար՝ այլ ևս  
երկոտասան անձինք ընտրելով, ընդ ամենք  
Գահերեց Ազգապէտ Պատրիարքին հետ մէկ տեղ՝  
քսան և հինգ հոգւով Սրէնաղլի ժողովք մը  
հաստատեցին, որոնց անունները ասոնք են:

Ա. Պիլէզլիկի Պօղոս . . . . .	Ազայ.
Բ. Տալութ Յովսէփ . . . . .	»
Գ. Ազնաուուր Գէորգ . . . . .	»
Դ. Սամանձեան Մկրտիչ . . . . .	»
Ե. Տալութ աօքթօր Յակոբիկ . . . . .	»
Զ. Տուազեան Յակոբ . . . . .	»
Է. Բորթուքալեան Յովսէփ . . . . .	»
Ը. Մանասեան Արապ . . . . .	»
Թ. Երամեան Անտոն . . . . .	»
Ժ. Մաղլումեան Անտոն . . . . .	»
ԺԱ. Թիւրպէնաձեան Կարապետ . . . . .	»
ԺԲ. Սազանեան Մէլզոն . . . . .	»

Սէպտեմբեր ամսոյն մէջ առաջին անգամ  
Սրէնաղլի ժողովքը քսան և հինգ անձինքով  
գումարուեցան, Ազգին Թշուառութիւնը, և  
ամենայն չարեաց պատճառը, ազգային օրենք-



ներուն ջնջուիլը, և բողբոլվին անյայտ ըլլալը վկայեցին ամէնքն ալ:

Ուստի նախ և առաջ Ազգին օրինաց գիրքը ուղեցին ականել: Փնարու եցաւ գիրքը, և հազիւ Պատրիարքարանին մէկ կողմէն գտնուեցաւ, վերան երկու մատ փոշոտուած: Գրքին տխուր, տրտում սուգի մէջ նստած ողորմելի տեսքը, բոլոր ժողովքին գուժը շարժելով, աչքի արցունքներ սկսան թափել. կարդացուեցան մի ըստ մի ջէ շինուած օրենքները, որոնք Ազգային ժողովքով քննուած, ընդունուած ու ստորագրած էին: Յիշեցին մէկ քանի տարի առաջ քաշած տառապանքնին, և Աստուածապարզ և ազատութենէ վերջը, մէկ սիրտ, մէկ հոգի այս կանոնները շինելնին: Յիշեցին ևս իրենց քաղցր առաջնորդութիւնը, ու հայրաբար խնամակալութիւնը առջի Գեր. Նախագահներուն, և Ազգապետ Պատրիարքներուն ժամանակ, որոնց ձեռքին տակ քաղցր երկնացին երջանկութիւնը կը վայելէին: Աւերջապէս չերկնցնեմ խօսքս. շարաթը մէկ օր կը բացուէր Յրէնսդիր ժողովքը, Ազգային օրէնքները, կանոնները հետզհետէ կը նորոգուէր, կամ թէ նորէն կը շինուէր ժամանակիս յարմար:

Մեր ընթերցողներուն ձանձրութիւն չի տալու համար, շինուած կանոնները հոս տեղս գրելու զանց ըրինք. ուղղները կրնան դանալ: Միայն այս գիտնալու է՝ որ Օրէնսդիր ժողովը գլխաւորաբար մէկ քանի բան դիտած է: Ա. Եկեղեցի, Ազգատանոց, շիւանդանոց և դպրոց, ինչք են սեպհական Ազգին, որով անոնց կարդադրութիւններն ալ Ազգին կը վերաբերի՝ Բ. Միւթէվէյլի, Եշիան, Ազգապէտ Պատրիարք, և Նախագահից ընտրութիւնը, միշտ ընդհանուր Ազգին ժողովոյն հաւանութեամբ և քուէարկութեամբն պիտի ըլլայ: Գ. Եկեղեցականք ևս յամենայն կարգէ և ի տեսակէ ձայն ունենան Ազգային ընդհանուր ժողովոց մէջ ևայլն:

Այս Օրէնսդիր ժողովքը՝ ինչպէս որ պատմեցինք. 1849 Մէպտեմբերէն սկսած, մինչև 1850 Ապրիլ ամիսը տեւց: Շտաթը մէկ օր մը ժողովքի նստելով, այս միջոցին Օրինաց իննբորդ զլուխը հասնելով, ուր Ազգապէտ Պատրիարքին փոփոխութեան, և նորոգ ընտրութեան կանոնները լրմնցնելէն վերջը, վերջին տասներորդ զլուխը Գեր. Նախագահից ընտրութեան վերայօք խօսակցութեան մտած ժամանակնիւ, սատոխ վէճ սկսաւ, Ալլահվերախ Ար-

բահամ Ամիրային, և Թընկըռ Յովհաննէս Էֆէն-  
ախյին մէջ: Առջինը կը պնդէր՝ թէ այս ընտ-  
րութիւնը Ազգին ձեռքն է, ցուցնելով մէկիկ  
մէկիկ վիքարութեան ժամանակէն սկսեալ մինչև  
ցԳեր. Մարուշ Նախագահն, և յետոյ Ազգո-  
վին եղեալ բողոքն, վասն ապօրինաւոր ընտ-  
րութեան Գեր. Հասունեանին: Իսկ Թընկը-  
ռեանը հակառակը կը պնդէր, և կըսէր թէ՛  
այս ընտրութիւնը միայն Հոովմայու կը վերա-  
բերի. Ազգն չունի իրաւունք յընտրութեան  
Նպխկոպոսին իւրոյ, (որովհետև Հոովմայու  
Գործողութեանց արգէն իսկ ծանօթացեր էր) \*:  
Ժողովոյն մեծագոյն մասը Ալլահվէրախեանին  
կողմը. և Սէլվիեանն մէկ երկու ժողովականով  
Թընկըռեանին կողմն էին, ուստի այս խնդիրին  
որոշումը որչափ միւս շարթուան նխափն ձը-  
ղուեցաւ նէ ալ, այսուամենայնիւ ասկէ ետև  
թէ Նրկոտասանից, և թէ Սրէնադիր ժողովոց  
ժողովիլը վերջինը եղաւ: Այլ աւանդ թշուառ

\* Մարուշին ընտրութեան ժամանակ, և Գեր. Հա-  
սունեանին ապօրինաւոր Նախագահութեանը համար  
Հոովմայու եղած բողոքին և զրուած թղթերուն մէջ  
իրեն զրամ ստորագրութիւններուն հակառակը կը  
հաստատէ:

Ազգիս, հազար անգամ մե՛ղք, որ այս նախանձելի հանդարտութիւնը, հազուադիւր միաբանական ցանկալի սէրը, այս եօթն ամսեայ Ոսկեղէն ժամանակը խիտա քիչ տեւեց, իրաւցնէ Ազգը երազմը տեսաւ՝ և ահա վայրկեանի մը մէջ ոչնչացաւ: Խաղաղութեան թշնամին դարձեալ սկսաւ իր խռովութեան չար որմերը ցանել, որով զԱզգը ողորմելի վիճակի մէջ ձգեց, ինչպէս որ յետագայ գլխոյն մէջ պիտի տեսնենք:

Ո՛վ Տէր Աստուած Ամենակալ մինչև երբ, մինչև երբ արդեօք քու անգին արեամբդ զընուած այս ժողովուրդը պիտի փորձես:

## 20.

1. Գէր. Հասունեանին Հարգմէն դասնալը. — 2 զաստուանն Աղիսի սոյոսոյ յետնագրութիւնը. — 3 Հասագեաց ընկերութեան համար Նախագահ Գարգիսուհէն Բերած Առաջընդ:

1. Ինչպէս որ վերը պատմեցինք, թէ Գէր. Հասունեանը անցեալ տարի 1849 Օգոստոսի 23-ին ճամբայ ելաւ, և դէպ ի Այսթթա Պիոս Թ. ին այցելութիւն ընելէն վերջը Հռովմ քաղաքը գնաց, և հոն ութ և ինն ամիս լռիկ մնչիկ կրնատէր: Շատերը ասոր հոս չեղած ժամանակ, տեսնելով Ազգին երջանիկ խաղաղութիւնը, և ան նախանձելի օրերը Նրկոտասա-

նից ժողովոյն ժամանակ. անանկ կը կարծէին որ ալ անիկայ Կ. Պօլիս չը պիտի դառնայ, ու Առաուծոյ փառք տալէն չէին դադրէր: Բայց Քեր. Հասունեանը իր ամմէն ընելիք գործողութիւնները բոլորովին գաղտնի պահելու, և Կ. Պօլսոյ Աղէրին մեծագոյն մասը զբաղեցնելու մտք, Մայրաքաղաքէս ելած ժամանակը, Եկեղեցականաց ժողովքին մէջ՝ իր կողմնակիցներուն բերնով՝ մէկ խնդիր մը բանալ տուաւ, այսինքն, Քահանայից խաչգոտակաց վերայէն սև քողը վերցնելու համար: Այս խնդիրը իր տեղապահ և Աթոռակալ Հաճեան Տէր Յովսէփին, և Ազգապետ Սէրլեանին յանձնեց, ըսելով որ ինձի ինչպէս ըլլայնէ կըլլայ, դուք նայեցէք որոշուցէք ձեր մեջը ևայն . . . : Երկու երեք ամիս այս նիւթիս վերայ խօսելէն վերջը, Աթոռակալը ի 24 Նոյեմբերի հրամայեց ամմէն ժողովականայ՝ որ ասկից տասն և հինգ երորդ օրը դարձեալ հոս ժողովինք, և ամենքս մէկ տեղ հոսկից առանց քողի ելլանք ևայն . . . :

Տարածուեցաւ այս լուրը բոլոր Քաղքիս մէջ, գայթակղեցաւ ժողովուրդը, հասաւ երկոտասանից ժողովքին, որոնք ամենքը միաբերան Պատրիարքին զուրցեցին, թէ Աթոռակալին

խմացնէ, որ Քահանայից իրենց արտաքին հա-  
զուստ զգեստին ձևը, և տարազը Ազգը տուած  
է, ուստի անոր փոփոխութիւնն ալ Ազգին կիյ-  
նայ և այլն . . : Սահմանեալ օրը ժողովեցան  
ամենայն քահանայք. Աթոռակալը՝ այս փոփո-  
խութեան վերայօք Քեր. Նախագահին պէտք  
եղաւ ըսաւ, գրել, և անոր պատասխանին սպա-  
սել : Մտաքեան Տէր Ամբրոսիոսը ծոցէն Քեր.  
Հասունեանին թուղթը հանեց ու կարդաց,  
որ գրերէ յինչո՞ւ իմ հրամանս չէք կատարէր,  
նեւ աթոռակալ վարդապետին հանկից չելած  
յապապրերէի, որ այս բանը չերկնցընէ շուտով  
դործ դնէ և այլն : Այս թուղթը կարդալէն  
վերջը, ես ալ ուրիշ հակառակ հրամանի ա-  
կանջ չեմ կախեր ըսելով՝ ինքն իրեն փութիւն-  
ձիւկը խաչատակին վերայէն վերցնելով, հազիւ  
երկու և երեք օր սուսնց քողե կը պըտըտի  
քաղքիս մէջ, ի մեծ գայթակղութիւն ժո-  
ղովրդեան, և ի յառակ նշաւակի մանկանց և  
տղայոց :

Իսկ Քեր. Հասունեանը Հասիմ քաղաք  
դասուած ժամանակ, երբոր Ազգը իր օրէնքները  
կը շինէր, և Պզերը գլխարկին վերայէն քողը  
մէկ դի սունելու կը մտածէր, անիկայ թանձր

բաղմաթերթ գրուածք մը շինելով Նախագահական թէմին վրայօք Բրօքահանային տպարանը գաղտնի (ինչպէս որ միշտ սովորութիւն է) իր ԲՕՆԷՆՁԱՆ տպել կուտայ, այն ժամանակ որ Ս. Քահանայապետը դեռ իր Քաղաւորութեան Աթոռը չէր դարձած, Քարափնալները ասոյիս անդին ցրուած, ժողովքներուն անդամներուն թիւը չէր լեցուած. Քաղղիացւոց և Աւստրիացւոց ահեղ բանակները Պապական տէրութեան քաղաքները պաշարած, Իտալիոյ խնդիրը չէր լուծուած. Քահանայապետը և Քարափնալները բոլորովին շուարած, այս ժամանակ կըսեմ, Մ. Ֆէրրիէրիին, և Մ. Վէսպասիանիին վկայութեամբը, իրեն նկարած ամբարտակը, մէկ քանի Քարափնալներէն բաղկացած մասնաւոր ժողովքնին ներկայացնելով, յատենի անդ Քարափնալաց, մեծաձայն կանչեց, « Հսովմէական հաւատքը արեւելք կործանելու վտանգի մէջ է. ժամ մի առաջ հաւատարիմ « Գաւառական Նպիսկուպոսաց ձեռքը պէտք է « այս ժողովուրդը յանձնել. և այս շարձաց « ասջիւր առնելու համար, ամէն կարելի միջոցները ի գործ դնել, զորոնք ահա մէկիկ մէկիկ Ձեր Բ. վեհմութեանը զիրով ներկայա-

„ցուցերեմ“ : Ուստի ասկէց ետև շատ բարակ քննութեան հարկ չեղաւ :

Ծերունի Քարտինալ Նախագահ ժողովոյն՝  
Գեր. Հասունեանին ներկայացուցած յատա-  
կազօժին ներքին դաղտնի կապերը, և լարուած  
մեքէնայները աղէկ մը չի տեսնելով, խսկոյն հա-  
ճեցաւ հաւանութիւն տուաւ, և իր վկայա-  
կանովն ալ հաստատեց. և այսպէս ամմէն բան  
ըստ կամաց Գեր, Հասունեանին կատարեցան :  
Ըստ որում նա ինքն իր մտքի դրած գործ-  
քերը յաջողութեամբ գլուխ հանելու համար՝  
միշտ ասանկ խռովութեան յարմար ժամանակ  
կը փնտրուէր. և այս ժամանակ իրեն մեծ պա-  
տէհ առիթ եղև, որ այն Նախկուպոս ընտ-  
րուելուն ցանկն ալ ինքն առաջարկէց, որոնց  
շատոնցունէ խօստացեր էր, որոնք որ այսչափ  
տարիներէ ի վեր հոգւով և մարմնով աշխա-  
տեցան, ջանացին զինքը յիշխանութենէ իշ-  
խանութիւն անցնել :

Այսձակէն աւելի թերևս շուտով այս հաս-  
տատութիւնները Ա. Պօլսոյ մէջ տարածուե-  
ցան : Եւ ահա դարձեալ խռովեցաւ բոլոր Ազգը  
Զատկի Սուրբ Յարութեան օրերը, ո՞վ Հա-  
սուն Հասուն, կը կանչէին, այս քանի՞ տարի է



որ մեզի ոչ երբէք հանդիստ տուիր խաղա-  
ղութեամբ անցնելու ասանկ Սուրբ և բարե-  
պաշտ օրերը: Միւս կողմանէ իրաւունք իրա-  
ւունք, ուր ուր մնաց կսէին Ազգիս այնքան  
տարուան օրենքները, սովորութիւնները: Վեր-  
ջապէս Նրկոտասանից ժողովոյն երկու անգամ  
աղերսագիր տուին, որպէս զի իր գերագոյն իշ-  
խանութեամբ Ազգին իրաւունքը պաշտպանէ:  
Բայց ուր են Նրկոտասանները, ամենքն ալ մէկ  
դի գաշուած, Ազգին վերջին թշուառութեան  
վերայ արտասուակից աչօք կողջան: Ազգապետ  
Սէլվեան Պատրիարքը միայն Գեր. Հասունեանին  
սրտակից և խորհրդակից բարեկամաց հետ  
կուրախանայ: Ուստի սկսան ամմէն տուն, ամ-  
մէն կողմ, ամէն թաղ, և ամէն գեղ և քա-  
ղաքները այս Ազգային ընտրութեան վերայ խօ-  
սիլ և վիճել: Մէկը առջև հին Նկեղեցւոյ սո-  
վորութիւնները կը յիշեցնէր. միւսը Ազգաց  
օրէնքները և իրաւունքները յառաջ կը բերէր.  
և դարձեալ մէկը Ներոպայի Վաթօլիկ ազգաց  
և թագաւորութեանց օրէնքները կը կրկնէր,  
ոմանք Նկեղեցական պատմութեանց մէջ կը  
թարթափէին, և հին հեղինակաց վկայու-  
թիւնները առաջ կը բերէին: Հռոյմէական Մէլ-

քիթ, Մարօնի, Ասորի և Քաղզէացի Ազգաց սո-  
վորութիւնները իրենց Նախկոպոսաց ընտրու-  
թեանը մէջ՝ ազատ ըլլանին կը յիշատակէին . . . :  
Մինչդեռ Կ. Պօլսոյ ժողովուրդը այս Ազգային  
իրաւանց կորստեանը վերայ խռոված էր, ահա  
Ասիոյ ամմէն գաւառներէն ետեւ ետե Ազգա-  
յին Գեւազոյն ժողովոյն բողոքներ եկան՝ թէ  
չենք ուզէր Նախկոպոս : Նախ և առաջ Գրատ-  
ղանցիք, մենք եօթը ութը հարիւր հոգւոյ  
համար Նախկոպոս չենք ուզէր կրսէն, և ա-  
նոր ծախքը չենք կրնար ծարել : Նոյնք զրե-  
ցին Էրզրումցիք, Արդուինցիք և այլն, բայց որո՞ւ  
կը հասկըցնէս. Գեր. Հասունեանը կերեայ որ  
կրսէին, իր կողմնակիցներուն առած խօսա-  
մունքը կատարելու համար՝ հարկաւ Հռովմայու  
հաւտացուցած պիտի ըլլայ՝ թէ 4—5 Միլիօն  
Հայոց Ազգին գօնէ կէտը Հռովմէական պիտի  
ըլլան և այլն . . . :

Այս կերպ զանգատներէն վերջը հարկ եղաւ  
Ազգին Պիոս Թ. Ս. Քահանայապետին արգա-  
րութեանը զիմել, որ դեռ նորոգ դարձած էր  
իր Թագաւորական Հռովմ քաղաքը. ետեւ ետե  
երեք աղերսագիրներ խաւրիցին, զրէ թէ բոլոր  
Ազգէն ստորագրուած, և ի Բ. Գօնէն վախ-

բացուցուած: Եւ երբոր երբորդ ազերսս-  
գիրը Ճանրան էր, ահա՛ 1850 Մայիսի 31,  
Գեր. Հասունեանը և Պօլեա հասաւ: Խաղաղա-  
սէր և երեւելի անձինքներէն ոմանք, թէ եկե-  
ղեցականաց, և թէ աշխարհականաց, և Տէ-  
րութեան իսկ երեւելի Պաշտօնեայները, թէ Փո-  
խարքայն՝ և թէ Արտաքին գործոց պաշտօ-  
նեայն (ի 1 Յունիսի) իրեն խրատ տուին քիչ  
մը խոհեմութեամբ վարուելու: Բայց անիկայ  
ամենեւին ահանջ չի կախեց: Ո՛չ օրէնք, կրսէր,  
ո՛չ իրաւունք, ո՛չ ժողով, ո՛չ Ազգ և ո՛չ Տէ-  
րութիւնը անգամ կարող են խափանել՝ և  
կամ արգիլել զիս չի կատարելու ինձի հրա-  
մայուածները: Ժողովուրդը դարձեալ սկսաւ  
այնչափ սաստիկ գանգատ ընել՝ և բողոքել Գե-  
րագոյն Երկոտասանից ժողովոյն, մինչև հար-  
կադրեցան անոնցմէ չորս հատը ի 13 Յունիսի,  
Յիսուս Փրկիչ Եկեղեցին առանձին կանչել հոն  
Գեր. Հասունեանը, թերևս քաղցրութեամբ  
կարող ըլլան մեղմացնել անոր սիրտը: Ալ-  
լահ վերաբի Արբահամ Ամիրայն հարցուց իրեն,  
Գերապայծաւ Տէր, ինչ պիտոր ընեսնէ, զա-  
նոնք արդեօք կրնանք տեղեկանալ: Առջի ընե-  
լիքս պատասխանեց, Գաւառական Եպիսկոպոս-

ներ ձեռնադրել, և մնացած կարգադրութիւններնալ հեազհեաէ կխմանաք և այլն . . : Ամիրայն խիստ աղէկ, բարի է ըսաւ, ևս չեմ ըսէր՝ որ զանոնք մի ձեռնադրէք, բայց որովհետև այս մասին ժողովուրդը տու հասարակ խռովածէ, ու երեք աղերսագիր Ս. Քահանայապետին զրած, ու բողոքած են, և զմեզ գիշեր ցորէկ անհանդիստ կընէն, Ազգին առջի օրէնքները և իրաւունքները կը յիշեցնէն, և անոնց պաշտպանութիւնը մեզմէ կը պահանջէն, մենք ալ բողոքով շուարած ենք, որ ձանբան բռնելիքնիս չենք գիտեր: Աւստի կաղաչենք՝ թէ որ այս ձեռնադրութիւնը քիչ մը ժամանակ ձգելու ըլլաք աղէկ կընէք, թերևս շոտմայու հետ թղթակցելով խաղաղութեամբ կը լըմնայ, և ձայներնիս դուրս չելլալով, օտար Ազգաց առջին ալ խայտառակ չենք ըլլար: Գեղեցիկ արդար, և խոհեմութեամբ լի խորհրդատուութիւն: Բայց Գեր. Հասունեանին ամենեկին ազգեցութիւն չըբաւ: Ինձի հրամանը այս է կըսէր, որ այս Քաղաքս հասնելուս պէս, անմիջապէս հոս դրանքուողները պիտի ձեռնադրեմ: Ամիրայն տեսնելով որ չի կրցաւ զանի համոզել, որովհետև ըսաւ, Գուք մէկ կողմանէ միտքերնիդ զըբածը պիտի

ընէ. ք. միւս կողմանէ Ազգը կուղէ իր իրաւունքը պաշտպանել. ասկէ ետեւ ես այս գործքին վերաբերեալ բաներուն պատասխանատու չեմ ըլլար ըսելով՝ ժողովը լուծուեցաւ:

**Ազգը** տեսնելով որ ամենայն ջանք պարտապահաց, ուստի բռնադատուեցաւ ի 17 Յունիսի Բ. Գրան աղերսագիր տալ: Բայց Գեր. Հասունեանը օտար զօրութեան ապաւինած ըլլալով, սովորական սուրբ իր ձեռքը առաւ:

2. **Այս** գործը հաւատքի կը վերաբերի ըստ, արտաքին իշխանութեան ամենեւին չի յնար ըսելով, ի 25 Յունիսի յաւուր Աիւրակէի, վաղ քաջ ընդ առաւօտն, դեռ երկինքին երեսը չէր ձեղքեա՞ծ՝ զիշերանց կինչնայ ի Յիսուս Պրկիշ Կայր եկեղեցին, մէկտեղ առնելով Ապիսկոպոս ձեռնադրուելու երեք քահանայները, ՆիշմանեանՏէր Անտոն, Աստարձի Տէր Տիմօթէոս, և Հաճի Գաւթեան Տէր Յովսէփը կը մտնան Ակեղեցւոյն մէջ, և երկու քահանայ ալ դուրսէն առնելով, եկեղեցւոյն դռները կը դոցէն, և կսկսին թիւ և համառօտ ձեռնադրութեան: Ի՞նչ գեղեցիկ հանդէս...: Կը լըմնայ հանդէսը, կը բացուին եկեղեցւոյ դռները, Վանատունը կելլէն, կը զարդարուին մանուշագոյն

զղեստներով և ոսկի ագամանդեայ խաչերով, բայց Վանատունէն դուրս ելլելու իրէնք ալ կամչնան, մերձակայ քահանայք սիրտ կուտան (քօռաճիօ, ավանթի) կը գոչէն. ձայնմ՝ ալ կը լըսուի (էվիվա էվիվա Բիօ նօնօ) դռները կը բացուին ու ձիերուն վըրայ հեծնելով մեկզմեկու ետեէ շտակ ճամբէն յաղթանակաւ մը անցնելով, ուղղակի Գեր. Հատունեանին աունը կերթան: Եւ յերեկոյին նստան ի կոչունս. ինքնիրէննին աուին անպատմելի ուրախութեան, ըմպեցին անոյշ զինին և շամբանայն ի կենդանութիւն միմեանց:

Տասն և հինգ տարի առաջ Պէլկուտու անտառներու մէջ բրած ժողովքներուն կատարում դաշնադրութիւնները ահա այսօր տեսնուեցաւ: Եւ այս երեք ձեռնադրուած Ապխսկոպոսները անուանեցան. — Ապխսկոպոսունք Գիշերոյ և Խաւարի. — :

Բայց թէ Գեր. Հատունեանը ի՞նչ պատճառի համար գիշերուան ժամանակ Ակեղեցւոյն դռները գոց այս Ապխսկոպոսները ձեռնադրեց: Ար պատասխանեմ, որովհետեւ իսկզբանէ հետէ իր գործերը յաջողութեամբ առաջ տանելու համար՝ միշտ երեք բան գիտած էր: Առաջինը՝ զԱզգը մէկ երկու ճիւղ բաժնելով միշտ մէկ մէկու

հահառակ խռովութեան մէջ պահել. երկրորդ՝  
իր դիտմունքին դիւրաւ հասնելու համար իր  
ձեռք զարկած ամէն գործողութեանց վերջը  
հաւատքի կերպարանք մը տալով, չափէն աւելի  
Հռովմային հրամանաց նախանձայու զութիւն  
ցուցնել. երրորդ՝ իր գործքերը աւելի ևս յա-  
ջողելու համար, միշտ ջանալ Ազգին յարգը.  
պատիւը և ազգեցութիւնը Հռովմայու և օտար  
Տէրութեանց առջևը աւրելու, զրպարտելով  
միշտ Ազգին անկրօն, և անզուսպ բլլալը: Եւ  
ասոնք այս զուրյածներս ձշմարտելու համար՝  
այս գիշերանց ձեռնադրութեան ձեռք զարկաւ,  
անուանարկ ընելով Ազգին յարգը, ու ժը աւելի  
տկարացնելու համար պատճառելով որպէս թէ  
ժողովուրդը ձեռնադրութեան ժամանակ շփոթ  
և կռիւ հանելով, արգիլէ պիտոր նոյն ձեռ-  
նադրութիւնը: Սուա է բոլորովին այս զրպար-  
տութիւնը, և ի ստութենէ ծնեալ, ինչու որ  
քիչ մը ետքը նոյն տարին վերափոխման օրը  
Պահատուրեան Տէր Պետրոսին Ապիսկոպոս ձեռ-  
նադրութեան ժամանակ՝ ժողովուրդը ինչ ըրաւ.  
ուրիշ բան չըրաւ բայց եթէ ամենեւին մէկը  
չեկաւ հոն, և չերեկցաւ, ու մէկ քանի օտար  
բականները միայն ներկայ գանուեցան նոյն հան-

գիտնաւ այս էր և ահա ընկիրմին առջի ձեռնադրութեան ժամանակն ալ :

Իսկ զեր- Հասունեանը յետ գիշերային ձեռնադրութենէ տասն օր անցնելէն վերջը, ի 6 Յուլիսի բոլոր եկեղեցականներով ժողովք ըրաւ ի Յիսուս Փրկիչ, ժողովոյ սենեակին մէջ. ուր առաջիկայ գտան Ազգապետ Սէլվեանը, և Գաւառական Նշխարագոսները: Գեր. Հասունեանը այս ժողովքին մէջ գանդատ ըրաւ ժողովրդեան բռնած ճամբուն վերայ, որ Ազգային իրաւունք ըսելով Ս. Աթոռին Քահանայապետական վճռոյն գործադրութիւնը խափանել ուզելով, Բ. Գրան աղերսագիր տուին հայն. . . : Ն. կը լսեմ, որ ոմանք կըսէն եղեր, թէ որ Ազգային իրաւունքնիս չի հաստատուիր կերթանք Վատին կը դրուինք, առիկայ աւելի փափաքելի է. ոմանք մեզմէ կը բաժանուին կերթան եղեր, ան ալ մեզի հող չէ. մենք մեր պարտքը պիտի կատարենք:

3. Ժողովրդեան Նշխարագոսաց ընտրութեանը համար ըրած ընդդիմութիւննին բացատրելէն վերջը, կանցնի Համազդեաց Ննկերութեան. այս Ննկերութեանը վերայօք Բրօքահանապետին Նախագահ Քարախանյան, 1850



Մայիս 28 իրեն դրած թուղթը կարգայնեւ  
տուաւ, ուր մէկ շատ նեթադրութեանց վրայ  
հիմն դնելով՝ կը հրամայէ որ ջանան, և յոր-  
դորէն զժողովուրդը, որպէս զի ետ կենան այն  
մնասակար ընկերութենէն և այն . . . :

Բրորականաային այս թուղթը չի հրատա-  
րակուած, փէհլիվանեանին ձեռք պէտք եղև  
Արտաքին դործոց Պաշտօնէին մեյմը ցուցրնել:  
Որովհետև ինչպէս տեսանք, թիւ 16, որ առա-  
ջիկայութեամբ յերկուց պաշտօնէից Բ. Գրան,  
երկու կողմանէ վիճարանուեցաւ, խնդիրները  
լուծուեցան, և ինքն, պահպանիչ, զուրցելով  
ըստ ամենայնի ընդունեց զայն ընկերութիւնը:

Բարձ. Բաշան՝ այս ամէն բան աղէկ գիտ-  
նալով, քաղաքագէտ հանձարովը համառօտակի  
պատասխան տուաւ: ՊԱԿ թղթին հրատա-  
րակումը՝ թէ մեր Տէրութեան, թէ Հոռովմայի  
՝ իշխանութեան, և թէ նոյն իսկ իր Արքեպիս-  
կոպոսութեան մեծ նախատինք, և յետին ա-  
նարդանք ըլլալը աղէկ ձանաչելուս համար, չեմ  
հրնար հաւանութիւն տալ այսպիսի թղթին  
հրատարակմանը: Գեղեցիկ և վնհանձն ազ-  
դարարութիւն: Բայց Գեր. Հատունեանը, կերպ  
կերպ հնարքներով, այլ և այլ զրպարտու-

Թեամբ. (իրեն արդէն յայտնած դատմունքին)  
(Քարտինալին թղթոյն խօսքն է) հազիւ յար-  
մարացուցեր էր Նախագահ Քարտինալը, և այն  
թուղթը ձեռք ձրգեր էր: Ի՞նչպէս կարելի էր  
զանիկայ խափանել, ուստի գաղտնի տըպել  
տուաւ, և անոր ասոր ձեռքով բաժնել սկսաւ.  
գպրոցական աղջկանց, և մայրապետաց, մէյմէկ  
գաղափար կը պարզուէր, որպէս զի բոլոր Ազգին  
մէջ շուտով տարածուի:

Այս թղթին վերայի եղած խորհրդածու-  
թիւնները պէտք է կարդալ Պատագովու թիւն  
Պատագգեաց Բնկերութեան ըսուած տեա-  
րակին մէջ, տպեալ 1851 ի տպարանի Յով-  
հաննու Միհէնտիսեան:

## 21.

Նախագահութեան Աւետոյն առջի և Հիմնութեան իշխան-  
ութեանց պարբերութեանը:

Երբոր Հռովմէական Հայերը 1830-ին Տէ-  
րութենէն առանձին Ազգ ճանչցուեցան, և  
ութերորդ Պիոս Պապը Նախագահական Աթու-  
մը հաստատեց ի Կ. Պօլիս: Ան ատենը Նուրի-

ճանեան Անտոն Նախադահր ըստ օրինաց իրէն  
Նախադահական իշխանութեան՝ ներքին գա-  
ւառներուն վերայ թէմական եպիսկոպոսներ  
պիտի ձեռնադրէր: Ասոնց գործադրութիւնը  
հակառակասէր և նախանձոտ Եկեղեցականք  
ունէր (որոնցմէ ծնան Հասունեանք) այն ժա-  
մանակ խափանել տուին Հռովմայու ձեռք ինչ-  
պէս որ 6-դ թիւը պատեցինք:

Իսկ հիմայ որովհետեւ Գեր. Հասունեանը  
Ազգին Եպիսկոպոսաց ընտրութեան մէջ ունե-  
ցած հին առջի դարերէն ի վեր ստորութիւնը  
և իրաւունքը բոլորովն ջնջել և ոչնչացունել  
ուզելով, առանց հաւանութեան և հաճու-  
թեան Ազգին՝ Նախադահական թէմը հինգի  
բաժանեց. այսինքն, Պրուսա, Էնկիւրի, Գրասկի-  
զօն, Էլզրուժ, և Արդուին. որոնց վերայ մէյ  
մէկ ալ Եպիսկոպոսական աթոռներ հաստա-  
տուեցան: Բայց Նախադահական Աթոռէն բո-  
լորովն Ա.Ն.Կ.Ա.Խ և Ա.Զ.Ա.Տ. կախեալ ուղղակի ի  
Բրօքականտայէն: Որովհետեւ ձեռնադրուելու  
Եպիսկոպոսներուն իրենց հաստատութեան Աոն-  
դակը նա ինքն Բրօքականտան իւրաքանչիւրոցն  
առանձին առանձին յուղարկելով կը հրամայէր՝

ու կըսէր թէ. «ուսկից կուզեսնէ, որ Ազգէ և  
որ լեզուէ ըլլայ նէ թող ըլլայ, բաւական է որ՝  
«Հոովմէական Արքեպիսկոպոսէ մը ձեռնադրու-  
թիւնդ առնես, ցուցնելով իրենց այս քեզի  
որումած կոնդակը » :

Գեր. Հասունեանը Ազգին ունեցած ռի-  
նախանձ, հակառակութիւն, և առելութեանը  
համար ինչպիսի Ազգային իրաւունքները ոչնչաց-  
նել ուզելով ոտքի տակ առաւ նէ ալ, սա վեր-  
ջին ժամանակ ամէն որոշած կարգադրութեանց  
բոլորովին ինքն հաճութիւնը և հաւանութիւն  
տալովը, ի վերայ այսր ամենայնի տեսնելով  
հիմայ Նախագահական Աթոռոյն լոկ, սին ՆԱ-  
ԽԱԳԱՀ անունը միայն մնալը. առջի Նախագահ-  
ներուն իշխանութիւնը, և զօրութիւնը բոլորո-  
վին փձանալը. իրեն իշխանութիւնը միայն Ա.  
Պօլիս Մայրաքաղաքին վերայ չսփառորիլը: Ասոնք  
կըսեմ զամենքը տեսնելով խորին խորագետ  
հնարիմացութեամբ իրեն կորսունցուցած տէս-  
բօթական ինքնիշխան վարչութիւնը նորէն ձեռք  
ձրգելու դեղ և դարման մտածեց: Նորոք  
ձեռնադրուած զիշերային Նախկոպոսները՝ իր  
սանը մէջ ժողովքի հրաւիրեց. և թէմական  
Նախկոպոսները Նախագահական Աթոռէն կա-

խում մը ունենալու մտօք՝ իրենց երկու առաջարկութիւն ըրաւ: Առաջինը՝ իւրաքանչիւր Նախահոսոս Նախագահին անունը իր թէ՛մը յիշել աւալ. երկրորդը՝ ամէն թէ՛մական Նախահոսոս կաները Սուրբ Միռոնը Նախագահէն ընդունիլ. և այս երկու առաջարկութիւնները Հայոց Ազգին ընդհանուր սովորութեանը վերայ հիմն դրաւ:

Իսկ նոր ձեռնադրուած Նախահոսոսները այս առաջարկութիւնները չընդունելով՝ Բրօքականտային բողոքեցին, և այսպէս Գեր. Հասունեանին առաջարկութիւնները իսկոյն մերժուեցաւ. և անոնց տեղը Հռովմայէն այս միայն արտօնութիւնը Գեր. Հասունեանին շնորհեցաւ, որ Ս. Պապին Ներողութեանց կոնդակները բաժնուելու ժամանակ, նոյն կոնդակները Նախագահին ձեռօք միայն ամէն թէ՛մական Նախահոսոսաց յուղարկուի:

## 22.

1. Հինգ Միլլարեան վարդապետաց ախարը.— 2 Լէմոնտեան Նախահոսոսաց Բ. Դանէն արգելաւիշը.— 3 Գողաշիոյ Հոսոսախոսութեան Լեւան Ռշամսու-Լեւանը, և Նախահոսոսաց իրենց Լէ՛մը երկուսը:

1. Գիշերային Նախահոսոսաց ձեռնադրութեան պատճառաւ, ազգային շիտթութեանց յաջորդեց շուտով ուրիշ մէկ խռովութիւն մ' ալ:

Գեր: Հասունեան անհաշտ թշնամի Ազգային Միաբանութեանց, և զլիաւորաբար վէնէտիկոյ Մխիթարեանց. երբոր Ազգը Սպիտակոպոսաց ընտրութեան վերայ իւր իրաւունքը կը պնդէր, և աղերսագիրներ կուտար թէ Հոովմայ, և թէ Բ. Գրան. այս գործողութիւնը իրեն յաջող առիթ առնելով՝ Քրօբականապին կը զրէ. ինքն և ուրիշներուն ալ զրել կուտայ. իբր թէ զԱզգը դրդողները և դրգոողները զլիաւորաբար, չորս հինգ վենետիկոյ Մխիթարեան վարդապետները են և այլն . . : Իսկոյն Քրօբականտան իրենց Աբրահամը սաստիկ և վերջնական հրամանագիր մը կը յուղարկէ, որպէս զինոյն Քահանայները շուտով ժամ մը առաջ հեռացընէ. ապա թէ ոչ Եկեղեցական պատիժներ հեռոցհեռէ իրենց պիտի հասնին կրսէ:

Հնգեկին վարդապետք, ձերայեան Հ. Անանիայ. ձարեան Հ. Աբրահամ. Լազեան Հ. Ղուկաս. Մինասեան Հ. Պետրոս. և Ալեանաբեան Հ. Եղիշէն. Գեր. Աբրահամ հրամանին հնազանդեալ շուտով իրենց հայրենիքէն կը հեռանան, չինայելով բնաւ Հարց, Մարց և Եզբարց Ազգականաց բարեկամաց, և խոստովանորդւոցն արտասուաց: Արոնք Հասունեանց այս-

չափ անպատմելի հակառակութեան, և թըշնամութեան չկրնայով ալ համբերել, ի 13. և ի 14 Հոկտեմբերի թէ Քաղաւորին, և թէ Փոխարքային աղերսազիրներ տուին: Բարձրագոյն Գուռն ալ շուարեցաւ մնաց, ինչ ընելիքը չէր գիտէր: Ո՛հ ինչ գեղեցիկ Հայրապետական գութ, և Հովուապետական գորով:

2. Իսկ Գաւառական Եպիսկոպոսներն երբոր կը պատրաստուէին իրենց թէմը երթալու, և Սէյվիեան Ազգապետ Պատրիարքը Եպիսկոպոսաց Մուրախասութեան Պէռաթնին, զԱրքունական հրամանազիրը Բ. Գանէն կը խնդրէր. «Տա՛ւ Արտաքին գործոց Պաշտօնեայն Բարձ. Աալի Բաշայն ի 26 Հոկտեմբերի, զՍէյվիեանը իրեն կանչելով հարցուց, որք է ըսաւ, Ազգին կողմանէ երաշխաւորութեան համար երկոտասանից ժողովոյն զմուռը»: Եւ այսպէս Եպիսկոպոսները Տէրութեան կողմանէ արգիլուեցան իրենց թէմը երթալու: Ինչու որ երկոտասանից Գերագոյն ժողովոյն արուած Ապսերական հրովարտակին զօրութեամբ՝ Ազգապետ Պատրիարքաց թագրիրները առանց զմոխի երկոտասանից ժողովոյն Բ. Գանէն ընդունելի չի պիտի

ըլլային: Ըստ որում Երկոտասանից ժողովքը  
երբուքի բաժանուած, ութը հատը Ազգին  
կողմը, իսկ չորս հատը Հասունեան կողմը էին:

ԱԶԳԻՆ ԿՈՂՄԸ.

- Ա. Տիւզեան Միհրան, Պէյ,
- Բ. Ալլահփէրտի Աբրահամ Ամիրայ,
- Գ. Կէօչէք Յարութիւն Էֆէնախ,
- Դ. Սինապեան Աղա Պէյ,
- Ե. Սինապեան Գասպար Պէյ,
- Զ. Հասունեան Մուսա Զէյպի,
- Է. Կէօչէք Թովմաս Աղայ,
- Ը. Մանուէլեան Յարութիւն Աղայ:

ՀԱՍՈՒՆԵԱՆ ԿՈՂՄԸ.

- Ա. Թընկըռ Յովհաննէս Էֆէնախ,
- Բ. Գըլճըղիջէն Աղայ,
- Գ. Գույումճու Յովհաննէս Աղայ:
- Դ. Տէօրլէթեան Ֆէյրատ Աղայ,

Այս արգելման վըրայ թէպէտ և Սէլ-  
վեանը, Թընկըռեանը, և Խույումճեանը շատ  
ջանացին և աղաչեցին յոյժ զՎատրազամն, և  
զՀարէճիէն Նախկոպոսները իրենց թէմը առա-  
քելու հաճեցուցանել, ինչպէս որ Գաղղից  
Գեսպանատան առաջին Քարտուղարն ալ աղա-



չեց. բայց խնդիրքնին մերժուեցան, և անընդունելի եղևն: Վասն զի Բ. Դուռը ըստ վաղևմի օրինաց և սովորութեանց Օսմանեան Տէրութեան վասն ամենայն Քրիստոնեայ Ազգաց՝ միշտ խրաքանչիւր Ազգին երաշխաւորութիւնը կը պահանջէր:

Ապա Յայտկոպոսները տեսնելով՝ որ չեն կրնար իրենց թէմը երթալ, սկսան տանէ ի տուն պրտրտել և քարողել՝ թէ ո՞վ որ Հռովմայ Ս. Քահանայապետին այս ըրած կարգադրութեանցը դէմ կը բողոքէ, Ազգային իրաւունք է ըսելով, կը պաշտպանէ կամ պաշտպանելու կը ջանայ, կամ թէ սոսկ միտքէն կանցընէ, կամ թէ խօսակցութեանց մէջ լուռ կը կենայ, ու դէմ չը զննիր. վերջապէս հոգւով և մարմնով չը պաշտպանէր, և հաւանութիւն չի տար այս ամէն Ս. Աթոռոյն հրամանացը, այնպիսին Հռովմէական Սուրբ Ակեղեցիէն դուրս է ևայն ևայն . . . : Ասոնց նման մի և նոյն վարդապետութիւններն ալ իրենց թեակից անձնասէր Քահանայները կը քարողէին:

Ո՞վ Տէր Ատողած, ո՞ւր է, ո՞ւր է քուկին քարողած ան Աւետարանական քաղցր խաղա-

դու թիւնդ, ինչո՞ւ արդեօք բոլորովին մեղմէ՞ հե-  
աացաւ:

Յամին 1851 ի 10 Յունիարի, Գեր. Հա-  
տունեանը իւրաքանչիւր Միաբանութիւններէն  
հինգ հինգ հողի, նոյնչափ ալ աշխարհիկ գը-  
ղերէն, և Ազգապետ Պատրիարքը, և Եպիսկո-  
պոսները Յիսուս Փրկիչ Եկեղեցւոյն մէջ ժո-  
ղովքի կանչեց: Այս ժողովքին մէջ Վանական-  
ները փորձելու համար իրենց հարցուց՝ թէ  
արդեօք ի՞նչ միջոց կը գրանուի, որով այս ազ-  
գային խռովութեան վախճան մը արբուի: Վէն-  
նայու Մխիթարեաններէն Դանեան Հ. Անտոն  
վարդապետը կարծելով՝ որ բարեմտութեամբ կը  
հարցուի, ալեօք ձերունին պատասխանեց. Գե-  
րապայծառ Տէր Ըսաւ. ընդհանուր Ազգերնուս  
խողաղութեանը համար ամենքնիս մէկ տեղ  
Հռովմային մէկ թուղթ մը գրենք, և աղաչենք՝  
որ այս Եպիսկոպոսաց ընտրութեան վերացօք  
յուզված վէճին մէկ զիջում մը ընէ: Այսովս թի-  
ծերունւոյն զիջում, բառք բերնէն հաղիւ կլած  
էր, ահա Շիշմանեան Աղեմէս Տէր Անտոն Եպիս-  
կոպոսը յանկարծ առիւծի պէս վրան կը յար-  
ձակի, և զայրանալով այս ի՞նչ խօսք է ըսածդ  
կը յանդիմանէ. ո՞վ, զիջում, պիտի ընէ՞ կտէ,

ուրեմն Ս. Աթոռոյն իրաւունքը յափշտակելու  
ելերէք ևայն. և այսպէս ողորմելի ծերունոյն  
բերանը կը պապանձեցունէ: Աստի ասոր վրայ  
ժողովականք իրենց խօսքը կշռելով միշտ, Նա-  
խագահին, և Ազգապետին կը ձգէն այս կիրճի մը  
քակելու: Ի 19 Յունվարի դարձեալ Գեր. Հա-  
սունեանը նոյն վերոյիշեալ անձինքները ի ժո-  
ղով կանչեց. այս ժողովքին մեջն ալ վերջա-  
պէս ուրիշ բան մը չորոշուեցաւ. բայց եթէ  
Գեր, Հասունեանը ժողովականաց սոցապրեց, որ  
ժողովուրդը համոզէն, որպէս զի ուրիշ խո-  
նարհական աղերսագրով Ս. Պապին հետ հաշ-  
տուին, որով ամենեկին չեմ երկբայիր, ըսաւ՝  
ինչպէս ուրիշ Ազգաց, ասանկ ալ Նախկագո-  
սաց ընտրութեան իրաւանց մէկ կերպն ալ  
թերևս մեզի շնորհէ ևայն . . . :

Այս ժողովքներէն ետև Ազգին կողմանէ  
տպուած մէկ ձեռագիր ՄԱՆՈՒՅՈՒՄ մը հրա-  
տարակուեցաւ, որ կսկսի ՝ Հասունեան Անտան  
Գերապայծառը այս օրերը մէկ երկու անգամ  
քահանայից ժողովք ընելով ևայն :

Այս յայտարարութեամբ իրեն կը յիշեցնէն,  
որ այս ընտրութեան իրաւանց համար 1846 ին

ի 6 Յգոստոսի ընդհանուր Ազգային ժողովով  
իրեն հաճութեամբ և հաւանութեամբը, Եկե-  
ղեցականք և Երեսփոխանք ժողովողեան Հռով-  
մայու բողոքեցին. իսկ հիմայ ինչո՞ւ ասոր հա-  
կառակը կը պնդէք և այլն . . . :

Այս ժամանակ 1851. ի 14 Մարտի Աս-  
տարձեան Տէր Տիմոթէոս Արղուինոյ Եպիսկո-  
պոսը հանգեաւ :

3. Իսկ Գեր. Հասունեանին յոյսը թէ Ազ-  
գին, և թէ Տէրութեան կողմանէ բողոքովին  
պարապ ելլելով . Բրօքականտային ձեռք Գաղ-  
ղիայի Տէրութեան ասպաւինեցաւ : Եւ որովհետե  
այս ժամանակ Եւրոպիոյ Տէրութեանց մէջ սաս-  
տիկ վէճ մը բացուած էր Երուսաղեմայ վերայօք,  
և այս պատճառաւ Գաղղիոյ Հասարակապետու-  
թեան կողմանէ Մ. Տը լա վալէթը 1851-ին  
լիազոյն իշխանութեամբ դեսպան եկաւ ի Կ.  
Պօլիս : Այս Գեսպանին առանձինն իր Տէրութենէն  
մեր Ազգային խնդիրն ալ լուծելու իրեն հանձ-  
նուած էր, որուն համար պէտք եղաւ առա-  
ջուց Հռովմայու վերայէն անցնիլ :

Մ. Տը լա վալէթը իրեն յանձնուած մեր  
Ազգային գործողութեանց վերայօք՝ թէ ընդ  
Արտաքին գործոց պաշտօնեայ Բ. Ալի Բա-

Հային հետ, և թէ ընդ Բ. Տիւզեան Միհրան  
Պէյին հետ մէկ քանի անգամ խօսելով, և  
Ազգին խնդիրը օրինաւոր ճանչնալով, վերջա-  
պէս իրենց վերջին որոշողութիւննին այս եղաւ.  
որ Ազգը ըստ առաջին սովորութեան ասկէ ետե  
կրիք անձ Հռովմային ներկայացնէ, որոնցմէ  
Հռովմ մէկը ընտրէ: Սոյն այս որոշողութիւնը  
նոյն ժամայն Մ. Տը լա Վալէթը Գաղղիոյ Հա-  
սարակապետութեան գլուխ, Երրորդ Վէհափառ  
Նարբէօն Նախագահին ծանոյց, որ և անխկայ  
ալ Ազգային ժողովոյն վերջին խրկած գրին (Մէ-  
սածին) մէջ յայտնի և որոշ ծանուցեր էր թէ՛  
դ. Պօլսոյ Հռովմէական Հայոց Ազգին Եպիս-  
կոպոսաց ընտրութեան վըրայօք բացուած վէձն  
ալ լըմնյաւ և այլն . . . :

Աստի գաւառական Եպիսկոպոսներն ալ  
Ազգին Երաշխաւորութեամբ, Բ. Դոնէն իրենց  
Պէռաթը հրովարտակը ընդունելով մէկիկ մէկիկ  
իրենց թէմը գնացին. ինչպէս 1851 Օգոստոսի  
մէջ Շիշմանեան Անտոն Կղէմէս Լնկիւրիոյ Եպիս-  
կոպոսը և Պահատուրեան Պետրոս Եպիսկո-  
պոսը Պրուսա իրենց քաղաքները գացին:

Օրհնեալ է Աստուած, վերջապէս Եպիսկո-

պոսք իրենց թէմը գնացին. և Ազգն ալ կարգապով Ահհափառ Գ. Նաբօլէօն Նախագահին Ազգային ժողովոյն խրկած վերոյիշեալ թուղթը՝ քիչ մը հողի առաւ, հանդարտեցաւ, և աննկ կը յուսար որ, թերևս քիչ ժամանակէն երջանիկ օրէր և խաղաղութեան երես պիտի տեսնէ:

Այլ աւանդ թշուառութեանս, ուր խաղաղութիւն, ու բանօր արդեօք հանգստութիւն. ամիսս ահա բոլորովին մեզմէ աներեւոյթ էր եղած: Գեր. Հասունեանին իշխանութեան ժամանակ Ազգը ցանկանալով կը ցանկայր գոնէ տարի մը ամիս մը հանդիստ և անխռով օրեր անցընելու, այլ զանիկայ ձեռք բերելու գրէ թէ անհնարին եղև: Կարծես թէ այս անձը ուրիշ բանի մը համար ծնած և աշխարհք եկած չէր, բայց եթէ Աստուծոյ ժողովրդեան անհ, սարսանի, երկիրը և թշուառութիւն պատրաստելու: Մշտատե կագ, կռիւ, թշնամութիւն սերմանելու, և ողորմելի ժողովուրդը հանասպազօրեայ տառապանաց մէջ հալեցնելու և մաշեցնելու:

Վասն զի վերոյիշեալ Նախկոպոսաց բնորութեան վերայօք ելած խռովութիւնը հա-

զիւ դադրած, և զիս վեց, կամ եօթն ամիս  
անցած էր, ահա՛ քեզի մէկ գժոխային Մխի-  
թարեանն չարամատեան մը՝ որուն յօրինուա-  
ծոյն վերայ ստոյգ Սանդարմետքն խի սարսե-  
ցան մնացին:

Արդ ժամանակ է առանձին զլիսով զանի  
պատմելու, որ Ազգին վերջին մահացու հա-  
րուածը տուաւ:

## 23.

1. Մխիթարեան շարմաբէնին գրուելուն պարճաւը.  
— 2 զեր. Հասունեանին իփոքր Ասիոյ ճանապարհորդու-  
թեանը. — 3 Չարմաբէնին հրապարտութեան էջերը:

1. Գեր. Հասունեանին ինքն իշխան կա-  
ռավարութիւնը՝ մէկ ժամանակ չեր կրնար եր-  
բէք տեսնել, ուր ազգայնութեան ոյժ և զօ-  
րութիւն կերեէր:

Վէնէտոյ ԅ. Մխիթարեան Ուխտը հա-  
րիւր յիսուն տարիէն աւելի իր գրաւոր աշ-  
խատութեամբ, իմաստուն և առաքինի Վարդա-  
պետօք ծաղկեալ, չէ թէ միայն Եւրոպացոյ,  
այլև զբէթէ ընդհանուր Ազգին սիրելի էին,

որով անոնց ոյժ ու զօրութիւնը արժանապէս ստացած էին: Ուստի այսպիսի ազդօգուտ Միաբանութիւն մը կործանելու համար, տես որպիսի դժոխային, անլուր մեքենայ մը կը լարուի:

Երբոր Գեր. Հասունը 1849, ի 23 Օգոստոսի Հռովմ քաղաքը գնաց (տես թիւ 17). մէկ ճամբով մը Բրօքալանտային դիւանատունը կրճտնէ, և իր վախճանին ծառայելու համար՝ Յ. Հարց Մխիթարեանց վրայ հարիւր յիսուն տարուան մէջ գրուած ամէն կերպ զրպարտիչ թուղթերուն օրինակները Ազարեան Տէր Ստեփանին, և Յօրասեան Տէր Յովհաննէսին օգնականութեամբը՝ (որոնք դեռ նոր Քահանայ ձեռնադրուէր էին) ձեռք կը ձգէ: Եւ որովհետեւ այս ժամանակ Գեր. Հասունը իր Նախագահական թէմին վերաբերեալ գործողութեանց վերայօք մէկ մեծաքանակ գրուած մը պատրաստեր էր Բրօքալանտային ժողովոյն ներկայացնելու: Արդ՝ այս իրեն գրուածին մէջ Ազգային Միաբանութեանց վրայ խօսելով, նախ և առաջ վէնէտկոյ Մխիթարեան Միաբանութեան հաւատքնին երկբայական, և ընթացքնին վտանգաւոր կը ցուցնէ, համառօտիւ ըստեալ ի Մխիթար Աբբայէն մինչև Հիւրմիւ-



զեան արդի Գէորդ Գերապայծառը: Յեւրոպա կսէ, ինքը զինքնին յոյժ ջերմեռանդ Հռովմէական կրթօստովանին. իսկ Ասիա բոլորովին ընդ հակառակն հերձուածողաց հետ անխտիր յԱստուածայինս կը միանան և այլն . . . :

Բարեկամաց ձեռքով Մխիթարեանք Գեր. Հասունեանին այս գրած «ԲՕՆԷՆՁԱՅԻՆ» օրինակը ձեռք կը ձգէն. և իրենց պաշտպանութեանը համար ալ մէկ պզտիկ տետրակ մը «ՄԷՄՕՌԻԱ» անունով կը տպէն: Որուն մէջ որչափ Հռովմայ Քահանայապետաց, Նախագահ Քարտինալաց, երևելի Պաշտօնատեարց, Աստուածաբանից իրենց արդարութեանը համար տրուած ամմէն վճիռները յառաջ կը բերէն. որոնցմով ան ժամանակ ամէն կերպ զրպարտու թիւններ, ամբաստանութիւններ, (զորոնք որ այժմեան Գեր. Նախագահը դարձեալ կը նորոգէ) ոչնչացեր էին:

Այս Մխիթարեանց ՄԷՄՕՌԻԱՆ կը տպուի. և Հռովմ քաղաք Քարտինալաց և երևելի Աստուածաբանից մէկ մէկ հատ կը տրուի: Հռովմայէն մէկ Գաղափարմ' ալ Գեր. Հասունեանին ձեռքը հասնելուն պէս իսկոյն տասն և չորս

աշխարհիկ գղերէն ժողով մը կը զուժարէ և կառաջարկէ՝ թէ արդեօք այս Մխիթարեանց ՄԷՄՕՌԻԱԽՆ պատասխանն մը տալ պէ՞տք է: Ժողովքը կը պատասխանէ թէ այս՝ պէ՞տք է, բայց այս թէ ու թէ՛նով. այսինքն ասպարու թենէն առաջ այս ժողովքը հարկաւ պիտի տեսնէ այն որոշուած աշխարհաբան, կամ տաճկերէն պատասխան տրուելու դրուածը:

Գեր. Հասունեանը ժողովոյն հաւանութիւնը առածին պէս, նոյն ժողովոյն որոշած թէ ու թէ՛ններուն ամենեին ականջ չըստալով, գաղտնի ուրիշ մէկ առանձին ժողովակ մը կը կազմէ, ու ծածուկ խորհրդի զանոնք կը կանչէ: Ազարեան Տէր Մտեփանը, Յօլասեան Տէր Յովհաննէօր, Մաղաքեան Երկու Եղբարք Տէր Ամբրոսիոս և Տէր Պօղոսը, ամենքն ալ աշակերտ Բրօքականոսայի, և ասոնց օգնական տրուեցաւ Պօրճօնեան Տէր Յովսէփը: Ասոնց ձեռքը յանձնելով իր ամէն դրած և ժողովածները, և նոյն տրուելու պատասխանին մէջ դրուելու և հաստատուելու գլխաւոր նիւթերը իրենց հաղորդելով կրտէ: Նախ՝ շուտ պիտի լըմնայ այս դրուածքը. վասն զի Մխիթարեանց դատը տեսնելու համար մասնաւոր որոշուած Բրօքական-

տային ժողովքէն առաջ շուտով և ժամանակին զիրքին լրմննալը ձեզմէ կը պահանջեմ՝ ըսաւ: \* (Մ. Իլէրոյին դատաստանը, Երես 29) Երկրորդ՝ ամմէն կերպիւ գաղտնի և ծածուկ պիտի տպուի, և ամենեւին մէկը չի պիտի իմանայ և այլն . . :

Եւ որովհետեւ այս գործքին կատարման հոգւով և մարմնով փափաքող, և մոլեռանդն Մաղաքեանք երկու եղբարքն էին, ուստի գլխա-

---

\* Այս չարամատենին վրբայօք գրած բոլոր պատմութիւննիս քաղելով ժողոված եմ Ս. Քահանայապետին Առաքելական փոխանորդ Մօնսինեօն Իլէրիօ, Կ. Պօլսոյ Լատին Արքեպիսկոպոսին գրած հինգ թուղթերէն, և անոր ըրած օրինաւոր դատաստանէն, որոնք Յամին 1852 ի Կ. Պօլիս երկք լեզուաւ, Գաղղիարէն, Իտալերէն և Տաճկերէն տպուեցան: Մենք Տաճկերէն թարգմանութեանը հետեւելով՝ որ ի Տպարանի Միւհէնտիսեան Յովհաննու տպած է, այն տպագրութեան թղթահամարներուն թուերը նշանակեցինք. այսինքն՝ ուր որ Մ. Իլէրոյին գրած թուղթերէն քաղեցինք, այն հատուածին առջին դրինք այսպէս (12. թ.): Իսկ ուր որ Անոր ըրած դատաստանէն ժողովեցինք (29. դա.) այսպէս նշանակեցինք:

ւորարար ասոնց յանձնուեցաւ նոյն ժողոված  
դրուածներն ալ, և գրուելու զլիսաւոր նիւթերն  
ալ: Իսկ ասոնք իրենց Օգնիչ առին Յրօբա-  
կանտային դպրոցին աշակերտակից զլատին Քա-  
հանայն, Տօն Գասպարօ Վուչինօն. այս գործքին  
համար իրեն վարձք խոստանալով. այսինքն  
շուտով մեծամեծ եկեղեցական իշխանութեանց  
իրեն հասնիլը (12. թ.):

Ուստի այն ապահովուած իշխանութեանց  
հասնելուն համար յառաջագոյն իրեն բարեմաղ-  
թութիւններն ալ ըրին: Տօն Գասպարօն ասոնց  
աղաչանացը չը կրնալով զիմանալ, վերջապէս  
յանձնառու եղև այս գործքիս կատարմանը հա-  
մար իրենց ըստ ամենայնի գործակից ըլլալու.  
(12. թ.): Եւ այսպէս կսկսին գործքի: Մաղա-  
քեան Տէր Պօղոսը ամէն առտու ձեռքը Աս-  
տուածային մարմինը շոշափած, շրթունքները  
անդին արեամբ ներկած, սիրտը հրեշտակային  
կերակուրը ձաշակած, հոգին բերանը լեզուն  
դուրս ընկած, թուղթերը և գիրքերը շալկած,  
Նախագահական Սէմինարիօէն, Սուրբ Հոգի  
լատին Եկեղեցին կը վազվառէ, ուր Տօն Գասպա-  
րօին հետ գլուխ զլիսի տալով Իտայերէն լեզուաւ  
գրէն ու կը գրէն: Եւ վերջը կը բերեն իրենց

ընկեր Տէր Ազարեանին, և Տէր Յօլասեանին ալ կը  
ցուցնէն, անոնք ալ կաւելցընեն կամ կը պակ-  
սեցունեն, և ըստ այսմ զիշեր ցորեկ աշխատելով  
գրուածքը առաջ կը տանին: վերջին օրերը  
Աէլվեան Ազգապետ Պատրիարքին ալ խմացընելու  
հարկ կը սեպէն. և անիկայ ալ Գրասպանու, և  
Կարնոյ գործողութիւնները իրենց կը հաղորդէ  
(24. թ.): Վերջապէս զիրքը կը լըմնայ. և Գեր.  
Հասունը ծայրէ ի ծայր աչքէ կանցնէ տեղ տեղ  
ալ կը սրբադրէ (29. դա.): Իսկ Տօն Գասպարօն  
Տէր Պօղոսին հետ այն դարշելի դժոխային ճի-  
ւաղ գրուածքը քանի կը կարդան՝ այնչափ ա-  
նոր վըրայ կափշին, կզմայլին՝ որ մինչև մէկ օր  
մը ալ իրենց մէջ սաստիկ վէճ կը բացուի թէ  
ւորդեօք այն չարամատենին հեղինակութիւնը  
երկուքէն որո՞ւն աւելի կը վերաբերի. ինչու որ  
Տօն Գասպարօն աւելի իրեն յափշտակել կու-  
ղէր, ուր միւսը հաւասար մէկ տեղ աշխատել-  
նին կը պնդէր (30 թ.): Չերկրնցընեմ խօսքս  
Տօն Գասպարօն իրեն քեռայր Ֆրանչէսքօ Քօ-  
բէլլօին ձեռօք՝ Քօռօմիլային տպարանը 500  
քօբիա գրքերուն գաղանի տպուելուն համար  
5500 դահեկանի գլուխ կը կապէ: Եւ ըստ Լա-

տինացւոց՝ մեծ պահօրին վեցերորդ շաբթուան  
վերջին օրերը սկսելով՝ երեսուն և ինը օրուան  
մէջ կը կատարուի, և զիրքին ճակատին վրայ  
„Լիփօնօ“ քաղաքը կը տպուի (36. դա.) : Եւ  
Նախագահէն զազանի Տեր Պօղոսը Տօն Վասպարօն  
հետ մէկտեղ իրենց հաշուին 200  
քօրիա. ալ աւելի տպել կուտան—(32. դա.) :  
Բայց Վեր. Հասունը մասնաւոր իրենց աստուր-  
րեր էր, որ տպուած թերթերէն մէյմէկ հատ  
օրինակ հարկաւ առաջ իրեն բերեն ցուցնէն  
(30. դա.) :

Վերքերը կը տպուին, Տօն Վասպարօն և  
Տեր Պօղոսը փառաւոր կազմուած օրինակ մը  
Վեր. Նախագահ Հասունեանին կը տանին կրն-  
ծայէն, որ և ուրախութենէն՝ չէր զիտէր ինչ  
ընելիքը. ըստ ամենայնի մեծաւ յարգանօք և  
մարդասիրութեամբ զՏօն Վասպարօն ընդունե-  
լով, և անոր ծիօք պըլլուելով, ձեռքը ոսկի  
միտալ մը բռնած՝ ըսաւ. „Իմ շնորհակալու-  
թիւնս ըստ արժանւոյն յայտնելու համար. սա  
„միտալէն զատ ուրիշ բան մը չունիմ տալու :  
„Ասիկայ ինքն Սրբազան Պապը ինձի մէկ պարգև  
„մը տուած է (12. թ. և 31. դա) : Իսկ միւս  
փառաւոր կազմուած զիրքմ՝ ալ կը տանին կը

պարզեէն Ազգապետ Պատրիարք Սէլվիեանին, ուսկից պարզե մը ընդունելուն համար սաստիկ կը խոժոռին:

2. Եւ ինքն Գեր. Հասունեանը այն չարամատենէն մէկ երկու օրինակ հետը առնելով, 1852. ի 13 Մայիսի շուտով ճամբայ կելլայ ի փոքր Ասիան, Անատոլուն, և ի Գաղատիայ, Էնկիւրիւ կը հասնի՝ Շիշմանեան Տէր Կղէմէս Անտոն Եպիսկոպոսին մէկ օրինակ մը ընծայ տանելով: Արդ՝ Գեր. Հասունեանը որպիսի սիրով անկեց ընդունելութիւն գտնիլը չեմ կրնար պատմել: Վասն զի Գեր. Շիշմանեանը անյազ փափաքմամբ այս դժոխային չարամատեանը քանի կը կարդար, չեր կրնար իր սրտին ուրախութիւնը կիշտացնել. ուստի չափէն աւելի զգացած զգացմունքներուն պատճառաւ միշտ և հանապազ «Կէցցէ, Կէցցէ Գեր. Հասունեանը» կը գոչէր:

Այլ Գեր. Հասունեանը Կ. Պօլիսէն չի մեկնած, Տէր Ազարեանին պատուիրած էր (27. թ.) նախ՝ ամէն տպուած գիրքերը. Նախագահական Գիւանը պահել, և բնաւ մի տարածել, մինչև որ ինքն դասնայ, գայ: Արկրորդ՝ միայն Բթօ-

բականաւայի ժողովոյն Քարաինալաց, և մեծա-  
մեծ Պաշտօնատեարց մէյմէկ օրինակ յուզար-  
կել, որպէս զի զանիկայ կարդալով ըստ այնմ  
իրենց վճիռնին ընդդէմ ազգային միաբանու-  
թեանց տան: Բայց եկուր նայէ որ զործքը իրեն  
գիտածին պէս չի կատարեցաւ:

3. Վասն զի Մայրաքաղաքիս մէջ սկսաւ  
լուր տարածիլ, թէ հոս գեր. Հասունը Գաղանի  
մէկ դիրք մը տարադրել տուած է և այլն . . . :  
Նախ առաջին՝ Թիւլպէնտեան կարապետ Աղան  
գրամի ուժով մէկ զաղափար մը ձեռք ձգեց,  
զորն որ իր քեռայր Սամանձեան Մկրտիչ Աղա-  
յին տունը ժողովելով Ամնապեան երկու եղ-  
բայրք Աղայ Պէյ, և Գասպար Պէյ. Տալու թ.  
Յ. Յակոբ Էֆէնտի. Ֆրէնկ օղլու Մուսա Չէ-  
լէպի և այլք և այլն. որոնք ան գիշերը գրէ թէ  
ճայրէ ի ճայր նոյն չարամատեանը կարդացին,  
և տեսան որ, մէկ կարգ անիրաւ գառաւօրներ  
անօրէնութեան ակումոյն վրայ նստած, շրթ-  
թունքներնուն կէսը երկրիս վրայ կէսն ալ  
մինչև երկինք հասուցած, և իրենց չար, թու-  
նայից, և նենգաւօր լեզունին հարիւր յիսուն  
տարւան Միաբանութեան մը վրայ տարածած:  
Աստուծոյ և Եկեղեցւոյն իշխանութիւնը յա-



փրշտակաց, և ի Հռովմա Գահէն հաստատուած իր եղբայրակից Արքեպիսկոպոսները, Աբրահայրերը և Վարդապետները մեռելակոչութեամբ գերեզմանէն դուրս հանած. առաջի բոլոր ազգաց և ազանց հաւատքնին՝ օրէնքնին անխիղճ զըպարտութեամբ բամբասաց. Յանսենեանց նման զանոնք հէրէտիկոս, հերձուածող անուանելէն վերջը, կենդանի մնացող Մխիթարեաններն ալ Տաճարականաց պէս այրել, մրկել ու աշխարհքիս վրայէն անոնց յիշատակնին անգամ անյայտ ընելու համար Սուրբ Ղազարու վանքին քարը քարի վրայ չթողուլ կառաջարկէն:

Ասոնցմէ ի զատ Մխիթարեան Հարց հետեւողներուն հոգւոց փրկութիւննին տարակուսական, երկրայելի ըլլալը զուրուցելէն վերջը, անխիղճ Տէրութեան և Իշխանութեան ալ զանոնք կը մատնէն. իբր թէ՛ Հայոց Ազգը ապրտամբեցնելու ջանալնին, և այն երեւակայեալ ապստամբութեան զլուխ Ազնուատոհմ Տիւզեանց գերդաստանին վրայօք անողորմ զըպարտելնին.— Ազգիս երեւելի ընտանիքներէն ոմանց՝ ի մասնաւորի և յանուանէ յարգ ու պատիւնին առաջի աշխարհի ծաղըր և ծանակ ընել-

նին. — Մուրատեան և Ասիայէլեան երկու  
դպրոցին աշակերանները իբր անկրօն, անհաւատ  
զրպարտենին և բամբասենին . . . . և այլ  
այսպիսի դժոխային վարդապետութիւններ:

## 24.

1. Ազգային ընդհանուր խողով. — 2 Միխիլաբեանց  
հասարոյն վրայ Սէլեդէցաիանաց ոմանց գրուած վճիռներ:

1. Արդ՝ 1852. ի 5 Յունիսի հինգշաբթի  
օր. Ազգիս պատուաւորներէն վաթսուն հոգիի  
չափ ժողովելով, իրենց առջևնէն Շաշեան Մե-  
րուսի արքունական բժիշկն Մանիէլ Ալայն, շե-  
տակ Պատրիարքարանը գացին և Ազգապետ  
Սէլվեան Պատրիարքին ներկայանալով տպուած  
Մէքիթարիսթա, դրքին վրայ խօսք բացին, և  
իրեն կարծիքը հարցուցին: Սէլվեանը ինքն  
զինքն անդէտ ցուցնելով բոլորովին ուրացաւ և  
ըսաւ, ՝ Անանկ մէկ դրքին ամենեկին՝ այսինքն  
՝ ո՛չ թարգմանութեան ո՛չ յօրինուածոյն, և  
՝ ո՛չ ալ հանդամանաց և որպիսութեանը հա-  
՝ ՝ ղորդակից չըլլալուս համար, և քանի որ  
՝ տպագրութեամբ հրատարակուած չէր, ըստ  
՝ արժանւոյն ծանօթութիւն մը չունենալուս  
՝ համար՝ խղճմտանացս հանգստութենէն ու-

7712. մխիթարութիւն մը չունիմ (24. թ.)  
7713. շինողները՝ թէ որ յայտնուելու ըլլան,  
7714. իմ կարծեաց զանոնք շուտով նաւը դը-  
7715. նելով ճերմակ ծով աքսորելու է ըսաւ 7 :

Իսկ ժողովականք այս գրքին քննութեանը  
համար թէ երկոտասանները ժողովելու, և թէ  
առաջիկայ շարաթուս մէջ հարկաւ ընդհա-  
նուր ժողով մը գումարելու զԱէլվիեանը ստի-  
պեցին նէ, Անիկայ պատ ի պատ բանիւք եր-  
կոտասանից և ընդհանուր ժողովոյն գումար-  
ութիւններ յառաջ կը բերեր. վերջապէս տես-  
նելով որ ալ անհնար է, իրենց խնդիրքը կա-  
տարելու խօստացաւ :

Այլ Ազգին աղմուկը, խռովութիւնը քանի  
կերթար Մայրաքաղաքիս մէջ աւելի կը սասա-  
կանար: Եւ իրաւացնէ Տունն Տիւզեան ի մեծի  
վտանգի կար, թէ որ Վէհափառ Ապտիւլ Մէ-  
ճիտ Արքայն ընդ իմաստուն և արդարակորով  
Վէզիր, Նախարարներուն հետ մէկտեղ տեղե-  
կացած չըլլային, եթէ այն ամէն դուռածք-  
ներն թշնամութեան և չար նախանձու պը-  
տուղներն են: Այլ դուք՝ ըսին, և ընտանիք

Ձեր այսչափ հարիւրաւոր տարիներէն աւելի մեր Բարձր Կայսերական Տան միշտ հաւատատարիմ գտնուած էք. ուստի հանդարտ եղեք, և պարապ տեղ սիրտերնիդ չի խառվին և այլն. . :

Կը տեսնաս, չարամատենին հեղինակաց թըշնամու թիւնը, զըպարտութիւնը, և չար նախանձը ընդդէմ Մխիթարեանց և հետեւողաց նոցին յոր սահման հասած էր:

Ազգապետ Պատրիարքը տեսնելով որ այս դործքը գէշի պիտի երթան. Նախագահական Սէմինարիօն այն չարամատենին հեղինակներուն հետ զիշերուան ժամանակ ծածուկ ժողով մը կրնէ, ուր որ կը կանչէն զՏօն Վասպարօն, կը համոզեն՝ որ այն չարամատենին հեղինակը ինքն միայն երեանայ: Տօն Վասպարօն, այս առաջարկութիւնը յօժարութեամբ յանձն կառնու, և ասոր համար մէկ յայտարարութիւն մը օտորազրկելով Սէլվիեանին կուտայ (3—4. դա):

Ի 10 Յունիսի, երեքշաբթի օր, ի Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյն մէջ ընդհանուր ժողովը գումարեցաւ. ուր ժողոված էին: Ազգապետ Սէլվեան Պատրիարքը, Երկոտասանքն, և բազմութիւն յոյժ ժողովրդեան յամենայն կարգէ և աստիճանէ: Եւ հանդարտօրէն պատաս-

խան տալու և ընդունելու համար Ազգին կողմէն հինգ հօգի որոշուեցան. այսինքն Սաման-ճեան Մկրտիչ Աղայն, Երամեան Յովսէփ Աղայն, Տալութ Յ. Յակոբ Էֆէնտին, Թիւլպէնաճեան Կարապետ Աղայն, և Շաշեան Մ. Տօթօր Բաւլաբին: Ամէն մարդ իրենց տեղը նստեցան: Սկզբնան Պատրիարքը ծոցէն մէկ ծալլած թուղթ մը հանեց ու ըսաւ (Վ. դա). այս թուղթը Տօն Գասպարօ վուչինօն ինձի գրած է, ըսելով որ այն տպուած Մխիթարեան գրքին հեղինակը, շինողը ինքն է, և թէ ինքն կարող է իր ըսածները բոլորն ալ ուրիշ զօրաւոր բաստերով հաստատել և այլն:

Ան ատէն ընդհանուր ժողովքը մէկ բերան պատասխանեցին, թէ բնաւ ան թուղթը չենք ուզէր՝ որ այս Ազգային ընդհանուր ժողովոյս մէջ կարդացուի. մենք արդէն գիտենք թէ այն չարամատենին հեղինակը ո՞վ է, ուստի այն թղթոյն ընթեռնուելը խափանու եցաւ, թէպէտ և Սէյիւեանը սուտ ջուր շտաբուէն սուտանձին, սուտանձին կարդացեր էր:

Ապա վերոյիշեալ հինգ Պատգամաւորները հարցունելու սկսան և ըսին, ՚Հայր Սուրբ, այս

» Իտալերէն լեզուաւ տպուած Մխիթարեան գիր-  
քը Զեզի ընդունելի՞ է, չէ՞նէ դատապարտելի »:

Սէլվեանը պատասխան տուաւ, » Հոգևորին  
» կողմանէ ես զլուխ չեմ, և իշխանութիւն ալ  
» չունիմ այսպիսի նիւթերու վրայ վճիռ տա-  
» լու »: Ան ատենը ժողովը պնդեց ու ըսաւ,  
» ո՞վ որ իշխանութիւն ունինէ, զանոնք հոս  
կանչէ որ գան. ինչու որ այսօր հարկաւ այս  
խնդրոյս որոշում և լուծում կուզենք » ըսին:  
Պատրիարքը դարձեալ դժուարութիւն ցու-  
ցուց, ժողովքը դարձեալ ոտք կոխեց: Աեր-  
ջապէս Սէլվեանը պարտաւորեցաւ Ազգային ժո-  
ղովքին հրաւիրելու, զՏեղապահ Աթոռակալ  
Պօրձօնեան Տէր Յովսէփը, զԱզարեան Տէր Ստե-  
փան Նախագահական Ատենադպիրը, և այլ  
ուրիշ աստուածարաններ: Երբոր Ազգային ժո-  
ղովքը Եկեղեցականաց դաշտեան կապտէին, և  
Սէլվեանը նեղի գալով ժողովքը մէկ ճամբով  
ցրուելու հնարք կը փրնտուէր. ահա թրնկը-  
ռեան Յովհաննէս Եփէնտին Մըսրեան Պետրոս  
Ազային հետ միատեղ ոտք ելան » այս ծանր  
խնդիրը լուծելու մեզի չի վերաբերիր ըսին, այլ  
Հռովմայու վճռոյն պէտք է սպասել և այլն . . »:  
Ասոնց հեռեկեցան Պօեաճի Անանեան Պօղոսն ընդ

այլ Հասունեանս, որոնք ինչպաի ժողովքէն ելան  
զայնն նէ ալ, իրենց վախճանին չկրցան հաս-  
նիլ: Որովհետեւ Ալլահվէրտի Աբրահամ Ամիր-  
րայն Արկոտասանից հետ միասեղ ժողովոյն  
զլուխը անցնելով Եկեղեցականաց զալուն հան-  
դարտօրէն կսպասէին:

2. Պօրճօնեան Աթոռակալը ի Նախագա-  
հական Աէմինարիօն մէկ ժամու չափ ի խոր-  
հուրդ նստելէն վերջը՝ ինջան Մայր Եկեղեցին,  
և ժողովոյն ներկայացան: Աբրահամ Ամիրայն  
սկսաւ զուրցել: «Յարգոյապատիւ Աարդապետք,  
«զջեզ հոս հրաւիրելու պատճառը ուրիշ բան  
«չէ, բայց եթէ Ազգիս խռովեալ միտքը հան-  
«դարտեցնելու համար, արդ՝ սա Խապերէն  
«հրատարակուած Մխիթարեան գիրքը Ձեզի  
«ընդունելի՞ է, չէ՞ նէ մերժելի. շնորք ըռէք Ձեր  
«մտաց որոշմունքը յայտնապէս զուրցեցէք»: Պօրճօնեան  
Աթոռակալը այսպէս պատասխան  
տուաւ: «Այս գրքին վրայօք ես ինձմէն բան մը  
«չեմ կրնար ըսել, վասն զի Գեր, Նախագահը  
«դուրս երթալու ժամանակ ինձի անանկ հրա-  
«մայեց՝ որ այս գործքին վերաբերեալ դու  
«ինքնիր զլուուդ բան մը չի պիտի ընէս»: Պօր-

ճօնեանը անմատոյրութեամբ այս բառերը բեր-  
նէն դուրս տուած ժամանակ, քովինները զինքը  
դրդեցին: Ան ասէն ինքն զինքն ժողուելով  
կրկնեց իր խօսքը ու ըսաւ. «այս տպուած գրք-  
քին համար չէր ըսածս, հապա սանկ երե-  
ւելի գործքերուն համար ապօսրուած էր»  
ըսած ժամանակ՝ ժողովքը մէկ բերան կանչե-  
ցին. թէ՛ վարդապետ առջի զուրյածդ ամենա-  
ստոյգ է, խկ կաքինը բոլորովին շինծու, ի՞նչ  
ըլլալը հասկրցուեցաւ: Աւ դարձեալ Պօրձօ-  
նեանը կըսէ, «ես իմ զլիտուս բան մը չեմ կրնար  
ընել, ինձի արըուած հրամանին նայելով  
«Գեր. նախագահին գրեմ, հիմակու հիմայ Ան-  
կիւրիւէ, երեք օրուան մէջ թուղթը իրեն  
«ձեռքը կը հասնի՝ ըսաւ:»

Ժողովքը դարձեալ հարցուց. Աւրդա-  
պետք՝ ան գրքին մէջը գրուած է, թէ Մխի-  
թարեանք հերեափկոս են, և անոնց հեռուող-  
ներն ալ հերձուածող կայն . . ., ասանկ մէկ  
գիրք մը դուք կրնդունիք, չէնէ կը մերժէք:  
Պօրձօնեան Մթոռակալը՝ Մխիթարեանց հա-  
մար, հերեափկոս են, ան գրքին մէջ ասանկ  
խօսք չէ գրուած ըսած ժամանակ: Շաշեան  
Տօբթօր Բաւլաքին զիրքին այն երեսը կը բա-



նայ ու կը կարդայ, որ Պիտիթարեանք Յանսենեանց նման հերեփիկոս են եւայլն . . . : Առ այս Աթոռակալը պատասխան չը կրնալով տալ, կըսէ՞ մենք այս դրքին վրայօք բան մը չենք կրնար զուրուցել, ասոր դատաստանը Հռովմային ատեանը պիտի տեսնուի:

Ժողովքը դարձեալ կը հարցընէ. Վարդապետք այս գիրքը հրատարակուէն վերջը ժողովրդեանը մէջ կերպ կերպ երկրայութիւններ ծագեցան, մեզի ճշմարիտը զուրցեցէք, թէ Միտիթարեանք իրաւցընէ հերեփիկոս են: Այս հարցմանը Պօրճօնեանը այսպէս պատասխանեց Պանի որ Նախագահ Գերապայծառը թոյլ տուած է իր Սկեղեցւոյն մէջ մեզի հետ մէկտեղ պատարագ զուրցել, խոստովանանք լըսել եւ ամէն խորհուրդները մեզի հետ մէկտեղ հաւասար կը կատարէն՝ կսէ՞ Այլ հերեփիկոս, հերձուածող չէն՝ չըսէր:

Ժողովքը դարձեալ կը հարցընէ. Վարդապետք ինչու ասանկ կէս կտուր պատասխան կուտաք, բացայայտ Ձեր կարծիքը մեզի ալ հաղորդեցէք. Միտիթարեան Հարք այս օրուան օրս կաթօլիկ են, չէնէ չեն, պատասխան մը տուէք

մեզի, սրով սիրտերնիս հանգչի զորձքերնուս  
երթանք ըսին: Առ այս դարձեալ բացայայտ  
խօսք չիկայ, հասպակէս կտուր երկղխմի, անխ-  
մաստ և անորոշ պատասխաններ:

Ժողովքը վերջին անգամ իրենց հար-  
ցում՝ ալ ըրաւ. — Վարդասպէք, Մխիթարեանց  
հերձուածողութեան միտեալ, և կամ երկ-  
բայելի ըլլալուն դուքալ արդեօք կասկած ու-  
նիք. վասն սիրոյն Աստուծոյ դո՛նէ ասոր մէկ  
պատասխան մը տուէք — : Առ այս դարձեալ  
կէս կտոր պատասխան տուած ժամանակին:  
Ազարեան Տէր Ստեփանին հայրը Յովհաննէս  
աղայն տեսնելով ժողովականաց խղճմանաց  
անհանգստութիւնը, և սրտից ալեկոծեալ խռո-  
վութիւնը, որդւոյն քովը կը մօտիկնայ, և զայ-  
րանալով: — Այս ի՞նչ կերպ խտտարտութիւն  
է բռնած ճամբանիդ՝ կըսէ, Քէմքիւմ կընէք,  
որոշ պատասխան մը չէք տար, կամ այո՛ ըսէք,  
և կամ ո՛չ. Մխիթարեանց հետ մէկտեղ մի և  
նոյն Եկեղեցւոյն մէջ պատարագ կը զուրցենք,  
և հաղորդակցութիւն կընենք՝ կըսէք. իսկ  
վկայութեան գալու ժամանակ ինչո՞ւ ասանկ  
կէմ — կըմ պատասխան կուտաք, ողորմելի ժո-  
ղովրդեան խռովեալ սիրտերը հանգարտեցու-

ցէք և այլն . . : Ան դիէն Սամանձեան Մկրտիչ  
տղայն ոտք ելաւ, և բարձր ձայնիւ Քահանա-  
յից ըսաւ. — Վարդապետք վաղուան օրը Աս-  
տուծոյ մատուցած Սուրբ անմահ պատարագ-  
նիդ, և Ամենասուրբ Երրորդութիւնը զՁեզ  
պատճէ, թէ որ մեր խռովեալ սրտին հան-  
դարտութեանը համար՝ ներքին զգացմունքնիդ,  
և միաբերնուց համոզումը այսօր Ձեր բերնով  
ձշմարտութեամբ չէք խոստովանիր և այլն . . :  
Այս խօսքերուն վրայ Քահանայք տեսնելով  
ժողովականաց ոմանց «Տէ՛յ վախ» հառաչելնին,  
ոմանց արտասուելնին և այլն . . . հաղիւ ու-  
րեմն սկսան վկայելու, թէ մենք ալ անոնց վրայ  
երկբայութիւն չունինք: Ան ատէն ժողովքը  
իրենց ըսաւ. «Վարդապետք, նայեցէք, մենք  
«ըստ ԲՅԻ՛ւր բռնութիւն չունինք, թէ որ կու-  
«ղէք, թէ որ կը հաճիք, մեր սրտին հան-  
«դարտութեանը համար՝ Ձեր այս տուած վեհա-  
«յութութիւննիդ Ձեր ստորագրութեամբը մեզի  
«տուէք»: Քահանայք ստորագրութեան խօսքը  
լրսելուն պէս՝ մէկ բերան չըլլար ըսին, բնու-  
չընդունեցին, մենք այս բանիս համար ստորա-  
գրութիւն չենք կրնար տալ ըսելով, մէկիկ մէ-  
կիկ ժողովքէն մեկնեցան զացին:

Եւ այսպէս Ազգային ժողովը տակն ու վրայ եղաւ: Աստուածատէր Արրահամ Ամիրան յառաջուց տեսնելով այս խռովութեան վերջին ծայրը ուր հասնիլը, ժողովքէն ելլելու ժամանակ սկսաւ ըսլ: Բոլոր ժողովականք յամենքս մէկտեղ Բարձրագոյն Դուռը երթանք կրտէին: Իսկ Սամանձեան Մկրտիչ Աղայն հաղիւ ուրեմն կարող եղև համոզել զանոնք, մինչև վաղուան գիշերը համբերել, և իրենց ինչ ընելիքնին պատասխանը տալ:

Այս գիշեր կէօչէք Յովսէփ Լիճնափն, և Սինապեան Գասպար Պէյն, զացին Սատրազամ, փոխարքայ Ռեշիտ Բաշային, որուն մի ըստ միջէ պատմեցին, ինչ որ նոյն օրը Մայր Եկեղեցւոյն Ազգային ժողովքին մէջ պատահեցաւ:

## 25.

1. Լասթի Արտեմիոնոս Մ. Իւլեօյին Տեղամարտ-Լիւանը:

— 2. Տօն Գասպարօյին Երէրորդ յայտարարութիւնը,

Սէլվէան Աղգաստեփն Կեդ լեղլեանցո-Լիւանը: — 3 Տօն

Գասպարօյին Տերտ-Լեան յարեան իանշուիլը, և անոր

Հառվճ Գաղափ փոխառարը: Եւ այս պատճառաւ Երէր-

Ստիսիոսոսիան Էշխանութեանց Տեղ Բանախո-Լիւանները:

1. Աղաղուան չորհրդարթի օր, ի 11 Յու-նիսի 1852. չորս անձինք Տօքթօր Յ. Յավութ,

Երամեան Յովսէփ, Տօբթօր Շաշեան Բալլաքի  
և Թիւլպէնաճէան Կարապետ Աշաները, Արբա-  
զան Պապին Առաքելական փոխանորդ Մ. Իլէօր  
Լատին Արքեպիսկոպոսին (Ճ. դա) դացին, որուն  
առջի օր Մայր Եկեղեցւոյն մէջ Ազգային ժո-  
ղովքը, և Սէլվեան Պատրիարքին Տօն Գասպար-  
օյին թուղթը կարդալ ուղելը, և ժողովա-  
կանաց նոյն թղթոյն ընթերցումը խափանելնին  
մի առ մի սրատմելէն վերջը, Լատին Արքեպիս-  
կոպոսին աղաչեցին՝ որ այս ամէն սրատաճա-  
ները մէկիկ մէկիկ Հռովմայ գրէ, որովհետև  
Ձեր խօսքը մերինէն աւելի ազդուութիւն և  
հեղինակութիւն ունի ըսին: Իսկ Արքեպիսկո-  
պոսը եկողներուն վշտացեալ սիրտը Մխիթա-  
րելէն վերջը, խօսք տուաւ իրենց, ձեռքէս եկած  
օգնութիւնը չեմ գլանար՝ ըսաւ: Բայց իրենցմէ  
խնդրեց՝ թէ արդեօք Տօն Գասպարօյին գրած  
թուղթը կընամ՝ մէյմը տեսնել: անոնք ալ  
խօսք տուին, կը բերենք Ձեզի կը ցուցընենք  
ըսին:

Նոյն օրը չորեքշաբթի իրի՛ուն Սաման-  
ձեան Մկրտիչ Աղան այն թուղթը ճամբով մը  
Սէլվիեանին ձեռքէն կառնէ, ի 12 Յունիսի

Հինգշաբթի առաւօտուն զանիկա Արքեպիս-  
կոպոսին կը ցուցընէն:

2. Մ. Իլէրօն այս թուղթը իր ձեռքը ձը-  
գածին պէս, իսկոյն զՏօն Գասպարօն իր առ-  
ջին կը կանչէ. — ի խղճէ. և յարգարութենէ  
ճշմարտութիւնը յայտնելու համար կը պար-  
տաս որիս ուրիշ մէկ յայտարարութիւն մը ալ  
տալու՝ կսէ: — քսան և չորս ժամ իրեն ժա-  
մանակ կուտայ մտածելու: Իսկ Տօն Գասպա-  
րօն իր սենեակը քաշուած, ուրիշ մէկ յայ-  
տարարութիւն մը ստորագրուած, իր Եպիսկո-  
պոսին կը բերէ կուտայ, որոյ օրինակն այս էր:

«Ես ստորագրեալս ամենուն յայտնի կը-  
նեմ, որ Մխիթարեան ըսուած զբքին ես միայն  
դրագիրը ըլլալով, ըստ խնդրոյ Հայազգի Աս-  
թօլիկ Եկեղեցականաց ոմանց, և ինձի յանձ-  
նած թղթերուն իմաստին նայելով այն գիրքը  
ի լոյս հաներեմ, և ի հաստատութիւն այսր  
կստորագրեմ» (6. դա)

Գասպարօ, Քրիստոսօ. Առլինօ:

ի 24 Յունիսի 1852:

Մ. Իլէրօն Տօն Գասպարօյին այս յայտա-  
րարութիւնը ձեռք ձգելէն վերջը ի 11/20 Յու-

նիսի, Սէլվեան Պատրիարքին առաջին թուղթը  
կը գրէ ու կըսէ, . . . . . Սուրբ Աթոռոյն  
կողմանէ կրօնի վերաբերեալ դործու թեանց  
վերառեցու թիւնը ի Կ. Պօլիս երկու իշխա-  
նու թիւն կայ: Ինչչափ վերոյիշեալ պարսա-  
ւագիրքը Հայոց Կաթօլիկաց գղերին կրօնական  
գործողութեանց վերաբերեալ է, ի վերայ այսր  
ամենայնի անոր հեղինակը իմ Առաքելական  
փոխանորդիս իշխանութեանը ներքե դանուած  
Քահանայեցմէն մէկը ըլլալը յայտնած էք:  
Նկեղեցւոյն օրէնքը և իրաւունքը չանարգե-  
լու համար, ան Քահանային անունը չի յայտ-  
նած, իրեն ասանկ մէկ գործքի մը համար  
հրաման արուած ըլլալը վայելուչ և պատ-  
շաճ չէր արդեօք յանաջագոյն իր Նպիսկո-  
պոսէն հաւաստեալ ստուգելը:

Արդ՝ Գուք իմ իշխանութեանս ներքե  
դանուած մէկ Քահանայն հարկաւ վերոյի-  
շեալ զրքին հեղինակնէ ըսելովնիդ, Նկեղեց-  
ւոյն այս օրէնքը անարգած և անպատիւ ըլ-  
լայէն ի զտա, զիս այնպիսի պատասխանատու-  
թեան ներքե ձգեցիք, որ զանիկայ մերժելու  
պարտրկան եմ: Մանաւանդ թէ բռնագա-

տուած եմ, թէ բողոքելու, և թէ բուն իսկ  
ճշմարիտ պատմութիւնը՝ ամենեին մէկուժը  
կողմնակցութիւն չընելով յայանելու. որպէս  
զի սչ իմ, և սչ իմ Քահանայիցմէ մէկուն, սչ  
ուղղակի, և սչ անուղղակի այս գործին մաս-  
նակից ըլլալովնիս, ժողովրդեան մէջ տարա-  
ժուած լուրերուն ուսա ըլլալը յայանուի:  
Այն լուրերը կըսեմ, որ Առաքելական փոխա-  
նորդիս իշխանութեանը ներքեւ դրանուող  
Նկեղեցականներուն, և Հայ Աթոլիկ Ազգին  
մէջ զանուած ներդաշնակութեան աւրուե-  
լուն պատճառ են . . . . . : Մ. Խէրօն աւ-  
կէց ետե կսկի մէկիկ մէկիկ ցուցնել Տօն  
Գասպարօյին նոյն պարտաւարքին շինութեան,  
և սպազրութեան որչափ մասնակից ըլլալը, և  
անոր տուած երկրորդ յայտարարութիւնը յի-  
շատակելէն վերջը կը վերջացնէ իր խօսքը  
ըսելով :

Ինչ և իցէ, Ձեր բարձրութիւնը, զըտ-  
նուած իշխանութենէդ պարտաւորեալ, ար-  
դարութեան պատիւ, և ամէնուն իրաւունքը  
հատուցանելու պարտաւորած ըլլալովնիդ, այս  
Ձեզի դրած ճշմարիտ պատմութիւնը ամէնուն



71 յայանելով, և այս ճանապարհաւ Վատին քա-  
72 նանայից պատահած դժուութենէն ամենուն  
73 միտքը շինելու սաստիկ պարտաւորուած ըլ-  
74 լանիդ աղէկ դիտէք և կը ճանաչէք:

75 Վերջապէս համարձակութիւն տուէք  
76 մեզի Գերապայծառ Տէր, որ Ձեզի գրած թուղ-  
77 թըս ըստ այսմ վերջացրինեմ: Դուք որ աշ-  
78 խարհական Ազգապետ ըլլալովնիդ, Ձեր ունե-  
79 ցած կարողութիւննիդ և կենացդ հասակին  
80 կատարելութիւն և հանապազօրեայ փորձա-  
81 սութիւննիդ, Ազգիդ մէջ ստացած ազդե-  
82 ցութիւննիդ, մանաւանդ տրժանի եղած Սուրբ  
83 Վարդին, և Սուրբ Սեղանոյն փոխանորդական  
84 իշխանութեանդ Սրբութիւնը ու փառքը, ա-  
85 սոնք կըսեմ ամէնքը ձեռքերնիդ մեծ դիւ-  
86 րութիւններն էին՝ մէկ քանի խօսքով ժո-  
87 դովդեան վրդոված միտքերը հանդարտեցնե-  
88 լու: Անանուն զրքի մը գատաստանը իր գլխոյն  
89 վըրայ կայնած է: Մէկ գրուածքին սակը սոռ-  
90 թագրութիւն չեղածին պէս, անոր զօրու-  
91 թիւնը ոչնչացած ըլլալէն ի զատ զանիկայ  
92 զրոյն ալ ամբչցած ըլլալուն մէկ մեծ նշան  
93 մի է: Միայն ստութեան, նախանձու հակառա-

Կու թեան սեփհասեանուած է ծարսեալ այս-  
կերպ հազուստով հրապարակը երեալ: Իսկ  
այն պարսաւ աղբքին մէջ անբաստանուած խն-  
դիրներն սղ, այնպիսի նիւթերը առաջ բե-  
րած է, որոնց վերայ շատոնցւրնէ կրկին և  
կրկին դատաստանը վճռուած, և ի գործ դը-  
րուած է, միայն անցած դացած բաներուն մէկ  
յիշատակի մը պէս՝ պահուած Վիւանաթղթե-  
րէն դարձեալ ի լոյս հանուած սոսկ պատ-  
մու թիւներն են: (1. թ)

Սէյվեանը Պորձօնեան Աթուակային բերնով  
այս թղթոյն պատասխանը կուտայ: Իսկ Մ. Կլէրօն  
Պորձօնեանին թղթին պատասխան տալէն առաջ.  
ի 17/29 Յունիսի, Սէյվեանին երկրորդ թուղթը  
կը զբէ ու կըսէ, յ . . . ըստ արդարու թեան և  
ըստ ճշմարտու թեան Ձեզմէ անանկ մէկ բան մը  
շահելու խնդրեր էի, որ ըստ ամենայնի իրա-  
ւունք ունիմ, այսինքն Ձեր Ազգին ճանբով  
մը ծանուցանել, թէ այն Մխիթարեան չա-  
րամատենին հեղինակը Տօն Գատպարօն չէ այլ  
Հայազգի Աթաթղթի եկեղեցականք ոմանք: Թէ  
որ ասիկայ չէք հրատարակեր, Աստին Եկեղե-  
ցականաց յարգը պատիւը պահելու և պաշտ-  
պանելու համար, ձեռքս գտնուած վաւերա-

հան գրուածներով, և հա ստարիմ վկայնե-  
րով մինչև ցվերջին կէտ ջանալու հիմկո. բնէ  
Չէզի կը ծանուցանեմ: Աւ թէ որ մէկ անգամ  
քննու թեան ելլալու ըլլամ. անկից վերջը կա-  
րող չէ մէկը զիս յետ դարձնել, թէպէտ և  
իմ անջեա ելլողը որպիսի մարդ ըլլանէ թող  
ըլլայ, թէ և Պատրիարք մը. ի վերայ այսը  
ամենայնի յետ բնաւ չը պիտի դառնամ (6 թ):

**Սէլվեանը նեղի գալով, մէկ կողմանէ Ազ-**  
գին բազմութիւնը կստիպէր զինքը Ազգային  
ժողով գումարելու: Միւս կողմանէ Մ. Իլէրո-  
յին զինքն բանադատելը հրատարակելու Տօն  
Գասպարոյին երկրորդ յայտարարու թիւնը, ու ստի  
հնարք մը մտածեց (7. դա). Բարձրագոյն Գրան  
շատ մը ազաչելէն վերջը՝ հազիւ կարող եղև  
հրամանագիր մը ընդունելու, որ կարգիլէր թէ  
Ազգային ժողով գումարուիլը, և թէ չարա-  
մատենին վերաբերեալ թուղթերուն կարգա-  
յուիլը: Վասն զի Սէլվեանը այնպէս համոզերէր  
զՊաշտօնայն, իբր զի՝ եթէ ազգային ժողովոյն  
մէջ Մ. Իլէրոյէն յուղարկուած Տօն Գասպարո-  
յին երկրորդ յայտարարու թիւնը կարգալու  
ըլլայ, անկից ետքը ժողովուրդեանս անհնարին աղ-

ճուղի, խռովութեան առջևը չեմ կրնար առնուլ ըսեր էր:

3. Իսկ Մ. Եղեբօն երբոր մէկ կողմանէ այս թուղթերը կը գրէր, և զՏօն Վասպարօն իր հրամանին հակառակ զօրծելոյն համար ընդ Եկեղեցական պատժովք արդելեալ էր զանիկայ: Միւս կողմանէ Բ. Վանէն սպարանապետ Քօրօմիլլան կը կանչեն, և հարց փորձ կընեն. թէ այս զիրքը տպելու համար քեզի ո՞վ տուաւ: Ֆրանչէսքօ Քօրէլլօն, կսէ: Ֆրանչէսքօյին կը հարցընեն, անիկայ ալ պատասխան կուտայ ՚իմ կնոջս եղբայր՝ Տօն Վասպարօ Վուչինօն տպել տուաւ, կսէ: Ուստի վաղուան օրը երեքը մէկ տեղ ի դադաստան կանչուելին իրենց ծանուցին: Ասոր վրայ Տօն Վասպարօն յուսահատութեան մէջ ընկած, նեղի զալով նոյն գիշեր Վեր. Հասունեանին Յէմինարիօն սորա փնեցաւ, ուր որ ժողոված էին Ալբլեանը, Պօրճօնեան, Ազարեան, Յօլասեան և երկու եղբարք Մաղաբեանը: Իսկ Տօն Վասպարօն իրրև խելացնօր վեր ի վայր կը վազէր ու ինչ ընելիքը չէր գիտէր. ՚դուք՝ բարձր բաձայն կը գոչէր, դուք ամենքնիդ էք պատճառ սոյս Եկեալ, հասեալ իմնց աղեախց, և

Թշուառութեանց: Վերջապէս գիտեմ ես կը-  
րսէր, գիտեմ ի՞նչ ընելիքս պիտի խօստովանիմ  
ճշմարտորէ և այլն . . . . . : Ժողովականք  
առոր չորս դին կը բողբառուին, ոտքը կիյնան կա-  
ղաչէն ու կը պաղառին որ այն շարամատենին  
հեղինակը ինքն միայն երևնայ. և տայ իրենց  
երրորդ յայտարարութիւն մը ալ, որով իր  
Եպիսկոպոսին Մ. Նէրոյին տուած երկրորդ յայ-  
տարարութեան զօրութիւնը ոչնչանայ (15 թ.  
և 6. դա): Եւ վաղուան օրն ալ Գաղղիացւոց  
չողենաւով ի Հոովմ քաղաք փախչի. ուր որ  
ամենայն կերպիւ աշեկ ընդունելութիւն գրու-  
նելը. Մ. Նէրոյին արգելքը գիւրութեամբ իր  
վրայէն վերնալը, պատարագ զուրցելու հրա-  
մանը շուտով իրեն շնորհուիլը յառաջագոյն  
իրեն խօստանալով ապահով ըրին զինքը:

Ուստի Տօն Գասպարօն ալ՝ անոնց ու-  
զած յայտարարութիւնը ստորագրրելով: իրենց  
յանձնեց: Եւ Տէր Ազարեանը իր վեց ընկե-  
րաց խորհուրդով Աւետարանին վրայ (28.թ)  
Տօն Գասպարոյին երգում ընել կուտայ՝ որ-  
պէս զի այս ամէն բան ծածուկ պահէ, և իր  
խօսամունքին վրայ հաստատան մնայ: Ապա

Ճամբու ծախքը սենեկու համար հինգ հազար դահեկան Տօն Գասպարոյին կուտայ: Եւ իրաւայնէ վստղուան օրը ի 19 Յունիսի, Տօն Գասպարօն ալ կը փախչի կերթայ շխտակ դէպ ի Հոռով՝:

Լատին Արքեպիսկոպոս Մ. Ելէրօն երբոր Հասունեանց զՏօն Գասպարօն իր ձեռքէն փախցրնելնին կիմանայ, Յունիսի 30-ին Պօրճօնեան Աթոռակալին կը գրէ, կը պնդէ ու կօտիպէ՝ Ժողովրդեան հրատարակել, և յայտնապէս խոստովանիլ՝ թէ այն չարամատենին հեղինակը Տօն Գասպարօն չէ, այլ Հայազգի Կաթօլիկ Քահանայք ոմանք. ապա թէ ոչ կրտէ, վերջապէս ես ինձմէն կը պարտաւորիմ ձեռքս գտնուած այն ամէն գրուածները հրատարակելու և այլն. . . . :

Նեղի գալով Հասունեանց, ի 3 Յուլիսի առանձին Տէր Ազարեանը միայն, և ի 4 Յուլիսի դարձեալ Մազաքեան Տէր Պօղոսին հետ Մ. Ելէրօյին կուգան (26. թ.), որ և անանց բերնէն շատ մը բաներ օրսաց: Բայց իրենք միշտ յամառութեամբ պնդեցին՝ թէ այն չարամատենին հեղինակը ինքն Տօն Գասպարօն է, ապիկա ըսելով բաժնուեցան իրարմ:

**Ա.** պա ի 2 Յուլիսի Մ. Խէրօն Սէլվեանին վերջին թուղթը կը գրէ (11. թ.) ուր հնուց ի վեր իրեն գործածած կերպ կերպ հնարք, ու վարպետութիւններուն հետ մէկ տեղ հիմակուան ըրածն ալ կը յիշատակէ, և իրեն ինչ բնելիքն ալ կը յայտնէ:

**Ե.** ի 6 Յուլիսի դարձեալ Պօրճօնեան Աթոռակալին երկրորդ թուղթը կը գրէ (25. թ.), որոյ օրինակը հոս կը գնէնք:

Առաքինազարդ Տէր

ի 6 Յուլիսի (ըստ լտ.) 1852.

« Երեկ իրիկուն գրուած, և Ձեր կողմանէ  
նստորագրուած թուղթը իմ ձեռքս հասաւ:  
« Այս թղթով սա մէկ քանի գլուխ բան իմա-  
« ցընել ու զերէք: Առաջներ՝ ասկէց առաջ գրած  
« թղթոյս պատասխանը բերնով տալու համար  
« զԱզարեան Տէր Ստեփանը, և զՄաղաքեան Տէր  
« Պօղոսը մեզի խրկած ըլլանից: Երկրորդ՝ այս  
« երկու քահանայից ինձի հաղորդած տեղե-  
« կու թիւններն իմանալուս պէս, ասկէց առաջ  
« գրած թղթոյս մէջ մէկ սխալմունք մը ունե-  
« նալս ևս ինձմէն համոզուիմ պիտի եղեր: Եր-

« րորդ՝ Մաղաքեան Տէր Պօղոսին խոստովանու-  
« թիւնը զիս ալ բաւական գոհ պիտի ընէ: Չո-  
« րորդ՝ իբր թէ այն թղթոյն հրատարակու-  
« թեան եղանակին ձար ու հնարքն ալ մենք  
« գտնելու ենք:

« Ի դժուարութենէ ազլանելու համար, այս  
« կերպ արհեստիւ հիւսուած պարբերութեանց  
« համառօտիւ կը պատասխանեմ:

« Անցեալ Յունիս 30 ին Չեզի դրած թուղ-  
« թը՝ Ձեր ինձի գրած ուրիշ մէկ թղթոյն  
« պատասխանը ըլլալով, այս վերջին թուղթը  
« ձեռքերնիդ հասնելուն՝ մեզի իմանցընելէն ու-  
« րիշ մէկ պատասխանի մը չէի սպասէր: Ինչու  
« որ դուք մեզի գրեցիք, մենք ալ պատասխանը  
« ատենք, ըսելէ որ՝ բանակցութիւննիս լըմնցաւ:

« Բայց վերջէն Ձեր կողմանէ մէկ քանի հա-  
« ռատարիմ անձինքները երեսփոխանութեամբ  
« ինձի կը յուղարկէք: Այս երեսփոխանից դա-  
« լըստեան ամէն մարդ բնականապէս որպիսի  
« մեկնութիւն կուտան, ես ալ նոյն մեկնու-  
« թիւնը զիրենք տեսած ժամանակս աուի: Այս-  
« ինքն՝ սա ժողովրդեան սպասած յայտարա-  
« րութիւնը որպէս շինենք ըսելու աներկբայ մէկ  
« խորհուրդ մը ուղէն պիտի ըսի. և կամ մէկ



« Գամբայ մը հարցընկնին յուսացի: Այլ թէ  
« այս Գամբով ինձի ուրիշ մէկ որոգայթ մը ալ  
« լարեղնիդ, և մէկնոր թակարդիմը ետև պա-  
« հուրտեղնիդ բնաւ միտքէս ալ չէր անցէր: Այս  
« նոր որոգայթ ըսածս, իբր թէ՛ ասկէց առաջ  
« զբաժ թղթոյս մէջ Բէ՛ ի՞նչ ի՞նչ ի՞նչ ի՞նչ  
« ի՞նչ ի՞նչ, ըսածնիդ է: Եւ իրաւընէ այս երկու  
« երեսփոխաններն ալ մէյ մէկ կերպարանքով  
« իմ առջիս ներկայացան: Մէկը (Տէր Ազարեանը)  
« ըսաւ՝ որ իմ վրաս այս յանցանքը ինչպիսի  
« զրեւն, ի վերայ այսր ամենայնի զիս ամբասիր  
« աննելու հաստատուն պատճառօք, և զրով իսկ  
« յայտնելու պատրաստեւիմ, որոնք որ՝ թէ՛ զիս,  
« և թէ՛ իմ Մեծաւորս (Գեր. Հասունը) կը պաշտ-  
« պանէն: Իսկ միւսը (Տէր Պօղոսը) ըսաւ, թէ՛  
« բուն յանցաւորին տէրը ես չեմ, այլ միայն  
« անոր վերաբերեալ մէկ քանի հանդամանաց  
« համար: (Ասոր բոլորովին յանցաւոր ըլլալը  
« առջի օր Տէր Ազարեանը խոտտովանեցաւ):

« Կերենայ որ՝ Ձեր երեսփոխաններուն այս  
« կերպ խօսքեր ըսել տալերնուդ վախճանը ու-  
« ըրիշ բան չէ, բայց եթէ ի հարկէ վերոյիշեալ  
« Յունիս 30 թուականով զբաժ թղթոյս մէջ՝

տեղ տեղ լիտլ հասկըցամ ըլլալըս յայտ-  
նել կուզէք: Իսկ թէ Ձեր, և թէ յուզար-  
կամ երեսփոխանից միտքը իրաւցընէ այս է նէ,  
չատ մեծ կը խափուիք: Ինչու որ ան ըսել  
տուած խօսքերնից՝ իմ գրած թղթոյս մէջ  
մէկ մտնր սխալմունք, և փոքրիկ մէկ սուտ  
ըստարտութիւն ըլլալուն զիս չհամոզելէն ի  
զատ, անոր հակառակ իրենք զանոնք յայտնի  
հաստատեցին, այսինքն իմ գրածներս բոլորն  
ալ իրաւացի, և ճշմարիտ ըլլալը ըստ ամե-  
նայնի վկայեցին:

Արդ հիմա՝ ան ջատագոված նիւթերուն  
որչափ զօրութիւն ունենալնուն դատաստանը  
դարձեալ Ձեզի պիտի կտրել տամ: Ի 3 Յու-  
լիսի, շարաթ օր Ազարեան Տէր Ստեփանը դա-  
լով, և ինձի հետ մէկ ժամու չափ խօսակ-  
ցութիւն ընելուն՝ երկու վախճան ունէր. մէկը՝  
զինքը անպարտ ցուցընել, երկրորդը իր Մե-  
ծաւորը արդարայնել: — Թէ որ զիս հարցնելու  
ըլլատ ըստ՝ Տէր Ազարեանը, ես ան գրքին շինու-  
թեանէն դուրս եմ, ևս հաստատան պարտման ալ այս  
չէ, որ Տժն զատարժն ասոր համար ինչի լեզի յան-  
դրեմունտութեանէր ընելու, եմ գործիս թէ՛ խառնաթել  
գրեի եր: Ես ալ հիմա կը հարցընեմ, Տէր Ազար-

7 րեանը այս գրքէն դուրս և անգետ և զած ժա-  
7 մանակ, Տօն Գասպարօն ինչ իրաւամբ Տէր  
7 Ազարեանին յանդիմանական թուղթ կը գրէ,  
7 և որպիսե՞ վերաբերութեամբ այնպիսի ծանր,  
7 խիստ, կծու խօսքեր կը զուրցէ: Գրուած գիր-  
7 քին անտարակոյս փառք ու պատիւ ստանա-  
7 լու յուսով, և այս փառքը երկու հեղինա-  
7 կին մէկ մէկու ձեռքէն յափշտակել ուղեւնին,  
7 նախանձու դատ ըլլալը այս խօսքերէն ար-  
7 քեօք յայտնի չերևնար:

7 Տէր Ազարեանը իր Մեծաւորը արդարաց-  
7 նելու համար զասոնք յայտնած է: Առաջին՝  
7 այն ձեռագիր գիրքը տպագրութենէն առաջ  
7 իրեն Նպիսկոպոսը տեսնելով, մէջէն վերցուե-  
7 լու կտորները գրծած և սրբագրած էր: Երկ-  
7 րորդ՝ Գեր. Նախագահն Մաղաքեան Տէր Պօ-  
7 ղոսին խիստ թախանձանացը համար՝ Տօն  
7 Գասպարօյին ոսկի մետայլը տուած էր: Եր-  
7 րորդ՝ Նախագահը նոյն գրքին ցրուելը ար-  
7 քիլած էր. և Ատենադպիր ըլլալուն պատճա-  
7 րաւ՝ իրեն, Տէր Ազարեանին ևս հրամայեած  
7 էր, ան գիրքերուն բոլորն ալ ժողովելով բալ-  
7 լիքը տակ պահել:

7 Արդ ևս հիմա կը հարցընեմ, մէկ գրքին

՝ մէջէն հանելու նիւթերը գրծած ու սրբա-  
՝ գրած մարդը, ան զիրքը չը՞ գիտէր արդեօք,  
՝ կամ թէ քննած չըլլա՞ր . . . . : Տէր Ազա-  
՝ րեանին Մեծաւորը զիրքին ցրուիլը կարգիլէ.  
՝ արդ՝ Ամենեկին մէկ մը զիրքին ծախուիլը և  
՝ ցրուիլը չի կրնար արգիլել, քանի որ կամ  
՝ բուն իրեն, և կամ իր իշխանութեանը ներքե  
՝ եղող մէկու մը չըլլայ . . . . : Այսչափ զը-  
՝ րածներես՝ առջի թղթոյս մէջ ամենեկին չը  
՝ սխալիլս չի՞ յայտնուիր արդեօք: Նա մանա-  
՝ ւանդ ամեն բանը բացայայտ չի զուրցելով՝ շատ  
՝ մեծ զգուշութեամբ խօսածս արդեօք չը հաս-  
՝ կըցուիր:

՝ Դարձեալ Տէր Ազարեանը զինքն արդա-  
՝ րացընելու համար ըսաւ. առաջուց իմ հինգ  
՝ վեց ընկերացս հաւանութիւնը առնելով այն-  
՝ սէս Տօն Գասպարոյին ճամբու ծախքը տուի:  
՝ Որոնք որ այս բանիս համար զիշերւան ժա-  
՝ մանակ Նախագահին դպրոցը դալով ժողովքի  
՝ նստած էին. մանաւանդ Տօն Գասպարոյին  
՝ Աւետարանի վրայ երդում տալէն վէրջը տուի,  
՝ և իրեն դտնուած վիճակին որպիսութեան  
՝ վրայ ցաւելուս համար տուի. ինչու որ յուսա-  
՝ հատութեան մէջ իյնալը կը տեսնուէր: Թէ որ

Պօլիսէն փախչելու համար պէտք եղած  
ճար ու դարմանը չէք պատրաստէր, ինքը զինքս  
կը մեռցունեմ ըսելով՝ փախ կուտար, ես ալ  
աոոր համար տուի ըսաւ Տէր Ազարեանը:

Տօն Գասարօյին դրամ տալէն առաջ  
երգում տալերնին ալ հասկըցուեցաւ, ինչու  
որ աւելի ապահով ըլլան. չըլլայ թէ դըպ-  
րոցէն ելած, չելած զիրենք մասնէ: շիմա Գուք  
այս երգման զգուշութեան ինչ կըսէք: Գիր-  
քէն դուրս եղող մարդիկներուն այսպիսի  
զգուշութեան մը կարօտութիւն պէտք էր ար-  
դեօք, և կամ այս մեծ գումարը տալու ինչ  
հարկ կար: Ինձի այս պատմութիւնները չը  
պատմելէն առաջ, այս մարդիկները ինչպիսի  
յանցաւոր ծանչցած էի, պատմածներէն վերջը՝  
աւելի քիչ յանցաւոր ըլլալուն համոզուիլս,  
ինձի աւելի պարզամտութիւն մը երևեցաւ:

Ի 4 Յուլիսի Աիրակի օր, Տէր Ազարեան,  
և Տէր Պօղոսին հետ միատեղ, մեր մէջը մէկ  
ու կէս ժամէն աւելի հանդիպած խօսակցու-  
թեանց մէջ, յառաջուց գրած թղթոյս մէջէն  
նշանախեց մը փոփոխելու, և կամ ուղղելու  
համար Ասոնց բերնէն ամենեւին մէկ հաստա-  
տուն փաստ և պատճառ մը չը լսեցի: . . . . .

նմանապէս Գարեգէթտիյին զիրքը Տօն՝ Գասարօյին յանձնելը ինքն Տէր Պօղոսը խոստովանեցաւ։ Այն զիրքը՝ որ այս երկու կրակոտ զուխները փրճնկցրնելով, զրաճներնուն վերջին աստիճան խիստ, կծու, և զկծեցուցիչ ըլլալուն հաստատ որոշողութիւն տուէր էին։

Հոս տեղն ալ Տէր Պօղոսը ինքն զինքն արդարացրնելու համար ըսաւ։ — Տօն Գասարօն զիշերնները զիրքը կը դրէր, և շուտով, զրաճութուղթերը տպագրութեան կը յուղարկէր. և առաւօտանց Տէր Պօղոսը իրէն զայլով ինչ զրեցիր հարցուցած ժամանակ, անիկայ փախուտ տալով ասանկ կը պատասխաներ. ես ալ չեմ գիտէր զրաճս իմ միտքս ալ չի մնաց՝ կրսէր—։ Հիմա Ձեզի կը հարցրնեմ Հայազգի կաթօլի Գահանայները այս զրուածքին զՏէր Պօղոսը փոխանորդ ըրած ըլլային, և այս զրուածքին պատասխանատուութիւնը յանձնառած ըլլար, Տօն Գասարօյին ինչ զրաճը Տէր Պօղոսը ինչպէս կրնար հարցրնել և կամ տպագրու թենէն առաջ ամբողջ զրուածքը իրեն ալ ցուցրնելուն անկից ինչպէս կը պահանջէր։ Միւրօն ասկից վերջը՝ երկու բին մէջ եղած տաք փիճարանութիւնը՝ թէ արդեօք զրքին հեղե-

նակութիւնը որուն աւելի պատշաճուելուն, և  
տպուած գիրքերը երեսուն երեսուն, Նախագա-  
հական դպրոցը կրելը ինքն Տէր Պօղոսը իր  
բերանով վկայելէն վերջը, կը յաւելու:

Վերջապէս խօսակցութեանց մէջ գտնուող  
այս երկու անձինք (գրքին մեծագոյն մասը  
իրենք յօրինած ըլլալէն ի զատ) ամէն բան  
այնպէս գեղեցիկ հաւանութեամբ մը ընդու-  
նեցին, որ այս ճամբով գրքին հեղինակ ըլլա-  
լուն իրենցմէ մէկ օրինակով մը ալ հաստա-  
տեցին: — Ճարտարապետ մը՝ ըսաւ Տէր ազա-  
րեանը իրեն գծած յատագիծին վրայ նոյն իսկ  
շինած տան հեղինակը չը սեպու իր արդեօք:  
Նմանապէս Տօն Գասպարօն ալ գրած գրքին  
մէկ տան ճարտարապետի մը պէս է, ուստի  
գրքին հեղինակութիւնը ալ բոլորովին իրեն  
կը վերաբերի ըսին: Ասոնք էին իրենց խօսքը,  
և այս ալ իմ տուած պատասխանս: Ան՝ որ  
հողին տէրը կըլլայ, նիւթերը՝ քարը, կիրը  
փայտը կը պատրաստէ, բան որնեքուն աւուր-  
չէք և ճարտարապետին ևս ամսրչէք կու-  
տայ, ան՝ որ միշտ արձակ համարձակ տունը  
կը մօնէ, այս կամ այն տեղը աւրել կուտայ,  
կուելցրնէ կը սրակսեցրնէ, և ճարտարապետին

դրձած յառակազիծն ալ կը փոխէ, տան բալ-  
լերը կառնէ տանը մէջ կը բընակի, կամ թէ  
իրեն հաշուին ուրիշի մը վարձու կուտայ, արդ՝  
այն մարդը նոյն աունը շինողը, կամ թէ ա-  
ւելի բացայայտ զուրցեմ նոյն ճան շեղինակը  
չէք ըսէր արդեօք: Եւ որովհետեւ ասոր պէս  
նոյն գրքին տպագրութեան նիւթերը հաւա-  
քող և պատրաստողները դուք էք, և մեզմէ  
ամենեին մէկը գրքին հեղինակը չէ ըսելով  
ուրանանիդ, և պատասխանատուութիւնը ձեր  
վրայէն ուրիշի վրայ նետելնիդ ծիծաղելու բան  
չէ արդեօք: Ապա իրացընէ այս կերպ Ձեր  
խոստովանութենէն վերջը մեծաւ հաճու-  
թեամբ նոյն իսկ ժողովուրդը մեր վրայ դա-  
տաւոր կը կարդեմ: Եւ աղեկ գիտեմ որ նոյն  
ժողովուրդը այս ժամանակ ամենուն ընդու-  
նած կարծիքը ճշմարտապէս պիտի հաստատէ,  
այսինքն այս գրքին պատասխանատուութիւնը  
Հայագգի կաթօլիկ եկեղեցականներէն պէտք է՞  
արդեօք հարցընել. չէ՞ նէ՞ ասոնք գիրքին շի-  
նութեան առջի և վերջինը եղած են: Աթէ  
գլխէ ի գլուխ զանիկայ իրենք շինած են, և  
թէ աս գործիս մէջ ճօն զասպարոյին մաս-  
նակցութիւնը՝ միայն ասոնց աղաչանքին չի



հրրնալով զիմանալ ըստ ամենայնի իրենց օգ-  
նելու խօստացած ըլլալը պիտի ճշմարտէն:

Ուստի ասկէց առաջ գրած թղթոյս մէջ  
սխալած ըլլալուս ինչ պատճառ կրնանք ու-  
նենալ: Ստուգիւ ես ալ գիտեմ Յունիս 30  
գրած թուղթս ու մէկ քանի անձինքներու  
օրինակը տուի. և ասկից ամէն մարդոց գործ-  
քին ճշմարիտ էութիւնը հասկընալը Չեզի ալ  
իրաւցընէ գժուար կուգայ. բայց ասոր պատ-  
ճառն ալ Չեզմէն չեմ ծածկեր: Տեր իմ՝ Չեզի  
գրած թուղթս կամաւ հրատարակեցի, ինչու  
որ զանիկայ հրատարակելու իրաւացի պատ-  
ճառ տուիք: Արովհետեւ իմ Չեզի գրածս չըն-  
դունեննուդ համար՝ զիս պարտաւորեցիք այս-  
պէս ընելու: Թէ որ վերոյիշեալ Տէր Ազարեան և  
Տէր Մաղաքեանին հետ եղած խօսակցութե-  
նէն վերջը գրքին հեղինակին, և կամ հեղի-  
նակաց ստորագրութեամբը մէկ յայտարա-  
րութիւնմը հանել, և այսու պատասխանա-  
տուութիւնը ուրիշին չի ձրգելով իրենց վրայ  
առնուլը խօստացած ըլլային, ան ժամանակ  
ես ալ բողբոջին կը լռէի և չէի հրատարակեր:  
Բայց ադէկ տեղեկացայ, որ զանիկայ կատա-  
րելու ամենեւին կամք չունէին: Եւ մինչև ցայսօր

յլուռ կենալէն՝ կասկածեր էի, չլլայ թէ ար-  
դեօք մէկ խարէութիւն մը ըլլայ: Եւ իրաւ-  
ցընէ՛ ինչպէս որ ետքէն պատճառն մը կայ ըսել-  
նիդ զիս յայտնապէս յերկրայութենէն ազա-  
տեց: Ահա թէ այս զուրցածիս համար, և  
թէ մէկ քանի անձինք, ինձմէն խնդրածնուն  
համար՝ զրած թղթոյս օրինակը տալու պար-  
տաւորեցայ: Եւ ասիկայ ալ ամենեկին չեմ  
ծածկէր, և փոխանակ լռելոյ՝ ըստ արդարու-  
թեան, և ըստ խոհմութեան գիտցածս և  
տեղեկացացներս ալ պիտի հրատարակեմ. որ-  
պէս զի ամմէն մարդ բոլոր եղածները իմա-  
նան, և այս ճանապարհաւ Լատին Քահա-  
նայից զլսուն բերելու գեշութիւններն, ձեր  
վրայ մնայ:

Այս հրատարակութենէն որպիսի հետե-  
ւանք ելլալն ալ ամենեկին ինձի հոգ չէ. ըստ  
որում ինչպէս որ առաջուց ձեզի ըսեր եմ.  
այս գործքը բոլորովին ձեզի կը վերաբերի: Մա-  
նաւանդ շատ յայտնի բան է, ինչպէս որ դուք  
ալ չէք կրնար ուրանալ, թէ այս գիրքը Տօն  
Գասպարօյին նէ ըսելը չափէն աւելի ծիծաղելի  
խօսք է: Բայց ձեր մարդիկները ծածկել ու-  
ղելով Ազգային իշխանութեան (Պատրիարքին)

ճեռօք ժողովրդեան ծանուցանելու համար՝  
ճակութիւննիդ եղաւ, ըսելով թէ՛ զբքին հե-  
ղինակը հարկաւ Վատին Քահանայ մի է, և  
անոր պատասխանն ալ անկէց պէտք է հար-  
ցընել: Ես չի հարցուցած և Ձեզմէ չի խընդ-  
րած, առաջուց դուք ինձի զրեցիք, թէ, մեր  
(Հայագգի Վաթօլիկ) քահանաներէն և ոչ մէկը  
զիրքին հեղինակ չըլլալը վկայեցիք: Հիմա ես  
Ձեզի կը հարցընեմ, զիրքին ըրած պաշտպա-  
նութիւննիդ, ցուցըցած ընդունելութիւննիդ,  
գրողին հարկաւոր տեսնուած կրկին օգնու-  
թիւննիդ՝ այսինքն գրելու համար ձեռագիր  
թուղթերը յանձնածնիդ, և տպագրութեան  
համար դրամ տուածնիդ ասոնց ամէնուն պա-  
տասխանը ուսկից կուզէք որ հարցուի. Վա-  
տին Եպիսկոպոսէն, կամ Վատին գղերէն ար-  
դեօք պիտի հարցուի: Հասարակութեան ձը-  
ղեմ արդեօք որ զմեզ հանցաւոր դատեն:  
Վատին գղերին զլուխ գտնուելովս, անոնց  
յարգը ու պատիւը պաշտպանելու համար՝  
ասկից ուրիշ ի՞նչ հնարք կարող էի մտածել.  
Դայց եթէ վերջապէս իմ պարտքս պիտի կա-  
տարեմ. . . :

**Մ.** Ելէրօն այս վերոյիշեալ թուղթը Պօր-

Ճօնեանին զրելէն վերջը, բոլոր զրամ թղթոց  
օրինակը ըստ խնդրոյ և ըստ թախանձանաց  
ժողովրդեան իրենց կուտայ, զորոնք Վաղղիարէն,  
Խտակրէն և Տաճկերէն տպելով հասարակու-  
թեան հրատարակեցին: Մեր ընթերցողները կը  
յորդորենք՝ որ նոյն թուղթերը ծայրէ ի ծայր  
մտադրութեամբ կարդան. ինչու որ անոնց մէջ  
շատ եւելօք միտք առնելու կարևոր գործ-  
քեր յիշատակուած են: Այլ մենք դառնանք  
դարձեալ մեր Ազգային իրողութեանց:

## 26.

1. Ազգային յանչնարարութեան ժողով: — 2. Գարշ Գեր-  
Հասունեանի ի Գաղափոյ: ժողովը, և Կրտսարութեան  
Էնդամին անսովոր էերդը: — 3. Լաթին Եղեմիոսոս Մ.  
Իլերոյին Միխիլարեան պարսաւագրքին շինուելուն վրայ  
էտրգած օրինաւոր դասաստանը:

1. Ի 17 Յունիսի երեքշաբթի օր, երբոր  
բոլոր Ազգը՝ ի Յիսուս Փրկիչ ժողոված էր, Ազ-  
գապետ Մելիքեանը երկու հոգի խաւրեց և ա-  
նոնց խնացուց, որ առանկ բազմութեամբ չը ժո-  
ղովելոյն համար Բ. Գուռը արգիլած և հրա-  
մանագիր խրկած է: Ժողովուրդը երբոր ասի-  
կայ ըսց, իսկոյն ի մեծ սենեկի ժողովոյն յանձ-

նորարական ժողով մը կազմեց քսան և չորս  
անձանցմէ բազկացեալ, և ասոնց ձեռքը յանձ-  
նեց իրամէն իրաւանց պաշտպանու թիւնը, խօս-  
տանալով Անոնց ըստ ամենայնի, և ամենայն  
կերպիւ իրենց օգնելու, որոնց անուանքն են:

1. Երամեան Անտոն Աղայ: 2 Մինապեան  
Աղայ Պէյ: 3. Մինապեան Գասպար Պէյ: 4. Սա-  
մանձեան Մկրտիչ Աղայ: 5. Ապտուլլահ Միքա-  
յէլ Էֆէնտի: 6. Երամեան Յովսէփ Աղայ: 7.  
Տալութ Յ. Յակոբ Էֆէնտի: 8. Թիւլպէնտձեան  
Կարապետ Աղայ: 9. Շաշեան Անտոն Աղայ: 10.  
Շաշեան Տօքթօր Բավլաքի: 11. Սաբայան Յա-  
րութիւն Աղայ: 12. Երկանեան Միքայէլ Աղայ:  
13. Գարադաշ Մկրտիչ Աղայ: 14. Շահին Յով-  
հաննէս Աղայ: 15. Կէօչէք Թովմա Աղայ: 16.  
Թօփքարուլու Վիժէն Աղայ: 17. Մանիէլ օղ-  
լու Յարութիւն Աղայ: 18. Էնքսէրձի Պետրոս  
Աղայ: 19. Մուսա Զէլէպի: 20. Շէրպէտեան Քէ-  
րովրէ Աղայ: 21. Տալութ Կարապետ Աղայ:  
22. Շիշմանեան Պօղոս Աղայ: 23. Միսքձի Յա-  
րութիւն Աղայ: 24. Լութֆեան Լութֆի Աղայ:  
Արդ՝ ասոնցմէ նոյն օրը չորս հօգի որոշուեցան,  
Սամանձեան Մկրտիչ, Երամեան Յովսէփ, Շա-  
շեան Անտոն և խարախաշ Մկրտիչ Աղաները,

երթալու ծանուցանելու Սէլվեան Պատրիարքին՝  
թէ Մ. Իլէրոյին թուղթը լսելու համար եօթ  
— ութ հարիւր անձինք կսպասէն: Պատրիարքը  
պատասխան տուաւ. որ երեկ Արտաքին գոր-  
ծոց Պաշտօնեայն ինձի մասնաւոր ապսպրրած  
էր Ազգային ժողով չի գումարելու, և ասոր վե-  
րարերեալ թուղթեր չի հրատարակելու: Ի վե-  
րայ այսր ամենայնի վաղը քսան անձանց չափ  
ինձի եկէք, Չեզի Մ. Իլէրոյին թուղթը կար-  
դամ ըսաւ:

Ասկէց ետև Յանձնարարական ժողովքը իր  
հաստատուն բնակութիւնը ի Ղալաթեա, Ար-  
քունական բժիշկ Շաշեան Մանիէլ Աղային տան  
մէջ հաստատեց: Ապա ըստ որոշողութեան ժո-  
ղովոյն ի 18 Յունիի չորեքշաբթի օր, քսան  
անձինք Ազգապետ Սէլվեանին ներկայացան: Իսկ  
Սէլվեանը փոխանակ Մ. Իլէրոյին թուղթը կար-  
դալու, Բ. Գռնէն բերել տուած հրամանագիրը  
իրենց ցուցուց:

Երբոր Ազգին և Պատրիարքին մէջ այս բա-  
նակցութիւնները կըլլային, մէյմ՝ ալ ինչպէս  
որ վերը պատմեցինք. ահա՛ Մ. Իլէրոյին զրած  
թէ Սէլվեանին, և թէ Պօրձօնեանին թղթերը  
Գաղղիարէն, Իտալերէն և Տաճկերէն տպուած

Հասարակութեան ձեռքը տարածուելով, զանոնքբոլոր Ազգք և ազինք կարդալով՝ շուարեցան մնացին: Իսկ մեր Ազգք ծովու պէս ալէկոծեալ՝ անհնարին շփոթութեան մէջ ինկաւ: Ուստի քանի՞նարարական ժողովը իսկոյն ի խորհուրդ նստաւ, և որոշեց՝ Գեր. Հասունեանին այս ամէն գործոցը համար ֆոխարքային աղերսագիր տալ. զորն որ ի 26 Յունիսի հինգշաբթի օր Բ. Գոան տուին, որ և այսպէս կսկսի. — Միլլէթ ածիլզանէմիզ ումուրու մէզ հէպիլյէսի և այլն. . . . . :

Ընդ այս Հասունեանք ևս ընդ Սէլվեանին ի 29 Յունիսի Կիրակի օր, Սէնի զեղ Քնկոեան Յովհաննէս Աղային տունը ժողովելով, հոն աղերսագիր մը շինուելով, ի 3 Յուլիսի Բ. Գրբան տուին, որ և ասանկ կսկսի: ՝Ապաէն ձէթ ՝Սալթանաթը Սէնիլյէյի . . . . . Վէնէտիկ ՝Մանաստրընտան նէշէթ իտէն Բէհապին մի ՝նէլքատիմ՝ Վասի իւլ մէզ հէպ օլարաք, հէր ՝նէ միւթաալայէ մէպնի իտէ, էօթէտէն պէրու ՝միլլէթի չաքիրանէմիզլէ Երմէնի միլլէթինի ՝պիրլէշտիրմէք, վէ աքայիթձէ պուլունան ՝թէպայիւն վէ իխթիլաֆաթը ուզլաշտրմաք ՝իւզրէ նասպին նէֆա էմէլ վէ էֆքեար իտիւպ ՝Երմէնի լիսանինի տախի սայիրլէրինտէն զիտտէ

« Կիւմէք ի թտասախիլյէ աքայիտէ տայիր թէյ  
« լե՛ք քէրտէլէրի օլան քիւթիւք վէ բէսախտէն  
« Երմէնի միլլէթի էֆրատի մէսհէպլէրինն քա-  
« րըշտըմասընտան, վէ միլլէթի չաքիրանէմիզ  
« հալքի Երմէնիմէզհէպլինէ եաքլաշմաղի աքլէն  
« վէ տինէն պիր վէհհիլէ քապուլ խտէմէյէճէք-  
« լերի . . . . վէ շիմտիքի բսհաթսըզլք պուն-  
« լարըն պու կիտիշլէրինտէն վէ մէն ճիհէթէյն  
« իւզլէրինտէն վէ սէօզլէրինտէն նէշէթ կլլէ-  
« տիլի միւթէվաթըրէն ճիւմլէյէ մասալիւմ վէ  
« այան օլան մէվատտի պէտէհիյյէթ իւլ Ֆէ-  
« սատլէրինտէն տիր: Հաթտա մուախսէրէն բէ-  
« հապիննի մէրքումէտէն պիր նէֆէրի՛ կէօյա  
« Թէրպլիյէթի միլլէթ վէ իրքայի նամի միլլի-  
« յէթ տավասը իլէ մուղայիրի մէզհէպ պիր քօ-  
« միթէյի (Համազգեայընկերութիւնը) աճիպէ  
« իլսթիրազ խաիւպ, պու թարիքլէ տէրունի  
« միլլէթէ պէրը էթմիշ օլտուղի թօհմը Ֆէ-  
« սատընըն մահսուլի օլմաք, վէ էքսէրիտի քէն-  
« տույի պիլմէզ ճիւհէյայի քավիմտէն պու-  
« լունմաք իւզըէ քօմիթէյի մէզքիւրէյէ բապթ  
« վէ թահրիր օլունան պիր Ֆըրքայի ճիւզղի-  
« յէնն կէշէնլէրտէ խիլաֆը ուսուլի ճէմիյէթ  
« վէ շէմաթէթիլէ բաթրիքխանէյէ կիտիւպ,



„սէպէպի էվէլի եինէ ըհհասպինի մերքումէտէն  
„օլան Նթալեանճա պիր ըհսալէտէն աօլայը ու-  
„թանաճաք վէ թէէսսիւֆ օլունաճաք նէ զա-  
„րիպ հալլէրտէ պուլունտուքլարը մալիւմ վէ  
„միւթէվաթիւր . . . ըհհասպինի մերքումէ  
„եինէ թէք աուրմայուպ զէքը օլունան քօ-  
„միթէ թազըմընը էլլէրինէ ալաթ խտէրէք  
„միլլէթիմիզին Սէր Բիսկօբօսի օլան Անթօն  
„Բահիպ պէնտէլէրի ճէնասպլէրի ալէյհինէ նիճէ  
„թէզզվիյաթ վէ միւֆիթէրիյաթ իլէ թահրիզ  
„ . . . Վէ հաթտա պու պապտէ տաքիքէ  
„Ֆէֆթ իթմէյէրէք էլլէրինտէն հէր նէ կէ-  
„լիրիսէ իճրայէ սայ վէղայրէթլէ սէմի ալի վէ  
„մէսումի վիւքէլայի սայլթանաթը սէնիյէի տօլ-  
„տուրմաք իւզըէ մանաստըրլարընտա պուլու-  
„նան տիկէր բարազլերի թարաֆընտան ըհյ-  
„տէր բէյ քինալիւլէրինէ թահրիբաթ վէ թա-  
„լիմաթ կէլմէքտէ օլտուղի թահքիք գէրտէյի  
„ապիտանէմիզ օլմուշտուր: Պունլարըն Բիսկօ-  
„բօսումուզ մումաիլէյհ հպէնտէլէրի հաքքընտա  
„պու մէրթէպէ առալէթ վէ խուսումէթլէրի-  
„նին ասըլ էսասը՝ Բիսկօբօսու մումաիլէյհ զա-  
„թէն տինտար վէ տիրայէթքէար . . . պուն-  
„լարըն խիլաֆի ուսուլի մէսէպ օլան պու կէօ՛՛

7. քաղիլ վէ ճիւղիւ լէրինէ մէյտան վէրմէյուս . .  
7. մուամայէյհին գէմանը մէմուրիյէթինտէ իծ-  
7. բայի մէրամ իտէմէյէճէքլէրինի թէյէքքիւն  
7. թիթիթիլէրինէ մէպնի օլուս, հալ պու քի  
7. պոււնլար պու հալի մէֆստէթիլէ իշիմիզտէ  
7. օլտուքճա միլլէթի պէնտէկիանէմիզտէ ֆէսաթ  
7. վէնիֆաք վէ գիլուգայլ մէնի վէ միւնքաթի  
7. օլմաք իմքեան վէ իհթիմայի օլմայաճաղի . .  
7. . . . . Աէ Բիսկօբօսու մուզ մուամայէյհին  
7. . . . քէաֆիֆէթէն էգհէր ճիհէթ հօշութ  
7. վէ բազի վէ էմին վէ մութմային . . վէ հաք-  
7. քընտա հէր նէ տէրէճէ շիքեայէթ օլուր իտէ,  
7. միլլէթճէ օլմայուր ըհհապինի մէքքումէնին  
7. թահրիք վէ իֆսաթլէրի օլարաք, միլլէթճէ  
7. օ մաքուլէ իշթիքեայլ հիշ պիթ վէհիլէ  
7. քապուլ իթմէյուս ըհտտ իտէճէյիմիզ : Աէ  
7. բաթրիքիմիզ օլան Յհաննէս Բահիպ պէնտէ-  
7. լէրինին տահի իտարէյի ումուրի ճիսմանի-  
7. յէսինտէն մինքիւլլիլ վիճուհ մէմնուն վէ միւ-  
7. թէշէքքիւր օլտուզու մուզ մայիւմիւ ևայն . . .

Արդ՝ այսպիսի զբարապից աղերսագրի մը հաւանութիւն տուող և ստորագրողներուն համար ինչ զուրցելու է: Որոնց սրտէն իրաւ-  
7. ցընէ Ասատուծոյ երկիւղն, և իրենց երեսէն ա-

Տօթը բոլորովին հեռացեր էր: Ա՛հ այս ի՞նչ  
կերպ խղճմտանք և որպիսի՞ հաւատք: Բայց  
տես դու միանգամայն անոնց անմատ թիւնն ալ,  
որ կոյր զկուրայն շարժաց հետևելով, մեծա-  
զոյն մնաստվը իրենց տունը տեղը կը քանդէն:  
Ուստի Հասունեանց այս աղերսագրին վրայ ի  
16 Յուլիս Ազգին պէտք եղաւ ուրիշ մէկ ա-  
ղերսագիր մը ալ ապա, անոնց անչուր զրպար-  
տու թիւնները հերքելու համար:

2. Երբոր այս ժամանակ Մ. Խէրոյին զրաճ  
թուղթերը քաղքիս մէջ կը տարածուէին, և  
Ազգային աղերսագիրները հեռոցհեռէ ի Բ. գուռը  
կըտրուէին. Աէլվեան. Պօրձօն և Ազարեանը  
յէնկիւրիւ քաղաք գեր. Հասունին թուղթեր  
և սուրհանդակներ կը յուղարկէին, շուտով  
դառնալ զալ, և այնպէս անակնկալ Հասին  
կայիսկոպոսին կողմանէ ծագաց չարեաց առջևը  
առնուլ: 1852 ի 15 Յուլիսի երեքշաբթի օր,  
Գեր. Հասունը շուտով ի Կ: Պօլիս հասաւ: Եւ  
Ազգային շփոթութիւնները ամենեւին բանի տեղ  
չի գրաւ, ինչու որ շատոնցունէ Ազգին բնա-  
ւորութեանը վարժած և ծանօթ էր: Եւ ոչ  
ալ ծերունի Քիւրեղեան Յովսեփ վարդապե-  
տին և այլոց խղճմտանքաւոր վարդապետաց

տուած խորհուրներնուն ահանջ կախեց, որոնք  
ազաչեցին իրեն՝ որպէս զի խռովեալ ժողովրդեան  
սիրտը շահելու համար, պարսաւագրքին վրա-  
յօք քանի մը արհամարհական խօսք զուրցէ:  
Ուստի անշիտթ և անխռով, ի 28 Յուլիսի, ուր-  
բաթ օր վաղվաղակի ամէն Քահանայներն ժո-  
ղովքի կանչեց, ուր որ Յ. Հարք Մխիթարեանք  
իրաւամբ չեկան: Այս ժողովոյն մէջ Գեր. Հա-  
սունը իր խօսքը այսպէս սկսաւ: Պնպիսկոպոսաց  
թթէմերը պըրբեկու համար Պօլիսէն ելածս  
դրէ թէ երկու ամիսի չափ եղաւ: Պիլէճիք և  
Գէօթահեա հասած ատենս, Մխիթարեանց  
դէմ ապուած գրքին համար Ազգիս մէջ պա-  
տասած խռովութեանց վրայօք թեթեկէք  
ինձի գրած էին. բայց ետքէն ըստ ամենայնի  
ամէն պարագաներովը մէկ տեղ ստոյգը խմա-  
ցածիս պէս, պարտաւորեցայ շուտով դառ-  
նալ: Հոս դալուս պէս Ազգին մէջ պատասած  
գործքերը ամենայն կերպիւ տեղեկացայ: Աւ-  
նոյն գրքին պատճառաւ պատասած լատին  
Սպիսկոպոսին թղթակցութիւններն կարգա-  
շլով, և ազարեանին և Մազարեանին հետ եղած  
խօսակցութիւնները քննելով, տեսայ՝ որ բո-  
ւորն ալ որո՞ր, ի՞նչ, և զբարբառ-լեաններ էն, ինչ-

Կէս որ ժամանակին այն ամէն ճշմարտու-  
թիւնը ամենուն պիտի յայտնուի: Երկոտա-  
սան օր է իմ հոս դալս: Գրէ թէ ամէն քա-  
հանայք բարեկեղու եկան, բայց ի Միթիթա-  
րեանցմէ ամենեկին մեկերնին չե գալով, ըսել  
կուզէն, որ իրենք զիս չեն շնայէր, ուստի ես  
ալ զանոնք բնաւ չեմ ճանչնար: Այս այս  
տպուած զիրքը իրենց ծանր եկաւ, բայց իրենք  
այս ժամանակ լուռ կենալոյ տեղ ժողովրդեան  
առջին իյնալով, Ազգը տակն ու վրայ ընենին,  
իրենց վրայ եղած ամբաստանութիւնները ա-  
ւելի կը հաստատեն և այլն . . . . : Դար-  
ձեալ ըսաւ, Հռովմայէն մեր Աթոռակալ Պօր-  
ճօնեանին յուղարկուած թուղթը Ձեզի կար-  
գացնելու հարկ կը սեպեմ. (այս թուղթը  
դրուած էր ի 21 Յուլիսի 1852-ին Բրօքա-  
կանտային Նախագահ Քարտինայէն ուր որ կսէ)  
— Տօն Գասպարօ Վուչինօ Լատին Քահանայն  
Միքիէլաբեոն Սուրբ Ղազարս, ըսուած գրքին իրեն  
հեղինակ ըլլալը մեզի յայտնելով անոր պա-  
տասխանատուութիւնը ալ յանձն առաւ, և  
հոս Հռովմ քաղաք ներկայացաւ Սուրբ Աթո-  
ռոյն վճիռը խնդրելու համար . . . — և այս-  
պէս հեղինակին դատը Սուրբ Աթոռոյն առ-

ջեւը ելած ըլլալով: Հայազգի ուղղափառներն որդիական վտահու թեամբ այն որոշմունքներուն սպասէն, զորոնք իր անաշտութեամբը պիտի վճռէ և այլն . . . :

Ապա ի 21 Յուլիսի պիտակի օր. Պօրճօնեան Աթոռակալը բոլոր Եկեղեցեաց Մեծաորներուն վերոյիշեալ թղթին օրինակը կը յուզարկէ այսպէս գրելով:

ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻԻ ՏԷՐ.

Այսօր ձայնաւոր պատարագին ժամանակ առաջի ժողովրդեան, թղթոյս մէջ պըլլուած կոնդակը առջի Աւետարանէն վերջը կարդալով, և դարձեալ ծալլելով և զմռելով ինձի յուզարկէք: Եւ անոր օրինակը մէկու մը չե տաք և չի կարդացունէք, և պատարագին մէջ կարդացուելէն առաջ ամենեին մէկու մը մի ցուցընէք. և թղթարերիս հետ հաւատարմութեամբ ևս կրնաք խորհել. զայս՝ ինչպէս Գեր. Նախագահը հրամայեց, ձեզի ալ ծանուցանելով կը մնան:

Ն. Մ. Յ. Վ. Պօրճօնեան Պ. Ն:

Այս եղանակ անկատուն, և դողունի հրատարակութիւնը աւելի պատճառ կղաւ մեծամեծ

դայլ թակղութեանց և խռովութեանց Հայազգի  
Կաթօրէկաց: Ասան այսորիկ իրաւամբ չէին կր-  
նար հաւատալ թէ այն թուղթը Հռովմայէն  
եկած ըլլայ: Եւ որովհետեւ Սրբազեղցիք մէկ  
ճամբով մը թէ Պօրճօնեանին, և թէ Գեր. Հա-  
սունեանին գրած թղթոց օրինակը ձեռք ձը-  
գեր էին. ուստի նոյն օրը Ազգային ժողովոյն  
մէջ կարդացուելով, յանուն Ազգին ասոր դէմ  
բողոք մը տակնով հրատարակեցին, որ կակսի:

Ամենուն յայանի է՝ որ միայն Ս. Պապին  
հողմանէ եկած հրամանագիրերուն համար,  
Հռովմայէն եկած կոնդակ ըսելը պատշաճ է:  
Եւ այսպիսի կոնդակներուն օրինակն ալ ու-  
րդոյններուն ալ, մանաւանդ կարդացուելէն  
վերջը Եկեղեցեաց դռները կախելը կանոնա-  
ւոր և վայելուչ սովորութիւն մի է, ինչու  
որ Եկեղեցւոյն պատուէրը և հրամանը ա-  
մենեկն մէկ ժամանակ գաղտնի չըլլար և այլն:

Այս բողոքին վրայ Գեր. Հասունեանը պար-  
տաւորեցաւ յառաջիկայ կիրակի օր, ի 2 Օգոս-  
տոսի գարձեալ նոյն Քարախնային թուղթը  
սաճկերէնի թարգմանելով Եկեղեցեաց մէջ  
կարդացնելէն վերջը, օրինակներն Եկեղեցինե-  
րուն դռներն ալ կախել. զորանք ժողովուրդը

կարդալով, տեսաւ՝ որ անցեալ կիրակի օր կարգացուածին յար և նման չէ. մէջը աւելցուցած, և կամ սակաս խօսքեր կան: Ուստի սկսաւ իրաւամբ երկրայիլ, թէ աս թուղթը չուովմէն եկած չի պիտի ըլլայ. այլ իրենց կողմէն շինծու մէկ բան մի է: Ուստի 15 Օգոստոսի 1852 յանուն Ազգին այս երկրորդ անգամ կարգացուած Նախագահական թղթոյն դէմ երկրորդ բողոքմալ տպուած հրատարակեցաւ, որ կսկսի: Դեր. Հասունեանին կողմանէ ի 27 Յուլիսի, Կիրակի օր Նկեղեցեաց մէջ կարգացուած կոնդակը, մէկը չի տեսնէ, մէկը չը կարգաց, և օրինակը մէկումը չի տրուի, և Նկեղեցեաց դռները չի կախուի. և ժողովրդեան կարդալէն վերջը ապահով մարդիկներով զանոնք շուտով Աթուաղային դարձնելու համար Նկեղեցեաց Մեծաւորներուն սաստիկ հրամայուած ըլլալուն համար, իրաւամբ ժողովուրդը երկբայելով, ասոր դէմ յանուն բովանդակ Ազգին ի 28 Յուլիսի, բողոք մը հրատարակած էր:

Ասոր վրայ վերոյիշեալ թղթոյն թարգմանութեանը մէջ վեր ի վայր, մէկ բանի յաւելուած, և փոփոխութիւններ ընելով, և ի 3 Օգոստոսի Աիրակի օր դարձեալ Նկեղեցի-



ներուն մէջ կարդացրնել տալով և այլն . . . :

Այսչափ զդուշութեան և երկիւղի կոն-  
դակին օրինակը մէկու մը ձեռք չի յնալուն՝ դըլ-  
խաւոր պատճառներէն մէկն ալ այս էր՝ որ վե-  
րոյիշեալ Եկեղեցականաց ժողովոյն մէջ Ղատին  
Նպիսկոպոս Մ. Խէրօյին դրած թուղթերը ինչ-  
չափ սուս, սխալ, և զբոլորս-Լիւննէրէն, բերնով  
զուրցած էր. հոս նոյնը (թէպէտև գոցէն) իր  
ստորագրութեամբ հաստատեր էր, ըսելով «Վեր  
դ՛ջապէս աս ալ ձեզի ծանուցանելու կը պար-  
տաւորինք, որ այս ետքի ատեններըս թէ խօս-  
քով, և թէ գրով մեր անձին և Աթոռոյն  
վրայօք վերոյիշեալ գրքին առիթովը հրատա-  
րակուած կերպ, կերպ ամբաստանութիւններն  
ու մեղադրութիւններն ճշմարտութեան դէմ  
ու անիրաւ զրպարտութիւններին, ինչպէս որ  
ժամանակին պիտի յայանուի» :

3. Ղատին Արքեպիսկոպոս Մ. Խէրօն զա-  
տնք լըսելուն պէս, ըսպ օրինաց այս դատը տես-  
նելու համար յերևելի Ղատին Եկեղեցականնե-  
րէն եօթն հոգւով բաղկացեալ ի 7 Օգոստոսի  
ժողովք մը զումարեց, հաստատուն պատճա-  
ռօք ցուցրնելու համար, որ Միխայիլի պար-  
տաւորքին հեղինակը Ղատին Քահանայն Տօն

Գասպարօն չէ, այլ մէկ քանի Հայազգի կաթօ-  
լիկ Քահանայներ: Անդամք ժողովոյն (12 դա).

Ա. Վ. Հ. Դիսնէսիոս տ. ԱՖրակօլա, Ֆրան-  
չիսկանաց Առաքելական Առաջնորդը:

Բ. Վ. Հ. Լուիճի կրէկորի, փոխանորդ առաջ-  
նորդին Ֆրանչիսկանաց:

Գ. Վ. ձէրարատ տա Պօրկօ, Ֆրանչիսկան,  
նախկին առաջնորդ Կ. Պօլսոյ:

Դ. Տամիանօ, Տավիա Տաճճիօ, նախկին ա-  
ռաջնորդ Վրաստանու, և Գրապզօնի:

Ե. Տօն Նիքօլա Բէրբիսեանի Քահանայ, Մե-  
ծաւոր Սրբոյ Երբորդութեան Եկեղեցւոյն:

Զ. Տօն Զէլէօթինօ Իլարօ Քահանայ:

Է. Տօն Քառլօ Քէսթա:

Այս գատաւորաց առջև զրուեցան, նախ՝  
Մաշաքեան Տէր Պօղոսին ստորագրութեամբ Տօն  
Գասպարօյին զրաճ վեց թուղթերը, որոնք որ  
անոր սենեկին միջ զըսնուեցան (15 դա): Երկ-  
րորդ՝ Լատինացւոց Հողւոյն Սրբոյ Եկեղեցւոյն  
ժողովրդապետ Տօն ձխարօժօ Պարօցցի Քահա-  
նային վկայութիւնները (25 դա): Երրորդ՝ ձիօր-  
ճիօ Քէրչիչին վկայութիւնները (34 դա): Զո-  
րորդ՝ Ֆրանչիսկօ Քօրէլօյին վկայութիւնը  
(36 դա): Հինգերորդ՝ Տէմէթրիուս Մանկուա-

նին վկայու թիւնը (36 դա): Այս ամէն վկայ-  
ները իրենց բերնով վկայածնին երգմամբ և  
ստորագրութեամբ կը հաստատեն: Եւ այն ամէն  
վերը պատմածնիս մէկիկ մէկիկ կը ճշմար-  
տեն: Ասոնց մէջ ամենէն զուարճալին Տէր  
Մաղաքեանին գրած թուղթերը են. որոնց  
մէջ Տէր Յօլասը Տէր աղաբեանին հետ նե-  
տուելով, երկայն բարակ ալճկարայի հաշիւ-  
ներուն մէջ կրնկղմին: Տէր Յօլասեանը ձե-  
ռագիր պարսաւազրքին ամեն մէկ տողին գի-  
րերը համրելով, տողերը մէկ երես թղթոյն  
վրայ բազմապատկելով, և յետոյ երեսները ու-  
թածայլ տպած թէրթի վերածելով, Տէր Աղա-  
բեանին հակառակ շատ պակաս գտնելով. և  
Քահ քահը բերնէն արձրկելով ծիծաղը չէր կր-  
նար փռնել (16. դա). . . . .: Մեր ընթեր-  
ցողներուն կաղաչեմ, որ Մ. Նէրոյին այս ըրած  
դատաստանական քննութիւնը զոնէ մէկ ան-  
գամ կարդան. ինչու որ շատ միտք առնելու  
բաներ կան, զորոնք մենք համառօտութեան  
պատճառաւ հոս ակզս գրելու զանց ըրինք:

Արդ որ Մ. Նէրոյին այս երգմամբ ըրած դա-  
տաստանական քննութիւնը տպագրու թեամբ  
ալ հասարակութեան հրատարակեցաւ, որոնց-

մով Գեր. Հասունեանին ծածուկ լարած որո-  
գայթները առուջի աշխարհի յայտնուեցան. այն  
ժամանակ ժողովրդեան խղճին շփոթութիւն-  
ները, և ծագած գայթակղութիւնները չեմ  
կրնար հոս զիրով կատարեալ պատմել: Ուստի  
շատերը իրենց սովորական երեկոյեան հասա-  
րակ աղօթից մէջ՝ սայ յետագայ նշանաւոր  
աղօթքը, լիւսնիւն, աւելցուցին ըստ այսմ:

Տէր ողորմեաց

Աբարիչդ Աստուած:

Տէր ողորմեաց

Ո՛ր Աստուած գթած,

Հայեաց ի բարձանց

Ինայեան ի մեղ Տէր:

Ի ձեռաց թշնամեաց

• Սուրբ Երրորդութիւն մի Աստուած

Ազատեան զմեզ Տէր:

Եւ դու կոյս Տիրածին

Բարեխօսեան վասն մեր:

Ի յարմատէ սերնդեան Հասունի.

Ազատեան զմեզ Տէր:

Յազգակործան իշխանութենէ նորա . . Ազատ.

Ի Նախագահութենէ նորա . . . . Ազատ.

Ի Յամառութենէ նորա . . . . Ազատ.

Ի Թշնամու թեանէ նորա . . . . .	Ազատեա՛ զՄեզ Տէր
Ի Վնասակար որոգայթից նորա . . . . .	Ազատ.
Ի չար նախանձէ նորա . . . . .	Ազատ.
Երգգատեցու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի չարախօսու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի բարկու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի յափշտակու թեանց նորա . . . . .	Ազատ.
Ի զըպարտու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի նենգու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի մատնու թեանէ նորա . . . . .	Ազատ.
Ի զաւակցու թեանէ արբանեկաց նորա.	Ազատ.
. . . . .	Ազատ.
. . . . .	Ազատ.
Վասն թշուառու թեան Ազգիս մերոյ	Ինայեա՛ մեզ Տէր.
Վասն անմեղ զաւակաց և մանկուոյս	Ինայեա՛
Վասն բարեպաշտ Տնողացս . . . . .	Ինայեա՛
Վասն անկարող Հեղգու թեան մերոյ	Ինայեա՛
Վասն ողբալի վիճակի Ազգիս . . . . .	Ինայեա՛
Զի դու ես Սուրբ միայն . . . . .	Անսա՛ մեզ Տէր
Զի դու ես բարեգութ . . . . .	Անսա՛
Զի դու ես քաւիչ յանցանաց . . . . .	Ողորմեաց մեզ Տէր

Զի դու ես պատժող անօրինաց . . Ակնարկեա՛  
ն՞ Տէր


Օրհնեալ Սուրբ Անուն քո  
Փառաւորեալ զօրութիւն քո  
Յախտեանս յախտենից Ամէն:

**Ե**ւ այսպէս չէ թէ միայն հասարակ ժողովուրդը, այլ և Եկեղեցականք ալ սկան իրենց Եպիսկոպոսին վրայ գայթակղէ: Շատերը իրենց խղճին անհանգստութենէն բռնադատուած. Սուրբ Պատարագին մէջ Հասունեանին անունը յիշած ժամանակնին, իրենց դիտաւորութիւնը կը դնէին յիշելով Առաջին Նախագահ լուսահոգի Նուրիճան Տէր Անտոն Արքեպիսկոպոսը: Ուստի անոնցմէ մէկ քանի անձինք՝ Քիւրեղեան Յովսեփ վարդապետ, Կիւղեղեան Յովհաննէս վարդապետ. Աղաւթբախեան Տիմոթէոս վարդապետ, Հարաձեան Տէր Անտոն և այլն և այլն, 1852. ի 10 Յուլիսի Հռովմայ գիր գրեցին, որուն մէջ մի առ մի բացայայտ ծանուցին իրենց Եպիսկոպոսին բռնած ասանկ օտար ճամբաներով մեծ գայթակղութիւններ ծագիլը. — Աստուծոյ փառքը անարգիլը. — Եկեղեցւոյն մեծագոյն փնաս հասնիլը. — հաւատացելոց խղճմտանս:ց սաստի՛ տանջուիլը. — ասոնցմէ առաջ եկած Ազգին կերպ

կերպ թշուառութիւնները. — Գեր. Հասունեանին անձնասիրութիւնը, ինքնահաւանութիւնը, և փառասիրութիւնը. — Աստուածային հոգի, ճշմարիտ հովուական գութ և խնամք իր վրան ամենեւին չի տեսնուիր. — վերջապէս՝ Արքեպիսկոպոսի մը վայել ընթացք բնաւ, երբէք չունենալը և այլն և այլն . . . :

Այս թուղթը երբոր Հռովմ հասաւ. Հասունեանք ամենայն հոգւով աշխատեցան, նախ՝ առաջի Բրօքականայի ժողովոյն նոյն թուղթը ստորագրողներուն յարգը և պատիւը անարգ ցուցնել, և պատասխան չի գրել: Երկրորդ՝ ջանացին, վախ և երկիւղ տալ անոնց, որպէս զի յետս կոչում ընէն և այլն . . . : Միայն Հալաձեան Տէր Անտոնը վատանալով յետս կոչում ընելուն համար Արդու ինոյ Եպիսկոպոսութեան արժանացաւ:

Իսկ անոնք որ յետս կոչում չըրին մինչև ցայսօր յանարգ, և անպատիւ վիճակի մէջ մնացին:



## 27.

1. Սէլվէիեանին Աղգադէտ Պատրիարքութեանէն ինտըլը,  
— 2 Վատն ընտրութեան Պատրիարքին Աղգային ժողովը  
ի Տէրութեանէն արգելութիւնը. — 3 Մեջ քանի ժողովքներ  
առաջի Արքային գործոց Պաշտօնէն. — 4 Առաջելու  
էն քանիչ բարեկ Կառուի. և Մ. Իշխոյնն և Գեր.  
Հաստանեանին Հասովայէն իշխութիւնը:

1. Աղղը յայանի տեսնելով Գեր. Հասունեա-  
նին այս ամէն կերպ գաղանի հնարքները, և  
յայանի Սէլվեանին ամենայն կերպիւ Անոր թե  
և թիկունք կենայը, ապա Պատրիարքին յիշխա-  
նու թենէն փոփոխութեան համար ի 7 Օգոս-  
տոսի հինգշարթի օր, Բ. Գրան աղերսագիր  
տուաւ. որ կսկսի. — Մալեանալը ունիւնի ուրիշ  
իւլ հայն . . . : Այս աղերսագիրը Տէրու-  
թեան Բարձրագոյն Ատեանը ելլալով, Պատ-  
րիարքին իշխանութենէն ինայը պատշաճ տես-  
նուեցաւ, ուստի թագաւորին հրաման, ԻՐԱՏԷՆ,  
Սեպտեմբերին առջի օրը Բ. Գուռը եկաւ: Նոյն  
օրը Հասունեանք ևս փոխարքայ Աալի Բաշային  
աղերսագիր տուին: Այլ Բ. Գուռը կսպասէր  
որ Սէլվեանը իր պատիւը պահելով: Ինքն իրմէ



իր հրաժարականը տայ: Այլ Հասունեանք Սէլ-  
վեանին միշտ խորհուրդ և սիրտ կուտային հաս-  
տատուն կալ, և իր հրաժարականը բնաւ չի  
տալ: Իսկ իրենք՝ ի 4 Սեպտեմբերի հինգշաբթի  
օր, Նալը Քէօշկը դարձեալ աղերսագիր տունին  
փոխարքային: Որ և զալով Բ. Գուռը, պաշտօ-  
նեայ մը խրկեց, իմացընելով Սէլվեանին Թա-  
գաւորին հրամանը յիշխանութենէն ընկած ըլ-  
լալուն համար: Իսկ Սէլվեանը հնազանդելով  
Արքունի հրամանին Պոյաձի Պօղոսին տունը  
զնաց. Գեր. Հասունին պէս իրեն հետը տանե-  
լով չէ թէ միայն Պատրիարքարանիս վերաբե-  
րեալ՝ թէ նոր, թէ հին, թէ Բ. Գունէն, և թէ  
գրսի քաղաքներէն բոլոր Ազգիս թղթերը, այլ  
և արծաթեղենները և ուրիշ կահ կարասի-  
ները Պատրիարքարանին մէկ տեղ առաւ տարաւ:

2. Իսկ փոխարքայն Աալի Բաշայն, ի 6 Սեպ-  
տեմբերի, շարաթ օր. երկուտասանները իրեն  
կանչելով, անոնց հրամայեց շուտով նոր Պատ-  
րիարքին ընտրութեանը համար ժողով զու-  
մարին: Եւ այս ժամանակ Արտաքին գործոց  
Պաշտօնայն էր Բ. Ֆուատ Էֆէնտին (որ և այժմ  
Միւշեր Բաշայ). որոյ գրամափոխ, Սարաֆն էր  
Թընկուեան Յովհաննէս Էֆէնտին:

1852. ի Տ Սեպտեմբերի, երկուշաբթի օր, յառուր Մենդեան Արքայ Կուսին, երկոտասանքն ի Պատրիարքարանի ժողովեցան. միայն թընկըս Յովհաննէս Եֆէնտին չեկաւ, որուն Ալլահփերտի Աբրահամ Ամիրայն մասնաւորապէս իր ծառայն և իր նաւակը անոր յուղարկելով, հրաւիրեց զանիկայ զալ ժողովքին: Քայց անիկայ իր մարմնոյն տկարութիւնը առաջ բերելով, իր տեղը փոխանորդ յերկոտասանից զԵրլճեան վիճէն Ազայն կը կարգէր:

Ապա երկոտասանները նստան ի խորհուրդ. և երբոր Պատրիարք ընտրուելու անձանց վրայ խօսք բացուեցաւ, ան ատնն Բ. Միհրան Պէյ Տիւզ յայտնեց, որ վէնէտկոյ Յարգ. Հարք Մխիթարեանք այս անգամ միայն Ազգապետ Պատրիարքութեան պաշտամանէն հրաժարած են: Իսկ Հասունեանք երբոր իրենց Քահանայները կանուանելին, և նմանապէս Ազգայինք իրենցը յառաջ կը մատուցանելին, ասոր վրայ երկու կողմէն շատ մը վիճարանելէն վերջը առաւելութեամբ ձայնից այս բանը հաստատուեցաւ. — որ այս անգամ իրարու հակառակ կողմեր: Թէ Աշխարհիկ զղերը. և Թէ Վիենտկոյ Մխի-

Թարեանները մէկ դի Թողլով՝ \* միայն Անտոնեան Ուխտէն ըլլայ ըսին: Եւ այս կարծիքին յերկոտասանից ու թանձինք միաբանեցան, ուստի այս որոշողութիւնն ալ հաստատեցաւ ըստ օրինաց: Խնդրեցին ապա զցանկս Անտոնեանց, որք ի Կ. Պօլիս կը բնակէին, որոնցմէ չորս անձանց վրայ միաբանեցան, այսինքն, 2. Վրդանես Վարդապետ Իւզիւքձեան. 2. Եղիա Վարդապետ Նահապետեան. 2. Պօղոս Վարդապետ Պօյնուէյրիեան. 2. Նիկողայոս Վարդապետ Կակոնեան: Հասունեանք այս չորս անձինքներէն միայն Կակոնեանին վրայ վտտահ էին: Այս ժողովոյն մէջ երկու կողմէն ի դրի առնուեցան ընդհանուր ժողովոյն հրաւիրելու անձինքները, որոնք որ անպատճառ ի 11 ՝ Սեպտեմբերի, հինգշաբթի օր այն վերոյիշեալ ընտրուած չորս Վարդապետաց վրայ վիճակ պիտի ձրգէին: Եւ որոշեցին՝ որ հրաւիրանաց Թուղթերն ալ երկոտասանից զմռով զմռուի: Եւ ի 9 Սեպտեմբերի, Բ. Դունէն Պատրիարքարանը

---

\* Որովհետեւ Հասունեանք ամբատանած էին Վէննայի Մխիթարեանց համար Աւստրիոյ Տէրութեան հպատակ ըլլալնին:

Տրամանագիր մը եկաւ որոյ օրինակը այսպէս գրուած էր: Պատժօլը բաթրիքխանէսինտէ իշ ղու փէնճշէմպիհ կիւնիւ Ֆէրմանը ապի ղրաէթ օլաճաղընտան միլլէթի մէրգումէ միւթէպէրան վէ Բուէսասի պուլունան զէվաթըն հէվմի մէղքիւրտէ սաաթ պէշ բատտէլէրինաէ ղրաթրիքխանէտէ հաղըր վէ մէվճուտ պուլունամպէրի քէնտիւլերինէ իխպար վէ իլան ղուլունամք ի ղըէ իշ պու միւզէքքէրէ թահ ղրիք վէ իրսալ գըլընտի: 1268.—զելհիճճէ 6:

Երբոր հրաւիրեալքն ի 11 Սեպտեմբերի ի Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյն մէջ կը ժողովէին, ահա՛ յանկարծ յԱրտաքին գործոց Պաշտօնեայ Բ. Ֆուատ Էֆէնտիյէն ընդհանուր ժողովքին գործողութենէն դադարելու համար հրամանագիր մը եկաւ: Արովհետեւ Հասունեանք ամենեւին չէին հաճեալ ի վերայ որոշողութեան Երկոտասանից, վասն զի միշտ կը պընդէին, թէ իրենց կողմանէ առաջարկուած անձանց վրայ ալ քուէարկութիւն ըլլայ:

3. Ի 16 Սեպտեմբերի երեքշաբթի օր, Արտաքին գործոց Բ. Պաշտօնեայն երկու կողմէն տասն անձինք հրաւիրեց.

1. Միհրան Պէյ Տիւղ: 2. Աբրահամ Ամի-

րայ ԱլլահՎերախի: 3. Յարութիւն Էֆէնախ Կէօ-  
չէքեան: 4. Գասար Պէյ Սինապեան: 5. Մուսա  
Զէլէպի Հասունեան: — 1. Թընկըռ Յովհաննէս  
Էֆէնախ, 2. Քույումճեան Յովհաննէս Աղայ.  
3. Քըլճեան Ալիջէն Աղայ. 4. Մըսըլեան Պէտ-  
րոս Աղայ. 5. Տէօրլէթեան Ֆէյրաս Աղայ:

Բ. Պաշտօնեայն սկսաւ բանիւք բաղձօք եր-  
կու կողմերը համոզել, սիրով և խաղաղու-  
թեամբ մէկզմէկու հետ միանալով, նորէն ընտ-  
րութեան նստիլ և այլն: Երբոր Բ. Յուստ Էֆէն-  
ախն խօսքը լըմնցուց, ԱլլահՎերախ Աբրահամ  
Ամիրայն Երկոտասանից ժողովոյն որոշողութիւնը  
և հաստատութիւնը Անոր պատմելէն վերջը,  
կը դառնայ Թընկըռեանին, խտաւ զանիկայ կը  
յանդիմանէ, դուն խռովիչ ես՝ կսէ: Քեզի իմ  
ծառայս և նաւակս յուղարկեցի մեր ժողովքին  
գալու: Բայց դուն մարմնոյդ տէարութիւնը  
պատճառելով դուրս մնացիր, որպէս զի մեր  
ժողովոյն հաստատութիւնները յետոյ ցրուեա-  
ստոր համար իրաւամբ խռովարար ես. դար-  
ձեալ կըսեմ՝ թէ խռովիչ ես: Իսկ Թընկըռեա-  
նին բողոքելու ժամանակ՝ թէ՛ այս ըսածդ չեմ  
ընդունիր, ան առեն ԱլլահՎերախ Աբրահամ  
Ամիրան պտտասխան տուաւ ու ըսաւ, մինչև

Թագաւորին առջևն ալ իմ խօսքս հաստատաւ  
լու պատրաստ եմ: Եւ ետքը Գլձեանին դառ-  
նալով կըսէ, ո՞չ ապաքէն Անոր կողմէն այն  
Թուղթը դուք ստորագրեցիք, հիմայ ի՞նչ բանի  
համար այսչափ շուտով կը փոփոխիք, զՁեզ  
ո՞վ բռնադատեց և այլն . . : Եւ ապա Բ. պաշ-  
տօնէին դառնալովը՝ կըսէ.— Տէր իմ, ես ի 8  
Սեպտեմբերի, Երկոտասանից ժողովոյն հաստա-  
տած որոշողութիւնները ստորագրելով ընդու-  
նեք եմ, իմ անձիս պատուոյն համար բնաւ չեմ  
կրնար երբէք ոչնչացունել և այլն . . : Ասիկա  
ըսելով կը մեկնի անկից, նոյնպէս ուրիշներն ալ:

Ի 26 Սեպտեմբերի, ուրբաթ օր, Բ. Առ-  
տաքին գործոց Պաշտօնեայն՝ բաց ի Ալլահ-  
վերտիէ և ի Թընկըռէ դարձեալ երկու կողմէն  
Երկոտասան անձինք կանչեց, որոնք էին.

1. Տիւղ Միհրան Պէյ: 2. Կէօչէք Յա-  
րութիւն Էֆէնտի: 3. Սինապեան Գասպար Պէյ:  
4. Սամանձեան Մկրտիչ Աղայ: 5. Տավութ Բ.  
Յահոր Էֆէնտի: 6. Հասունեան Մուսա Չէլէպի:

1. Գլձեան Վիժէն Աղայ, 2. Քոյուժձեան  
Յովհաննէս Աղայ, 3. Մըսրլեան Պէտրոս Աղայ,  
4. Կիւզելեան Յարութիւն Աղայ, 5. Տէօլիէ-

Թեան Յէյրատ Աղայ: 6. Պօեաճըեան Պօղոս  
Աղայ:

Բ. Պաշտօնեայն դարձեալ սկսաւ երկու  
կողմերը խաղաղութեան յորդորել, և մէկ ճամօ  
բովմբ այս հակառակութեան վերջ տալ: Բ.  
Տիւղ Միհրան Պէյն պատասխան տուաւ ու  
ըսաւ, «այն Տէր իմ մեր իղձ, ու փափաքն ալ  
բոլորովին այս է: Մէկ մարդումբ հակառա-  
կութենէն Ազգային գործողութիւնները այս  
թշուառ աստիճան եկին հասին, որ սրտեր-  
նուս մեծ ցաւ կը պատճառէ: Բայց որովհետեւ  
ասոնք երկոտասանից Ազգային Ժողովոյն հաս-  
տատութիւնը կուզէն ոչնչացնել: Եւ նորէն  
ընտրելոց կարգը աշխարհիկ Քահանայիցմէ ալ  
մտոցընել: Բայց մենք ուրիշ մէկ ճամբայ մը  
ցուցունենք, որով հոս, այսօր Հեր Բարձրու-  
թեանը առջին յուզուած վէճը դիւրու-  
թեամբ կը լուծուի: Այսինքն, կամ անոնք աշ-  
խարհիկ Քահանայից ցանկը մեզի ցուցընէն,  
կամ մենք Մխիթարեանց ցանկը իրենց տանք:  
Եւ այսպէս երկու կողմը սր անձը ընտրելու  
ըլլանէ, անիկայ ըլլայ մեր գլուխ և Պատ-  
րիարքը և այլն»: Հասունեանք այս առաջար-  
կութեան ամենեկին չը հաճեցան: Իսկ երբոր

այս բանիս վրայ վիճարանու թիւնները կըլլար, ահա՛ Բ. Պաշտօնեայն Արքայէն կանչուելով, ժողովը ցրուեցաւ: Եւ որովհետեւ այս օրերը մեծամեծ և ծանր Տէրութեան իրողութիւնք մէկ մէկու ետև յաջորդեցին, և վասն այսորիկ Տէրութեան գլխաւոր Առաջին Պաշտօնատեարց փոփոխութիւններ եղան, ուստի Ազգապետ Պատրիարքին ընտրութիւնը քիչ մը ժամանակ ալ մնաց:

4. Իսկ Լատին Արքեպիսկոպոս, Առաքելական վիքար Մ. Իլէրոյին գրած թուղթերը, և անաչառ ըրած դատաստանական Բննութիւնը տպագրելով երբոր բոլոր Եւրոպա տարածուեցաւ, մեծամեծ շփոթութեանց և դայթակղութեանց պատճառ եղև: Ուստի Պիոս Թ. Ս. Բահանայապետն ուղելով եղածներուն վրայ ստոյգ տեղեկութիւն մը առնէ, Բատրէ Կաւտէն՝ Տօմինիկեան կրօնաւորը Կ. Պօլիս Բննիչ յուղարկեց:

Յամեսեանն Օգոստոսի 1852, Առաքելական Բննիչը ի Կ. Պօլիս կը հասնի, և ի Ղալաթիա, Սուրբ Պետրոս Տօմինիկեանց վանքը կը բնակի: Եւ երբոր այս Առաքելական Բննիչին ինչ բանի համար դալը խնայուեցաւ Ազգիս երկու կող-



մէն ալ սկսան անոր երթալ: Հասունեանք ուրիշ բան չէին ըսէր, բայց եթէ.— Ասոնք (այսինքն Ազգայինք) զմեզ դարձեալ հէրէտիկոս պիտի ընէն, մենք ասոնց հետ չենք միանար, և զեր. Հասունէն ալ չենք բաժնուիր և այլն. . . . : — Իսկ Ազգայինք ըսին թէ՛—Մենք զեր. Հասունին վրայ բոլորովին գայթակղած ենք վասն զի մեր ամեն Ազգայէն օրէնքները և իրաւունքները ոտքի տակ առաւ: Եկեղեցիները յափշտակեց. աղքատաց սնտուկը, և Ազգին հիւանդանոցը մէկ կերպով իր ձեռքը անցընելու կաշխատի: Ազգօգուտ միարանու թիւնները կործանելու կը ջանայ: Ազգիս արարողութիւնները երբեմն ջնջելով, երբեմն փոխելով զմեզ լատինացնելու կը ձգնի: Եւ այսչափ տարիներէ ետեւ Ազգիս մէջ հակառակութեան, թշնամութեան որոմները ցանկուն պատճառաւ, ասկէ վերջը զանիկայ մեր Հոգևոր Գլուխը չենք ընդունիր և այլն . . . . . :

Իսկ այս Առաքելական Քննիչը գրէ թէ տասն և հինգ օրի չափ կենայէն վերջը՝ ի հոովմ կը դառնայ և Պիոս Թ. ին, իր Քննչութեան զրուածը կընծայէ:

Ասոր վրայ երկու Արքեպիսկոպոսներն Հոով-

Այլը կը կանչուին, զեր, Հասուններն ի 13  
վերջակեցելիքի, և Մ. Եկրոն ի 25 Հոկտեմբերի,  
Ճակարայ Եկրո, Կեղծան Հոսիտ քաղաք: Մեր  
Մային կոչմանէ Մ. Եկրոյին երկու թուղի  
արուկցան, ձկնը՝ Հարհակալութեան էր, որ  
ճշտարտութեան ճասարգով Կեղացով՝ Կամին գր-  
չելին վայելն կեղտ անունը պարզեցիք, և գաղտնի  
գործուած պրոպագանդայի յայտնելով ծուռ միա-  
բնայր Հասկեցիք և այլն . . . : Արկորդ՝ թըղ-  
թով աղերս և աղաչանք բերէին, որպէս զի  
յսաննի Հոսիմայ ըստ ամիսայնի ճշմարտաբ  
պատմել, և սղորմելի Ազգին վիճակը յայտնել,  
մեր կոչմանէ Մ. Քահանայապետին աղաչել,  
պթալ Քաղ մեր, և ազատել զմեզ յիշխա-  
նութենէ զեր, Հասունի: Ե. Մ. Եկրոյին եր-  
թայլն ութ սր կաքը, Ազգը Վրոս Թ. ին աղեր-  
սապիրմեալ յուզարկեց, որ կեկոխի. — Չեր բարձ-  
րութիւնը և խնամբը և այլն . . . . :

# 28.

1. Կակեւեան Է. Արհաւիրտ Պարգաւանտէն Արհաւիրտ  
 Պարտիարք ընտրութիւնը: — 2 Կարգ Կեդ. Հաստեղատէն  
 է Հաստեղատ: Ասոր կանայր Արհաւիրտ Բարսեղ և որս  
 քանած խառնութիւններն: — 3 Կեդ. Հաստեղատէն սա  
 բորքիսով յաղթանակ կատարեց:

1. Փոխարքայ և զինաց Թագաւորին Յէ՛հ-  
 մէա Ապլե Բաշայն ի 1 Նոյեմբերի շարաթ օր  
 Ազգիս երևելիներէն մէկ քանի հասար իրեն կան  
 ճելով սաստիկ հանդիմանեց. երկու ամիս ա  
 սանց Պարտիարքի մարտուն համար, և հրա  
 մայեց շուտով Պարտիարքին ընտրութեանը  
 համար Ազգը ի ժողով կանչեն և այլն . . . . :

Ըստ այսմ հրամանի ի 7 Նոյեմբերի, ուր  
 բաթ օր, դարձեալ մեծամէծքն ժողովքի նըս  
 տեցան, ուր Ալլահալերաի Աբրահամ Ամիրայն  
 հոն չէր, և Բ. Միհրան Պէյն ալ յԱբքայէն  
 կանչուած էր, վասն այսր այս ժողովքին մէջ  
 նախագահ ինքն թընկրուեանն էր: Եւ գեր. Հա  
 սունեանը Հասովմ չի գացած յայտնած էր իրենց  
 իր միտքը. այսինքն Ազգին այն առջի հաստա  
 ստութիւնը ոչնչացունելով, յաշխարհիկ քահա-

նայիցմէ ալ ընտրելոց թուոյն մէջ մըտցնել: Իսկ թէ որ ասիկա անհնար ըլլայ, ջանալ՝ որ ընտրուած այն չորս Անտոնեաններէն զոնէ վահոնեանը ընտրուի: Ըստ այսմ հրահանգի թընկըռեանը ընտրելոց կարգէն զՀայր Եղիա Նահապետեանը հանելով, անոր տեղը դրաւ Պիլէծիկի առաջնորդ Գաղատացի Թիլքիեան Պետրոս Վարդապետը: Եւ Իւզիւքձեանին տեղը (Տես թիւ 27) նոյն միաբանութենէն զՀայր Գանիէլը դրին: Այս փոփոխութեան վրայ Եաղըքձեան Պետրոս Էֆէնտին տհաճելով՝ ըսաւ «դուքէն օտար մարդ մէջ մի՛ մտցունէք, այս անգամ Անտոնեաններէն ըլլայ, ապա թէ ոչ ժողովրդեան մէջ շատ մեծ շփոթութիւն կը պատճառի Լայն», բայց ասոր խորհուրդը ընդունելի չեղաւ: Ապա որոշեցին որ անպատճառ առաջիկայ չորեքշաբթի օր ի 12 Նոյեմբերի Ազգային ընդհանուր ժողովը ըլլայ. վասն այսորիկ 120 անձինք յընդհանուր ժողով հրաւիրեցան:

Երբոր այո ժողովքին որոշողութիւններն լուեցաւ. Ազգը յոյժ յոյժ խռովեցաւ: Սամանձեան Մկրտիչ Աղայն ընդ Սինապեան Աղայ Պէյլին Բ. Արտաքին գործոց Պաշտօնէին հետ,

մէկ երկու անգամ ի պաշտպանութիւն Ազգային իրաւանց, և առաջին հաստատութեան երկոտասանից ժողովոյն համար շատ մը ատեն խօսեցան, բայց ի զուր. վասն զի Բ. Պաշտօնեայն ի վերջոյ պատասխան տուաւ, թէ թէպէտ իրաւունքը ձեր կողմն է, այլ ի վերայ այսր ամենայնի այս անգամ Թիլքիեան Պետրոս Քահանայն՝ հարկաւ այն չորից ընտրելոց թիւը պիտի մանէ: Երբոր այս վերջնական պատասխանը Բ. Պաշտօնէին բերնէն լսեցին, իսկոյն եկան յանձնարարական ժողով, Շաշեան Մանիէլ Աղային տունը, և պատմեցին. ուր որ որոշուեցաւ վաղուան օր առ կայսրն բողոքել: Այս գիշեր աղերսագիրը գրուեաւ, և գիշերանց հրաւիրանաց թուղթերը ամեն թաղ ժողովրդեան ցրուեցան, որպէս զի վաղիւ ընդ ցամաք կայսեր Ջրաղան Պալատին առջև գան, ժողովին:

Ի 11 Նոյեմբերի, երեքշաբթի օր, ամեն ժողովուրդ յեկեղեցին աղօթքի կենալէն, և առատ ողորմութիւն բաշխելէն վերջը, գունդագունդ գիմեցին, և առաջին Պալատան կարգաւ ի վեց կարգս շարուեցան կեցան իբր հազար անձինք, բոլորն ալ պատուաւոր Քաղաքացիք, որոնց մէջ տեղը էր Սամանձեան Մըկը-

աիչ Աղայն, որ իր ձեռքը բարձր բռնած էր  
աղերսագիրը: Թագաւորը անձամբ եկաւ ի պաշտ-  
գամբ, և Պալատականներէն մէկը գալով առաւ  
աղերսագիրը, և մէկ քառորդ անցնելէն վերջը  
առաջին Պալատականներէն մէկը, եկաւ ու ըսաւ  
«խաղաղութեամբ գացէք, Թագաւորին կենացը  
համար աղօթք ըրէք, ձեր խնդիրքը կատա-  
րեալ պիտի կատարուի»: Ապա ժողովուրդը  
մէկ բերան օրհնելով զԲարերար Արքայն, և  
Անոր պատուական և անգիւտ կենացը համար  
զընդերկայն և երջանիկ օրեր Աստուծոյ խնդ-  
րելով, երեք անգամ բարձրաձայն իրենց բա-  
րեմաղթութիւնները ԱՄԷՆ իւ վերջացուցին, և  
մեծ ուրախութեամբ իրնց տեղը դարձան: Իսկ  
այս աղերսագրին մէջ ուրիշ բան գրուած չէր:  
Բայց եթէ անտիոփոխ մնայ Երկոտասանից ժո-  
ղովոյն առաջին հաստատութիւնը: Եւ գրուէն  
օտար մարդ չի մանէ. և թէ այս անգամ միայն  
չորս Անտոնեանց վրայ Ազգովին քուէարկութիւն  
ըլլայ և այլն . . . . :

Ապա ի 22 Նոյեմբերի չորեքշաբթի օր,  
հրաւիրեալքն ի 7 ամսոյն՝ ինչպէս որ վերը  
պատմեցինք, ի Յիսուս Փրկիչ Երեւոփոխանից  
մեծ սենեակը եկան ժողովեցան, Եւ Բ. Գրան

կողմանէ Բ. Սայիտ Էֆէնտին \* նախ Խրըճեան  
Վիջէն Աղային տունը եկաւ իջաւ, որ Եկեղեց-  
ւոյն մօտ էր. ուր Թընկրուեան Յովհաննէս Աղայն  
մէկ ժամու չափ առանձին խօսակից ըլլալէն  
վերջը, Պաշտօնեայն անոնց հետ մէկտեղ ժո-  
ղովքին ինջաւ: Եւ ամեն մարդ իրենց տեղը  
կարգաւ նստեցան: Նոյնպէս ընտրեալ երեք Ազ-  
գային Երեսօխտանք առաջի Պաշտօնեային նըս-  
տեցան, որոնք էին, Սամանձեան Մկրտիչ Աղայն,  
Սինապեան Աղայ Պէյ և Քիւլպէնտձեան Կա-  
րապետ Աղայ: Բ. Սայիտ Էֆէնտին նախ ի լուր  
ամենեցուն Մեծի Դրան Հրամանադիրը կարդաց,  
որ կը հրամայէր ժողովոյն, իրենց վաղեմի նո-  
վորութեան, իրաւանց և կանոնաց համեմատ  
իրենց ազատութեամբ Պատրիարք մը ընտրեն:  
Այս հրամանագրին վրայ երբոր Ազգայինք կու-  
րախանային, Պաշտօնեայն յաւել ըսելով ՝ բայց  
չիմ տիրոջս (Արաաքին գործոց Պաշտօնէին)  
չիսկական, բուն ձայնիւ եղած հրամանն ալ

---

\* Այս այն Սայիտ Էֆէնտին է, որ երբեմն թէ  
վասն հաստատութեան Երկօտասանից ժողովոյն, և  
թէ վասն Համազգեաց ընկերութեան համար Դրան  
կողմանէ Ազգային ժողովոյն եկած էր: Տես թիւ 16:

այս է, որ այսօր Պատրիարքութեան համար  
ընտրուած չորս անձանց վրայ, այսինքն Պո-  
տուրեան շ. Դանիէլ, Կակոնեան շ. Նիկողա-  
յոս, Պոյնուէյրիեան շ. Պօղոս և Թիլքիեան  
Տէր Պետրոսին վրայ չէ թէ ընդհանուր քուէար-  
կութիւն պիտի ըլլայ. հասցա ասոնց վրայ վի-  
ճակ (բիւսանքօ) պիտի ձգուի, ուր առջի ան-  
գամ ելլելու ըլլայ, անիկայ պիտի ըլլայ Ձեզ  
Պատրիարքը:

Ամենքը այսպիսի անլուր և անակնկալ հրա-  
մանին վրայ ապշեցան մնացին: Իբր երեք ժամ  
երեսփոխանք աշխատեցան փաստերով, և պատ-  
ճառարանութեամբ համոզել զՊաշտօնեայն,  
որպէս զի Ազգային իրաւունքը, սովորութիւնը  
և իր ազատութիւնը ոտքի տակ չառնել: Եւ  
վասն այսր շատ մը ողորական խօսքերով աղա-  
չեցին, պաղատեցին: Բայց ասոնք ամենքը պա-  
րապ. բուժ և յանօգուտ եղան: Ինչու որ Սախ  
Էֆէնտին միշտ նոյն խօսքը կը կրկնէր, և  
երեքնէր թէ իմ տիրոջս հրամանը այս է, և  
Պատրիարքին ընտրութեան կերպն ալ այսպէս  
տիտի ըլլայ:

Ապա տեսնելով, որ Պաշտօնեայն իր խօս-  
քին վրայ հաստատ և անփոփոխ է, երեքին



Արեւափոխանքն ոտք ելան և ըսին յորովհետեւ  
՝ ասանկ ապօրինաւոր Պատրիարքի ընտրութեան  
՝ համար յերեկ Բարերար Տէր մեր Արքային  
՝ աղերսագիր տուինք, ուրեմն կերթանք պա-  
՝ տասխանը ընդունելու ՝ ըսին և ամենքն դուրս  
ելան: Եւ Հասունեանց կողմանէ հաղիւ քսան  
և հինգ անձինք մնացին հոն: Պաշտօնեայն  
շուարելով թընկրուեանին երեսը նայեցած ժա-  
մանակ, ահա՛ Տիւզ Միհրան Պէյն ալ թագա-  
ւորէն կանչուեցաւ: Ուստի թընկրուեանը տես-  
նելով՝ որ բոլոր պատասխանատուութիւնը իր  
վրայ պիտի իյնայ, Միհրան Պէյին շատ մը ա-  
ղաչեց քիչ մ' ալ նստիլ, և շուտով այս գոր-  
ծին վերջ տալ: Եւ սկսաւ ասանկ զուրցել:

՝ Տէարք իմ, որովհետեւ վասն թիւքիեանին  
՝ այսչափ ընդդիմութիւն եղև, ասրա միայն չ-  
՝ նիկողայոսին, և չ. Պեղոսին վրայ վիճակ նե-  
տուի, առաջինը ո՞վ սր ելլալու ըլլայ, անիկայ մեր  
՝ Պատրիարքն ըլլայ ՝: Ապա շուտով կարա-  
պետ Արթին Տափութ Էֆէնտին երկուքին ա-  
նունը առանձին, առանձին տաճկերէն գրով  
գրեց, և զանոնք ձրգեցին վիճակընկեցութեան  
տիոյն մէջ, կանչեցին պատանի մը, որ այն եր-  
կու թուղթէն մէկը առնելով Սայիտ Էֆէն-

տիյին ձեռքը յանձնեց, որ և Ասկոնեանին ա-  
նուներ կարգացած ժամանակ՝ Հասունեանք սրբ-  
տերնուն ուրախութենէն ծափ զծափի հարին.  
կրակին թէ Տավութեանը այն երկու կտոր թրդ-  
թին վրայ ալ մի և նոյն Ասկոնեանին անունը  
տաճկերէն գրած էր:

Սայտո Աֆէնտին տեսնելով առաջիկայից քիչ-  
ւորութիւնը, և սեղեկանալով թէ բազմութիւնը  
Շաշեան Մանուէլ Աղային տունը են. ժողով-  
քին զալու համար երկու անգամ պատուաւոր  
անձինքներ յուղարկեց: Աերջապէս յանձնարա-  
րական ժողովոյն քսան և չորսերը միայն եկան,  
որոնց պաշտօնեայն ըսաւ, ահաւասիկ խնդիրք  
Ձեր կատարեցան, Թիլքիեանն մերժեցաւ, Ասկո-  
նեանն Պատրիարք ընտրուեցաւ: Յայնժամ Շա-  
շեան Անտոն Աղայն բերանը բանալով կրսէ «Տէր  
«թէ որ ասանկ պիտի ըլլար, ինչո՞ւ համար  
«երեք ժամ զմեզ աշխատցուցիք, արիւն քրտ-  
«նեցուցիք, անհնարին է՞ զուրցեցիք, խմ տիրոջս  
«հրամանը չեմ կրնար այլայլել, և փոփոխել,  
«հասկա հիմա ի՞նչպէս կատարեցիք և այլն . . . :

Ապա ի սէր և ի խաղաղութիւն Ազգիս  
ստորագրեալ ամենեցուն զՄազպատայն զայն,  
ցՊաշտօնայն յանձնեցին: Եւ ի 16 Նոյեմբերի

Աիրակի օր Ասկանեան շ. Ափեղայոս Աարդապետ Պատրիարքական իշխանու թիւնը ըստ օրինաց Բ. Դոնէն ընդունեց. և նոյն օրը ըստ նոր կարգադրու թեան գնաց Քաղաւորին ոտքը համբուրելու:

Ազգայինք և Հասունեանք նորընտիր Պատրիարքին վրայ ի հեռուստ կը դիտէին: Բայց Հասունեանք աւելի իրենց կողմը ըլլալուն ապահով էին. այլ քիչ մը ետքը սկսան երկրայիլ, երբոր աւսան՝ թէ իրեն Պատրիարքական փոխանորդ Ա. Է. քիլը՝ Նահապետեան շ. Եղիա Աարդապետը ընտրեց, այր մտացի և արդարակորով, որուն քաղաքագէտ հանձարը, անսղիւտ ընթացքը, և տաւքինի վարքը իրեն նախանձոտներէն անդամ դուրուած էր, որ և կամայ և ակամայ ի խնդիր և յաղաչանս Պատրիարքին նոյն փոխանորդութեան պաշտօնը յանձն առաւ:

Ասոնց առաջին դործքը և ջանքը ան եղաւ, որ նախ՝ շատ աղաչանքով և պաղատանքով երկոտասանից ժողովոյն Անդամները մէկ մէկուհետ հետ հաշտեցնելով ժողովքի հրաւիրեցին: Եւ Գեր. Հասունեանին Պատրիարքութեան օրէն, մինչև Սէլվեանին իշխանութենէ ընկած օրը

Երկու միլիօն ու կէս զուռուշի դիպուած ծանր պարտքը ժամ մը առաջ հասուցանելուն ճարը հոգացին. ասոր համար յանձնարարական ժողով մը դրին ի հինգ հոգիէ բաղկացեալ. որոնք էին, Սամանձեան Մկրտիչ Աղայն, Կիւզէլ Յարութիւն Աղայն, Սինապեան Աղա Պէյ, Ապտուլլահ Միքայէլ Եֆէնտին, և Թիւրքէնաձեան Կարապետ Աղայն: Այս յանձնարարական ժողովքը իրաւունէ զիշեր ցորեկ աշխատեցաւ և այն ծանր պարտքէն զԱզգը ազտակց: Եւ Պատրիարքարանին ծախքը ըստ կարի ամփոփելով տարեկան տուրքը հարիւր քսան հազար զուռուշի գլուխ կապեց, և այս տուրքը իրաքանչիւր ան հասանձանց վրայ ըստ չափու կարողութեան իւրեանց ամենուն բաժնեց, ընդ որ ամենքնին մեծապէս հաճեցան:

Երկրորդ՝ Գատաստանարանին սենեակը բացուեցաւ, և ըստ օրինաց Գատաւորները ընտրուեցան:

Երրորդ՝ Ամեն Ազգային Եկեղեցեաց համար Եկեղեցւոյան իշխաններ ընտրուեցան, և ինչպիսի կամուարք, ծախք և պարտք ունին, ամենքը գրի առնուեցան:

Չորրորդ՝ որովհետև Սելիկանին օրը աղ-

քատները բոլորովին անխնամ երեսի վրայ մը-  
նացեր էին, նմանապես Հիւանդանոցն ալ վեր-  
ջին ողորմելի թշուառ վիճակի հասած էր (անս  
թիւ 19), Ազգապետ Պատրիարքը անձամբ ա-  
նոնց այցելու թեան երթալով, և անոնց ողբալի  
վիճակը տեսնելով, առջի Նշխաններուն աղա-  
չեց և պաղատեց վասն սիրոյն Ասաուծոյ և Ազ-  
գիս, իրենց առջի պաշտօնը դարձեալ յանձն  
առնուն, խօստանալով իրենց ըստ կարի օգ-  
նելու, և խնդրած օգնիչնին իրենց տալու: Բայց  
ասոնք ինչչափ առաջ բերին, իրենց տասը, քսան  
և երեսուն տարուան ձրի ծառայութեանց փո-  
խարէն թէ գեր. Հատունեանէն, և թէ Սէլ-  
վեանէն անսած հախառակութիւն, կրած զըր-  
կանք, թշնամութիւն և անարդանքնին, ի վե-  
րայ արբ ամենայնի Ազգապետ Պատրիարքին թա-  
խանձանոցը չը կրնալով դիմանալ նոյն պաշ-  
տօնը դարձեալ յանձն առին, առաջին Նշխան-  
ներէն վեց հոգի, որոնց վեց անձինք ալ օգ-  
նիչ արուեստան, այսինքն Առաջարու Մ. Անտոն,  
Սազանան - Յարութիւն, Խորասանձը Յովսէփ,  
Ղազարուս Պողոս, Թօփթաշը Յովհաննէս և աղ-  
ջեկեան գեորգ Աղաներ: Իսկ նորէն էին Պէասն  
Պէյ, Սինատեան Աղա պէյ, Թօփուզ Պեարուս,

Մի բմէլեան Յովսէփ, Միսճի Յարու թիւն և Աղա-  
մեան Յակոբ Ազաները:

Հինգերորդ՝ յանձնարարական ժողովքմնալ  
դրուեցաւ որպէս զի, Ազգին թէ առջի, և թէ  
կաքի շինուած կանոնները քննեն որ և ընդ-  
հանուր ժողովով հաստատուին:

Երրորդ այս ազգօդուտ կարգադրու թիւն-  
ները կը կատարուէին, ի՞նչ ըսեմ, և կամ ի՞նչ  
բանի նմանցրեմք Ազգիս հիմնկուան վիճակը:  
Ինչպէս մէկ մեծ փոթորիկներէն վերջը՝ երկ-  
նից երեսը կը պարզի, անուշ անուշ զովացու-  
ցիչ հոգիերը փրչելու կսկսին: Կամ մէկ սաս-  
տիկ այլեկոծու թենէն վերջը, ծովուն վրայ պրզ-  
տիկ, պզտիկ սիրուն այլքներ զանցաւորները  
ծիծաղերես բարեկու կըլլան: Եւ կամ բիւ-  
րաւոր մարդիկ ժանտախտէն գետնին հաւա-  
սար ըլլայէն վերջը, կենդանի մնացածները հոգի  
առնուլով, գէմքերնին ուրախ զուարթ, իրար  
զիրար բարեկէն, և անդադար Աստուծոյ գո-  
հութիւն տալէն բնաւ չեն դադրիր: Այս ըստ  
այսմ օրինակի զբէ թէ բոլոր Ազգը կակոնեա-  
նին Պատրիարքութեան հասաց ժամանակ այս  
կերպ ուրախալի զգացմունքներ զգաց: Եւ իրաւ-  
յընէ կարծես, որ Ազգին վրայէն հակառակու-

Թեան թանձր մշուշը խակոյն բարասեցաւ, սրայ-  
ծառ աչքով ճանչցան, թէ մէկ մէկու հետ  
կրուուողները մէկ հօր և մէկ մօր որդիք, և  
իրարու հարազատ եղբարք են: Ուստի եղբայ-  
րական սէրը դարձեալ նորոգեցաւ, և այն հա-  
կառակու թենէն, թշնամու թենէն առաջ եկած  
անչափ, անթիւ և անհամար փնասները մէկիկ,  
մէկիկ յիշելով, և Ազգիս թշուառու թեան վրայ  
արցունքներ թափելով: Իրարու հաշտու թեան  
ձեռք տուին: Ստոյգ այսպիսի զգացմունքներ  
կզգային՝ երբոր Գեր. Հասունեանը Մայրաքա-  
ղաքէս հեռանալով Հոով քաղաքը դացած էր.  
և հասարակ ժողովրդեան մէջ անանկ ձայնմ՝ ալ  
կը լսուէր, իբր թէ Անիկայ ասկէ ետև իր Աթոռը  
դառնայիք չունի:

**Ա. փոստ.** հազիւ Ազգը երկու և երեք ամիս  
քիչ մը հանդարտու թեան և հանգստու թեան  
երես տեսած էր, ահա խաղաղու թեան թշնա-  
մին, և նախանձու բանծարկուն դարձեալ զԱզգը  
խոռովելու կսկսի, դարձեալ հակառակու թեան  
որոմները ցանելու կը ծղնի: Առաքելեան Տէր  
Յովսեփ, Կրապղանու շարօտի Եպիսկոպոսը, որ  
և Նախագահական սեղապահը, ի 10 փետրե-  
վարի մէկ քանի Եկեղեցականներով մասնաւոր

Ժողովակ մը կը կարգէ, և հոն կը հրաւիրէ զԱզգապետ Պատրիարքը, իրեն փոխանորդ Էնզիայ Աարգապետին հետ մէկտեղ ուր կ'իկսին մէկ բերան Ազգապետին դէմ խիզախել ծանր և կծու բանիւք ստոնց վրայ յարձակել, դառն խօսքերով կըշտամբել, և գոռողութեամբ սպառնալ, բռնով . — Եթէ դուք ընդդէմ Ակեղեցաշէն օրինաց կը գործէք, մեր իրաւունքը կը յափշտակէք: Ակեղեցեաց ելից և մտից վերատեսչութիւնը աշխարհականաց ձեռքը կը յանձնէք: Նմանապես Ապիսկոսոսին հսկողութեանը միայն սեպհականաժ ըլլալով, Ազգառօանոցին և հիւանդանոցին վերաանչուութիւնն ալ դարձեալ աշխարհականաց կը թողուր: Յոլորովին մեր հոգևորական իշխանութեան վերաբերած կտակաց հաստատութիւնը, զայն դուք ձեր արտաքին իշխանութեան սեպհականելու կը ջանար:

Չեր ձեռքը գտնուած Պատրիարքական Պէտաթին գօրութիւնը, և իշխանութիւնը՝ բոլորովին մեր հոգևորական իշխանութեան սեպհական ըլլալով, ըստ այսմ դուք մեր ակնարկութեան և հրամանաց պէտք է որ հետզանցիկ ևայն . . . և այլ այսպիսի հը



սլարտ, և ամբարտաւանական խօսքեր անպատկառ Անոնց երեսին զուրցեցին: Ազգապետը յանկարծակի այսպիսի անակնուկներ և անիրաւ կշտարանքներէն սիրտը թող ելլալով, հոն տեղ իր վրայ մարմնիլ կուգայ, և հազիւ իր տունը հասնելով յանկողին կիյնայ: Իսկ իրեն փոխանորդ Նահապետեանը զօրաւոր բանիք և պատճառօք անոնց պատասխան տալով ցուցուց և հարտատեց, ըստ ամենայնի օրինաւոր ըլլալը Ազգին այս խնդիրքները՝

«Ազգը՝ ըստ, քսան տարի է ի վեր երկու  
«Հանդուցեալ Նախագահ Արքեպիսկոպոսայ, և  
«Ազգապետայ ժամանակ այսպիսի օրէնքներով  
«կառավարուած է: Եւ օրովհետեւ նոյն ինքն  
«Ազգը շինած է այս եկեղեցիները, Գաբոցները,  
«Ազքատանոցը և հիւանդանոցը, և քանի որ  
«անոնց տէրը ինքն է, ապա ուրիմն բացէք եկե-  
«ղեցական օրէնքները և կարդացէք իրաւունք  
«Տէրութեան» սահմանը սրչափ ըլլալը: Նմա-  
«նապէս կտակաց համարալ նոյնը կըսեմ, այս-  
«ինքն երկու Նախագահայ ժամանակ անոր  
«հաստատութեան կերպը, և բաց աստի ընդ  
«ամենայն աշխարհ, բոլոր Ազգաց կտակաց  
«հաստատութիւնը սր Աշխատութեան սեպհա-

— կանաց ըլլալը ձեզի յայտնի է և այլն . . . :  
— Իսկ եթէ դուք զմեզ կատարէք, հարկաւ ըստ  
— կամաց ձերոց Ազգին հետ ըստ այնմ մենք  
— վարուինք, այս պաշտամանէն կը հրաժարինք.  
— մեր տեղը ուրիշ մը գայ, որ թերևս ձեր կամքը  
— կատարէ: Ապա թէ ոչ առ վաղիւ Երկոտասան-  
— նից ժողովքը եկէք, և զանոնք համոզեցէք,  
— որպէս զի այս վերոյիշեալ խնդիրները Ազգիս  
— իրաւանց և իշխանութեանց սեպհահանաց են  
— ըսելէն դադրին . . . . . :

Ասոր վրայ գարձեալ վեճէրը սաստկացան:  
Երկոտասանից ժողովքը Վասին Ղզերին իւ-  
րաքանչիւր Միաբանութենէն սա վերոյիշեալ  
խնդրոց վրայօք իրենց կարծիքը ուզեց ըսել: Եւ  
որովհետեւ այս խնդրոց վրայօք Ազգը ի Հռոմմ  
յուզարկած աղերսադրաց մէջն ալ մտնուած  
բապէս ծանուցած էր, վասն այսորիկ անհամ-  
բերութեամբ անոնց պատարխանը ընդունելու  
սպասած ժամանակ, ահա:

2. Յանկարծակի, և անակնկալ ի 24 Վե-  
տրովարի 1853 Երեքշաբթի օր Ղեր, Հասունը  
ընդ Վասին եպիսկոպոս Մ. Մէրոյին հետ մեկ-  
տեղ ի Ա. Պօլիս կը հասնին. և շիտակ իրենց  
եպիսկոպոսարաննին կերթան: Եւ 1853 ի 4 — և

10 Վետրվարի, վերին իշխանութիւնը տեսած, քննած, հաւանած, և Հռոմ քաղաքը արտփած երկու Արքեպիսկոպոսաց իրենց կղերին և ժողովրդեան ուղղուած յայտարարութիւնները իրենց հասած օրերնին քաղաքիս մէջ հրատարակուեցան : Գեր. Հասունը իր համառօտ յայտարարութեան մէջ ուրիշ բան չըսեր, բայց և թէ՛ (յերես 10) ՝ ՍԻՒԼ՝Ն՝Ն՝Ն՝ Ս՝ՐԷ Ղ՝Ն՝Ն՝Ն՝ շրտուած գրքին հրատարակմանը ասեն երկու ՝ իշխանութեանց մէջ դժբաղդարար հանդիպած ՝ տարբերութիւնը ինչպիսի մեզ արտմեցուցած ՝ ըլլալը ծանօթ է ձեզի : Եւ ըստ հաճութեան ՝ Ս. Քահանայապետին Գեր. Աղեքեանդր Պառնայօ Տարածման հաւատոյ տուրք ժողովոյն ՝ Ատենանդպրին առջևը Գեր. Մ. Իլէրօ Առաքելական փոխանորդին հետ բանակցութիւններ ունեցանք. ու մենք այսօրվան օրս միութարութեամբ ձեզի կը ծանուցանենք, որ այս բանակցութեանց մէջ բերուած բացատրութիւնները, ու արամախօսութիւնները խելամուտ քննութեամբ ամեն բանի ճշմարտութիւնը յայտնեցին, որպէս վերոյիշեալ Առաքելական Փոխանորդն ալ իր շրջաբերական թղթովը նոյնը կիսմայնէ . . . . . :

7 Նոյն բանակցութեանց մէջ յիշեալ զբքին  
 7 շարագրութեանը ու հեռուարայ պատասխա-  
 7 նատուութեանը վերաբերեալ բացատրութիւն-  
 7 ներն ալ զանց չեղան. այսինքն թէ մենք Մը-  
 7 խիթարեանց Մէմօրիային չափուոր պատաս-  
 7 խան մը տալու դիտարութեան զխտակցու-  
 7 թիւն ունէինք . . . . և առաջին զրուածքին  
 7 անդը նոր ու մեզի բողոքովն անձանօթ ու  
 7 առաջինէն տարբեր շարագրութիւն մը հեղի-  
 7 նակը փոխադրած ըլլալով, որնոր հիմակուան  
 7 հրատարակածը է . . . . : Վերոյիշեալ բա-  
 7 նակցութեանց մէջ այս մեր առած մեկնու-  
 7 թիւնով ու բացատրութիւնով այս բանիս վը-  
 7 րայօք ծագած դժվարութիւններուն լուծումը  
 7 տեսնելու մխիթարութիւնը ունեցանք: Աստի  
 7 բուն իրաց վիճակը բացատրելու համար ձեզի  
 7 իմացընելու կարեօր սեպած աս ամէն բանե-  
 7 րէս հարկաւորապէս կը հեռեի՝ թէ ո՛վ որ  
 7 տակաւին մեզ նոյն զբքին հեղինակ սեպել  
 7 ուզէ և այլն և այլն . . . 7:

Գանք հիմա Առաքելական Վիքար Մ. Լվե-  
 րօյին յայտարարութեան: 7 ՄԵՐ՝ Վերոյիշեալ Մը-  
 7 խիթարեան գրքին պատասխանատուութիւնը, ինչէ նոյն  
 7 Արքեպիսկոպոսը, ինչ ի՞նչ վրայէն, և ինչ կ. Եօլոյ

« Լատին և ղերին Վրացին վերջնեւր ըրած Ընդ ա  
« Ծիֆո պարշաճ եւ վայելուչ Բուն Տը ըլլալուն ամենե-  
« ներ Թէ՛ն շինքնար ուրախաւ:

« **Քայց** այս կերպ մեզի արդարացրնելուն եւ  
« զանակը և. Պօլիս խիստ հոչակուած ըլլալով  
« և մեկզմեկու դրուած թղթերը մեկ քանի ան-  
« ճանց ցուցրնելով, որոնք որ ան թուղթերէն  
« իրենց օգուտ հաննէն ի զատ, անխորհրդա-  
« րար բոլոր հասարակութեան հրատարակուե-  
« լուն հետեւ թիւնն ալ գուշակելը զի ընկ  
« և յայանի բան մի էր: Աւստի այս ձամբով  
« ինքըզինքնիս արդարացրնելը, վերոյիշեալ շո-  
« զեոր իշխանութիւնը խելքի յարմար մտա-  
« ծութիւն մը չէ դատած . . . . :

« **Տոյն** վերոյիշեալ իշխանութիւնը դար-  
« ձեալ այս զուրցած խօսքս, այսինքն՝ Բրտե-  
« կանասյն Թէ՛ քանի պաշտօնեայնէրը նախապաշարեալ եւ  
« նախաբեղան ի իողմն Գեթ. Հաստանի, որ անոնց առ-  
« ջըն ի ընէր: Եւ այսչէնքը ընդ դէ՛ճ Կրօնա-որոց ճանաչանդ  
« ընդ դէ՛ճ Միսիլաբեանց իր հարցած առաջարկու-  
« թիւնը ի գործ դնելու: Ուստի ի ընէաբեի, սը նոյն  
« պաշտօնեայնէրն ալ ինչապէս Թէ՛ իկար Տօն Գուպա-  
« րօյնն վրայ Բոլոր պարասխանաբարութիւնը յըփելու:

այս \* ըսած խօսքս: Իրեն ամէն բանը կա-  
տարեալ իմաստու թեամբ տեսնելոյն, և իրեն  
վերատեսչու թեան մէջ գտնուած պաշտօնա-  
տեարց ամենեւին մէկու մը կողմնակցութիւն չը-  
նելուն հակառակ իբր անարգանք մը հասկը-  
ուած ըլլալով, և այն վերոյիշեալ պարբե-  
րու թեան բառերուն քաշկըռտելով արուած  
մեկնու թիւններէն ինչչափ միտքս և կամքս  
հետեւ ըլլալը ծանուցի . . . . .

Պատասխան տալու գործքերուս մէկն ալ  
Հայազգի Աթոլիկաց Գեր. Նախագահին կող-  
մանէ իմ անձիս վրայ ըրած ամբաստանու-  
թեանց համար ըլլալը յայտնի է: Արդ մե-  
ջերնիս ամենեւին վէճ և հակառակութեան  
հետքը չը ձգելու համար, Բրօքականապիւն  
Գեր. Ատենագպիրը (Մ. Պառնասո) մեզի հաշ-  
տակէմն ճամբան առաջարկեց: Ինչպէս որ Արը-  
բաղան Զօրերնուս ալ ևս ընդունել տուած  
էր: Ուստի ինչպէս որ վերը զուրցեցի, վասն

---

\* Մ. Երեւոյն պարսաւազրթին դատաստանական  
քննութեանը համար կարգած դատաւորաց առջին  
իրեն զուրցած ստանարանութեան վերջերը, տես յե-  
րեւ 10 դատ. գործոց:

« սիրոյ խտրադու թեան, ճշմարտութեան և ար-  
« դարութեան կը յաւելում սա հեռեկայները:

« Առաջին՝ ամենևին մէկ ժամանակ մտքէս  
« անցած չէ որ մէկ կողման միայն թե և թի-  
« կունք տամ: Եւ թէ որ Հայազգի Կաթօլի-  
« կաց մէկ կողմը՝ իմ անձիս պաշտպանութեանը  
« համար գրածներս պատճառ առնելով, Գեր.  
« Հասունին հակառակեր, և անոնցմէ օգնու-  
« թիւն գտած են. այնպիսիները դիտցած ըլլան՝  
« որ իմ յայտնած միտքիս հակառակը գործած  
« կըլլան: Իմին ընկիւքս, երկու կողման բարիք,  
« և ամենուն օգտակար ըլլալ է, հարկաւ որ  
« եղած ժամանակ աղեկ խրատել և յորդորել  
« միայն է:

« Աւստի այսպէս զխնայով Ձեր, ասիկա  
« հարկաւ որ տեսած ժամանակնիդ ամենուն  
« յայտնեցէք: Այսինքն, թէ ինձի համար իրենց  
« կողմը եմ, ըսողները, և թէ իրենց հակա-  
« դակ՝ Նախագահին Իշխանութիւնը ջնջելու  
« կասկածողները ամենևին իրաւունք մը չունին:  
« Երկու կողմն ալ զիս յանցեալսն, և այժմ,  
« միշտ միաբանութեան կողմն, և խաղաղու-  
« թեան քարոզիչ պիտի զանեն: Ահաւասիկ  
« այս յայտարարութենէս վերջը, Հայազգի Կա-

— Թօլիկաց Հոգևոր զլուխը այս նիս Թիս վրայօք  
— քրած բողոքները յեսս կոչում քրածին պէս.  
— 4. Պօլիս ևս մէկ կարգ անվայել և զրպարտա-  
— կան վիճարանու Թեանց անհետ ըլլալուն ալ  
— կը բաղձամ :

— Երկրորդ՝ ապագրուած Թղթոց մէջ, վե-  
— րոյիշեալ զբքին շինուելուն համար իբնն ալ  
— վերաբերու Թիւն ունենալը չընդունելով Ղեր.  
— Նախագահը բողոքած է. յայանի խոսովանե-  
— լով՝ Թէ Սիւնի-Երեւն զբքին միայն առաջին  
— գրուածքը ահսած է: Ինչպէս որ Հայազգի կա-  
— Թօլիկ Ազգին ամենէն երևելի Ազնուաւոհմ  
— գերգաստանի մը համար նոյն զբքին մէջ զր-  
— ուած զրպարտալից բամբասանքը զգ. ելոյն հա-  
— մար իբնն աշխատած ըլլալն ալ չընդունելով  
բողոքովին սուտ և սխալ է ըսելով կը մերժէ:  
— Մեղէ հոճեալ ընդհանած ասան՝ Զէ՛ Բարձր Իշխա-  
— նաւէն (Հառվճայու Ս. Երեւն) մը առջին Նախադ-  
— անն այս խօսքը իմն պարտած վէճն յետո՛ւ շեղու- Բո-  
— սունն է :

Երրորդ՝ Ղեր. Նախագահին վրայ կասկա-  
— ծելու և անոր իշխանու Թիւնը չի ճանաչելու  
— համար իբր Թէ ևս զվանականները զրգուած  
— ըլլամ : Եւ Թէ՛ Ղեր. Նախագահին Ղերին իշ-



խանութեան առաջարկած իր կարծիքները  
յայտնելով, աննկատ վանականաց փաստ բե-  
րելու համար մէկ քանի խորհուրդներ կա-  
տարելու ղիտաւորութիւն ունի ըսելուս հա-  
մար, դարձեալ վերոյիշեալ Նախագահը իմ  
վրաս ամբաստանութիւն ըրած է:

14. Պօղիս պատահածները ձեր և մեր ա-  
չաց առջև ըլլալով. Պեր. Նախագահը վա-  
նականները հիմակուան վիճակին մէջ ձրդե-  
լով. զանոնք ուրիշ կարգի մը դնելու իրա-  
ւունք և պարտք ունենալոյն ամենեկին երկ-  
րայտութիւն չունինք . . . : Բայց այսչափ  
չարեաց առաջին պատճառ աննշանաւ որ պար-  
տաւազրքին ասանկ մէկ ողբալի ճանապարհաւ  
հրատարակուելովը, ևս այնպէս կարծեցի, որ-  
պէս թէ այս բարի ղիտաւորութիւնները ալ  
իր սահմանէն խիստ դուրս ելած է: Եւ թէ՛  
ան երեցած բարերարութեան և կատարել-  
ութեան խորհուրդները հալածելու և ջըն-  
ջելու ղիտաւորութեան փոխադրուած կար-  
ծեցի: Սակայն վերոյիշեալ Պեր. Նախագահին  
յայտնապէս իրեն այս խոստովանութիւնը, թէ՛  
թիւն Բան պիտաւորութիւնն և Ռուս վանականաց  
Բարութեան Ռոյն աշխատելու է, ըսած ժամանակ

իմին ալ կատարեալ ուրախութեանս պատ-  
ճառ եղաւ: Ո ստի ըստ սյսմ արժէքի, ևս  
այլ զեր. Նախագահին մաքին այնպէս ծուռ  
մեկնութիւն տուած ըլլալըս՝ աներկիւղ և  
աներկմիտ խիոյն ևս կանուամ: Աւ աղօթք  
կրնեմ որ Վանահայններն ալ իրենց նախա-  
պաշարեալ կարծիքնին մէկ զի թողլով. Կ.  
Պօլիս դանուած զլսաւոր հովուին իրենց հա-  
մար խնամով ուշ գրած ասանկ զեղեցիկ զի-  
տաւորութեանց վրայ ինձի պէս անոնք ալ  
ասպահով ըլլան: Ահա ասիկ ձեր միտքերնուդ  
լուսաւորութեանը, և սրտերնուդ հանդար-  
տութեանը համար ձեզի յայտնած որպիսու-  
թեան հանգամանքներն ասոնք ըլլալով և այն  
և այն . . . . . :

Արդ՝ այս երկու Արքեպիսկոպոսոսց հրա-  
տարակած յատարարութեանց վրայ ըլլալու  
խորհրդածութիւնները մեր ընթերցողաց ձը-  
ղելով, անյնինք Ազգիս պատմութեանը:

Երբոր այս երկու Արքեպիսկոպոսները յան-  
կարծակի Կ. Պօլիս հասան և իրենց շքաբե-  
րականը բոլոր քաղքիս մէջ ցրուեցին, Ազգը  
զարմացաւ մնաց, և շուտով Վամանձեան Մը-  
կրախ Աղային տունը ժողովքի նստեցաւ: Այս

Ժողովքին մէջ երկու յայտարարութիւններն ալ կարդացուելով, իրենց առջի միտքերնուն մէջ աւելի հաստատուեցան. ինչպէս որ Ղատին Եպիսկոպոսին յայտարարութիւնը վերուստ ի վայր նոյնը յայտնապէս կը ճշմարտէր: Ուստի որոշուեցաւ նոյն զիշերը Գեր. Հասունին իր վերադառնալոյն համար, բողոք մը յուղարկել. իբր թէ ասկէ ետև զինքն իրենց հովիւ և առաջնորդ չեն ճանանչէր: Յանուն Ազգին բողոքը գրուեցաւ, և զմուելով Ազգապետ Պատրիարքին ձեռօք Գեր. Հասունին ձեռքը հասուցին ան զիշերը, որ օր Մայրաքաղաքս հասած էր: Եւ վաղուան օրը նոյն բողոքին օրինակը տպելով հրատարակեցին. որ ըստ այսմ էր:

## Բ Ո Ղ Ո Ք .

ՊԱ. Գ. Անտոն վարդապետ և Արհիեպիսկոպոս Հասունեան:

ՊԻր Ազգին հօգևոր և մարմնաւոր խաղաղութիւնը՝ օր քան զօր աւելի վերջոված էր յեօթն տարուընէ ի վեր, անցեալ տարւոյն կեսէն ետքը բոլորովին վերացաւ, Միխիլայեան Սոբէ՛ր Աստուծո՛ւ մակազրութեամբ խտպերէն դժօխաս յին չարամատենին հրատարակմամբը: Անոր

ԴՐՈՒՆ Հեղինակը ո՞վ ըլլալը, և Ձեր գործակ-  
ցու թիւնը որչափ եզածը այդ գործքին մէջ  
դուք Ձեզէն լաւ ճանչնալով Ձեր ներքին զի-  
տակցութեամբ՝ յուսանք որ իրաւունք կու-  
տաք մեր դատաստանին. զոր խորին համոզ-  
մամբ ըբեր ենք Ձեր վրայ իբրև գլխաւոր պատ-  
ճառ այլ և այլ Ազգային խառնութեանց: Եւ  
մինչև ցայսօր չի տեսնելով Ձեր գործոցը ա-  
ռաջնորդ՝ Քրիստոսի հողին, և հայրական  
գութը, և միանգամայն Ձեր բնաւորութիւնը  
լաւ ճանչնալով, բոլորովին յուսահատած ենք  
ամենայն ապագայ ուղղութենէ, ուստի կը  
բռնադատուինք այժմէն բողոքել ընդդէմ Ձեր  
վերադարձին ի քաղաքս, և կը ծանուցանենք  
բոլոր աշխարհի առջև, որ ասկէց ետքը զՁեզ  
չենք ճանչնար բնաւ մեզի հովիւ և առաջ-  
նորդ: Եւ որ և իցէ վճիռ, կամ շնորհք, և  
կամ արտօնութիւն որ բերած ալ ըլլաք ի  
կողմանէ Սրբոյ Աթոռոյն, Ձեր միջնորդու-  
թեամբը բնաւ չենք ընդունիր և ոչինչ կը հա-  
մարինք: Վասն զի որչափ ալ խորին հարգու-  
թեամբ կը հպատակինք հրամանաց գլխոյն  
Նիկեղեցւոյ, նոյնչափ ալ կը համարինք զՁեզ  
դժուր թիւնսպիտան այդպիսի շնորհաբաշխու-

թեանց, որով բոլորովին կասկածելի և անընդունելի կըլլան մեզի:

4. Պօլիս	24 փետրվար	} 1853:	Արդէն Ձեզի
	8 Մարտ		դէմ բողոքող
			Քաթօլիկ ժողովուրդ Հայոց

Երբոր Ազգը այս վերոյիշեալ բողոքով իր միտքը ամենուն կը յայտնէր, ոմանք իրենց այս հաստատ միտքը գործքով ալ հաստատել ուզեցին: Աւստի ի 28 փետրվարի շաբաթ օր. Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյն աւանդատան մէջ կախուած, և Գեր. Հասունին ստորագրութեամբ վավերեցած ինչչափ հրամանագիրներ կախուած կային, զամենքն ալ կոտորելով անհետ ըրին: Ասոր վրայ Գեր. Հասունը խիստ զայրանալով, ի 1 Մարտի կիրակի օր, ժողովք ըրաւ Թընկըռ Յովհաննէս Աղային տունը, հոն Ազգապետ Պատրիարքին բերնէն Բ. Գրան մէկ Լաֆրէյճը յօրինեցաւ, որուն մէջ իրենց անունովը տասն և չորս անձանց համար, աքսոր, և կամ անելի շղթայակապ Էրանիս խնդրուած էր, իբր թէ այս ապստամբ չարագործները Եկեղեցիները մանկելով աշտանակները, պատկերները, խաչերը, պատուհանները կոտորելով և այլ ուրիշ անվաւ

յիւլ գործողութիւններ ըրեր են և այլն և այլն:

Եւ որովհետեւ ինչպէս որ վերը զուրցեցինք, թէ ասկէց մեկ քանի օր առաջ Եկեղեցականաց ժողովոյն մէջ Ազգապետ Պատրիարքը սրտագողէն յանկարծ ծանր հիւանդացեալ յանկողին ընկած էր, այս հիւանդութեան մէջ ահա Բէքմէզ Անտոն Աղայն և Տէօլվէթ Ֆէհրատ Աղայն գացին Պատրիարքին և չափազանցութեամբ պատմելով Եկեղեցւոյն մէջ պատահածները, ասլա ստիպեցին զմռել Ղևաֆրէն զայն, զորնոր իրենց ժողովոյն մէջ շիներ էին: Ապա շուտով նոյն օրը թրնկրս Յովհաննէս Աղայն, Մըսրբեան Պետրոս Աղայն, Բէքմէզ Անտոն Աղայն, և Տէօլվէթ Ֆէհրատ Աղայն տարին և յանձնեցին այն Լաֆրէրը Արտաքին գործոց Պաշտօնեայ Բ. Արիթաթ Բաշային:

Ազգր իմանալով այս ամեն շատունեանց գործողութիւնները, խրկեց Ազգապետ Պատրիարքին երկոտասանից ժողովոյն երկու անդամները Սինապեան Աղա Պէյին հետ միատեղ Մուսա Չէլէպին: Ասոնք ինչչափ պնտահած գործողութիւնը եղածին պէս ճշմարիտը, և ստոյգը պատմեցին նէ ալ, ի վերայ այսր ամենայնի ականաանս վկայներէն, և արժանահաւատք ան-

ձինքներէն աղեկ մը տեղեկանալով՝ երկրորդ  
Բաժնէք մը ալ գրեց, և այս Բաժնէքը երկոտասա-  
նից ժողովոյն ևօթն հատը զմնելով և ստո-  
րադրելով, երկրորդ օրը ի 2 Մարտի տարին  
մատուցին առ արտաքին գործոց Պաշտօնեայն:  
Եւ ի 3 Մարտի Աղզը դարձեալ աղերսագիր  
տուաւ առ փոխարքայն, որպէս զի, ազառէ զի-  
րենք Հասունեանին ձեռքէն, որ այսպէս կսկսի:  
«Պունտան ազառէմ կէրէք խաբիփայի Հահանէյէ  
«վէ կէրէք ծանխպի Պասպը ալիյէ Միլլէթը աճի-  
«զանէմիզ թարաֆընտան ևայն . . . . .»

Եւ ի 4 Մարտի, չորեքշաբթի օր, իբր չորս  
հարիւր պատուաւոր քաղաքացիք անվեհեր և  
աներկիւղ Ոստիկանութեան զլուխ Զարթիյէ  
Միւշիրին առջին ելան փոխանակ ան չորեքտա-  
սան անձանց, որոնց համար Հասունեանք զբը-  
պարտեալ ամբաստանած էին: Եւ ամենքն ալ  
մէկ բերան խոստովանեցան, թէ՛ մենք բոլորո-  
վին անոնց կամակից եմք, և պատրաստ եմք ի  
շղթայ, յաքսոր և ի մահ իսկ: Իսկ երբոր Բ.  
Միւշիրը զանոնք խաղաղութեան և հանդար-  
տութեան կը յորդորէր, և համբերութեամբ  
սպասէ, մինչև որ Բ. Դուռը իրենց դատը ու-  
րոշէ: Ան ատեն ամենքը խոստացան իրեն հը-

բամանը ըստ ամենայնի անթերի կատարելու  
բայց այս թէնութեամբ, այսինքն ինչուան որ մեր  
դատը տեսնուի, լըմըննայ ըսին՝ թէ Գեր. Հա-  
սունը, և թէ երկու եղբարք Ամբրոսիոսեանք  
եկեղեցիներուն մէջ ամենևին մեզի չերևնան.  
ինչու որ խղճիւ չենք կրնար անոնց հետ մէկ  
տեղ Աստուծոյ աղօթքնիս մատուցանել: Ապա  
Բաշայն Բ. Դուռը անձամբ երթալով, Փոխոր-  
քային, և Արտաքին գործոց պաշտօնէին հետ  
խօսելով. Սատրաղամին Քէխիայ Իէֆիք պէյին  
հետ ետ դարձաւ, և հոն թուղթ մը շինուե-  
ցաւ, զոր բազմութենէն զլիսաւոր չորեքտասան  
անձինք ստորագրեցին, որոյ օրինակն էր այսպէս:

Պու քէրրէ Հոսմատան ավտէթ իտէն Ֆիս-  
կոպոս Հասուն

Սբրոսիոս օղլու բահիպ Պօղոս, քարտաշը  
բահիպ, Աբրոսիոս:

Պայիաի սէնէթ օլտուր քի՛ պալատէ մու-  
հարրէր իւլ իսիմ Փիսկոպոս վէ բահիպլէրին  
պունտան պէօյլէ Պասպը Ալինին ըէյ վէ ըի-  
ղասը օլմատըքձա, քիլիսէլէրիմիգէ կիրմէյէ-  
ձէքլէրի խարիճիյէի նաղարէթը ձէլիլլէրի  
թարաֆընտան էմր ու իֆատէ պույրուլմուշ



ոլմասի իլէ, պու սիւրէթտէ թարաբտարանը  
մըզ թարաֆըմըզտան մէրքումլէր հաքլէ-  
րինտէ հիչ պիր վէչհիլէ սուի մուամէլէ վու-  
գու ինէ սէպէպ վէրիլմէ յէճէի թահուալինէ իչ-  
թիսար ոլունարաք իչ պու սէնէթ թահըրը  
վէ ճանխպի Չարթի յէտէ իթա վէ թագաիմ  
գլընոր: Սէնէ 1269. ձէմագիլ ախըր 6:

Ապա նոյն օրը Չարթի յէ Միւշիրին յե-  
ղեկի Պաշտօնեայներէն մէկ անձ մը Գեր. Հա-  
ունին յուղարկելով, իմացուց իրեն որ ինչ-  
ան ժողովուրդեան և իրեն մէջ յուզուած դատը  
լըմընայ, վասն խոհեմութեան պատշաճէ, որ  
թէ ինքն, և թէ Ամբոստիտեանք եկեղեցեաց  
մէջ շատ շերեանն: Այս հրամանին վրայ Գեր.  
Հասունը Գաղղիացուց պաշտպանութեանը ա-  
պու ինեցաւ: Եւ ի 5 Մարտի Գաղղիացուց Փո-  
խանդեսպան, և առաջին քարտուղար Մ. Պէ-  
նէտէթթին գնաց խօսեցաւ ընդ Փոխարքային,  
և ընդ Հարիժիէին հետ: Ասոր վրայ Հարիժի յէ  
Ռիֆաթ բաշան զայրանալով շուտով մարդ  
խրկեց. և ի 6 Մարտի ուրբաթ օր զԳեր. Հա-  
սունեանը իրեն կանչեց, և խտաիւ զինքը հան-  
դիմանեց: Պայս ըրածդ ի՞նչ է ըսաւ, Տէրու-  
թիւնները կը շարժես, և մեր վրայ կը յու-

„Պարկես : Մենք քեզի ազդարարութիւն ըրեր  
„էինք, չէ թէ եկեղեցեաց մէջ չխմրանես, հա-  
„պա այսպիսի խռովութեան ժամանակ զգու-  
„շանաս, և նորէն խռովութեան առիթ մը չի-  
„տրուելուն համար ծանուցեր էինք : Գուն՝ որ  
„հոգևորին կողմանէ հովիւ և առաջնորդ կար-  
„գեալ ես, ուրեմն քու իշխանութիւնդ գոր-  
„ծածելու համար օրչափ աւելի խոհեմութիւն  
„քեզի պէտք է ևայլն . . . .” :

Իսկ երբոր Գեր. Հասունը այսօր, առաւօ-  
տուն Հարիժի յէին երթալու վրայ էր, ահա մէկ  
կարգ խառնիճազանձ, սոսկական գռեհիկներ,  
սպասաւոր ծառայ, և օտարականներ Ապիսկո-  
պոսարանը ժողովելով, ասոնց հետ մէկտեղ  
իրեն դպրոցին երիտասարդներն ալ Գեր. Հա-  
սունին օրհնութիւնը ընդունելէն վերջը, առ-  
ջի իրիկուն հոն տեղը շինուած աղերսագիրը  
կառնուն կերթան նոյն ուրբաթ օրը թագա-  
ւորին կուտան, որուն սկիզբը այսպէս զրուած էր :

„Պու ապտի ահգարի քէմինէլէրի քէմալի  
„եաս իւ բէրիշանի յէթլէ միւսլորէք բիքեապի  
„գամէրթապի ճէնապի Քատիշահանէլէրինէ տե-  
„խապէթ վէ իլթիճա իտէն Քաթօլիկ միլլէթի  
„քէօլէլէրինին թէրպիյէի ասլիյէրինտէ գա-

տիմի մուծի վէ մուսկատ օլան գուլ վէ քէօ-  
շէլէրի օլուպ սայէի քէյլանբայէի միւլն քեա-  
ննէլէրինտէ էգՏէր ճիհէթ սանտիթի հալ վէ  
նէմնիյէթի մէգՏէպիյէյէ նայիլ վէ մազՏէր  
օլարագ թէշէքքիւրիւնտէն վիւճիւհէ աճիզ  
օլաուղումուզ , վէ միլլէթի չաքէրանէմիզ  
նիրմի սէնէլիք պիր միլլէթ իսէտէ, պիր քաշ  
սէնէյէ կէլինճէյէ տէյին հիւնիւ հալի մի-  
շէլի սայիրէյէ իպրէթ օլմաք տէրէճէսինէ կէլ-  
միշ իքէն, Վէնէտիկ Մանասթըրնտա բէր-  
վէրտէ օլմուշ կէնիշ իւլ մէգՏէպ օլան բէ-  
հասպինին թահրէք վէ ի՛նսաաբյա, վէ մէք-  
թէպլէրինէ ճէլպ իլէ կէօյա թալիմի իմ իթ-  
տիքլէրի միլլէթի քէմթէրանէմիզ չօճուքլա-  
րընը հասըլ իթտիքլէրի մէգՏէպ ույղուն-  
սուզլուքլարընա, վէ բէհասպինի մէքբումէնին  
պու եօլտա տէրքեար օլան հալ վէ հարա-  
քէթլէրինէ Միլլէթի չաքէրանէմիզին պաշ  
Փիսգոսիոսու վէ բուհանի մէմուրու օլան Ան-  
տոն բահիպ գուլլարը Ֆէրիզաի զիմէթի, վէ  
վազի՛նէի մէմուրիյէթի իւզրէ քէնտի իտա-  
բէսինտէ օլան մէմալիքի Փատիշահանէլէրինտէ  
պու մազուլէ մէգՏէպ ույղունսուզլուզլարընըն  
իճրասընա բէրտէքէշի մուխալի՛նէթ վէ մումա-

Հաւած պետայ յի Հասկերի մերգու մէ վի ներթիշ  
անտակոյնի զիւ հիւնար իշխարէ կզկրիւ  
սակիմաւն եայր . . . . . :

Իսկ վեր Հասկեր ինքն զնքն անդի հեր,  
և անկակիւղ ցուցնելու համար, ի Տ Մարտի,  
կհասկի ար իծուա զիսուս զգիւն Մայր սկեղե-  
ղին, հմ Կասուծոյ պատարագ մատուցանելու  
համար: Եւ որովհ զի Քաղաքացի Տողոզուրզը  
աւանդի աշխարհի անարգ ցուցնէ, կոնչեց հոն,  
Արքամհնցի, Կապասայի, Փագընիկցի և Ախու-  
ղիտայիները որոնք ծածուկ և կամ յայտնի  
գինեայ աւանդով և զաշոյնով կրօնական մն-  
վիչնաթեւանք ճարտկոպտին պաշտօնանու թեանը  
համար վայելցին և կան: Եւ այտղես Սուրբ ան-  
մահ պատարագը մատուցանելէն վերջը կը նստի  
հիւն վրայ, և շորս գին բոլորուելով այն զի-  
նեայ խածանու ծ ամբոխը, և շիտակ ճամբէն  
անցնելով, յայթմանակաւ մը շիտակ կուզայ,  
կիջնայ ի Ամինարթուն իրեն բնակարանը: Չիկն  
վար իջնայու ասէն Բրօրականուային Բարտու-

---

\* Այս անվայել և զրպարտալից ազերտագիրը բառ-  
աւ յառ նոյն տարին տպուած է հանդերձ բացատ-  
րութեամբ և ներքմամբ, ուղղղները կհնան զանիկայ  
կարդայ:

զար, Մ: Գրանճագոհն գրուան թուղթը արտա-  
յով հին խաժամու ձին բաժնեցին, արնոց նե-  
րողութեան թուղթեր կարծելով (ինչպէս պ-  
կը լուկը) մէկ մէկու ձեռքէն յանդաստեղծ,  
և համբուրելով ծոցերնին կը պահէին:

Ա՛հ ի՛նչ զեղեցիկ և փառաւոր հանցեա-  
արժանի Նախագահ Ազգայնականացոյ մը:

## 29.

1. Ըստ հրահանի Յերոսոթեան իջնորաց Կողմանց Աղ-  
գային ժողովը. — 2 ի կողմանց Յերոսոթեան Գեղար-  
ժողովոյն խորհուրտը. — 3 Գեղ. Հասանի Իտնուդարանը,  
և Սիեղեց-Վան պարիժնէրը. — 4 Ազգի ստան Գու-  
րագիրը, և Հասանիանց պարտիտը:

1. Մէկ քանի Երեւոյնացիք Ազգիս Սա-  
մանճեան Մկրտիչ Աղային հետ, ի 7 Մարտի  
շարաթ օր, յերեկոյնին Հարիճիէ յին առնը գա-  
ցին: Արիւթաթ Բաշայն առնոց հետ ընդ երկար  
խօսեցաւ Ազգային խառվութեանց մէկ ճար մը  
զանելու համար: Իսկ անոնք յառաջ բերելով  
վաւերական գրութիւնները, որոնցմով շատ տա-  
րիներէ ի վեր պատահած երկարտակութեանց  
պատճառաւ Ազգիս բազմադիմի կրած թշուա-

առ թիւնները կը հաստատէին, ի վերջոյ յայն  
գլխաւորեցին իրենց խօսքը, թէ ասկէ ետեւ Ազ-  
գին միութիւնը Հասունեանց հետ գրէ թէ ան-  
Ապա խորհրդակցելով ընդ Ռէշիա Բաշային, չարագործաց դատը Տերութեան Բարձրագոյն Ատեանը քննուիլը պատշաճ՝ դատուեցաւ:

Երկու օր Ազգին Պատրիարքարանը զոց մնաց. իսկ երրորդ օրը, ի 28 Նոյեմբերի Բ. Գուռնէն Պատրիարքին յուղարկուեցան Ռափութ Բաշայի որդի Սաման Պէյը, Զարթիյէ Մուամիլինի Աշիը Պէյը, և Նէսիպ Բաշայն: Ասոնք Տերութեան կողմանէ Պատրիարքին աղաչեցին, որ իրենց հետ մէկ տեղ Պատրիարքարան, իր իշխանութեան տեղը երթալու բարեհաճի. իրեն խոստանալով այն չարագործները՝ ըստ օրինի խստիւ դատելու, որոնք համարձակեցան թէ իշխանութիւնը և թէ Զեր պատուական Անձր անարգելու ըսին և այլն: Ազգապետ Նիկողայոս Պատրիարքը Անոնց հետ մէկ տեղ գնաց, և իր առջի իշխանութեանը նստաւ:

Ի 19 Նոյեմբերի, այն չարագործները Զարթիյէ Միւշերին ձեռօք յանուանէ Արդարութեան Մեծ Ատեանը կանչուեցան, իրենց գործոց պատասխան տալու: Ապա ի 1 Գեկտեմբերի, երեքշաբթի օր. Հասունեանք անոնց հետ մէկ տեղ Ահքեամը առլիյէն ներկայացան, Թընկըր Յովհաննէս Էֆէնտին. Մըսրլեան Պետրոս



Աղայն, Գըլձի Վիջէն Աղայն, Բէքմէզ Անտոն  
Լայն Լայն . . : Յանցաւորները անոնց ետևը  
պահու ըսած կեցէր էին: Իսկ Պատրիարքը Երա-  
մեան Յովսէփ Աղային ձեռք իր Թագրիրը Նա-  
խադահ Ռիֆաթ Բաշային յուղարկեց, և ա-  
ղաչեց՝ որ իրեն պատճառաւ յանցաւորները  
խտիր չի պատժուին, այլ այս անգամ իրեն  
չնորհուի:

Հոն Մեծ Ատենին մէջ Ազգին կողմանէ ներ-  
կայացան Սամանձեան Մկրտիչ Աղայն, Տալութ  
Յ. Յակոբ Էփէնտիին հետ մէկ տեղ: Արդա-  
րութեան Ատենին Նախադահ Ռիֆաթ Բաշայն  
սկսաւ հարց ու փորձի: Իսկ Թընկըռ Յովհան-  
նէս Աղայն պատասխան տալ ուզելով, սկսաւ  
արարչագործութենէ պարսաւազրքին շինուե-  
լուն պատճառը ընդ երկայն պատմելու, ու եր-  
բոր որ ջրհեղեղին, այսինքն Տօն Գասպարօին  
հասաւ, ան ատեն Ռիֆաթ Բաշան անոր խօսքը  
կտրելով՝ ըսաւ, ես ձեզի չեմ հարցըներ թէ  
այն չարամատենին հեղինակը ո՞վ է, կուզէ՞ Տօն  
Գասպարը ըլլայ, կուզէ՞ Տօն Պօղոսը, ու Տօն  
Ամբրոսը ըլլայ. մեր հարցուցածը այս չէ, այլ  
թէ սա հանցաւորներուն ըրածը ընդդէմ օրի-  
նաց Իշխանութիւնը կոխել է, չէ՞նէ չէ: Յայն-

ժամ բոլոր Ատեանք, և ամեն Միւշիւրները մէկ  
բերան վճռեցին, թէ Իշխանութիւնը անարգած  
բռնաբարած են: Ապա Նախագահը յանցաւոր-  
ները առաջ կանչելով ըսաւ իրենց. թէ ըստ  
օրինաց գործած յանցանքներնուդ համար մե-  
ծամեծ պատիժներ ձեզի պիտի տրուէին. այլ  
ձեր Մ. Պատրիարքին աղաչանացը համար այս  
անգամ ձեզի կը շնորհենք, մէյմալ ասանկ քրէա-  
կան, եղեռն յանցանաց մէջ չի պիտի զանուիք  
և այլն: Ապա Ռիթիաթ Բաշայն Քընկըռ Յովհան  
նէս Էֆէնտիին, և Մըսրլեան Պետրոս Աղային  
հրամայեց, որ Օսման Պէյին հետ մէկ տեղ յան-  
ցաւորները առնուն, և տանին, Պատրիարքին  
ձեռքը պագցունէն, և յուղարկուած Տերու-  
թեան հրամանագիրն ալ դարձեալ հրապա-  
րակաւ Մայր Եկեղեցւոյն դրան վըայ կախեն:  
Տերութեան այս հրամանը Մըսրլեան Պետրոս  
Աղայն միայն Օսման Պէյին հետ մէկ տեղ՝ ի 5  
Դեկտեմբերի կատարեցին:

Արատեսնե՞ս, այն անիծեալ շարամատենին  
պատճառաւ որպիսի՞ թշուառ և ողորմելի սահ-  
ման Ազգին վիճակը եկաւ հասաւ, ո՛չ Իշխա-  
նութիւն մնաց, ո՛չ ակնածութիւն, ո՛չ սէր և  
ո՛չ խաղաղութիւն, այլ ասոնց անղը բռնեցին

Հակառակու թիւն, երկպառակու թիւն, հանապազօրեայ կօիւ, նախանձ և անհաշտ թշնամու թիւն, որով և կործանուին Ազգին Քեր. Հասունեանին Իշխանութեանը ժամանակ:

3. Ասոնք ամենը տեսնելով Ազգայիններէն առաքինի, Աստուածասէր Խաղաղասէր անձինք ոմանք ուզեցին և ջանացին զՔեր. Հասունը, և անոր կողմնակիցները Ազգին հետ հաշտեցնել: Որոնց զխաւորն էր Եաղլըքճեան Պետրոս Էֆէնտին: Ասոր համար առանձինն յերկուց կողմանց երեք անգամ ժողովեցան. ի 10 Գեկտեմբերի, Սինապեան Գասպար Պէյին. ի 19 Գեկտեմբերի, Եաղլըքճեան Պէտրոս Էֆէնտին տունը: Եւ իրաւցընէ այս ժողովոց մէջ ինքն իրենց ամեն կրճիմները կրցան լուծել, դժուարութիւնները ձամբով մը դիւրացընել. հակառակութեան արգելքները անյայտ ընել և այլն: Բայց մէկ կետին՝ որ երբոր եկին հասին, անկից ամենեին չի կրցան իրենք ալ ելլել. այսինքն Քեր. Հասունեանին համար խնդրեցաւ սպասհովութիւն և երաշխաւորութիւն յապագայ ժամանակս բնաւ մէկ անգամ մը ալ ասանկ ազգակործան գործողութիւններ չը նիւթելու

և այլն, ուստի այս ժողովքներն ալ չի կրցան  
զարման մը գտնել:

## 31.

1. Աղճի՞ն արշարձանները. և հրատարակած յայտու-  
րարութիւնը, Տէրութեան որոշողութիւնը Աղճի՞ն եր-  
կոս Բաշինէլու՞ն համար:—2. Գողջի՞ն Գեոպանի՞ն  
Բլմախութիւնը: Պիտո Թ. Շրմբէրախնը:—3. Աստու-  
ջի՞ն խոցորդածութիւնն:

1. Ի 22 Գեկտեմբերի 1853. Ազգային մե-  
ծամեծ Աւագանիք և Նրեփոխանը ժողովեալ  
Ալիքսանեան Տիւղ Տիրան Պէյին տունը որո-  
շեցին՝ որ միայն Նրեփոխանից ստորագրու-  
թեամբ Ս. Քահանայապետին աղերսագիր մը  
գրուի. զոր ի 24 Գեկտեմբերի յուղարկեցին:  
Նոյնպէս ի 1, Յունվարի, 1854, Ուրիշ մեկ  
աղերսագիր մ' ալ Արղարութեան Բարձր Ատե-  
տենին տուին, Այս երկու աղերսագրաց բովան-  
դակ խմատար ուրիշ բան չէր, բայց եթէ՞ ասկէ  
ետե անհնարին է զԳեր. Հասունը իրենց հո-  
փու և զլուխ ճանաչել: Նոյնպէս՝ և թէ իրեն,  
և թէ իրեններուն հետ մեկ ակզ միանալը ալ  
անկարելի է: Աւ որպէս զի այս գիտաւորու-

Թեանը վրայ հաստատ կեցած բլբլանին չէ թէ միայն խօսքով, այլ և գործքով ալ յայտնեն, տաճկերէն մէկ յայտարարութիւն մը տպելով հրատարակեցին, որուն թարգմանութիւնը այս է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

«Ըստ Ազգային սովորութեան մերոյ՝ ամեն տարի երկու անգամ Տուներնիս Բնակարաննիս կը օրհնուի, և այս պատճառաւ տրուած տուրքը Եպիսկոպոսին իրաւունքը եղած է: Բայց այս տարի, Մկրտութեան օրը օրհնող Քահանայները ըստ արժանւոյն պատուով ընդունիլ, և փոխարէն վարձ, տուրք մը չտարու համար ամենուն կը ծանուցուի:

Ի 4 Յունվարի 1854.

Կաթօլիկ Ժողովուրդ Հայոց:

Վերջապէս Տերութեան Բարձր Արդարութեան Ատեանը յերրորդ աւուր Յունվարի 1854 որոշեց Հռովմական Հայերը երկուքի բաժանել: Ազգապետ Պատրիարքական Իշխանութիւնը Ազգայնոց ձգելով: Իսկ զՀասունեանս ԱՍՏԻՆ Ազգին Իշխանութեանը յանձնել: Եւ այս որո-

շողութեան գործադրութիւնը շուտով, ժամ մը առաջ կատարուելուն հրամայեցաւ :

2. Բարձրագոյն Ատենին այս որոշողութիւնը երբոր լուեցաւ, իսկոյն Գեր. Հասունը Գաղղիոյ Գեսպանին դիմեց, որ և շուտով անպարեց գնաց, և ընդ երկայն Ռէշիտ Բաշային հետ այս որոշողութեան վրայ խօսելէն վերջը, խնդրեց իրմէն Հայազգի Աթոլիկաց բաժանումը, այս ևս երեք և չորս թղթաբեր շոգենաւին գալուն ժամանակ ուշացրնել. ինչու որ՝ ըսաւ, թերևս մինչև ան ատեն Հռովմայէն թուղթերը կուգան, որով երկու կողմը կը համոզուին :

Եւ իրաւցնէ Գեսպանին զուրցածին պէս ի 28 փետրվարի, 1854, Ս. Քահանայապետին, ի 2. փետրվարի, գրած Շրջաբերական թղթոյն մէկ Գաղափարը Գեր. Հասունին, և միւս Գաղափարն ալ Ազգապետ Պատրիարք Հ. Նիկողայոս Արղապետին եկաւ :

Այս Շրջաբերականին մէջ Ս. Պապը յիշելէն վերջը Նախագահական թեմին մէջ գաւառական Նախակոպոսաց հաստատութիւնը, և անոնց ընտրութեան ՀՐԱՀԱՆԳԸ. — Սխիթարեան Հարամատենին գատապարտութիւնը. —

Մայրաքաղաքիս մէջ վանականաց բնակու թեան  
կերպը: Ապա կը յաւելու՝ վեհեպէոյ Միխիմարեան  
Միաբանութիւնը ալ՝ ինչ, իրենց ուղղափառ հասարակ  
և ջառագայտութեան շնորհիւ դասանութիւնը, և յայ-  
տարարութիւնը պարտա պատշաճ սորոս գրութեամբ  
Մեղի յուշարէցին:

ԽՈՐ ՀՐԴԱՅ ՈՒԹԻՒՆ:

3 Միխիթարեան Պարսաւազրբին հրատա-  
տարականէն մինչև Պիոս Թ. Պապին Շրջաբե-  
րականին հասած օրուան վրայ գրէ թէ երկու  
տարի անցաւ: Այս երկու տարուան մէջ յայտ-  
նապէս տեսանք Ազգիս մէջ պատահած կերպ,  
կերպ թշուառութիւնները, կազ կռիւները,  
անհաշտ հակառակութիւնները և անթիւր  
անհամար չարիքները, զորոնք չը կարեմ գրով  
պատմել: Ասկից յառաջ եկին Պատրիարքաց  
փոփոխութիւն, Ազգային ժողովոյն ջրու իլը, զի-  
շեր ցորեկ եղած ժողովները, և զրուած ա-  
զերսաղիրները: Ո՞ր մէկը զուրցեմ և ո՞ր մէկը  
պատմեմ:

Գեր. Հասունը իր խորիմացու թեամբ առա-  
ջուց զասոնք ամենը աղէկ տեսեր էր. բայց աս  
ալ խիտտ աղէկ զխտէր՝ որ վերջապէս իր խոր-

հաճ շատոնցունէ վախճանին անտարակոյս պիտի  
հասնի: Վասն զի իրեն առաջին վախճանը էր,  
Ազգին գէժ ունեցած հակառակութենէն ամեն  
Ազգային օրէնքները և իրաւունքները ջնջէ,  
փճացնէ, և մատնէ. որպէս զի ինքն միայն իր  
վիճակին վրայ ինքն իշխան տիրէ: Ինչպէս որ  
Եպիսկոպոսաց ընտրութեան եղանակն ալ Քար-  
տինալաց ժողովոյն առաջարկողը ինքն էր:

Երկրորդ վախճանը, վանականաց գէժ ու-  
նեցած անհաշտ և ռիսերիմ թշնամութիւնը է.  
զորոնք բոլորովին ջնջելու համար այն չարա-  
մատեանը՝ յօրինեց: Իրաւ նոյն սարսաւազիրքը  
գատապարտուեցաւ, բայց նոյն զբքին մէջ զըլ-  
խուորարար ինչ որ գիտուած էր նոյնը բո-  
լորովին հաստատուեցաւ. զորնոր նա ինքն Գեր-  
շասունը 1853 ի 24 Փետրվարի, հրատարա-  
կած յայտարարութեան, յերես 11, յայտնած  
էր, ըսելով. — Իսկ յիշեալ նոյն գրքին մէջը պարու-  
նաւորած նիւնայն դասաստանը միշտ Աստուծոյն  
իշխանութեանը, որուն որ Բողոքուած էր, վերապա-  
հեալ Լեզուացիս: — Այլ բողոքը, ու սինդոդը ինքն  
էր, որպէս թէ Մխիթարեան շարք ի հաւա-  
տոյսն երկրայականը ևն: Այս զբպարտութեամբ  
Գեր. շասունը անշուշտ կը կարծէր որ Հոռով



կամ զՄխիթարեան Միաբանութիւնը բողոքովն կը ջնջէ իրեն բաղձանացը յարմար. և կամ այս երկրայութիւնը շտկելու ժամանակ, Անոնց ազգայնութեան ուժը և ազդեցութիւնն ալ հիմնովն կը կորսուի: Եւ իրացընէ ինչպէս որ ինքն դիտած էր, այնպէս ալ կասարեցաւ:

Ասն զի այս ժամանակ Յ. Մխիթարեան շարք վերջին ատիճան ստիպուեցան, և հարկադրեցան հասարակութիւնը տալու: Եւ այս միայն ի հաւանութիւն խղճի Ս. Պապին, և այս ամեն կերպիւ ծածուկ պահելոյ պայմանաւ (ինչպէս որ Մխիթարեանց կուէր):

Արդ՝ երբոր Յ. Մխիթարեան շարք տուած դուանութիւնը Ս. Պապին սա վերոյիշեալ շարքարեականին մէջ բառ առ բառ տպուած հասարակութեան ձեռքը տարածուելուն պէս, ամենքն ալ այլայլեցան, և Ազգային լրագիրները սկսան Մխիթարեանց վրայ շարաշար յարձրկիլ: Եւ ահա՛ Գեր. Հասունին գլխաւոր վախճանը ալ այս էր, որպէս զի ընդհանուր Ազգին սէրը անոնցմէ պաղեցնէ:

Գեր. Հասունին երբորդ վախճանը, Յ. Մխիթարեանց յանձնուած Ազգային գպրոցները Հոովմ քաղաք փոխադրել տալ, որպէս զի կա-

բող բլլայ օր մը նոյն դպրոցները իրեն ձեռքը  
անցնել ամեն եկամուտներովը մէկ տեղ : Բայց  
այս յոյժը պարտաւ ելաւ. վասն զի Գաղղիոյ և  
Աւստրիոյ Տերութիւնները Փոխադրութիւնը  
արգիւէցին :

Չորրորդ վախճանը, վանական Միաբանու-  
թիւնները անզգալի կերպով մը փճացնել, և  
անոնց աւերակաց վրայ տիրել, ուստի նախ ա-  
ռաջին կերպ, կերպ հնարքներով սկսաւ Հոռ-  
մայի առջին աղտոտելու աշխատիլ Միաբանու-  
թեանց այն անձիքները, որոնք որ Ազգին առ-  
ջին իրենց արգիւնքովը, զխտութեամբ և բարի  
համբաւովը մեծ ազգեցութիւն և յարգ ու-  
նէին : Եւ միևնոյն ժամանակն ալ նոյն անձինք-  
ները իբր անհաճոյ Սուրբ Աթոռին քարոզել  
կուտար իւր արբանեակաց ձեռօքը, որ է ըսել  
այս վանականները բարոյապէս մեռցընելու աշ-  
խատիլ : — Արկորդ՝ Գաւառաց միջ վանական  
Քահանայ մը բնաւ երբէք չը մտցընելու հա-  
մար Ամենայն միջոց ի գործ դրաւ, և արդէն  
գրանուածներն ալ մէյմէկ կերպ հնարքով կամ  
անկից հանեց, և կամ՝ ողորմելիները իրենցմէ  
ձգել ելլալու հարկադրեց : — Արբորդ՝ որպէս զի  
Ազգին կենդրոնին միջ վանականք բնաւ ազ-

ղեցու թիւն շունենան, և անզգայի կզանա-  
կաւ Ա. Աօխակն ալ հետացրնէ զանոնք, անոնց  
թիւր պահակներն իւր կաշիստով և իբր անոնց  
կրօնաւորական հոգւոյն որսհարանութեանը  
նախանձնն շարժած՝ կերպով մը Հասկնայէն  
«ԲՕՒԲԼՐԷՆ», ՀԻՆՆՈՒԳԷ, հանել կուտայ: Այս  
հրահանգին գործադրութիւնը եթէ յաջողե-  
լու ըլլար, կրկին կերպով իբր զխամանը պիտի  
հասնէր. վասն զի նախ և առաջին՝ ամեն վնց  
տարի Առաքելոց փոփոխելոյն պարտաւորու-  
թիւնը, Վանականները իբր օտարական հա-  
մարուելու նշան մը պիտի ըլլար. և երկրորդ՝  
Վանականք վնց տարուան փոփոխութեամբ ընդ  
երկար ժամանակ Ազգին վստահութիւնը զրա-  
ւող, և Ազգին ծանօթացեալ և ազգեցութիւն  
ունեցող անձինք չը պիտի կարենային ունենալ,  
որով բարոյապէս ալ կամաց, կամաց Ազգին  
առջևէն զանոնք պիտի օտարացընէր: — Զորքորդ՝  
զխմայով որ Վանականաց մեծագոյն մասը  
Պօլսեցիք են, և նոյն Միաբանութեանց ծաղ-  
կիլը և յառաջադիմութիւնը միշտ Բօլսեցոց  
զուկըններովը կըլած է, ուստի երբոր անոնց  
իրենց Հայրենիքնին զաւանդուծ արգելքները  
Հասարակութեան յայանուի, ի յարկէ ան ժա-

մանակ Պօլսեցիք ալ իրենց զաւկընները վանքերը  
յուզարկելու կը վախնային, և այս ճամբով օր  
քան զօր Պօլսեցի տղայոց թիւը մէկ կողմէն  
պակսելով, և միւս կողմանէ զրսի գաւառնե-  
րէն ալ տղայ առնելու արգիլած ըլլալով, նոյն  
միաբանութեանց յաջորդութիւնը ալ վտանգի  
մէջ ձգել կուզէր: Եւ ահա այս էր պատճառը,  
որ իւր արբանեկաց բերնովը ընտանեաց մէջ  
անդադար քարոզել կուտար, թէ՛ ալ Վանա-  
կանք Պօլիս չալիտի կարենան զալ, թէ՛ անոնք  
օտարական են, և թէ՛ Հոովմ չուզէր անոնց  
Պօլիս կենալը և այլն և այլն: — Հինգերորդ՝ ընդ-  
դէմ ամենայն օրինաց և արդարութեան բնաւ  
չէր հաճէր, և ոչ խկ թոյլ կուտար հաւա-  
տացելոց, որ Վանքերուն մէկ բարեպաշտական  
կտակ մը ընեն, և ընողներուն գործադրու թիւնն  
ալ կամ կը խափանէր, և կամ իրեն կը վե-  
րածէր, և շարունակ, ժողովրդեան մէջ իրեն-  
ներուն ձեռք կը քարոզէր՝ թէ պէտք է Պօ-  
լիսէն դուրս ստակ հանել, և արեւելքին զբամբ  
յարեմուտք անցընել, և այս ճամբով ալ զբա-  
մական միջոցները կամաց կամաց կտրելով,  
Միաբանութիւնները արկարացրէ: — Վեցեր-  
որդ՝ ամեն Միաբանութիւնները Հոովմայի առ-

ջին կասկածաւոր ցուցընելու համար ամենա-  
նուրբ եղանակներ գործածեց, որպէս զի թէ որ  
Վանականք այսպիսի կրած անտանելի հարստա-  
հարութեանց համար ի Հռովմ գիմելով իւր  
պաշտպանութիւնը խնդրեն, բնաւ լսելի չըլլայ-  
ինչպէս որ ալ յաջողեցաւ, և հալածանաց տակ  
Միաբանութիւնները ճնշուելու սկսան. մէկ  
կողմանէ ինքը անձամբ անիրաւութիւն և հա-  
րստահարութիւնը կրնէր, միւս կողմանէ իւր  
չար կամքը առաջ տանելու համար՝ Վանականաց  
դէմ Հռովմայէն նորանոր հրամաններ բերել  
կուտար:— Եօթներորդ՝ ընդդէմ ամենայն ճշշ-  
մարտութեան Վանականաց համար Հռովմա-  
յին կամրաստանէ, իրր թէ անոնք աշխարհա-  
կանաց միջնորդութիւնը մաւրանալով զԱզգը կը  
զրգուէն և այլն: Ասոր հակառակ Ազգը երբոր ազ-  
գային ծաղկեալ Միաբանութիւնները անզգայի  
եղանակաւ կործանելու համար գեր. Հասու-  
նեանին լարած մեքենաները, և անոնց հասու-  
ցած անիրաւութիւնները յայանապէս տեսնելով,  
իր տեղոհութիւնը հրապարակաւ կը յայանէր,  
և իւր բազմարդիւն բարերարները պաշտպա-  
նելու Արբաղան պարտքը կը կատարէր, և ոչ թէ  
անոնցմէ զրգուեալ հոգեւոր իշխանութեան դէմ

կը մաքրաւէր:— Աւթերրորդ՝ Գեր. Հասունեանը  
 Վանականաց համար Հռովմային կամրատանէ  
 իրր գատաւ կաշքիք անձինք, վասն այսորիկ  
 Հռովմային յշխանութեամբը զանոնք շէնքիմբ  
 մէջ փակելու կաշխատի, և Հռովմալ ըստ օրի-  
 նաց Եկեղեցւոյ ի Վ. Պօլիս Աանոնաւոր Վան-  
 քեր շինուելու հրամանագիր կը հանէ: Բայց  
 Գեր. Հասունը մէկ կողմանէ կերպ, կերպ խա-  
 րէական ճամբաներով այս Վանաշինութիւն-  
 ները կարգիլէ, և միւս կողմանէ Հռովմայի առ-  
 ջին զՎանականս կը թշնամանէ, իրր անհնա-  
 զանդ, և միաբանական կեանքէն հովացեալ  
 անձինք, որպէս զի եղանակաւ մը Վանականաց  
 ի Պօլիս մնալին Հռովմայէն արգիլել տայ:—  
 Իններորդ՝ Աղղային Միաբանութիւնները քայ-  
 քայելու համար Վանականներէն միշտ մարդ  
 կորսայր, և զանոնք իրենց Միաբանութենէն  
 բաժնելու համար գիւրին և համառօտ ճամ-  
 բայ կը ցուցնէր. և ի Հռովմ գրուելու ազեր-  
 սաղիրներուն օրինակնակները ալ իւր արբա-  
 նեկաց ձեռօք անոնց կը արուէր: Իսկ երբօր  
 Հռովմային հրամանագրովը իրենց Միաբանու-  
 թենէն կելէին, և կը բաժնուէին շուտով զա-  
 նոնք ի բարձ, ի սլաախ և ի յիշխանութիւնս

կը հասցընէր որպէս զի մնացածներն ալ իրենց հետեին:

Արդ՝ նա ինքն Գեր. Հասունը շատոնցունէ այսպիսի մտած մունքներուն մէջ թարթափած ժամանակ, ահա՛ Մինասեան Հ. Պետրոս Վարդապետը Կ. Պօլիս կուգայ, և Բ. Նախագահ Մարսել Գերապայծառին հրամանաւ Գրապղօն քաղաք կերթայ, և հոն դպրոց մը կանդնելու ձեռք կը զարնէ: Իր սրտին բաղձանքէն ողորմելին ցորեկները գործաւորաց հետ հասար ծով և ծարաւ կաշխատի, գիշերներն ալ պատուած զգեստները կը կարկաէ: Ար լըմըննայ դպրոցը, կը ժողովէ հոն փոկոտն և զլիւիրաց աղքատ տղաքները, զորոնք կսկսի կրթել: Մեծ էր ուրախութիւնը Հ. Պետրոս Վարդապետին, և անպատմելի էր Գրապղօնի ժողովրդեանն ալ. յուսալով որ քիչ ժամանակէն երջանիկ օրեր պիտի տեսնեն այն՝ տառապեալ և վերջին աղքատութեան հասած ընտանիքները իրենց որդւոցը կրթութեամբ և ուսմամբ: Բայ ասկէց հասարակ ժողովրդեան ալ կերպ, կերպ ճամբաներ, և արուեստներ սորուեցուց, իրենց աղքատութեան ճար և ճարակ ընելու: Երկրագործութեամբ զեանախնձորին և բաղա-

դին մշակութիւնը առաջին անգամ հոն ցանուելուն պատճառ եղաւ: Եւ Եօնոսը ըսուած ձուկին եղը հանելու ճամբան սորվեցուց և այլն և այլն: Իր անշահասէր բարքը, և Աստուածապաշտ առաքինի վարքը զամենքը կը զարմացընէին: Ասոր համար Գեր. Հասունին, և համախոհից նախանձը կրկնապատկեցաւ, և զՀայր Պետրոսը Հայաստանին ոռքէն մէկ ժամ առաջ դուրս նետելու համար չի ձգեց մէկ զըպարտութիւն մը, մէկ հնարք մը՝ զոր ի գործ չը դրաւ: Բէհշիվանեան Տէր Ատեփանին ձեռօք Տերութեան մատնեց. իբր թէ Ռուսի Տերութեան հպատակ, և անոր անցադիր (բասաբօսթ) ունեցող: Բայց երբոր Հարիժիյէ, Ռիֆաթ Բաշայն անոր ձեռքը տեսնելով Օսմանեան Տերութեան անցադիրը, գայթակղելով՝ ըսաւ, թէ այս ինչ կերպ Եկեղեցականի բողոքովին անվայել հակառակութիւն է: Վերջապէս Բրօբականտայէն սաստիկ հրաման Գեր. Աբբահօրը երթալով, հարկ եղաւ Գրապղօնէն Հայր Պետրոսը հեռացընել: Չեմ կրնար հոս քաղաքացւոց ցաւը և արօասուքը պատմել. Հ. Պետրոս վարդապետին բաժնուելու ժամանակ: Նոյն իսկ Քաղքին կուսակալ Խայրէթաին Բաշայն այս



անիրաւութեանց չի հանդուրժելով ըսաւ, թէ  
ես ինքս Ս. Պապին պիտի զրեմ, որ յօգուտ  
Ազգին և Աղքատաց տղայոց այս Քահանայն  
թողու: Արջապէս Մինասեան Հ. Պետրոս վար-  
դապետը Դրասպզօնէն ելաւ, և դպրոցն ալ գո-  
ցուեցաւ: Մինչև այսօր քանի՞ քանի՞ տարիներ  
վրան անցին գացին, այսօր՝ վաղը ըսելով, Մը-  
խիթարեանք անել լաբիւրիւնթոսի մէջ բըռ-  
նուելով, չկրցան անկից դուրս ելլել: Մինչև  
Առաքելական Ապիսկոպոսին նախանձոտ աչ-  
քերը, գիշեր ցորեկ վրան նայելովը, դպրոցին  
չէնքը հալլեցուց և մաշեցուց, և հիմները ան-  
գամ անհետ ըրաւ: Տասն և հինգ տարուան  
մէջ այն դպրոցը արդեօք քանի՞, քանի՞ ընտա-  
նեաց հարստութեան, երջանկութեան, պատ-  
ճառ պիտի ըլլար, իրենց որդւոցը կրթութեամբ  
օրական սպրուսանին ձարելով: Աղբալու դար,  
ինչու որ ահա մեր օրը երեւցաւ անանկ մէկ  
նախագահ Արքեպիսկոպոս մը, որ կայինը ձեռքը  
բռնած, դժբաղդ Ազգին գլխոյն վերև կայնած  
սաստիկ զարկուած մը իջեցընելով, հանապազ  
ազգօգուտ ծլած ձիւղերը ի բաց կը կարէ: Զո-  
մանս Քաղքէն հեռացընելով, ինչպէս Յովնան  
Հ. Պօղոսը ոմանց զգեստնին փոխելու ամենևին

տարիներով հրաման չը տալով, ինչպէս Սոր-  
կուճ Է. Յովհաննէսին և այլոց. ուրիշները եկած  
չեկած ոտից փոշիներովը յետ դարձնել՝ ինչ-  
պէս թաւ շանեան Է. Գանիէլը. ոմանց ալ յարզը  
և սրտիւնին մէկ ստկի ընելով և այլն և այլն:  
Այս անիրաւ հակառակութիւնը նոյն խոյ Օս-  
մանեան Տերութիւնը իմանալով, Արտաքին  
գործոց Պաշտօնեայ Բ. Ռէշետ Բաշայն ի 4 Հոկ-  
տեմբերի 1853. Ազգապետ Պատրիարքին հրա-  
մանագիր մը յուղարկեց, որով կը հրամայէր,  
նախ՝ Ազգային Քահանայք ըստ քաղաքական  
Ազգային սովորութեան՝ իրենց զղեստնին հազ-  
նին. երկրորդ՝ այս օրերը Քահանայից գուրս  
երթալնուն համար, բնաւ երբէք անցազրի  
հրաման չը տալ:

- Երկայնապատուճ և խիստ աղետալ է Ազ-  
գային վանականաց Գեր. Հատունին երեսուն  
և հինգ ամեայ իշխանութեանը ժամանակ կրած  
տառապանքնին և հալածանքնին, և առանձին  
տեարակիւմը կարօտ: Բայց մենք թողունք զա-  
նիկայ իւրաքանչիւր Միաբանութեանց, անց-  
նինք մեր սրամութիւնը շարունակելու:

# 32.

1. Բողոք ընդ դէճ Գեր. Հասունի: Ի Հառլճ Գրատճ  
 աղերսագիրքներ: — 2. Բանք Ռեշիթ Բաշային: Եւ ժո-  
 ղով Աղգային: — 3. Գեր. Հասունի Հրատարակած  
 Ընդունել: Եւ անոր դէճ գրատարակել:

1. Երբոր Ս. Պապին շրջաբերականը ի 28  
 փետրվարի Կ. Պօլիս հասաւ. Գեր. Հասունը  
 Պորճօնեան Տէր Յովսէփին ձեռօք մէկ գա-  
 ղափար մը Մ. Տիւզեան Կարապետ Պէյին, և  
 միւսմ' ալ Ալլահօվերաի Մ. Աբրահամ Ամիրա-  
 յին յուղարկեց: Կարապետ Պէյը անոր ըսաւ.  
 Պարգապետ՝ գայթակղութիւնը ինչպիսի մեծ  
 Պմեղք ըլլալը ամենուն յայտնի է, ինչպէս որ  
 Պրիստոս Տէրն մեր ալ ըսաւ, Հասուն Գերա-  
 Պայծասին տուած գայթակղութիւնը մէկ մեծ  
 Պրեռ յարգ (սաման) ի մը պէս սաստիկ հո-  
 Պվեմը առջև իյնալով, բոլոր աշխարհք ցրուե-  
 Պցաւ. ալ ասիէ ետև իրեն կիյնայ մէկիկ, մէ-  
 Պկիկ ժողովելու:

Իսկ Ազգայինք՝ ի 4 Մարտի, ժողովելով  
 Սամանձեան Մկրտիչ Ազգային տունը, որոշեցին  
 առ ժամս դարձեալ նորոգել իրենց առջև բո-

դոքը: Ուստի ի 5 Մարտի տպեալ հրատարակեցաւ Գեր. Հասունեանին խրկուած նորոգ բողոքը որ ըստ այսմ էր:

## Բ Ո Ղ Ո Ք .

» Առ Գեր. Անտոն Վարդապետ և Արհիեպիսկոպոս Հասունեան:

» Մեծապէս մխիթարուեցանք կարդալով

» Ս. Հօր Պիոսի թ. Քահանայապետին . . . . .

» Անցեալ տարի Փետրուարի 24-ին առ Ձեզ

» ուղղեալ բողոքնիս, կարծենք ըստ բաւականին

» ծանուցեր էինք՝ ներքին համոզմամբ, Ազգիս

» խռովութեանց սկզբնապատճառ և շարժիչ

» ըլլալնիդ, մանաւանդ հոգևորէն դուրս ազգա-

» յին իրաւանց դէմ կենալովնիդ, և գորշելի

» չարամատեանը հանկով պատուական ընտա-

» նեաց և ազգայնոց անիրաւ զբարտութիւն-

» ներ գրելովնիդ. որով բոլորովին մեր վստա-

» հութիւնը վերցուած բռնադատուեցանք չըն-

» դունել զՁեզ: Մէկ տարուան փորձը բաւա-

» կան անպացոյց եղաւ, որ մեր դատաստանը ա-

» մենեին չեր սխալած. որովհետեւ այս միջոցիս

» Ձեր բռնած ձամբան բոլորովին անհամաձայն

նեղաւ Քրիստոսական ոգւոյն, և դայթակղե-  
ցուցիչ բոլոր ժողովուրդեան . . . :

Պատի ամենեւին անվտանգ ըլլալով Ձեր  
ղեայ, դարձեալ հաստատութեամբ կը նորո-  
գենք մեր բողոքը առաջի աշխարհի, ՈՐ ԱՍ-  
ԿԻՅ ԵՏՔԸ ԲՆԱԻ ՄԷԿ ԿԵՐՊՈՎ ՄԸ ՉԵՆՔ  
ՃԱՆՉՆԱՐ ԶԶԵԶ ՄԵԶԻ ՀՈՎԻԻ ԵՒ ԱՌԱՋ-  
ՆՈՐԴ:

Կ. Պօլիս, <sup>5</sup>/<sub>17</sub> Մարտ 1854.

Արդէն Ձեզի գէժ բողոքող  
Քաթօլիկ ժողովուրդ Հայոց:

Ազգայինք այս բողոքը հրատարակելէն վերջը  
ի 13 Մարտի, Եկեղեցականք, և Աշխարհա-  
կանք զատ, զատ երկու աղերսագիր նոյն ինքն  
Պիոս Թ. Պապին գրեցին, ծանուցանելով իրեն՝  
թէ ասկէ ետեւ զԳեր. Հասունը խղճիւ չեն կրո-  
նար ընդունել, և իրենց հոգևոր Հովիւ ճա-  
նաչել: Բայց Գեր. Հասունը ի 6 Մարտի ամեն  
աշխարհական զգերը, և մէկ քանի օրէն ա-  
ռանձին, առանձին երեք Միաբանները իրեն  
կանչեց. ասոնց Ս. Քահանայապետին շրջաբե-  
րականին խմաստը բացատրելով, սկսաւ ամե-  
նուն հետ սիրով վարուիլ: Իր աթոռակալը  
փոխեց, և տասներկու Եկեղեցականներէ բաղ-

կացեալ խորհրդականաց ժողով մը հաստատեց, վեցը աշխարհիկ գղերէն, իսկ միւս վեցը ի վանականաց: Ասոնցմէ շատերը հրաժարեցան, և ոչ մէկ անգամ իր նիստը կարող եղաւ կարգաւորեալ ընելու. ուստի քիչ ժամանակէն նոյն ժողովն ալ ցրուեցաւ. վասն զի առ երեւթբ րան մի էր:

**Եւ** ի 7 Մարտի, յաւուր Կիւրակէի բոլոր Ազգը հրաւիրեց ի Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցին, Ս. Պապին թուղթը կարդալու համար, ուր որ միայն Հասունեանք եկած էին:

2. **Իսկ** ես հոս տեղըս զանց կընեմ այս Ազգային մեր գործողութեանց վրայ ճերութեանց մէջ եղած բանակցութիւնները: Այս պատճառաւ ի 19 Մարտի, Բ. Ռէշիտ Բաշայն առանձին Կէօչէք Յովսեփ Էֆէնտին, և Գասպար Պէյլին հետ խօսեցաւ, ու ըսաւ, — յո՞ւք այս անգամ ընդունեցէք զԳեր. Հասունը. ես ալ անոր ընդունել կուտամ ինչ որ խնդիրք ունիք նէ՞ր — : Իսկ Ազգապետ Նիկողայոս Պատրիարքը Ս. Պապին թղթոյն պատասխանը տուած ժամանակ, առանձին ծանոյց իրեն՝ որ այն Եկիսկոպոսաց ընարութեան շրահանգը՝ առ ժամս ժողովրդեան հրատարակելու պատշաճ

չը տեսայ, որպէս զի Ձեր բաղձացած խաղա-  
ղութեանը արգելք մը չըլլայ, Ազգին անըն-  
դունելի ըլլալովը ևայլն: Եւ ապա ի 22 Մարտի  
յընդհանուր ժողով կանչեց բոլոր Ազգը. և  
յորդորեց զիրենք իբրև հոգևոր զլուխ՝ ընդ  
Գեր. Հասունեանին հետ սիրով և խաղաղու-  
թեամբ վարուիլ. ինչպէս որ Ս. Պապը կը բաղ-  
ձայ և կը յորդորէ զմեզ զամենեօին իրեն մեզի  
խրկած այս վերջին շրջաբերականովը ըսաւ  
ևայլն: Բայց ժողովականք ամենքնին մէկ բե-  
րան սրտասխան տուին իրեն. թէ մենք ամենք-  
նիս Գեր. Հասունին վրայ զայթակղած ենք. և  
անոր հետ ամենեկին չենք կրնար խղձիւ միա-  
նալ, և զանիկայ ընդունել մեր հոգևոր զը-  
լուխն ևայլն:

3. Եւ որովհետև այն վերոյիշեալ Ս. Քա-  
հանայապետին թուղթը ըստ ամենայնի Գեր.  
Հասունին շատոնցունէ մտացած խորհրդոցը  
ամբողջ հաստատութիւնը էր, ուստի Ազգին  
սիրաբ շահելու համար, ամենայնիւ ջանաց, և  
ամեն հնարք ի գործ դրաւ. խոնարհեցաւ, կամ  
ինքն անձամբ զնաց այցելութեան վշտացու-  
ցած կողման, և կամ զանոնք առանձին, առան-  
ձին իրեն հրաւիրեց քաղցրութեամբ խօսակ-

չեցաւ իրենց հետ: Եւ Ազգին սիրտը աւելի վաստըկելու համար իրեն ստորագրու թեամբը ի 8 Մայիսի 1854, յ Հովուական թուղթ յ մը ալ հրատարակեց. որուն մէջ Քահանայապետական համառօտագրին հրատարակմամբը խաղաղութեան և սիրոյ յարմար միջոցները ի գործ դրնելը կը յայտնէ: Եւ ետքը կաւելցընէ 6 երրորդ երեսը՝ ըսելով:— յ Իսկ հիմա քանի մը յ Ազգային վիճեալ իրօց վըայօք խօսքերնիս դարձընելով, արդէն ազգերնուս խաղաղութեանը յ համար ըրած մեր խոստմանցը համեմատ կը յ յայտնենք մեր միտքը, ու որոշումը նոյն իրաց յ վըայօք, որք են Աղքատանոցի, Հիւանդանոցի, յ դպրատանց, ու ժամերու ելեմտական մատակարարութեանը, ու կտակներու վըայօք:

• **Առաջինին** նկատմամբ՝ այսինքն Աղքատանոցի ելեմտական մատակարարութիւնը ու աշխարհային կարգադրութիւնը Ազգին կողմանէ նայուիլ: Բայց թէ աղքատաց կողմանէ յ Յպիսկոպոսին առաջարկութիւն մը ու խընդրուած մը ըլլալու ըլլայ, Յպիսկոպոսը Ազգին յ իմաց աալով՝ Ազգին կողմանէ պէտք եղած հօգը յարուիլ:

• **Երկրորդին**՝ այսինքն Հիւանդանոցին վը-



«**րայօք**, եթէ աղքատաց համար չէ, ասիկա՝  
«**րանց** ի կրօնական հանգամանքներէ, Եպիսկո-  
«**պոսին** վերաբերութիւն չունի: Եթէ աղքա-  
«**տաց** համար է, ան ատեն վերի յօդուածին  
«**համաձայն** վարուիլ:

«**Երրորդին** վրայօք՝ Դպրատունները երկու  
«**կերպ** ըլլալով, մէյմը Ազգին կողմանէ, մէյմ  
«**ալ** առանձին անձանց ջանքովը շինուած:  
«**Առաջիններուն** ելեմտական մատակարարու-  
«**թիւնը** Ազգը ու երկրորդաց՝ առ առանձին  
«**անձինքները** հոգալով, թէ առաջնոց՝ ու թէ  
«**երկրորդաց** կրօնական ու հոգևոր հանգամա-  
«**նացը** վրայօք Եպիսկոպոսին հսկողութիւնը  
«**գործքի** դրուիլ:

«**Չորրորդ** խնդրոյն վրայօք՝ այսինքն Ազ-  
«**գային** ժամերուն նկատմամբ, Ազգին կողմանէ  
«**ժողովով** որոշուած կանոնին գործադրու-  
«**թեամբ**, Անոնց կարգադրութիւնը ու կրօ-  
«**նական** հանգամանքը Եպիսկոպոսին կողմանէ  
«**նայուելով** Մի-Լէ վեւելեբոն, Եկեղեցական-  
«**ներուն** դրուիլը ու փոխուիլը, ու տարին ան-  
«**գամ մը** հաշուեցիրներուն նայուիլը Եպիսկո-  
«**պոսին** հետ համախոհ Ազգային ժողովքի մէջ  
«**տեսնուիլ**»

„ Հինգերորդ խնդրոյն նկատմամբ՝ Ատակ-  
„ ներու հոգևորի վերաբերեալ բաներուն հըս-  
„ կողու թիւնը Եպիսկոպոսին պատկանելուն հա-  
„ մար՝ անոնք ատենօք Եպիսկոպոսին իմաց տը-  
„ բուելով ու զործադրութեանը նկատմամբ  
„ պէտք եղած ազահոովութիւնը տրուելով,  
„ Ֆնացածը Ազգը իր յարմար տեսած եղանա-  
„ կին զնել և այլն . . . :

„ Երբոր Գեր. Հասունին այս Հովուական  
„ թուղթը հրատարակեցաւ Մայրաքաղաքիս  
„ մէջ: Ասոր պատասխան. — „ Առ Գեր. Տէր Ան-  
„ տոն վ. Հասունեան Արքեպիսկոպոս. — վեր-  
„ նագրով ի 28 Յունիսի \* տետրակ մը տպուե-  
„ ցաւ, զորնոր համառօտելով կը զնենք հոս:

#### ԳԵՐԱՊԱՅԾԱՌՈՒ ՏԵՐ:

„ Կարդացինք 1854 Մայիս 8-ին զրած, և  
„ նոյն ամսոյն 23-ին հրատարակած Ձեր Հո-  
„ վուական թուղթը, զորնոր գրելու պարտա-  
„ տաւոր եղեր էք Պիոս Թ. Սրբազան Քահա-

---

\* Ի Կ. Պօլիս, 1854, ի տպարանի Միւհնետի-  
ղեան Յովհաննու:

նայապետին այս տարի փետրվար 2-ին Հայոց  
կաթօլեկաց զրաժ յորդորական թղթէն շար-  
ժեալ: Ուստի պէտք առաջ իւր քրտնոք (քննող ք-  
երեւը իւր քրեք) խողողութեան եւ սիրոյ յարմար թ-  
շոյները ի գործ տընել, թեպէն Աստուծոյ արտաբ-  
րութեան առջին Ձեք չըլլան: Եւ պարտքը դուք Ձեք  
հողմանէ իստորած ըլլալու գիտմամբ:

Բայց ներքէ մեր համարձակութեանը գե-  
րապայծառ Տէր. այն Ձեր ի գործ դրուած  
խաղաղութեան եւ սիրոյ յարմար միջոցնորդ  
որոնք են. որ ութն ամեայ ազգային աղէտաղի  
խռովութիւնը վերցընելու, ու նորէն աւե-  
տարանական սէր ու խաղաղութիւնը ազգիս  
մէջ հաստատման տրնկելու կարող պիտի ըլ-  
լան . . . . .:

Գերապայծառ Տէր, թէ որ ճշմարիտ խա-  
ղաղութեան եւ սիրոյ միջոցները ի գործ դը-  
նելու կամք ունէիք նէ. պէտք էր Ձեզի, Ա-  
խռովարար, ազգատեաց եւ օտարական անձինք-  
ները Ձենէ բոլորովին հեռացնել: Բ. Հան-  
դարտ, խաղաղ, առաքինի ու ճշմարտասեր  
անձինքներէ բազկացեալ եկեղեցական ժողով  
մը կարգել: Գ. Ազգին հետ մեկ տեղ ջանալ  
Արեւելեան եկեղեցւոյ սահմանագրութիւնները

7 ու ազգային իրաւանց ամբողջութիւնը պա-  
7 հել, որով և ազատել մասնուած Նախագա-  
7 հական Աթոռը. զոր Ազգը այնչափ ծանր,  
7 ծանր փնասիւք արժանացաւ ձեռք բերելու,  
7 որուն համար թէ եկեղեցականք և թէ աշ-  
7 խարհականք միշտ Սուրբ Աթոռին բողոքե-  
7 ցին: Գ. յարդարութենէ պարտաւորեալ ան  
7 խժոխային չարամասնին մէջ յանուանէ յա-  
7 նիրաւի բամբասուած, զըպարտուած մեծ յար-  
7 գոյ եկեղեցականաց, երևելի անձանց և ըն-  
7 տանեաց հաւատք, յարգ, անուն և համ-  
7 բաւնին որ և իցէ ճանապարհաւ ուղղել, և  
7 որոնք որպատճառ եղան, այն յանցորդները ըստ  
7 Թոմէ Կոնստանտինոպոլսեաց իրաւամբ պատժել, որովհետեւ  
7 Գուք այն չարամասնին հեղինակութիւնը  
7 վրանիդ չառիք, ուստի պէտք է արդարու-  
7 թեամբ դատէք, որոնք տակաւին փորերնին  
7 անկած քաղքիս մէջ արձակ համարձակ լըր-  
7 բութեամբ կը պարտին. և այն դատատանէն  
7 անպարտ և անմեղ արձակուած Ձեր ձեռ-  
7 քով աքսորուած վեց դժբաղդ Քահանայները  
7 ահա՛ դեռ իրենց Հայրենիքնին չեն դառնար: Ն.  
7 Պէտք էր Ձեզի հեռացընել ան օտար, ազ-  
7 դատեաց խոռվարար և առեղի եկեղեցական-

դները, որոնք Ազգին և Քաղաքացւոց կամացը  
հասկառակ Եկեղեցիներուն կը տիրեն, կը բռն-  
նանան միշտ իրենց իշխանութեանը մէջ յա-  
րաակելով: ասոնք կը սեմ շուտով փոխել, և  
Ազգին բաղձանացը ու յօժարութեանը յար-  
մար առաքինի անձինքներ անոնց տեղը կարգել:

Թէ որ ասոնք, և ասոնց նման գործողու-  
թիւններուն ձեռք զարկած ըլլայինք նէ, ան  
ատէն իրացընէ մենք Ձեր Տէր Տէր Կոստ օրինակ-  
ներովը փոխարէն իրոյ և խաղաղութեան պարտ ու  
պարտած արդիւնք պէտէ ասէնայինք (յերես 5):

Բայց որ բարի օրինակներ են որ մեզից ու-  
ցըցիք: Թողունք անցածները, ահա նոյն իսկ  
այս օրերը քանի, քանի ստութիւններ. որ-  
չափ խարդախութիւններ երևան չելան: Ձեզի  
հրաւիրեցիք եկեղեցականները. ասոնք յանի-  
րաւի ընդ ամենայն աշխարհ բամբասուած,  
զրպարտուած հաւատքնոյն ու պատուոյն հա-  
մար Ձեզմէարդարութիւն պահանջեցին: Գուք  
սանկ ու նանկ փախստական խօսքերով զանոնք  
արձրկելով, Ազգայինները Ձեզի կանչեցիք, և  
ասոնց յայանեցիք Ձեր Եկեղեցականաց հետ  
հաշտուիլը, ու Ազգին ի սէր խաղաղութեան մէկ  
քանի բան շնորհելիդ ծանուցիք, ինչպէս որ,

« Զովուականիդ վեցերորդ երեսը նշանակած է ք:  
« Իսկ Ազգայինները անոնց ամենուն այսչափ ա-  
« տեն յանիրաւի յափշտակածնիդ Ձեզի խմացու-  
« նելէն վերջը, իբր Արեւելեան Ազգ ազգային սահ-  
« մանադրութեանց և իրաւանց ամբողջութիւնը  
« պահանջեցին: Դուք դարձեալ սանկ ու նանկ  
« խաբուսիկ խօսքերով զանոնք արձակեցիք.  
« ու Ձեր կողմնակիցները կանչելով, անոնց ալ  
« յայտնեցիք, իբր՝ թէ Եկեղեցականաց հետ, և  
« թէ Ազգին հետ սիրով և խաղաղութեամբ  
« դատերնիս լըմնացիք: Նոյնը գրեցիք ի Զովու,  
« և ասդիս, անդինս Արդ՝ քիչմալ Զովուականիդ  
« միջի գրուածները քննենք:

« Թե որ ուղտային շփուկա-լեւանի ծագած ասիւնը  
« իւր ցաւէիք, ու շէիք իրնար հասանիլ վանտիան վար-  
« րտադեպաց և իբենց ժող-վարաց հերետիկոսի, և հեր-  
« յոսածողի ինչպս անուան դնել (յերես 5) հապա  
« ինչո՞ւ այնչափ ատէն լուռ կեցաք, ու յօժար  
« սրտով կը լսէիք, որով ուղղակի ձեռնտու  
« եղաք ամբարշտաց:

« Թէ որ այսպիսի անվայել գործողութեանց  
« համար Հասովէն 1853, յունվար 20-ին գրած  
« Զովուասիանիդ մէջ փառապիտ Ձեր արհամարհանքը

յայտնելու (յերես 5): Ի՞նչպէս Ձեր Հռովմէն  
դառնալէն մէկ քանի օր վերջը Ապրիլ 16-ին,  
անխիղճ անմեղ ժողովրդեան վրայ ան անվազեր  
բանադրանքը հրատարակել տուիք,

Թէ որ հիմա հին և նոր Ազգային կա-  
նոնաց համեմատ, Աղբարանոցէ, Հիւանդանոցէ,  
Գորտաբանոց ու Եկեղեցեաց Էլեմէնտն Տարաբար-  
Ելեանք, և Կառնիւերու վրայօք Ձեր Ֆիքսը, ու որո-  
շու՛նք ի՞նչ յայտնէ՞ք (յերես 6): Հապա ինչո՞ւ  
այսչափ ատեն և այս քանի՞ տարի է, որ միշտ  
հակառակը կը զինէիք. Ազգը կը խռովէիք,  
մէկզմէկ կանցունէիք. վարձաւոր Եկեղեցական-  
ները ոտք կը հանէիք, հաւատք, օրէնք, կրօն,  
Աստուածապաշտութիւն, և եկեղեցական կա-  
նոնները մէկզմէկ կանցունէիք: Մինչև այս  
պատճառաւ Գեր. Ազգապետ Պատրիարք Նի-  
կողայոս վարդապետը Ձեր ժողովոյն մէջ յան-  
կարծակի մահուան պիտի զոհէիք. Բրուն  
սպանալով բողոքեցիք Ձեր տեղապահ և Աթո-  
սակալին ձեռօք, թէ այն կանոնները Ազգա-  
լին Կանոնադրէն պէտք է հարկաւ ջնջել,  
իրր զի ասոնք եկեղեցական իշխանութեան  
միայն վերաբերած ըլլալը անյաղթելի պատ-  
ճառարանութեամբ ցրցուցեր են եղեր: Ճըշ-

71 մարիտ կրօնն որչափ սրբազան և սուրբ է իր  
72 կողմանէ. և առաքինի արդարոց ձեռքով ինչ-  
73 չափ կը պայծառանայ, այնչափ ալ նախան-  
74 ձորդաց ձեռքը հզօր գործիք կըլլայ իրենց  
75 փառասիրութեան յազուրդ տալու համար:  
76 Գերապայծառ Տէր, թէ որ այսչափ կը փաղ-  
77 ճաք ու կը փափաքիք Անկեղեցութեան Բարե-  
78 փութութեանով. և ոչխարհութեան օգուտն ու  
79 մանադրութեան երով յաստմանալը, և ուրիշ աշխարհ  
80 նման գիտութեանց, աշխարհն հարսութեանց, գործ-  
81 նախն ու ազատութեան արհեստից միջոցներով զարդա-  
82 բեւը (յերես 7): Ինչպէս կըլլայ, որ Ազգային  
83 արարողութիւնները ծեսերը կը փոփոխուին.  
84 — Հին Ազգային սահմանադրութիւնները ան-  
85 հետ կըլլան. — Մայրենի լեզու ին ծաղկիլը Ձեր  
86 դպրոցներէն կը հալածուին. — շքանշանի մաս  
87 օտար, և եկամուտ արարողութիւնները օր  
88 ըստ օրէ Ազգիս մէջ մտցնելու կը ջանացուի.  
89 — Ազգային օրենքները և իրաւունքները ջնս-  
90 ջնուելու կաշխատուի. — բարեկարգ և առա-  
91 քինի Անկեղեցականները իրենց հայրենիքէն  
92 կաքօտուին ու կը հալածուին. — ծաղկեալ  
93 միաբանութիւնները կործանելու կը ջանա-  
94 ցուին. — Ազգային դպրոցները գոցուելու կաշ-



խառնուի. — Ի սուգ և ի տրամութիւն քաղաքացւոց Գրասպետի դպրոցին վրայ Յանսենեան բանտին նման յաւիտենական լռութիւնը կը տարէ: Ո՛հ այս ի՛նչ զեղեցիկ փափաք ազգային յառաջադիմութեան: Ասո՞նք են արդեօք Ձեր մեզի տուած բարի օրինակները. միթէ ասոնց համար էր տուած Խողողաւէտն Լոմբարդ:

Գերապայծառ Տէր, բերաննիս բացուած է, գրիչնիս պատրաստուած, ըսինք, կըսենք, ու յաւիտեան միշտ պիտի ըսնք, շարժեալ միայն մեր ներքին համոզմանէ ու ի խղճմբտանաց, այն վերջին մեր մտաց հաստատուն օրոշումը, զորն որ այս տարի Մարտի 22-ին, Ազգային ժողովով Գեր. Ազգասպետ Պատրիարքին յայանեցինք. այսիքքն, Ա. Ասիէ ետև ազգակործան կողմնակցութեան հետ ամենևին չը միանալ: Բ. Չընդունել բնաւ զՁեզ մեզի օրինաւոր առաջնորդ և հովիւ, որ այսչափ Գայթակղութեանց և մեղաց պատճառ եղաք:

Գերապայծառ Տէր. շատ անգամ այս բաննիս համար ջերմ արցունքներով աղաչեցինք զԱստուած, և մասնաւորապէս զՀոգին խաղաղութեան, որ մեր մտքին այս հաստատութիւնը թէ որ մոլորած է նէ՛ լուսաւորէ, շուկէ

Ի ու պայծառացրնէ: Բայց տեսանք որ ամեն-  
Ի նուս միտքը այս որոշմանս վրայ անսխալիս կը  
Ի մնայ: Աւստի ասիկայ այսպէս գիտնալէն վերջը,  
Ի ալ Ձեզի կը մնայ ասկէ ետե ինչ ճամբայ բըռ-  
Ի նենիդ. որով այսչափ ատեն այլեկսճեալ Աս-  
Ի տու ծոյ Եկեղեցին քիչ մը ալ հանդարտի, ԷԼԷ  
Ի էցէ է Ձեզ ճշմարիտ Լոգի խողաղութեան և ուրոյ:  
Յունիս 28. 1854 ի Կ. Պօլիս.

### 33.

1. Աղփային Ժողով: — 2. Երէնդասանից Ընդդրութեանը:
- 3 Սէլէէանին Եպիսկոպոս Յեանդարտելը: — 4. Գեր.
- Հասունեանին Բ. Գանէն Ընդդրանած Պէրութը: — 5.
- Ե. Աղփադէտ Նիկողայոս Պարիտրքին Ժողով:

1. Վերոյիշեալ 32. Թուոյն մէջ յայտնա-  
պէս տեսանք. որ Հասունեանց կողմէն բաժ-  
նուելու համար Ազգայնոց բրած ամեն ջանք և  
աշխատու թիւննին բոլորն ալ պարտուր զընաց:  
Վասն զի Գաղղիացւոց Գեսպանը՝ նախապաշա-  
րեալ ի Հասունեանց անտի. ուժգին Գեր. Հա-  
սունին կողմը բռնեց: Ասոր համար Օսմանեան  
Տերութեան Հայազգի Կաթօլիկները երկուքի  
բաժնուելոյն համար Բարձրագոյն Արդարու-

Թեան Ատենին մէջ որոշած իր հաստատու-  
թիւնն ալ անգործ մնաց: Ինչպէս որ ի 19  
Մարտի, Արտաքին գործոց Պաշտօնեայ Բ. Ռե-  
շիտ Բաշայն յայտնապէս կէօչէեան Յովսեփ  
Էֆէնտիին, և Գասպար Պէյին զուրցեց.— «Ինչ  
որ խնդրելու լլաք նէ՛ ըսաւ. զամենքը Գեր.  
Հասունին ընդունել կուտամ. միայն թէ դուք  
այս անգամ զԱնիկայ ձեզի հոգևոր զլուխ ըն-  
դունեցէք:

Գազդիացւոց Գեոպանին համար Նոթ-  
աշարէւու ըսի, ինչու որ զինքն այնպէս հա-  
մոզեր էին. իբր եթէ Գեր. Հասունին դէմ Ազ-  
գին այսչափ հակառակութիւնը ուրիշ բան է  
յառաջ եկած չէ, բայց եթէ՛ Ազգայնոց ան-  
զուսպ, անսանձ ընթացքէն, և իրենց անկրօ-  
նութենէ միայն: Ասոր հակառակ (ինչպէս որ  
սկիզբէն մինչև հոս պատմեցինք), յայտնի ակ-  
սանք՝ որ Ազգին ընդգիմութիւնը սոսկ մի միայն  
իրեն իրաւանց պաշտպանութեանը համար էր,  
որոնց Գեր. Հասունը կրօնական կերպարանք մը  
ապլով, զամենքն ալ ջնջեց, փծացոյց, մեր-  
կայնելով թէ զԱզգը, և թէ Նախագահական  
Աթոռը: Ապա ի 28 Մարտի Սամանձեան Մը-  
կրտիչ Աղային տունը Ազգային ժողով եղաւ:

Այս ժողովոյն առջին դրուեցան նախ՝ Պիոս Բ. Շրջաբերականը. երկրորդ՝ Վեր. Հասունին բռնած ընթացքը. երրորդ՝ Բ. Ռէշիա Բաշային խօսակցութիւնը, և Տերութեան ընթացքը և այլն:

Ասոնց ամենուն վրայ շատ մը խօսելէն և վիճարանելէն վերջը. շատերուն կարծիքը ասոր գլխաւորեցաւ: Պրովճեակ ըսին Վեր. Հասունին վրայ այսչափ ժամանակէ ի վեր դայթակդած եմք, և իրեն դէմ երկու անգամ բողոքած եմք. ուստի դարձեալ անոր հետ խօսակցութեան մտնելու և ոչ իսկ արժան կը սեպենք: Եւ այս մեր հաստատուն որոշողութիւննիս ալ պէտք է Տերութեան ալ յայտնել:

2. Բայց ասկէ ետեւ Երեսփոխանք ալ ոմանք անձրկեցան, և թուրացան այսչափ տարիներէ ետեւ շարունակ գիշեր ցորեկ Վեր. Հասունին լարած ազգակործան որոգայթները կործանելու համար ի գործ դրած ջանք ու աշխատութենէն: Իսկ ոմանք ալ բարեօրոտութեամբ Վեր. Հասունին կեղծեալ հեղահամբոյր քաղցր խօսակցութենէն խաբուեցան: Սրովճեակ այսչափ տարիներէն վերջը՝ իր դիտած ամեն վախճանին հասած էր, Ազգին ամեն պէ և զօրու-

Թիւնը խորտակելով, և ամէն իրաւունքէն զանի մերկացրնելովը:

Այս պատճառաւ Ազգապետ Նիկողայոս Պատրիարքին իշխանութիւնն ալ անհանդուրժելի վիճակի մէջ ընկաւ: Ներքին կռիւներուն պատճառաւ Պատրիարքարանին գործքերն ալ ըստ կարգի առաջ չէին երթար: Երկոտասանից Գերագոյն ժողովոյն Անդամները ալ բնաւ երբէք չը ժողովեցան: Ամեն Պաշտօնատեարները ցրուած էին, և Ազգատաց գործքը երեսի վրայ մնացեր էր:

Այս ամեն թշուառութիւնները Ազգապետ Պատրիարքը տեսնելով, և այլ ևս չի կրննալով համբերել, սկսաւ զիշեր ցորեկ աշխատիլ, անձամբ ամենուն երթալով, և աղաչելով, ողորմիլ թշուառ Ազգին վրայ, վերջապէս ամենուն վշտացեալ սիրտը շահելով համոզեց զալեները, և ի 2 Մարտի 1855, նորէն Երկոտասանից ընտրութեան համար ընդհանուր Ազգային ժողով գումարեց: Վասն զի առջի Երկոտասանները ազգային խռովութեան պատճառաւ հինգ ու կէս տարի շարունակ իրենց իշխանութեան մէջ մնացեր էին: Եւ այս ժողովոյն մէջ քուէարկութեամբ ընտրուած Երկոտասանները ասոնք էին:

Ալիքսանեան Տիւզ Տիրան Պէյ. Պէտան Պէյ. Սինապեան Գասպար Պէյ. Սինապեան Աղայ Պէյ. Կիւզէլ Յարութիւն Աղա. Պիլէզիկճի Յովհաննէս Աղա. Տամաթ Յովհաննէս Աղա. Հասունեան Մուսա Չէլէպի. Թընկըռ Բուզիկ Աղա. Թօրուզ Պետրոս Աղա. Տէօլվէթ Ֆէյրատ Աղա. Կէօզէեան Թովմա Աղա:

Ապա Գասաւորներն ալ ընտրուեցան:

Երբոր Ազգապետ Նիկողայոս Պատրիարքը այս նոր ընտրուած երկոտասանից ժողովոյն հետ մեկ տեղ կարելի եղածին չափ Ազգին գործքերը սկսաւ կարգի և կանոնի դնել, միւս կողմանէ Գեր. Հասունն ալ ասկէ ետեւ անզգալի եղանակաւ Ազգին արտաքին Պատրիարքական իշխանութիւնը տկարացընելու կերպ, կերպ հնարքներ մտածեց:

3. Ասկէ առջի գլխոյն մէջ ըսեր էինք՝ թէ Նիկողայոս Պատրիարքը Բրօքականայէն եկած Նախկոպոսոսաց ընտրութեան Հրահանգը ըստ օրինաց Ազգին չէր հրատարակած, և ասոր պատճառն ալ Պիոս Թ. Պապին գրած էր: Ի վերայ արբ ամենայնի, Գեր. Հասունը ուզելով Սէլվեան Վարդապետին Ազգապետութեան ժամանակ իրեն համար ըրած հաւասարիմ ծառա-

յո թեանցը փոխարէն մը հասուցանել, զանիկայ 1 արին (Երզրում) ի վերայ թեմական Եպիսկոպոս ձեռնադրել կամեցաւ:

Պիոս Թ. Պապին շրջաբերականին վրայ հազիւ քիչ մը ժամանակ անցերէր, ահա Քեր. Հասունը նորէն սկսաւ խօսացած խոչընդոտներէն զիջելու համար: Եւ ինչպէս ի վերջոյ ի գործ բռնելու \*:

Որովհետեւ Աէլվեան Յովհաննէս վարդապետը այնպիսի անձ մի էր, որ իր Առաջնորդութեան ժամանակ իրեն վրայ Երզրումէն, Արդուինէն և ուրիշ Գաւառներէն և Քաղաքներէն զրուած ամբաստանութեան թղթերով Կ. Պօլսոյ Պատրիարքական, Նախագահական, և Հռովմայի Բրօքականապին Գիւանները լեցուած էին: Որուն համար ան ժամանակ Աստարձեան Տէր Տիմոթէոսն ալ Քննուչութեան պաշտամամբ Երզրում գնաց. (տես թիւ 17):

Այս անձին իրեն Ազգապետութեան ժամանակ նոյն իսկ Ազգին սրչափ ատելի բլլալն ալ տեսանք:

Արդ՝ Երզրումցիք իմանալով, որ իրենց վրայ թեմական Եպիսկոպոս մը պիտի ձեռնա-

\* Թուղթ Հախուական, ի 8 Մայիսի 1854. յերես 4.

դրէն, և անիկայ ալ Ալէլիանը պիտի ըլլայ, վերջին աստիճան խառնեցան, ուստի բազմութեամբ Քաղաքացւոց ստորագրութեան սկսան հետզհետէ իրենց աղերսագիրները յուղարկել Ազգապետ Պատրիարքին, Գերագոյն Ժողովոյն, և Նախագահին, ըսելով թէ չենք կրնար հոս տեղս թեմական Նպիտակոպոս մը ապրեցընել, ասոր համար բնաւ երբէք չենք ուզեր հոս ևայլն:

Գեր. Հասունը այս ամէն եղածները և գրուածները երբոր տեսաւ, քիչ մը ժամանակ լուռ կեցաւ. ետքը հոն մէկ քահանայ մը յուղարկելով. որուն ձեռքով քանի մը անձանց ստորագրութեամբ շինուած աղերսագրով կը խնդրէն, և կամ կառաջարկէն Գեր. Հասունին՝ թէ իրենց Նպիտակոպոս ընտրած են զԱլէլիան Յովհաննէս Վարդապետը:

Այսպիսի մէկ անձի մը միայն ընտրութեանը ինչչափ Բրօքականտային Հրահանգին բոլորովին հակառակ էր, այլ ի վերայ այսր ամենայնի Գեր. Հասունը Ալլիանին ընտրութիւնը Բրօքականտային Քարաինալաց Ժողովոյն իր ուղածին պէս ներկայացընելէն վերջը, ի 10 Օգոստոսի, 1855 զԱլլիան Յովհաննէս Վարդա-



պետը կարնոյ զաւտին վրայ ետքսկոպոս ձեռնադրեց:

4. Բայց զեր շատունը ինչչափ իր ու զածնները եպիսկոպոս կը ձեռնադրեր նէ ալ, այնչափ զոհ և հաճոյ չէր կրնար բլլալ: Ասան զի զանոնք իրենց թեմը խրկելու համար, միշտ Ազգին արտաքին իշխանութեան կը կարօտէր, որոյն ձեռքն էր եպիսկոպոսաց Մուրախասութեան Պէռաթը Բ. Գոնէն ընդունել: Ուստի ջանացաւ, հնարք մտածեց, ամեն կերպ միջոցները ի գործ դրաւ, և օտար զօրութեան ձեռնտուութեամբը վերջսպէս 1857. Մարտ ամսոյն մէջ իր հոգևորական իշխանութեանը համար ճերուութենէ առանձին Պէռաթ մը ընդունեցորոյ օրինակը այսպէս էր:

« Գաթոլիք միլլէթինին ու մուրու բուհա-  
նիլյէսինի ահբեամը մէզ հէպիլյէ իճապընճա քէն-  
տուսի իտարէ իթմէ քաէ, վէ թաշրա ֆիսգո-  
դրոսլերի տախի բապըթայը տինիլյէ իգթի-  
ղասընճա զերի իտարէ վէ նէզարէթինաէ օլ-  
տուզու հալաէ, հէնիս զ պէրաթը ալիշանըմ  
րիթա զըլընմամըշ օլտուզունտան, էմսալի մի-  
տիլլիւ քէնաիօինէ տախի պիր գըթա պէրաթը  
ալիշանըմ իթասը Գաթ օլիք պաշ ֆիսգորոս

• ԴՍՈՒ Անտոն Թէրաֆընտան պու քէրրէ ինհա  
ԴՎէ իսթիտա օլունմուշ օլուպ, գույուտաթը  
ԴԼէտէլ միւրաճաա րում միլլէթի մէսալիհի  
ԴՄէզ ճէպլիէսի էօթէտէն պէրու բաթրիք վէ  
ԴՃէօմաաթը միթրաթօլիսին իլէ միւշթէրէքէն  
ԴԽտարէ վէ ինհա օլունտուղու կիպի, Երմէնի  
ԴՄիլլէթի ումուրու ճիսմանիլէ վէ բուհանի-  
ԴՅէսի իշին տախի մախսուս էմրը շէրիֆիմ  
ԴԻլէ այրը այրը մէճիլիլէր Թէշքիլ գըլընմըշ  
ԴՎէ Գաթոլիք միլլէթինէ տախի մէճիս Թէշ-  
ԴՔիլինէ տայիր պունտան ագաէմ իթա գը-  
ԴԼընմըշ օլան էմրը շէրիֆիսմոէ գատիմի վէճհ  
ԴԻլէ ումուրու մէզ ճէպլիէնին այրըճա րույէթի  
ԴԹասրիհ օլունմուշ օլտուղունա նազարէն,  
ԴՈւմուրու բուհանիլէ վէ ճիսմանիլէ մաստէ-  
ԴԼէրի պաշգա պաշգա օլմագ իգթիգա խտէրէք,  
ԴՄիլլէթին ումուրու բուհանիլէ վէ ճիսմա-  
ԴՆիլիէսի մուխթէլիթ օլան իշլէրինտէ, բաթրիք  
ԴԻլէ միւշթէրիքէն ինհա օլունմագ, վէ սրըֆ  
ԴՈւմուրու բուհանիլէտէն օլան մէսալիհ հաղ-  
ԴԳընտա պէր մինվալը մէշրուհ մուգատտէմա  
ԴԳաթոլիք բաթրիքինէ վէրիլմիշ օլան էմրը  
ԴՄալիշանըմտա տախի Թասրիհ վէ պէյան գը-  
ԴԼընտըլը վէճհ իլէ, Ֆիազորոսը մումայիլէյհին

„բէիսի թապիի օլուսուդունտան պու մադուլէ  
„խուսուսաթ օլուսուլու մէրիյէ վէճճ իլէ եալը  
„նըզ անըն ինհայը մախսուսէսի իլէ ձէրիան  
„իթմէք իւզըէ իձապընըն իձրասը լազըմ կէ  
„լէձէյի ճիվանը Հիւմայունում գալէմինտէն  
„թասրիբ օլունուպ, քէյֆիյէթ մէճիսի խաս  
„վէ վիքէլայը ֆէխամըմտա տախի լէտէլ միւ  
„ղաքէրէ պէր մինվայը մուհարրէհ ումուբու  
„ճիսմանիյէ վէ բուհանիյէյի ձամի օլան մաս  
„լահաթ լարա տայիր Պասպը Ալիմիզէ թագաիմ  
„օլունաձագ թագրիբլէրին բում վէ էրմէնի միլ  
„լէթլէրինտէ իձրա օլունտուդու միսիլիւ զա  
„թուլք բաթրիքի իլէ պաշ ֆիսգորու մումայի  
„լէյհ թէրաֆլարընտան պունտան պէօյլէ միւշ  
„թէրիքէն թէմհիբ վէ թագաիմ օլունմասը վէ  
„սրբֆ ումուբու մէզհէպիյէյի եալընըզ պաշ  
„ֆիսգորու մումայիլէյ հին վէ ճիսմանի իշլէրի  
„տախի բաթրիք պու լունանլէրին ինհա էյլէ  
„մէսի սուհուլէթ վէ մազպութիյէթը մասլա  
„հաթը մուճիպ օլաձաղընտան պէր մուճիպի  
„իսթիտա պաշ ֆիսգորու մումայիլէյհէ Պէ  
„րաթը պիշանըմ իթասը պէյն էլ հիւզզար  
„թէնսիպ օլունմուշ վէ քէյֆիյէթ թէրաֆը  
„ճահանէմէ արզ իլէ լէտէլ իսթիլան օլ վէճճ

Եւլէ իմքսցը իգթիզատը խուսուսունա իրատեի  
Եսէնիյէյի միւլիւքեանէմ թատլիւղի իլէ էմբու  
Ելիւմայունու Շահանէմ սունուֆ վէ սուտուր  
Ելլէմիշ օլմաղըն պէր մինվալը մուհարրէր հա-  
Երէքէթ օլունմազ վէ սայրը միլլէթ բուէսաս-  
սընըն նայրլ օլտուղու քեաֆֆէյի իմթիյա-  
Եղաթա մազհար օլմազ իւղըէ պաշ Ֆիսզորո-  
Եսու մումայիլէյհին մէմուրիյէթը բուհանիյէ-  
Եսինի մութաղամմըն իշ պու պէրաթը ալիշա-  
Ենըմ թաօաիր վէ իթա գըլընտը: Թահրիբան  
Եֆի Թէմիլէ շէհրը շադմն իւշ հոսաղլամ սէնէ սուլի-  
Ելէ Թէմիլէ Շէ Ֆէլիմ Վէ Էլֆ: (1857 ի Մարտի):  
Եւանի 1273 մահը շապանը մուազղա-  
Եմըն իլքլէրինաէ:

Արդ՝ այս Պէռաթին զօրութեամբը Տերու-  
թիւնը Հայոց կաթօլիկ Ազգին երկու իշխա-  
նութիւնը կը ճանչնայ, մէկը Պատրիարքական  
արաաթին, իսկ միւսը Հոգևորական ներքին իշ-  
խանութիւնը: Ան զործողութիւնները՝ որոնք  
խառն են, երկու իշխանութեանց Լաֆրիքներու  
մէկ տեղ Քարճրադոյն Գրան պիտի առաջար-  
կուին: Կսկ սոսկ հոգևոր իշխանութեան վե-  
րաբերեալները ինքն ուղղակի կարող պիտի ըլ-  
լայ Բ. Գուռնէն խնդրելու:

ԽՈՐ ՀՐԳԱՅՈՒԹԻՒՆ

Գիտելու բան է, Յսմանեան Տերութեան մէջ Հայազգի Կաթօլիկները Հռովմայէն զատ, զատ զլիով Հոգևոր Իշխանութեամբ երկու մաս բաժնուէր էին: Մէկը Կիլիկոյ Պատրիարքական Իշխանութիւնը. Իսկ միւսը Կ. Պօլսոյ Նախագահական Աթոռը:

Առդ Գեր. Հասունեանին փառասիրութիւնը այս ժամանակէն սկսաւ արտաքին Իշխանութեան ձեռօք Կաթողիկոսական Աթոռոյն վրայ ալ բռնանալ. ներկայացընելով ինքն զինքն առաջի Տերութեան մի միայն Հոգևորական Գլուխ ամենայն Հայազգի Կաթօլիկաց. զոր թէ և նոյն իսկ Տերութիւնը ուզէր, և այնպէս ճանշար, ի վերայ այսր ամենայնի ինքը ըստ օրինաց չը պիտի ընդունէր: Ո՞ւր թողունք՝ որ ինքն այս լիազոյն Իշխանութիւնը Տերութեան կողմանէ ձեռք բերելու համար, և ասով հանդերձեալ միահեծան ներքին և արտաքին Իշխանութեանց դիւրութեամբ հասնելու համար որպիսի արդեօք գաղանի միջոցներ ի գործ չը դրաւ. ինչպէս որ քիչ մը ետքը յայննպէս պիտի տեսնենք: Ուստի մեր այս Փառքիկ խորհրդածութենէն վերջը դառնանք մեր պատմութեան:

Գեր. Հասունը Տերութենէն այս Պէռաթը  
ընդունելուն պէս ալ ասկէ ետե իր ամեն գոր-  
ծոյ հոգեւորական կերպարանք մը տալով, և  
Ազգին Պատրիարքական իշխանութեան ամե-  
նեւին չը դիմելով, սկսաւ իր կամքին և փա-  
փաքանացը յարմար ինքն իշխան գործողու-  
թեանց ձեռք զարնել:

Բայց ասով ալ գոհ չեղաւ, այլ սկսաւ ձեռքի  
տակէն Ազգին արտաքին իշխանութեանը հետ  
մաքառիլ, և զանիկայ իր իշխանութեան ներ-  
քեւը առնուլ: Վասն այսորիկ աս ժամանակ  
ողորմելի Ազգապետ Նիկողայոս Պատրիարքին  
իշխանութեան օրերը խիստ դառն, ցաւազին  
և անտանելի եղէն: Եր ամեն գործողութիւն-  
ներուն Գեր. Հասունը կերպ կերպ ծուռ մեկ-  
նութիւն կուտար.— և հակառակելով անոնց  
գործադրութեանը արգելք կըլլար.— յերկո-  
տասանից ժողովոյն անդամներէն մէկ քանի հա-  
տը որսալով, իրենց մէջ հանսարազ երկպա-  
ռակութիւն և հակառակութիւն կը սերմանէր:  
— Բայց ես ինչո՞ւ խօսքս կերկընցնեմ: Գեր. Հա-  
սունեանի պէս անձ մը երբոր Տերութենէն այն-  
պիսի Պէռաթը կարող եղաւ ընդունելու, ալ  
այնուհետե որպիսի՞ միջոցներու ձեռք չի զար-

նէր, որպէս զի ինքնիշխան տիրէ բոլոր Ազգին վրայ:

Այս ժամանակ Ազգին վիճակը օր աւուր զեշի կերթար. Երկոտասանները իրենց հրաժարականը տուին, ձանձրացեալ ալ ևս երկու տարիէն աւելի շարունակ Հասունեանց կողմնակցութեան հետ պատերազմելէն: Ազգին այս թշուառութեանը օգնութիւն հասնելու համար Ազգապետ Պատրիարքը աշխատեցաւ, և ամենուն սիրտը շահելով, և աղաչելով յամին 1858 . . . . Երկոտասանից ընտրութեանը համար Ազգային ժողով գումարեց: Եւ այս ժողովոյն մէջ քուէարկութեամբ ընտրուեցան յետագայ Երկոտասանները:

Կէօչէեան Պօղոս Էֆէնտի. Չամիչ Յովհաննէս Էֆէնտի. Սինապեան Գասպար Պէյ Սինապեան Աղայ Պէյ. Կիւզէլ Յարութիւն Աղա. Երամեան Անտոն Աղա. Տամաթ Յովհաննէս Աղա. Սամանձեան Մկրտիչ Աղա. Ապտուլլահ Միքայէլ Էֆէնտի. Գըլճը Սիմէոն Աղա. Թորոսեան Աստուածատուր Աղա. Մազլըմեան Անտոն Աղա \*:

---

\* Գլխաւորաբար երեսելի ղիտելու բան է, որ Ազգը այս քանի անգամ է որ Երկոտասանները ընտրեց,

Իսկ Գեր. Հասունը ուզելով Ազգայեաց  
Պատրիարքին ուժը բոլորովին անգործ ընել,  
ջանացաւ Նահապետեան Հ. Նղիսյ վարդապետ  
Պատրիարքական փոխանորդ (վէ. քիլը), իրմէն  
հեռացրնել, ուստի սկսաւ ամեն հնարք ի գործ  
դրնելու, անոր վրայ յանիրաւի կերպ, կերպ  
զրպարտութիւններ ընելով. թէ ազգայնոց, և  
թէ Հռովմայի Առջին: Վերջապէս Հ. Նղիսյ վար-  
դապետը՝ որ իր իմաստութեամբ, և քաղա-  
քագէտ խորագիտութեամբ և հանձարովը բո-  
լոր Ազգին յարզը, պատիւը և սէրը իրեն ձը-  
գեր էր, ի մեծ արամութիւն Պատրիարքին իր  
պաշտամանէն հրաժարելու ստիպուեցաւ: Որոյն  
յաջորդեց Մարաիրոսեան Հ. Բարսեղ վարդա-  
պետը ի Մխիթարեան Ռիտէ վէնէակոյ:

5. Ինչպէս որ վերը զուրյեցինք, թէ Գեր.

---

ամենքն ալ էին արք երևելք, ազնուական, բարե-  
պաշտք և երկխղածք Աստուծոյ, վկայեալք թէ իմաս-  
տուն քաղաքականութեան մասին մէջ, և թէ ի բարի  
վարս: Որով Գեր. Հասունին ժողովրդեան համար  
անգուսպ և անկրօն ըլլալուն բրամ ամբատանու-  
թիւնները, բոլորն ալ սուտ և զրպարտութիւն ը-  
լալը կը հաստատեն:



Հասունը իրեն կողմնակիցներուն ձեռօք զիշեր, ցորեկ կաշխատէր Աղգին արտաքին Նշխանութիւնը փճացրնել, և կամ յանարգ և ցած մեծակի մէջ բերել հասցրնել. որպէ՛ղ զի անոր պայծառութիւնը և զօրութիւնը իր տիրապետութեան արգելք չըլլայ, և իր ուժին տրկարու թիւն մը չի բերէ: Եւ Այս խորհուրդը զլուխ հանելու համար իրեն կողմնակիցներուն ձեռօք կերպ կերպ միջոցներ ի գործ դնելէն ի զատ, Ազգայնոց տարեկան տուրքերնին չվճարելու անուղղակի արգելք կըլլար: Մինչև իր կողմնակիցներէն սմանք յընդհանուր ժողովոյն մէջ համարձակեցան ըսելու՝ թէ Պատրիարքին զգեօտին, կերակուրին, և ծառային համար ամսէ ամիս առ առաւելն հազար զուրուշ տալը շատ է. ինչու որ՝ ըսին, մենք Պատրիարք ունինք. իսկ Ազգապետը մէկ խօսքով մը պէ՛տ է և այլն:

Այս ամեն հակառակութենէն ողորմելին է. Նիկողայոս Պատրիարքին սիրտը դուշ ելլելով ծանր հիւանդացաւ, և անբուժելի սրտի հիւանդութիւն ստացաւ: Ուստի 1860 Վեկտեմբեր ամսոյն մէջ իր հրաժարականը Բ. Դրան յուղարկեց: Արտաքին գործոց Պաշտօնեայ Բ.

Ապի Բաշայն իր առաջին պաշտօնառեւարներէն մէկը Նիկողայոս Պատրիարքին առանձին խաւրեց. իրեն հրաժարման պատճառը իմանալու համար, որուն պատասխան տուաւ՝ թէ ես հիւանդագին ըլլալով, ալ կարող չեմ իմ Ազգականաւարելու, ուստի ըստ խղճմտանուցս թէ Ազգին, և թէ Աղքատաց գործքերը երեսի վրայ անխնամ չթողլու համար իմ Իշխանու թենէս հրաժարեցայ:

Հ. Նիկողայոս Վարդապետ, Եօթներրորդ Ազգապետ Պատրիարք, մէկ քանի ամիսէն ետքը 20 Սեպտեմբեր, 1861, քառասուն և ութ ամաց հասակին կնքեց իր վշտալից, և տառապանօք լեցուած ցաւաղին կեանքը, ի վերջին աղքատութեան, և ծանր պարտկի տակ: Ամբողջ ութ տարի Ազգին բարութեանը համար միայն, միշտ զիշեր ցորեկ անխոնջ աշխատեցաւ: Վերջապէս Գեր. Հասունեանին փառասիրութեան և որոգայթից զոհ եղաւ: Եւ այսպէս Ազգիս երեսնամեայ Արտաքին իշխանութեան Հանգուցեալը գրէ թէ այսօր վերջին Եօթներրորդ Ազգապետ Պատրիարքը եղաւ. որոնց ցանկը հոս կարգաւ կը զընենք:

Առաջին Ազգապետ Հայազգի Կաթօլիկաց . . . . .	Յամի ճեառն.
Չուքուրեանն Յակոբոս վարդապետ, ի 22 Դեկտեմբերի . . . . .	1830
Վախճանեալ ի 17 Ապրիլի (տես ի թիւն 7) . . . . .	1834
Երկրորդ Ազգապետ և Պատրիարք Չուխաճեանն Յարութիւն վարդապետ (թիւ 8) ի Մայիսի . . . . .	1834
Վախճանեալ 17 Ապրիլի . . . . .	1835
Երրորդ Ազգապետ Պատրիարք Էնքսէրճեանն Հ. Գրիգոր վարդապետ, ի Մխիթարեան . . . . .	
Ուխտէ վիճնայի. (թիւ 8) ի մայիսի . . . . .	1835
Հրաժարեալ ի 15 Յունվարի . . . . .	1836
Չորրորդ Ազգապետ Պատրիարք Եսայեան Հ. Կարապետ վարդապետ ի Մխիթարեան . . . . .	
Ուխտէն վէնէակոյ, (թիւ 8) ի 21 Յունվարի . . . . .	1836
Հրաժարեալ ի 15 Ապրիլի . . . . .	1845
Հինգերրորդ Ազգապետ Պատրիարք (թիւ 16) . . . . .	

Տէր Անտոն վարդապետ Հասունեան ի 25 Ապրիլի . . . . .	1845
Հրատարեալ ի 18 Նոյեմբերի . . . . .	1845
Վեցերբորդ Ազգապետ Պատրիարք (Թիւ 17) . . . . .	
Կարնեցի Սէլվեան Յովհաննէս վարդապետ ի 26 Նոյեմբերի . . . . .	1848
Հրատարեալ ի 4 Սեպտեմբերի . . . . .	1852
Եօթնբորդ Ազգապետ Պատրիարք (Թիւ 28) . . . . .	
Կահանեան Հ. Նիկողայոս վարդապետ յԱնտոնեան . . . . .	
Ուխտէն, ի 12 Նոյեմբերի . . . . .	1852
Հրատարեալ ի 10 Գեկտեմբերի . . . . .	1860

### 34.

1. Պատրիարքին ընտրութեան համար Բ. Գանէն էիած հրահանգիրը. — 2. Ընդհանուր ժողովոց իտնտնարութեան ճշման հաստատութեանը եւ Յանչնարարական ժողովը: — 3. Ընդհանուր ժողովոց իտնտնարութեան հաստատութեանը: — 4. 120 Երեւոյնի ընտրութեանը:

1. Ի 4 Յունվարի, 1861. Բ. Գուսնէն Պատրիարքին ընտրութեանը համար հրամանագիր մը եկաւ, այս օրինակի:

« Գաթողիք միլլէթի բուէտարը վէ միւ-  
թէպէրանը էֆէնտիլէր,

« Գաթողիք բաթրիկի բու թպէթլու Նիկո-  
ղոս էֆէնտի ձէնապլէրինին զտաֆը սըհհէթը  
« պէտէնիյէսինտէն նաշի, բաթրիզիլք խրամէ-  
« թինտէն մուախտէրէն վուգու պուլան իաթի-  
« ֆասընըն գապուլի իլէ, եէրինէ սալթանաթը  
« սէնիյէնին վէ Գաթողիք միլլէթինին մագպուլի  
« օլաճագ պիր զաթըն, ուսուլի իւզըէ ինթի-  
« խապ վէ արղը խուսուսունա, իրասէյի սէ-  
« նիյէի ձէնապը ձիհանպանի միւթաալիզ վէ  
« շէրէֆսուտուր պույրուլմուշ օլմաղ իլէ, ու-  
« սուլու մէրիյէ վէճհ իլէ մէրխասալար վէ բուէս-  
« սա իլէ միւթէպէրանը միլլէթ ձէմ օլունա-  
« բազ, վէ պէյանէ հաճէթ օլմատըղը իւզըէ,  
« զաթը շէվքէթսըմաթը հազըէթը Փատիշա-  
« հինին ումում թէպասյը Շահանէլէրի հազ-  
« դընտա, տէրքեար օլան էֆքեարը միւշֆիզա-  
« նէի միւլիւքեանէլէրի իզթիզասընճա, Գա-  
« թ օլիք մէսհէպինտէ պուլունան թէպասի տա-  
« րըզէի Փատիշահինին տախի, հէր եխզտէն  
« թէէմինվէ թէէքիտի սաատէթը հալլէրի. ինաի  
« Աալխտէ միւլթէզէմ պուլունտուղունտան, էմը  
« ինթիխասպտէ պու գախտէ տէրփիշ, վէ հէր

«կէօնէ կ'ֆքեար վէ թէրաֆտարի վէ դարազ-  
«քեարի պէր թէրաֆ գըլընարագ, սաստեթը  
«հալ թէպասայէ խըտմէթ վէ վէտիէյի տէսթը  
«էմանէթի օլան մէսայիհի միլլէթի հիւսնիւ  
«խտարէ վէ բույէթ իթմէկէ միւղթէտիր վէ  
«էհը իֆիֆէտ վէ միւսթէղիմ վէ էղհէր ճի-  
«հէթ օլ մագամը միւթէպէրէ լայրգ պիր դա-  
«թըն ինթիխասպը իլէ, էմըր նասպը թէրաֆը  
«էըէֆը ճէնասպը ֆատիշահիտէն իսթիզան  
«օլունմագ իշիւն, իղթիզա իտէն մահգէրը ու-  
«մումինին թագաիմինէ մուպատէրէթ իյլէյէ-  
«սիզ տէյու» :

Սէնէ 1277 Ֆիյ բէճէպ 5 :

Ի 4 Յունվարի 1861.

Տերութեան այս հրամանը ի 25 Յունվարի,

2. Բարսէղ ֆոխանորդ վարդապետը բոլոր Ազ-  
գայնոց կը ծանուցանէ :

2. Ապա ի 17 ֆետրվարի, 1861, ի Ղա-  
լաթեա, Մայր Եկեղեցւոյն մէջ ընդհանուր Ազ-  
գային ժողով գումարեցաւ : Առ ժամանակեայ  
Նախագահ ժողովոյն ընտրեցաւ Աինապեան  
Գասպար Պէյն, և Ատենաղալիր Էնտազեան Յով-  
հաննէս Լիֆէնտին :

Երբոր Պատրիարքին ընտրու թեան վրայ խօսք

բացուեցաւ, Գասպար Պէյն առաջարկեց ժողովոյն, որ Պատրիարքին ընտրութենէն առաջ ընդհանուր ազգային ժողովոց համար մէկ կանոնադրութիւն մը շինուի՝ ըսաւ, որով ժողովականաց թիւը որոշուի յամենայն կարգէ և յաստիճանէ, յեկեղեցականաց, իշխանաց, մեծարգոյ արանց և յարհեստաւորաց և այլն:

**Այս** առաջարկութեան շատերը հակառակեցան, ըսին՝ թէ մենք այսօր ըստ հրամանի Տերութեան մեր Պատրիարքը ընտրենք. ետքը Ազգային ժողովոց համար առջի կանոնադրութիւննիս քննենք, փոխենք և նորէն շինենք: Բայց Գասպար Պէյը երկայն ատեն արանութեամբ ուժգին պնդեց թէ պէտք է Պատրիարքին ընտրութենէն առաջ կանոնադրութիւնը շինել: Վերջապէս այս առաջարկութեան ձայնիւ հաւանութիւն արուեցաւ, որուն համար յանձնարարական ժողովմն ալ հաստատուեցաւ, տասնը ութ անձինքներէ բաղկացեալ, որոց անուարն են:

1. Ալիքսանեան Տիւղ տիրան Պէյ: 2. Պէտան Պէյ: 3. Սինապեան Գասպար Պէյ: 4. Կէօզէեան Յակոբ Լ՛Ֆէնտի: 5. Չամիչ Յովհաննէս Լ՛Ֆէնտի: 6. Տալութ Յ. Յակոբ Լ՛Ֆէնտի: 7. Էն-

տաղեան Յովհաննէս Էֆէնտի: 8. Թընկըռ Արիկ  
Էֆէնտի: 9. Երամեան Անտոն Աղա: 10. Սա-  
մանձեան Մկրտիչ աղա: 11. Շէրպէտեան Քէ-  
րովըէ Աղա: 12. Թիւլպէնսոճեան Կարապետ Աղա:  
13. Բէքմէզ Անտոն Աղա: 14. Շիշմանեան  
Տօքթօր Յովսէփ: 15. Երկանեան Միքայէլ Աղա:  
16. Բաբաղեան Ս. Վ. Իջէնցօ (Ճաննի): 17. Պէ-  
շիկթաշըեան Մկրտիչ Աղա: 18. Մազըմեան  
Անտոն Աղա:

Արդ՝ Գասպար Պէյին ու ժողին պնդած ա-  
ռաջարկութեան այս ժամանակ այլ և այլ մեկ-  
նութիւններ արուեցան. և ետքը փորձն ալ  
ստուգեց՝ որ այս առաջարկութիւնը Ազգին ինչ-  
չափ մեծ փնասա տուաւ: Վասն զի Գեր. Հա-  
սունը իր կողմնակիցներուն ձեռօք սկսաւ վեր-  
ջին ճիղը թափել, որպէս զի Ազգը առանց  
Պատրիարքի մնալով, և Պատրիարքարանն ալ  
նկուն, ցած, և անդօր վիճակի մէջ ձրկելով,  
մէկ սպարզ քահանայ մը, հոն իրբև Քանչէլ-  
լէրիա, իր հզօր ձեռած ներքև Ազգին արտա-  
քին իշխանութիւնը ի դործ դնէ: Գեր. Հա-  
սունին միտքը և թափած ճիղը ինչչափ յայտնի  
այս է՛նէ, այլ ես անոր այս Ազգակործան խոր-



հրդոց կամակից և գործիք ըլլողներուն աւելի զարմացիւր մնացիւր եմ :

3. **Չերկնցընեմ** խօսքս, վերոյիշեալ յանձնարարական ժողովը գիշեր ցորեկ աշխատեցաւ, և քիչ օրուան մէջ կանոնադրութիւն մը շինեց. զորնոր Հայերէն և Տաճկերէն տպելով ընդհանուր Ազգին առաջարկեց, որպէս զի հաստատութենէն առաջ անոնց վրայ խորհելու և խօսելու յընդանուր ժողովոյն մէջ կարող ըլլան :

**Կարգացին** ամեն մարդ այս առաջարկուած կանոնադրութիւնը, և անսան որ՝ իրաւցընէ այս ժողովոյն անդամները, հոգւոյ հակառակութենէն բոլորովին հեռանալով, ժամանակիս յարմար մէկ կանոնադրութիւն մը շինեցին : Ասան զի այս կանոնադրութիւնը ինչպիսիք Ազգին արտաքին իշխանութեան միայն կը վերաբերի, ի վերայ այսր ամենայնի իբր մի մարմին Ազգին ամբողջացուցիչ մասանց, Յիկղեցականաց ալ հաւասար իրաւունք արուեցաւ, ընդհանուր ժողովոյն մէջ գրանուիլ, և երեսփոխան ընտրուիլ : Ինչպէս որ Երրորդ Յօդուածին, չորրորդ և հինգերորդ կանոններուն մէջ գրուած է :

Ապա ի 17 Մարտի 1861, ընդհանուր Ազ-

դային ժողով զումարեցաւ: Հոն քուէարկու-  
թեամբ, և զրէ թէ ամենեցուն հաւանութեամբ  
ընդունուեցաւ՝ այս հետեւեալ ութ Յօդուա-  
ծով, և երեսուն և հինգ կանոնով. ԿԱՆՈ-  
ՆԱԻՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԿԱ-  
ԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ. ըստ այսմ:

Յօդուած Առաջին: Կանոն ընտրողութեան:

7 Բ. Կանոն ընտրելութեան:

7 Գ. Կանոն կազմութեան:

7 Ընդհանուր ժողովոց:

7 Գ. Ընդհանուր ժողովոյն  
սրաշտօնն, ու ժողո-

վելոյն ժամանակները:

7 Ե. Ընդհանուր ժողովոյն  
ներքին կարգադրու-  
թիւնը:

7 Զ. Կանոն ընտրութեան:

7 Է. Պատրիարքի ընտրու-  
թեան:

7 Ը. Հինգամեայ ժամանակ  
այս կանոնադրութեան

Ատա ըստ այսմ կանոնադրութեան այս ժո-  
ղովոյն մէջ որոշեցին Քննչաց Մասնաժողովը,  
որպէս զի — ընտրելեաց — ցանկը շինելով, և —

ընտրողաց — յուզարկելով, ըստ օրինաց ժամ մը առաջ Ազգին Երեսփոխանները ընտրուին:

Եւ գրէ թէ Քննչաց Մասնաժողովոյն ընտրուած անդամները նոյնը էին վերոյիշեալ Յանձնարարական ժողովոյն վասն Կանոնաշինութեան: Բայց անոնց մէջէն առաջինն և զլիսաւոր անխոնջ ազգափրութեամբ աշխատողները էին Պէտան Պէյ: Տավութ Յակոբ էֆէնտին: Թիւլպէնաճեան Կարապետ Աղան: Շիշմանեան Տօքթօր: Աիշէնցօ Մաննի: Եւ Պէշիկթաշլեան Մըկրտիչ Աղան: Ասոնք Պատրիարքարանին վաւերական արձանագիրներէն մէկիկ, մէկիկ ժողովելով, այբ ու բննի վրայ ամեն — ընտրողաց — իր կենացը քսանը հինգ տարին լըմնցընողներուն — ընտրելեաց — (ասոնք որ երեսներորդ տարին լըմնցուցեր էին) ցուցակը հանդերձ ընտրողագրով մէկ տեղ ի Տ Մայիսի 1861, իւրաքանչիւրոցն առանձին, առանձին յուզարկեցին: Ամենուն ծանուցանելով թէ այն ընտրած 120 Երեսփոխանից ընտրողագիրը ստորագրելով, և կնքելով, կամ ինքն տանի ձրդէ, և կամ պիտի յուզարկէ, Պատրիարքարանը պատրաստուած ամբաստանի, և Քննչաց ժողովէն կնքուած արկեղ մէջ: Ապա ի 16 Յունիսի, ի ներկայու-

Թեան Բննչաց մասնաժողովոյն և առաջի հրաւրեալ խումբն բազմութեան Բուէից արկղը բացուեցաւ: Ստորագրութեամբ ընտրուածները ի գիր նշանակելով, ըստ հաստատեալ կանոնադրութեան 120 ընտրեալ Երեսփոխանից ցանկը տօղադրութեամբ Ազգիս հրատարակեցին: Այս ընտրեալ Երեսփոխանից ոմանց քուէնէրը հազարը անցեր էին, ոմանք ալ ութ, և կամ եօթ հարիւր քուէով ընտրուեր էին:

Արդ այս երեսփոխանները ըստ օրինաց ընտրուելոյն պէս, իսկոյն պէտք էր իրենց՝ Ազգին փափաքին յարմար, առաջին անգամ Պատրիարքին ընտրութեանը համար ժողովիլ: Բայց ասանկ չի կատարեցաւ: Ասան զի Գասպար Պէյը դարձեալ աս անգամ ալ ուրիշ մէկ խնդիր մը հանեց, իրր զի ըսաւ, այս Երեսփոխանից ըրած ամեն որոշողութեանց դործագրութիւնը աւելի ևս զօրաւոր ազդուութիւն ունենալուն համար պէտք է, այս 120 ընտրեալ Երեսփոխանները առանձին Տերութենէ ևս հաստատուին: Ազգը այս անգամ ալ սխալեցաւ. վասն զի նախ՝ իրեն 120 Երեսփոխան ընտրելու Տերութեան չէր դիմէր, ինչպէս Երկոտասանից Գերագոյն ժողովոյն համար Բ. Դանէն հաստատութիւն

խնդրեր էր: Երկրորդ՝ Տերութիւնը ի սկզբանէ անտի ամեն Քրիստոնեայ Ազգաց ներքին ազգին վերաբերեալ կարգադրութեան գործադրութիւնը բոլորովին իրենց թողուցեր էր:

Երբոր ասիկա Բ. Դրան առաջարկեցաւ, Հասունեանք այս ժամանակ պատէ՛հ առ ի՞ծ մը դանալով, Բ. Դրան բողոքեցին՝ թէ նոր կանոնադրութիւնք չենք ուզեր և այլն: Աւստի այնչափ ջանք, և այնչափ աշխատութիւնը, ամենքն ալ պարսպ գացին: Ալ ասկէ ետև Պատրիարքին ընտրութիւնն ալ մնաց, և Պատրիարքի փոխանորդ Մարտիրոսեան Է. Բարսեղ վարդապետին ալ հարկ եղաւ հրաժարիլ իր պաշտամանէն, նմանապէս և Երկոտասաններն ալ ցրուեցան, թողլով Պատրիարքարանը Ատենադպիր Չրաճեան Հայր Ղևոնդ Վարդապետին ձեռքը:

Ար տեսնե՞ս՝ բարեմիտ ընթերցող, Գեր. Հասունին ինքնիշխան տիրապետական հողին որպիսի ողորմելի սահման բերաւ հասոյց: Բայց երանի էր Ազգին, եթէ այս հասած կեալին մէջ կայնէր մնար. և Գեր. Հասունը չը յառաջէր այլ ևս նորանոր ձեռնարկութեամբ իր փառասիրութիւնը կշտացընելու համար. ինչպէ՞ս որ յաջորդ գլխոյն մէջ պիտի տեսնենք:

# 35.

1. Գէր, Հասունին հասարակած Ազգային Էլը-  
Լու-Լէտն խորհրդը: — 2. Հասունային ան ժողովոյն խա-  
փանուհը:

1. Գեր, Հասունը Ազգին արտաքին Պատ-  
րիարքական իշխանութիւնը այսպէս անզօր և  
յանարգ վիճակի մէջ ձրգել տալէն վերջը, սկսա-  
ծերու թեան ձանցունել տուած իր Հոգևորա-  
կան ներքին իշխանութիւնը ալ անզգայի եղա-  
նակաւ բոլոր կաթօլիկ Հայազգիներուն վրայ  
տարածելու: Ուստի այս ժամանակ մէկ կեղ-  
ծեալ առերևոյթ քաղաքականութեան մը ձեռք  
զարկաւ և իրեն բռնած ընթացքին ամենայն  
կերպիւ օգնեց իր ձեռասուն և ըստ ամենայնի  
գործակից Ազարեան Տէր Ստեփան վարդապետը՝  
(որ Նախադասական յաջորդութեան տենջա-  
նօք կը սպասէր): Ասոնք Ազգին առաջին կարգի  
երևելի մէկ քանի հատ երեսփոխանները որ-  
սալու համար, սկսան անոնց հետ մտերմութեամբ  
և քաղցրութեամբ վարուիլ: Ներկայ Ազգին  
թշուառ վիճակին վրայ անոնց հետ մէկ տեղ  
ցաւակցիլ: — Եւ Ազգին յառաջադիմութեանը

Համար՝ ըսին, պէտք է Ձեզի պէս խմաստուն և քաղաքագէտ անձինքները Տերութեան մեծամեծ պաշտամանց մէջ գանուիլ: Ինչպէս որ անցած օր Գաղղիոցացոց Գեորգիոն հէտ Ժամանակ ոչ թունիս վրայս երկոյն Բարոյն խօսեցանք և այլն:

Այսպիսի անոնց խարուսիկ խօսքերէն խարուելով Ազգայինք ոմանք բոլորովին թուլացան, և իրենց անձնական շահուն վրայ Ազգին օգուտը անգիտութեամբ զոհեցին: Բայց աւելի զուարճալին ան եղաւ, որ բարեմիտք ոմանք կարծելով թէ օր մը կարենան զԳեր. Հասունը իրենց կողմը շահիլ, ամենայն մտերմութեամբ իրեն մօտեցան: Բայց ետքը Գեր. Հասունէն իրենց խարուիլը տեսնելով, վեհանձնութեամբ անկէց բոլորովին հրաժարելով ետ դառնալու ստիպուեցան բայց շատ ուշ:

Երբոր այս վերոյիշեալ խարուած երեսփոխանները բարեսրտութեամբ Ազգին ներկայ ողբալի վիճակը, և Պատրիարքական Իշխանութեան դազարիլը. — Նախագահական Աթոռոյն զօրութեան ոչնչանալը, և առանձնաշնորհմունքներուն բոլորովին փճանալը. — թէմական Եպիսկոպոսաց Նախագահական Աթոռէն իրենց անկախ Իշխանութիւնը և այլն և այլն: Երբոր

զասոնք ամենքը Վեր. Հասունեանին և Ազարեան Վարդապետին առջին կը շարէին, անոնք այսպէս պատասխան կուային:

Մենք ալ գիտենք՝ ինչէն, Լեռնայ գեշ բուն ինչ եղաւ. Բայց ի՞նչ օգուտ, եղաւ ինչ որ եղանէ: Հիմայ ասոր մէջ մայն ճարը դեղ եւ դարձանը արիշ Բանով շըլար, Բայց ելեք երդու Աւուսայ մասարու լեռնաճը. այսինքն Նախագահանին Աւուսը կիշէնէնց Պարբերարանին Աւուսոյն հեթ մէջ քեղ մեղնելով: Ասանկայ շար դիւրու-լեռնաճ ինչ յաջողի, երբոր ընդհանուր Բուր Ազգը հասնուաւ ըլլայ: Ասայ մեռ-լեռնաճ Լեռնայ որ պէտք ըլլայ, Ազգին օգտին համար էս Նախագահանին իշխանու-լեռնայ ալ հրաժարելով, Վեր. Պարբերանին իշխանու-լեռնայ ներքեւ ինչ մասմ. մայն Լեռնայ մեռ-լեռնայ ըլլայ, որով եւ Ազգն ալ ան ճամտանի Բուր իր ազգայնն իրուանց ճեր ինչ ըլլայ \* :

Վերջիշեալ Ազգայինները երբոր իրենց փափաքանայ և քմայ յարմար այս կերպ խօսակցութիւններ հանապազ թէ Վեր. Հասունեանին, և թէ Ազարեան Վարդապետին բերնէն կը լսէին, աւելի անոնց կը մօտէնային: Աւ ալ

---

\* Այսպիսի խօսակցութիւններ որոնց որ զուրցեր էնէ, շատերը անոնցմէ դեռ կենդանի վկայ են:



ասկէ ետև Ազգին արտաքին Պատրիարքական իշխանութեան ո՞վ պիտի նայէր: Գրէ թէ ասկէց առաջ եկաւ վերոյիշեալ ընդհանուր ժողովոց մէջ նոր Ազգապետ Պատրիարքին ընտրութեան ժամանակ դարձուած և ի գործ դրուած այլ և այլ հնարքներ և առաջարկութիւններ, որոնցմով ջանացին ան ժամանակ խափանել թէ Ազգապետին ընտրութիւնը, և թէ 120 ընտրեալ երեսփոխանից հաստատութիւնը:

**Ե**ւ ահա այս կերպ անորոշ և տարտամ ժամանակ, յամին 1860 ի 10/22 Օգոստոսի, Գեր. Հասունը տասը անձինքներով ժողով մը գումարեց. հինգը Եկեղեցական, և միւս հինգը աշխարհական էին: Աշխարհականները էին, Սինապեան Գասար Պէյ. Տալութ Յակոբ Էջէնտի. Երամեան Անտոն Աղա. Տալութ Ս. Կարապետ Էջէնտի. Բէքմէզեան Անտոն Աղա:

**Ա**.յս ժողովոյն մէջ ժողովականաց մտաց և բաղձանաց յարմար ճառ մը խօսեցաւ, որով Ազգայնոց ընդհանուր յառաջադիմութեան ըրձին, և օգտակար դիտաւորութեանը գործիք ըլլալու վախճանաւ, — Ազգային կրթութեան ժողով — մը հաստատեց. տասն անդամներէն բաղկա-

յեալ, հինգը Եկեղեցական և միւս հինգը աշխարհականներէն, զորոնք որ հրաւիրեր էր հոն:\*

Արդ՝ այս Պապային կրթութեան ժողովոյն թէ ըստ հիմնական կանոնաց իւրոց, և թէ ըստ սահմանադրութեան իւրոց: Նախ՝ Կ. Պօլսոյ Նախագահ Եպիսկոպոսապետը միշտ յիշուանց այս Պապային կրթութեան ժողովոյն՝ դահերեց պիտի ըլլայ:— Կրօնական խնդիրներուն մէջ՝ որոնք կրթութեան սկզբանց մերձեցուցմանէն կրնան յառաջ գալ. Նախագահ Եպիսկոպոսապետն իր բացարձակ արգելողական իրաւունքը (վէթօն) հաստատուն պիտի պահէ:— Այս ժողովոյն էական վախճանը Հայագրի Կաթօլիկ հասարակութեան մէջ Պապային կրթութեան ուղղելու, և առաջ տանելու միջոցները պիտի հոգայ այսինքն թէ Մայրաքաղաքիս մէջ, և թէ Օսմանեան Պետութեան բոլոր Գաւառներուն մէջ, դպրոցներ, վարժարաններ կանգնելով. և անոնց ուսուցչաց ընտրութիւնը և վարչութիւնը հոգալով, և այլն և այլն (յերես 10):

---

\* Այս ժողովոյն Կանոնադրութեան տետրակը տպուեցաւ ի վիճինս Մխիթարեանց տպարանը— 1860-ին:

Վասն այսր ամենայնի Գեր. Հասունը իրեն զուրյաճ նոյն ճառին մէջ կը խնդրէ իրենց օգնութիւնը, և գործակցութիւնը բոլոր ազգայնոց ազնուութենէն ու հանձարէն, որոնք որ թէ Մայրաքաղաքիս մէջ, և թէ Գաւառներուն մէջ, և թէ ուրիշ ամեն տեղ կը բընակին. . . . : Եւ միանգամայն առանձին կերպով ալ Ազարեան Ստեփան Վարդապետին իր երախտագիտութիւնը կը յայտնէ, որ իրեն ըստ ամենայնի գործակից եղեր էր Եայն (յերես 6):

Արդ այս «Ազգային կրթութեան ժողովը» Համազգեաց Ընկերութենէն ամենևին զանազանութիւն մը չունէր: Բայց այս երկու Ընկերութեանց վախճանը մէկգլխու հակառակ էր: Գեր. Հասունին վախճանը ոչ եթէ Ազգին բարիք մը ընելու զխաւորութեամբ այս Ընկերութիւնը հաստատած էր: Այլ սոյն Ընկերութեան ձեռք Վիլիկիոյ Պատրիարքին թէմին մէջ մանելով, և անզոտի ճանապարհաւ ժողովրդեան սիրարը շահելով, Պատրիարքական թէմը ալ օր մը իրեն ձեռքը ձրգէ:

2. Հսովմ անսնելով որ այս Ընկերութեան ձեռք Վիլիկիոյ Պատրիարքական թէմը, բացուելու դարոց և վարժարաններուն մէջ կրօնի

և բարուց վերաբերեալներուն համար, ոչ Արի-  
լիկիոյ Պատրիարքը, և ոչ Թեմական Արքեպիս-  
կոպոսները կարող պիտի ըլլան միջամուխ ըլ-  
լալու, այլ ըստ կանոնադրութեան ընկերու-  
թեան միայն Կ. Պօլսոյ Նախագահին վերա-  
պահուած է բացարձակ և արդելողական իրա-  
ւունքը, ապա Գեր. Հասունին այն հաստատած  
«Ազգային կրթութեան ժողովը» խկոյն խա-  
փանեց և արդիւնց:

Իսկ Գեր. Հասունին Արիլիկիոյ Պատրիար-  
քական Աթոռը իր ձեռքը ձրղելու համար ի  
զորժ գրած գաղտնի հնարքները, լարած որո-  
գայթները, և հնարած միջոցները հոս տեղս  
զանց կրնենք, ինչու որ իր տեղը կատարեալ  
պիտի պատմենք:

## 36.

1. Տերա-Լեւոն Հրամանը վասն Հաստատութեան տա խա-  
հանալեայ Աղգային ժողովոյն: — 2. Ժողովոյն ցրուելուան  
պատճառները: — 3. Ուլեթերանի Ելեղեցոյ շինու-  
թիւնը: — 4. Գեր. Հասունին ընկացքը:

1. Երկու տարի ու կէս Ազգը առանց ար-  
տարին իշխանութեան անցուց: Այս ժամանակ  
ոչ Ազգապետ կար, ոչ ժողով, ոչ Երկան, ոչ գա-

տաւոր, և ոչ իրաւարար \* : Այլ Բովանդակ  
բնութիւնք ծանուէք և խնամք աղքատաց ծան-  
րացեալ էին Չրածեան շ. Ղևոնդին վրայ. որ  
գիշեր ցորեկ կաղաչեր մեծամեծ խշխաններուն  
Ազգին ներկայ թշուառ վեճակին վրայ ողորմիլ :

Ուստի Ազգասերք խշխանք ոմանք չհան-  
դուրժելով Ազգին այս ողորմելի վեճակին վրայ,  
Բ. Փոխարքային ալերսագիր մը տուին, խընդ-  
րելով Տերութեան հրամանագրով ութ, և  
կամ տասն անձինքներէն բաղկացեալ մէկ առ-  
ժամանակեայ Ազգային ժողովոյն հաստատու-  
թիւնը, որ կարող ըլլայ Պատրիարքարանի վե-  
րաբերեալ գործքերը կարգի դնել, և աղքա-  
տաց հոգ և խնամ տանիլ :

Տերութիւնը Ազգիս այս թշուառութիւն-  
ները միշտ տեսնելով, շատ անգամ ազգարա-  
րութիւններ կրներ : Այլ ի վերայ այսր ամե-  
նայնի աս ալ աղեկ գիտէր՝ որ Ազգին այսչափ  
թշուառութեանց միմիայն պատճառը Գեր. Հա-  
սունն է, որ հոգևորական իշխանութեամբը

---

\* Այս յանիշխանութեան ժամանակ ինչէր չե-  
ղան, և ինչէր չը դարձան, որչափ իրաւունքներ յա-  
փըջտակուեցան. ինչչափ գործողութիւնք երեսի վրայ  
մնացին : Ո՞րչափ սղր և հտտաչանք աղքատաց եր-  
կինքը կլան : Այս ամենը բոլոր Ազգայնոց յայանի է :

ինքն իշխան բովանդակ Ազգին վրայ կը ցանկայ տիրել : Ուստի Ազգին առած աղերսագրին վրայ Տերութեան Բարձրագոյն Ատենին մէջ խորհրդածելով, լաւագոյն սեպեցին յետագայ Տերութեան հրամանագիրը ի 2 Սեպտեմբերի 1863, Հայազգի կաթողիկոս յանուն Գեր. Հատուենի, և յանուն Ազգային Իշխանաց յուղարկել ըստ այսմ օրինակի

« Գաթողէք միլլէթի պաշ փխսոբոսու վէ  
« միւթեպերանը էֆէնտիլէր :

« Պիր միւտտէթտէն պէրու բաթրիքլէք խըզ-  
« մէթինին, էսպապը մայիւմէտէն նաշը մու-  
« վագդաթէն թաթիլ օլմասը, վէ բաթրիքլսանէ  
« մէճլիս ազասընըն իսթիֆայէրի վուգու պուլ-  
« մասը իւզէրինէ, ումուր վէ մէտալիհի միլլէյէ  
« պիր հալ իղթիշաշտէ զալմըշ օլտուղունտան,  
« պունլարը բույթ վէ թէսվիյէ էյլէմէք իւզրէ  
« սէքիզ վէ եախօս օն զաթտան միւրէքքէպ  
« պիր Գօմիսսիօն թէշքիլի, պու քէրրէ պու  
« մահգէր իսթիտա օլունմուշ օլտուղու վէ  
« ֆիլհագիզէ շու հալին տէվամի էֆրասը միլ-  
« լէթին Բաթրիքլսանէյէ բաճի օլան իշլէրինտէ  
« մագուրիյէթինի մուճիպ օլմագտա օլուպ, պու-  
« նա իսէ բրզաի Աալի օլմատըղը ճիհէթլէրիյէ

Իսթրիք նասպ վէ թայելինինէ տէկին օլ վէճճ  
իլէ ումուրու միլեյէյի խտարէ իյլէմէք իւզրէ,  
պէր մուճիպի իսթիտա օն քիշիտէն խպարէթ  
պիլր մէճլիսի մուվազգաթ թէրթիպ օլուն-  
մասը վէ ազասը միլլէթին ուսուլու գատիմէ-  
սինէ թաթպիգէն մարիֆէթլէրինիզ իլէ մէվ-  
սուն վէ միւթէպէր զաթլարտան ինթիտասպ  
օլունարագ, քէյֆիյէթին Պասլը Աալիյէ արզ  
վէ թէպիլզ իտիլմէսի խուսուսունա մուպատ-  
րէթ իյլէյէսիզ տէյու :

1279 Ֆիյ իյլուլ 4.

1280 Ֆիյ բէպիւլախըր 1:

Վասն այսորիկ ի 12 Սեպտեմբերի, Հինգ-  
շարթի օր, Ազգային ժողով եղաւ ի Յիսուս  
Փրկիչ ուր որ ներկայ էին գեր. Հասունը,  
Եկեղեցականք և Աշխարհականք: Այս ժո-  
ղովոյն մէջ Տերութեան հրամանագիրը կար-  
դացուելէն վերջը, քուէարկու թեամբ Հինգ ան-  
ձինք որոշուեցան, որոնց գործքը պիտի ըլլար  
ըստ հրամանի Տերութեան ան տասը Անձինք-  
ներուն ընտրութեանը համար զԱզգը ի յըն-  
դանուր ժողով հրաւիրել:

Մասնական ժողովոյն ընտրեալները. — Պէ-  
տան Պէյ. Սինասկան Գասպար Պէյ. Տավութ

Յ. Յակօբ Էֆէնտի. Սաղըզ Յովհաննէս Էֆէնտի.  
Կիւզէլ Պետրոս Էֆէնտի:

Այս մասնական ժողովը պետք եղած թուղթերը պատրաստելով, ի 26 Սեպտեմբերի ի յընտրու թիւն առ ժամանակեայ ժողովոյն հրաւիրեցին. ուր ներկայ էին Գեր Հասունը, և Երկոտասան Վարդապետք յամենայն կարգէ, և 320 ի չափ մեծամեծ Իշխանք, Երեսփոխանք, և Եկեղեցականք և Հոգարարձուք: Այս ժողովոյն մէջ առաւելութեամբ քուէկից ընտրեցան յետագայքն:

Պէտան Պէյ. Սինապեան Գասպար Պէյ. Չամիչ Յովհաննէս Էֆէնտի. Կիւզէլ Պետրոս Էֆէնտի. Թընկըռ Բուզանդ Էֆէնտի. Շէրօյեանան Քէրովըէ Էֆէնտի:

Ապա ժողովոյն մահաբարը շինուեցաւ, և ի Նախագահէն սկսեալ ամեն ժողովականները ստորագրեցին և ի 28 Սեպտեմբերի Բ. Գրան ներկայացուցին:

Բ. Գուռնէն ի 23 Հոկտեմբերի, հրամանագիր մը եկաւ ըստ այսմ՝ օրինակի:

» Գաթուլք սէրփիսգորոտու վէ միւթէպերանը էֆէնտիէր:

» Բաթրիքխանէճէ օլան մէսալիհի միլլէ-



Դ թին բույէթը զըմնրնտա թէշքիլ օլունա-  
ն ճագ գօմիսսիօն, Գասպար պէյ Սինսպեան վէ  
ճիրան պէյ վէ Տաուա Յակոբ էֆէնտի վէ Մը-  
սրըլեան Անտոն պէյ վէ Սագըզըլեան Յովհան-  
նէս էֆէնտի վէ Աիւզէլեան Պետրոս էֆէնտի վէ  
Չամիչեան Յովհաննէս էֆէնտի վէ Աէօչէյեան  
Յակոբ էֆէնտի վէ Շէրպէթեան Քէրովըէ է-  
ֆէնտի վէ Թընկըրեան Բուզանդ էֆէնտի ազա  
ինթիսապ օլունտուզլարընա տայիր թագախմ  
օլունան մահզէր իլէ օլ պապտէ օլան թագ-  
րիրի տօսթանէլէրի հուզուրու մաայլինէշու-  
րու հազըէթը՝ Փատիշահիլէ լէտէլ արզ մու-  
մայիլէյ հիւմիւն օլ վէճհ իլէ իճրայի մէմու-  
րիլէթէրի խուսուսունտա իրատէի սինիլէ  
ճէնապը թաճտարի միւթաալիգ վէ շէրէֆ-  
տուտուր պուրուլմուշ օլմաղ իլէ պէր մու-  
ճիպի իրատէի սէնիլէ իղթիզաի հալին իյֆա-  
օրնա միւպատրէթ իլլէյէլէր տէյու :

1280 Ֆիյ ճէմաղիւլ էվվէլ 22:

Տերութեան սա հրամանագիրը Նոյեմբե-  
րին առջի օրը Ազգային ժողովոյն մէջ կարդա-  
ցուելով, ընտրեալները իրենց առժամանակեայ  
իշխանութեան մէջ հաստատուեցան: Աւ բոլոր  
ժողովականք՝ դրէ թէ աչքերնին լեցուած, ընտ-

րեալները շնորհաւորեցին. և այր իւրաքանչիւր  
ուրիշ բան անոնց չէր ըսէր, բայց եթէ Երե-  
միային խօսքը: «Ձեզ ասեմք, ո՞րն տրեալ Երես-  
փոխանքդ, դարձայք հայեցարուք, և տեսէք՝  
թէ իցէ՞ն երբէք աղէտք ըստ թշուառու-  
թեանց լեալ, որ ի վերայ Ազգիս հասին, ուստի  
ողորմեցարուք, ողորմեցարուք»:

Եւ իրաւցնէ ժողովականք շատ մեծ ու-  
րախութեամբ և բարեմաղթութեամբ իրարմէ  
բաժնուեցան, յուսալով՝ որ Ազգը անոնց ձեռ-  
քով վերստին կենդանութիւն պիտի գրանէ.  
ընտրութեամբ Ազգապետ Պատրիարքին, և հաս-  
տատութեամբ Գերագոյն ժողովոյն երջանիկ  
օրեր պիտի տեսնեն, զորոնք չորս տարի կոր-  
սուեցուցած էին:

Ապա ի 5 Նոյեմբերի 1863, տասներին Երես-  
փոխանքն առաջին անգամ Պատրիարքարանը  
ժողովելով, իրենց մէջ ժողովոյն Նախագահ  
ընտրեցաւ Մինապեան Գասպար Պէյը. իսկ Ատե-  
նապետ ժողովոյն Սազըզ Յովհաննէս Էֆէնտին:  
Այս ժողովոյն անգամներէն վեցը Ազգին կողմը  
էին. իսկ չորսը Գեր. Հասուենին կողմը:

Ազգային ընդհանուր զործքերը այսչափ  
ատեն երեք և չորս տարի երեսի վրայ մնացեր

էին, անիրաւ դատերը, և զայրացեալ վէճերը  
անհամբերութեամբ Ազգային Իշխանութեան  
մը կսպասէին. վասն այսորիկ խուռն զիմեցին  
Նրեսփոխանից ժողովոյն, ուստի ժողովրդեան  
դատը տեսնելու համար պէտք եղաւ չորս հատ  
դատաւոր ընտրել: Որոնք էին, Շէհրիան Ջե-  
նոբ Աղա, Մազլըմեան Անտոն Աղա Բարսեղեան  
Անտոն Աղա, և Գանթառ Յովհաննէս Աղա: Բայց  
այս նոր հաստատուած Ազգային ժողովը դար-  
ձեալ աս անգամ կրկին սխալեցաւ: Վասն զի  
ամեն բանէն առաջ պէտք էր իրեն Ազգապետ  
Պատրիարքին ընտրութեանը ձեռք զարնել:  
Երեքամեայ փորձը իրենց բաւական պիտի ըլլար,  
Ազգին ընդհանուր օգտին համար որպիսի՞ ար-  
դեօք ճամբայ բռննել պէտք է:

Այլ աւանդ. այս անգամ ալ Ազգին յոյսը  
պարապ ելաւ. և այս վերջին անգամ ըրած  
ջանքը՝ անօգուտ եղաւ: Վասն զի խաղաղու-  
թեան թշնամին դարձեալ իր խռովալից մեքե-  
նաները սկսաւ լարել: Դարձեալ իր արբանեակ-  
ները ասդիս անդին յուղարկել, որպէս զի ազգը  
խռովելով հաստատուած ժողովը ցրուի, որով  
թէ Պատրիարքին ընտրութիւնը, և թէ Գե-  
րազոյն ժողովոյն հաստատութիւնը բնաւ եր-

բէք չի կատարուի. որով Ազգին արտաքին իշխանութիւնը իր առջի զօրութիւնը, և պայծառութիւնը վերստին չըստանայ: Եւ թէ ինչպէս, միտք դիր յետագայ պատմութեանս

2. Երբոր առ ժամանակեայ վարչութիւնը ինչպէս որ վերը պատմեցինք, Ազգիս դործողութեանց միտք կը դնէր, դրսի Գաւառներէն ալ հետզհետէ անթիւ, անհամար արդէն շուրջ աղերսագիրներ բազմութեամբ ստորագրողաց սկիան անձրևի պէս թափիթփիլ, չը կըրնալով ալ հանդուրժել բռնութեան առաջնորդաց Գաւառահան Սպիտկոպոսաց: Զորոնք Գեր, Հասունը Ազգին յանիշխանութեան ժամանակ Սպիտկոպոս կը ձեռնադրէր. և Բ. Գրունէն անոնց Պէտլը ընդունելով Նախագահական թեմերը կը յուղարկէր: Անոնք ալ գերենք ձեռնադրող Տիրոջը յար և նման, իրենց ժողովրդեան վրայ ըստ հոգւոյ, և ըստ մտքմեոյ ինքնիշխան կը տիրէին. տուրքերը իրենք կը ժողովէին, և անոնց հաշիւը բնաւ տեղւոյն իշխանաց չէին ցուցնէր: Չերկնցընեմ խօսքս, այս Պէտլը Առաջնորդները կը մեռնէին, նորէն կը ձեռնադրուէին: Աթոռէ, յաթոռ կը փոփոխուէին, այս ամենքն ալ ծածուկ, դաղտնի,

ձեռքի տակէն կը դործուէին, մէյժ՝ ալ յանկարծ ի լոյս կելլէին:

Գաղափոյ, Կնկիւրիւին ժողովուրդը իրենց մէկ քաջ հովիւ մը ընտրելու զբաղած ժամանակնին, Գրապղոնին Նպխոկոպոսը, Առաքելեան Տէր Յովսէփը Գեր. Հասունին ձեռք Տերութեան Պէտեւը ընդունելով, յանկարծ կուզայ իրենց Նպխոկոպոսարանը կը նստի, և կսկսի իրենց վրայ տիրել և բռնանալ, յափշտակելով բոլոր Ազգին հաշուէզբքերը, և խտաիւ պահանջելով յոգորմէլի ժողովրդէն Տերութեան հատուցանելու տուրքերը, կրկնապատկելով առաջնոյն վրայ:

Գաղափոյ իշխանք և ժողովուրդը Նպխոկոպոն այս բռնութեանը դէմ կը բողոքէն. բայց միտք դնողը ո՞վ. իր ծոցը Տերութեան Պէտեւը կայ: Քաղքին Կուսակալին կը բողոքէն, և Անիկայ ալ քաղցրութեամբ զՆպխոկոպոսը կը յորդորէ, այսպիսի զործողութիւնները աշխարհիկ արանց ձեռքը յանձնել, վասն զի Նկեղեցական իշխանութեան վայելուչ բան մը չէ՛ կրսէ: Կուսակալին այս խմառաուն խորհրդատուութիւնը Առաջնորդին վերացեալ սիրտը բռնաւ չխոնարհեցոյց. ինչու որ անիկայ Մայրա-

քաղաքէս իրեն թե և թիկունք առեր էր զեր-  
շասունք, և թընկըս Յովհաննէս Էֆէնտին, ու-  
րոնք խստիւ և բարկութեամբ սաստիկ թուղ-  
թեր գրեց Էփն Ննկիւրիին ժողովրդեան. հան-  
գարտ իրենց տեղը նստիլ և չը նեղել զԱռա-  
քել Նպիսկոպոսը. ապա թէ ոչ ձեռամբ Տերու-  
թեան զիրենք յաքսոր, և կամ ի բանտ ունին  
արկանել. զորոնք յանուանէ նշանակած էինալ:

Ասոր վրայ իրաւցընէ հոն տեղի Իշխան-  
ները վախնալով, ետ քաշուեցան, Աստուծոյ  
միայն թողլով ինքնակոչ Առաջնորդին դատը:  
Բայց հասարակ ժողովուրդը անոնց ամենեկին  
չի յետևեցան: Ազգին հաշիւը Անկէց միշտ կը  
պահանջէին, և իրենց բերնէն ուրիշ բան չէր  
լսուէր բայց եթէ, ելէր Գոմ ասիւց, ուսիւց եւոր  
• Եւ Էն Գորչի:

Իսկ Գրապղնցիք Աստուծոյ վատք տալէն  
չէին ընաւ դադարիլ, որ զիրենք անոր ձեռ-  
քէն ազատեց:

Արդ երբոր այս ժամանակ Վայսերական  
հրամանագրով Ազգային Վարչութիւնը հաս-  
տատեցաւ, Գաղատացիք, Արդուինցիք, Արղու-  
րըմցիք և այլն. իրենց աղերսագիրները հետք-  
հետեւ Ազգային ժողովոյն յուղարկեցին, իրենց

Առաջնորդաց խիտ դաւադանին տակ կրած անտանելի թշուառ վիճակնին անոնց խնայընելով : Գրէ թէ յետ Հրահանգին Բրօքսկանտայի ընտրեալ Նախագահական թեմին ձեռնադրուած Նպիսկոպոսունք յար և նման այսպիսի անձինքներ էին :

Գեր. Հասունը զասունք լսելով և տեսնելով, և չըլլայ որ օր մը այս ի գործ դրած իշխանութեան արգելք ըլլան. առաջ այս Ազգային ժողովը ժամ մը առաջ ցրուելու հնարք մտածեց : Իրենց ընթացքին կերպարանքը փոխելով, Ազգային ժողովոյն Նախագահ Գասպար Պէյին, 1853 Օգոստոս 20 Բրօքսկանտային Հրահանգին հետ մեկ տեղ թուղթ մը յարարկեց, որով Ազգային Վարչութեան Գրասպանին Աթոռոյն պարապօրգութիւնը ծանուցանելով, կը խնդրէ հոն տեղի ժողովուրդեան ազգ առնել (ինչպէս որ ինքը առաջուց իրենց ծանուցեր է եղեր), որ ըստ Հրահանգին Բրօքսկանտայի ընտրեն իրենց Նպիսկոպոս ըլլալու անձինքները :

Արդ որ այս թուղթը ժողովոյն մէջ կարգացուեցաւ, սաստիկ վէճ բացուեցաւ. մէկ քանի նրեպիոսանք՝ որոնք որ առաջուց ասրիններով նրեպիոսան եղած էին, ասունք չուցուցին և

Հաստատեցին, թէ, ան Բրօքահանայէն եկած վերջին Հրահանգին գործադրութիւնը մէկ ժամանակ Ազգային Արշութեան ձեռօք չէ կատարուած: Ուստի առաւելու թեամբ քուէից այս վէճը մէկ դի թողլով, օրուան ուրիշ խնդրոյ անցան:

Այս առաջին խնդիրը ժողովոյն ինչչափ երկպառակու թիւնե տարածայնութիւն ձրգեց նէ ալ, ի վերայ այսր ամենայնի իրենց գործոցը հանապազ միտք կը դնէին: Սակայն մէկ քանի օրէն երկրորդ խնդիր մ'ալ ծագեցաւ, որ բոլորովին առժամանակեայ ժողովոյն ցրուելուն պատճառ եղաւ: Եւ այս խնդիրը աղէկ մը իմանալու համար, պէտք է որ ասկից չորս տարի առաջ, այսինքն 1860 ին ժամանակները քիչ մը ետ դառնանք:

3. Գեր. Հատունը՝ ինչպէս որ առաջուց ըսեր էինք, (Թիւ 18) ուզելով աղքատաց շոքարարձուաց զօրութիւնը և բոյնը ցրուել, մէկ քանի իր կողմնակիցներուն Բոկերեբանի մատուան շինութիւնը առաջարկեց: Այս առաջարկութեան բարեպաշտ ոմանք ալ հաւանեալ անոնց ձայնակցեցան, և փափաքեցան հոն Ազգատանոցին երկրին վրայ նոր Նկեղեցի մը շին



նելու: Եւ այս բանը զիւրութեամբ դու խ հա-  
նելու համար Ազգին մէկ որոգայթ մը լարեցին:  
Ոսկերերան մատուան մէջ բոլոր Ազգային Բա-  
րերարաց համար ի ներկայութիւն Գեր. Հա-  
սունի, Ազգապետ Պատրիարքին ձայնաւոր Պա-  
տարագ մը զուրցել տուին: Եւ Պատարագէն  
ետքը ի վեր ելլալով, հոն իրենք իրենց Եկե-  
ղեցւոյն շինութեան վրայ խօսք բանալին, և  
յանձնաժողովը զնենին մէկ եղաւ: Ասոնք քիչ  
ժամանակէն վերջը զԱզգը հոն հրաւիրեցին,  
ուր առաջիկայ էր Գեր. Հասունը, և Եկեղեց-  
ւոյն շինութեանը համար իրենց շինած տեղե-  
կագիրը առաջարկեցին: Այսինքն

Առաջին՝ հոն Աղքատանոցին երկրին մէջ  
Ազգին 500 կանգուն տեղ ունենալը ծանուցին:

Երկրորդ՝ Աղքատաց երկրէն հազար հինգ  
հարիւր կանգուն տեղ առնուելուն հարկա-  
ւորութիւն ունենալին, և ամեն մէկ կանգու-  
նին 700 զուռուշ զին կտրելին:

Երրորդ՝ այս Եկեղեցւոյն շինութեանը հա-  
մար երկու միլիօն զուռուշ ծախքին զին կրտ-  
րելին: Եւ քանզի այս Եկեղեցւոյն շինութեան  
յանձնաժողովոյն անդամներէն մէկն ալ Սինա-  
պեան Գասպար Պէյն էր, անոր համար այս ժո-

դովոյն մէջն ալ անիկայ իրր Նախագահ նստաւ :  
Իսկ երրոր Նկեղեցւոյն շինութեանը համար  
վերոյիշեալ տեղեկագիրը կարգացուեցաւ, Տա-  
վութ Գահոբ Էջէնտին հարցու փորձի սկսաւ :  
Նախ՝ հարցուց, թէ Աղքատաց երկրին մէջ  
Ազգին 500 կանգուն տեղ ունենալը ուսկից կը  
հաստատէ, որուն վրայ ահա՛ Խորասանձի Գով-  
սեփ Աղայն որնոր երեսուն տարիէն տեւի Աղ-  
քատանոցին Հոգաբարձու կարգած, և այսչափ  
տարուան անոր հաշուէզիրքը դրած, այնպիսի  
մէկ յիշատակութիւն մը չէ գտած \* :

Վասն երկրորդին՝ ըսաւ, մէկ մարդ տուն  
մը շինելու ըլլայ նէ, նախ երկիրը ծախու կառնէ,  
ետքը անոր վրայ տունը կը շինէ : Արդ աղքատաց  
երկրին այս ստակը էրբ և ո՞ր ժամանակ պիտի  
հատուցանէք. նախ ապահովուցէք զանիկայ  
ապա անոր շինութեան ձեռք զարկէք : Վասն եր-  
րորդին համար ալ աս կըսեմ. ըստ իս մէկ Նկե-

---

\* Այս բարեարատ անձը, որ իր բոլոր կեանքը  
աղքատաց սիրուն զոհեր էր, յայտնի տեսնելով Աղ-  
քատաց մեծագոյն վնասը, սրտազողէն յանկողին կիլ-  
նայ, և ութ օրուան մէջ Աղքատաց տիրոջը ձեռքը  
իր Ատուածատէր և աղքատասէր հողին կաւանդէ :

ղեցւոյ շինութեանը համար երկու միլիօն ծախ-  
քը շատէ. թող մէկ միլիօնի շտի շէնքին ծախքը  
ըլլայ, և մէկ միլիօն ստակո՞վ ալ ազգատաց  
տղայոց դպրոց մը շինուի: Այլ ի վերայ այսր  
ամենայնի դարձեալ աս ալ Ձեզի կը հարցը-  
նեմ, որովհետեւ դուք այս Եկեղեցւոյն շինու-  
թեանը համար վերջապէս երկու միլիօն ծախքի  
զլուխ կապերէք, շատ աղեկ: Բայց Ձեզմէ մենք  
երաշխաւորու թիւն կը խնդրենք, թէ որ երկու  
միլիօնէն աւելի անոր ծախքը երթալու ըլլայ նէ,  
գիտցաց եղիք՝ որ Ազգը անկէց աւելին չի ծանչ-  
նար, խօսքս քիչ մը աւելի և կամ քիչ մը պակաս  
ծախքին համար չէ, ինչու որ ետքը կելլաք, ինչ  
ընենք կըսէք, բան մը նէ եղաւ և այլն. ետքը  
մենք անանկ խօսքերուն ականջ չենք կախեր: Տա-  
վութ Եփէնաթինն այս հարցմունքներուն զատուար  
Պէյը միայն մէկիկ, մէկիկ պատասխանը կուտար:  
Ապա Տավութեանը աւելի ևս հզօր, ազդու և  
համոզողական պտտճառարանութեամբ իր առա-  
ջարկութիւնները պնդած ժամանակ. շատու-  
նեանք սկսան սուլել, և առաջարկուած բա-  
նաւոր խնդիրները ծաղրածութեան փոխելին,  
որոնցմէ և ԲԱՆԹՕՄԻՆ ին մէկը սաք ելաւ, ետե ի  
կողմը կայնող դերձակ, քիւրքձի, և պէսպէս

խարժաններուն հարցուց՝ թէ Այս Լէկեցոյն շե-  
տու-Լեւոնը համար Լեւ որ անոր ծախքը երկու միլիոնէն  
ուէլէն ըլլանէ, զանիւայ դուրս ինչ հասարակութիւնք: Անոնք  
որ ճոցերնին երկու դրամ շունէին, մէկ բերան  
կանչեցին, թէ, — պատրաստ եմք առաւելօքն  
հանդերձ վճարելու — : Անդիէն քիւրքճի Սիւս-  
կիմը, և պէսպէս մը ճալու թ Եփէնտիին դէմ  
խիղախելով, և այսպէս իր երեսին դէմ  
սկսան ըսել: — Նէ՞ տիր պու, տըր, տըր սէօյէր  
աուրուրսուն, զայրու պիղիմ տիյնէյէճէք վաք-  
արմըզ եօք. Ալլահ Գերասայճատըմըզ, վէ  
պունտարի աղալերէ ուղուն էօմիւրլէր վէրօն  
ևայն — : Ուստի ճալու թ Յակոբ Եփէնտիին և  
անոր հետ շատ մը ժողովականք ելան գացին:  
Գրուեցաւ ժողովոյն մազպաթայն, և Գեր. Հա-  
սունէն սկսեալ ստորագրեցին զանիկայ: Յամին  
1860 ի 7 Ապրիլի Ռսկերերանի Եկեղեցւոյն  
հինքը գրուեցաւ: Եւ Աղքատաց Հոգարարձուն-  
ները տեսնելով որ Աղքատանոցին երեք հազար  
կանդուն երկրէն հազիւ իրենց ձեռքը հինգ  
հարիւր կանդունը ձըղեցին, և այն երկրին հա-  
մար ոչ առմասկ, և ոչ խօստմունք մը տուին,  
վասն այսորիկ ընդհանուր Ազգին բողոքեցին:

Գումարեցաւ ընդհանուր ժողով ի Յիսուս

Փրկիչ, Հոգարարճունները իրենց յափշտակուած  
երկրին ստակը կը պահանջէին. որոց թընկըս.  
Յովհաննէս Եփէնտին խտիւ պատասխան կու-  
տար: Աղքատը և Աղքատանոցը որո՞ւն նէ՝ կը-  
սէր, և շինուելու Եկեղեցին որո՞ւն նէ, ո՞չ ապա-  
քէն ասոնք ամենք ալ Ազգին են, և զամենքը  
Ազգը կը խնամէ և այլն: Ասոր Տիւղ Միհրան  
Պէյը պատասխան տուաւ ու ըսաւ. «իրաւ ա-  
սոնք ամենքն ալ Ազգին են, Բայց ըստ օրի-  
նաց Աղքատաց ինչքը այլ է, և Եկեղեցւոյնը  
որ իշ է. մէկուն ինչքը միւսոյն չի արուիր. ին-  
չու որ ասոնք ամենքն ալ բարերարու թիւններ  
են, և հանգուցեալ բարերարաց կամքը մենք՝  
որ կենդանիքս կմք, չենք կրնար մէկ ժամա-  
նակ բռնաբարել, և այլայլել: Այլ մեզի մի  
միայն կիյնայ զանոնք իրենց վիճակին մէջ  
պահպանելու, և կամ ի ըստազոյն փոխադրե-  
լու և այլն . . . . :

Ապա ան յուզուած վէճին խաղաղութեամբ  
վախճան մը տալու համար որոշեցին՝ որ ինչ-  
չափ Եկեղեցւոյն շինութեանը համար դրամ  
կը ժողովի, երեք մասէն մէկ մասը անպատճառ  
Աղքատաց Հոգարարճուններուն արուի: Եւ այս-  
պէս Եկեղեցին լըմնցած ժամանակ Աղքատա-

նոցին բոլոր պարտքը պիտի հատուցուէր: Ապա ըստ այսմ որոշողութեան հաշիւ ընելով առաժ երկիրներնուն զինը, Եկեղեցւոյն գործակալները իրենց ստորագրութեամբ տոմսակ մը տուին Աղքատաց Հոգարարձուներուն: Ասոնք ալ տրուած խօստմունքնին, և զրուած ստորագրութեաց ապաւինելով, իսկոյն Ֆնացած 500 կանգուն երկրին վրայ սկսան երկու քարաշէն տուն շինել Աղքատաց եկամուտի համար, և միանգամայն վախճալով որ չըլլայ թէ մէկ սրատճառով մը զանիկայ ալ յափշտակէն:

Տալութ Յակոբ Եփէնտիլին մարգարէական հոգւով ըրած գուշակութիւնը ըստ ամենայնի կատարուեցաւ: Վասն զի Եկեղեցւոյն գործակալները ժողովողեան ներկայացուցած Եկեղեցւոյն յատակազիծը՝ ինքն իրենց ասոնց Աղգին ծորոցանէլու, աւելի մեծցուցին, և ըստ այնմ համեմատութեան անոր բարձրութիւնը տասներկու կանգուն բարձրացուցին որով առաջուց երկու միլիօնի հաստատութիւն տուածնին, երեք ու կէս միլիօն զուռուշը անցաւ: Գործակալք ժամ մը առաջ Եկեղեցին լըմնցունելու համար, եկած դրամները անոր շինութեանը միայն կը ծախէին: Եւ այսպէս Աղքատաց Հո-

դարարձունքներուն իրենց տուած խօստմունքը չէին բնաւ կատարէր. վասն այսորիկ առնք ալ սկսած քարաշէն տուններուն պատճառաւ վերջին աստիճան նեղութեան մէջ, և պարտքի տակ ընկան: Ուստի Եկեղեցւոյն գործակալաց, և Աղքատաց Հոգաբարձուաց մէջ սաստիկ հակառակութիւն մտաւ: Եւ Ոսկերերան Եկեղեցին լրմնցած ժամանակ Աղքատանոցին պարտքը մէկ միլիօն, երկու հարիւր հազար դուրուշ մնացեր էր:

Իսկ Աղքատաց Հոգաբարձունքները սկսած տուններնին ինչչափ լրմնցուցին նէ ալ, ի վերայ այսր ամենայնի ծանր պարտքի տակ ընկան: Եւ այս պատճառաւ երեք և չորս տարի Ազգին յանիշխանութեան ժամանակ վերջին նեղութեան մէջ էին. ինչու որ պարտքերը դիզուեցան, ողորմութիւնները պակսեցան, կտակները դադարեցան: Այս ժամանակ կըսեմ, երբոր տեսան՝ որ Տերութեան հրովարտակով առ ժամանակեայ Ազգային ժողովը հաստատեցաւ, իսկոյն՝ ժամանակ չի կորսուցընելով, հաշիւներուն հետ մեկ տեղ ի 15 Նոյեմբերի 1863, իրենց հրաժարականն ալ եկան ժողովոյն տուին:

Հոս մեր ընթերցողներէն ներուժն կը խընդ-

րենք, մեր այս մանրամասն պատմութեամբ թէ որ ձանձրութիւն տուինք: Բայց այս պատմութիւնը առաջուց դիտնալը շատ հարկաւոր էր. ինչու որ անիկայ միայն պատճառ եղաւ Ազգին կոլիճան հան վերջին հարուածը տուողը, որով այն նոր հաստատեալ Ազգային ժողովը ջրուեցաւ:

**Ի**սկ զեր. Հասունին այս ժամանակ բռնած ընթացքը ըստ ամենայնի Մաք. քեալէլլային սորվեցուցածին պէս էր: Վասն զի մէկ կողմանէ Ազքատաց Հողաբարձուաց իրաւունք կուտար, Ազքատաց ստակը՝ կըսէր, խնդրեցէք անոնցմէ, որոնք որ այս տոմսակը ստորագրեցին: Իսկ միւս կողմանէ Նկեղեցւոյն Գործակալաց զիրենք ան ստորագրութենէն ազատելու համար փախտատիան ճանապարհներ իրենց կը սորվեցընէր, այսինքն Հիւանդանոցը Ազքատանոցէն բաժնեցէք կըսէր, որովհետեւ անիկայ Ազգին սեպհական առանձին իրեն զատ ինչքն է. և այսպէս այսչափ տարի Հիւանդանոցէն առած եկամուտն թող Ազքատանոցին տրուելու պարտքին սեպէն:

**Ա**ռդ՝ երբոր Ազգային առժամանակեայ ժողովոյն մէջ Ազքատանոցէն զնուած երկրին համար մէկ միլիօնէն աւելի ստորագրուած տոմ-



սակր անսնուեցաւ, ան ատեն Անոնք որ նոյն  
տումնակը ստորագրեր էին, իրենք զիրենք պաշտ-  
պանեցու համար (ըստ հրահանգին) սկսան ու-  
րիշ մէկ վէճ մը բանալ. այսինքն ամեն բանէն  
առաջ Աղքատաց հաշիւը Սրբոյն Յակովբայ  
Հիւանդանոցին հաշուէն պէտք է զանազանել,  
որովհետեւ՝ ըսին, Հիւանդանոցը Աղքատանո-  
ցին չի վերաբերիր. այլ Ազգին սեպհական իրեն  
առանձին ինչքն է: Եւ այսպէս այսչափ տա-  
րուան Աղքատանոցին անցած Հիւանդանոցին  
եկամուտները թող փոխարէն Եկեղեցւոյն պարտ-  
քին հատուցմանը հաշուէն՝ կրէին: Ասոնց  
հակառակ ժողովոյն մեծագոյն մասը կը պըն-  
դէին, թէ Սրբոյն Յակովբայ Հիւանդանոցին շե-  
նութիւնը աղքատ հիւանդաց հարմար էր, և  
անոր բոլորովին կը վերաբերի իրեն եկամուտնե-  
րովը մեկ տեղ: Ասոր համար պէտք եղաւ հի-  
նաւուրց ազգային բարերարաց և Հոգարար-  
ձուաց վկայութեանը դիմել, որոնք զրէ թէ  
առ հասարակ վերջիններուն կարծիքը կը հաս-  
տատէին: Ուստի ժողովոյն մէջ ոստտիկ վէճ  
բացուեցաւ, և ատոր վրայ շատ մը իրարու դէմ  
վիճարանելէն վերջը, Գասպար Պէյը այս յուզ-  
ված խնդրոյն լուծումը ընդհանուր Ազգային

ժողովոյն որոշողութեանը ձրգեց. և իրեն ստորագրութեամբ՝ իբր առ ժամանակեայ ժողովոյն նախագահ, ի 24 Փետրվարի 1864, բոլոր Ազգը ի յընդանուր ժողով հրաւիրեց: Գեր. Հասունը առջի ժողովոյն մէջ ներկայ էր, որ ի 6 Մարտի դումարեցաւ, և ինչչափ Անիկայ տումսակը ստորագրողաց կողմը բռնեց, և ըստ այնմ վկայեց նէ ալ, ի վերայ այսր ամենայնի այս խնդրոյն լուծումը դարձեալ ուրիշ մէկ ընդհանուր ժողովոյն որոշողութեանը մնաց: Որ և ի 27 Մարտի դումարեցաւ դարձեալ ի Յիսուս Փրկիչ Եկեղեցւոյն մէջ: Այս ժողովոյն մէջ Գեր. Հասունը ինչչափ հրաւիրուած էր, հոն չեկաւ, այլ վանատան մէջ նստեցաւ: Իսկ երբոր իմացաւ՝ որ ժողովականաց մեծագոյն մասը այս անգամ ալ յաւէտ Աղքատաց շահուն կողմն են, և կը խնդրեն իրեն ներկայութեամբը իրենց վերջին որոշողութեան հատուտութիւնը տան, ապա ի շնորհս կողմնակցաց իւրոց վանատունէն շուտով մեկնեցաւ գնաց: Իսկ երբոր ժողովոյն մէջ իմացուեցաւ՝ թէ Գեր. Հասունը ելէր դացերէ, անոր կողմնակից Երեսփոխաններն ալ, (որոնք որ նոյն Աղքատանոցին տրուած տումսակը ստորագրելը էին) խառնութիւնը ա-

ւելի զայրացընելով իրենք ալ ձրգեցին ելան գացին, և այսպէս ընդհանուր ժողովն ալ ցըրուեցաւ:

Այս վէճը քանի սաստկացաւ, այնչափ Գեր. Հասունը ուրախացաւ, վասն զի յայտնի կը տեսներ քիչ ատենէն ան նոր Կայսերական հրովարտակով հաստատուած առ ժամանակեայ Ազգային ժողովոյն ցրուիլը. որ ուխտիւք կը խընդրէր, և գաղտնի կերպով միշտ կը գործէր:

Ի կ'Ազգատաց Հոգաբարձուները շուարած, և չը կրնալով ալ տանիլ իրենց ուսոց վրայ ծանրացած բեռը: Անոնցմէ զլիաւորներէն չորս հսոր, այսինքն Թօփթաշեան Յովհաննէս, Սիւրմէլեան Յովսէփ, Բարսեղեան Անտոն, և ձարեան Յարութիւն Աղաները լրագիրներուն ձեռօք բոլոր հասարակութեան իրենց հրաժարիլը իմայնելէն վերջը, Ազգային առ ժամանակեայ վարչութեան ներկայացուցած հաշիւնին ալ տպելով, յամին 1863 ի 4 Ապրիլի իրենց ստորագրութեամբը ընդհանուր Ազգին առանձին, առանձին իւրաքանչիւրոյն յուղարկեցին, իրենց հրաժարականն ալ մեկ տեղ անոնց ծանուցանելով:

4. Գեր. Հասունը այս Ազգատաց Հոգա-

բարձուաց հրաժարումը իրեն պատհաստիթ առնելով, որպէս թէ Աղքատաց աւելի խնամք և փոյթ ցուցնելու մասք, ի 11 Ապրիլի ծաշկազարդի օր, Ոսկերերան Նկեղեցւոյն ժողովարանին մէջ, Նախագահական զրազրին զրով—ի հոգմանէ Աղքատաց Բարեբաղոյ. — ստորագրու թեամբ իր կողմնակիցներէն քսան և հինգ հոգի հոն կը հրաւիրէ և անոնցմէ հինգ վեց հոգի կընտրէ Աղքատաց զատկական աուլքը ժողովելու համար:

Ապա ի 23 Ապրիլի 1864, նոյնպէս Նախագահական զրազրին զրով յԱպխոկոպոսարանը զրուած — Աղքատաց զառի՛ստն նպարտը հոգալու որոշեալ Անդամս. — ստորագրու թեամբ հրաւիրանաց թուղթեր յուզարկելով՝ դարձեալ վերոյիշեալ ժողովարանին մէջ քառասուն Աշխարհական, և քսան Նկեղեցականներով իրր Ազգային ընդհանուր ժողով կը կազմէ:

Եւ վասն այսր Տերութեան հրովարտակով հաստատեալ Ազգային ժողովոյն և ոչ ևս բան մը կը հարցընէ: Իսկ այս ժողովոյն մէջ կերպ, կերպ խնդիրներ բացուած ժամանակ, ոմանք երբ կը պնդէին՝ թէ այս ամեն խնդրոց որոշողութիւնը, և հաստատութիւնը Ազգին օրինաւոր Վերագոյն ժողովոյն Իշխանութեանը կը

պատկանի. ան առէն թընկըռ Յովհաննէս Եփէն-  
տին, և իրեն մէկ քանի կողմնակիցներուն հետ  
մեկ տեղ, ի բարկութիւն փրթան, և համար-  
ձակ ըսին, թէ՛ մեզի ամենեւին պէտքը չէ ոչ  
Իշխանութիւն. ոչ Ազգապետ. ոչ ժողով, քանի  
որ ասանկ Նախագահ Գերապայծառ ունինք,  
որ այսպէս Աղքատաց վըայ հոգ, և խնամք կը  
տանի: Ապա ինքն իրենց մէկ քանի Աղքատաց  
Հոգարարձուներ զրին, որոնց յանձնեցին, Աղ-  
քատանոցը և Հիւանդանոցը, որպէս զի վերոյի-  
շեալ Աղքատանոցին պարտքը չը հատուցանէն:

Գեր. Հասունին այս ամեն ինքնիշխան  
գործողութիւնները առ ժամանակեայ Ազգային  
ժողովը աեսնելով, անոր մեծագոյն մասը ինչ-  
չափ կաշխատէր այս անկարգութեանց ճար և  
ճարակ մը բնելով, Ազգին մէջ նորէն խաղա-  
ղութիւնը հաստատելու, այնչափ ալ, Գեր. Հա-  
սունէն որսացեալ նոյն Ազգային ժողովոյն մէկ  
քանի Նրեպիոխանները կը պնդէին, թէ պէտք  
է ամենքնուս հրաժարիլ. ուրիշները դան՝ կը-  
սէին որ կարող ըլլան ամեն բանը ի կարգի դը-  
նել: Ուստի Ազգային ժողովոյն Անդամները,  
որոնք որ հազիւ ութ ամիս իրենց Իշխանու-

Թիւնը վարած էին, վերջապէս իրենց հրաժարականը Բ. Գրան տալու պարտաւորեցան:

Եւ այսպէս Գեր. Հասունին փափաքանացը համեմատ Այսերական հրովարտակով հաստատեալ առ ժամանակեայ Ազգային Վարչութիւնը ալ այսպէս ցրուեցաւ և ոչնչացաւ. և Ազգը դարձեալ յանիշխանութեան մէջ մնաց: Եւ Ազգին զմոխն պահպանութիւնը դարձեալ Զրաձեան Հ. Ղևոնդ Վարդապետին յանձնուեցաւ, որ ըստ կարի, և շատ մ. ծ նեղութեամբ կարող եղև զանիկայ պահպանելու: Վասն զի Գեր. Հասունը կերպ, կերպ ճամբաներով սաստիկ աշխատեցաւ Ազգին Զմուռը իր ձեռքը ժամ մը յառաջ ձրղել. բայց երբոր չի կրցաւ զանի զլուխ հանել, սկսաւ այնուհետև Ազգին սեպհական եկամուտներուն ձեռք զարնել, որպէս զի Ազգին Պատրիարքարանը ինքն իրեն գոցուի, և անհետ ըլլայ:

Ազգիս Իշխանութեան առջի օրէն՝ ըստ առաջին կանոնադրութեան, Նշանի և Պատիկ հրամանագիրները պինտ առաջ Հոգևոր Իշխանութենէն ստորագրուելէն վերջը, կտքը արտաքին Պատրիարքական Իշխանութեան դալով, և հոն հրասպարակաւ և հանդիսիւ ըստ Մաշ-

տոցի արարողութեան Պատրիարքէն և կամ իր  
փոխանորդէն օրհնուելով, Պատրիարքարանին  
ծախքին համար երկու կողմէն ըստ կարողու-  
թեան իւրեանց սահմանուած տուրքերը կառ-  
նուին: Պատրիարքարանին զլիսաւոր այս տուրքը  
վերջին Ազգապետ Պատրիարք Ասկանեան շ.  
Նիկողայոս Արղապետին մահուանէ ետև բո-  
լորովին իր Եպիսկոպոսարանը դարձուց:

**Գեր.** Հասունը Ազգին արտաքին իշխա-  
նութիւնը յայս անարգ, և յաղքատին վիճակ  
հասցընելէն վերջը, այնուհետև սկսաւ ինքն  
իշխան իր ամեն ուզածները առաջ տանիլ.  
ինչու որ իր դիմացը ալ Ազգային իշխանու-  
թիւն մը և զօրութիւն մը չը մնաց:

**Արդ՝** Ազգային ժողովը ցրուելէն վերջը,  
հազիւ վրան մէկ տարի անցեր էր, ահա՛ 1865 ին  
բիւրաւոր մարդիկ ի Կ. Պօլիս ճարակ եղան Բօ-  
լշրու ըսուած ժանտ ու անողորմ ախտին: Այս  
ժամանակ երբոր իւրաքանչիւր Ազգաց Եկեղե-  
ցականք և Աշխարհականք հոգւով և մարմնով  
իրենց տառապեալ ժողովրդոց յօգնութիւն կը  
հասնէին: Եւ Աստուծոյ բարկութիւնը իրենց  
վրայէն անցնելու համար բոլոր Ազգք և Ազինք  
գիշերային հսկումք, թափորք և պաղատանս

առ ողորմածն Աստուած կը մատուցանէին: Այս  
ժամանակ կսեմ, մեր Ղևտացի աղքատասերն  
այն Նախագահ Վերապայծառը իր ժողովուրդեան  
կրած այս սարսափելի թշուառութեանց և ա-  
ղետից վրայէն զանց առնելով, կարկինը ձեռքը  
բռնած իր շինած Եկեղեցւոյն, և իւր Պալատն  
գծել տուած յատակագծին վրայ գիշեր ցորեկ  
կը չափէ ու կը չափցընէ: Եւ շինուածքը ա-  
մենեին չը դաղրեցընելու համար խօսիւ պա-  
տուէր կուտայ. երբոր ֆաղքիս ամեն կրպակք  
և շուկայիք առ հասարակ գոցուեցան, և ամեն  
գործք և շինուածք բոլորովին դաղարեցան:  
Միայն Վեր. Հասունին շէնքը հազիւ շարաթ  
մը դաղրեցաւ:

• Ասոր վրայ բոլոր ժողովուրդը սկսան իրենց  
արդար դանդառները Եպիսկոպոսին վրայ ընել.  
և ամեն տուն, ամեն տեղ անոր վրայ խօսիլ  
և զուրցել: Ինչպէս որ Հռովմէական Հայոց  
Տաճկերէն լեզուաւ «ՄԷՃՄՈՒԱՅ» լրագիրը այս  
ամեն վերը պատմածնիս ըստ ամենայնի, և ա-  
ռաւելօքն հանդերձ մանրամասնաբար ի 14  
Օգոստոսի 1865. թիւ 612 կը նկարագրէ ըստ  
այսմ օրինակի: Քօլէրա ակտին պատճառաւ



Հայոց Ազգին ըրած ջանքը պատմէին վերջը՝  
կը յաւելու:

»Ասիթանէտէ Հռովմէական զըսմբննն ահ-  
»վալի թէճէսսիւս իթաիքտէ չէշմիմիշ պէօյլէ  
»պիր շէրէֆիլէ բուշէն օլամայաճագ տըր . . . :

»Մալիւմ օլտուղու կիպի, լազըրտը միւ-  
»լէթիմիզին Հռովմէական զըսմբննն միլլէթ  
»խտարէսինին բէսմի էյլեքլէր իւզէրինէտիր: Ա-  
»քին բէսմի իտարէսի օլմայան պիր միլլէթ-  
»տէն նաճըլ բէսմի էյլեք արանապիլիր. իշտէ  
»իլլէթ տէպու, հէտէֆ տէ պու: Այվլէթ՝ բէսմի  
»տիւննէվի միլլէթ իտարէմիզ օլմատըղընտան,  
»պու իտարէնին էյլեքլէրինի սայմաք թէքէլ-  
»լիւֆտէն գօլայճա գուրթուլուրուզ. լաքին  
»պունա քարշըլք պիր տէշհէթլիւ սիվալ  
»տախի գուհուր իտէրքի՝ շուտուր: Պիզիմ բէսմի  
»տիւննէվի իտարէմիզ նէ՞ օլտու: Պունա միլլէթ  
»էքսէրիլէթինին վէրաիլի ճէվապ շուտուր:

»Հասուն Գերապայճառ տօղրուտան տօղ-  
»բույա, վէ եա տօլայրտան պիր թագըմ մուա-  
»մէլլէրիլէ Միլլէթ Բաթրիքլէյինի, վէ Ֆէրմանլը  
»մէճլիսինի միւմքինսիզ իտիւպ, Միլլէթին տիւ-  
»ննէվի հիւքիւմէթինի տախի եավաշ, եավաշ  
»իւհտէսինէ կէշիրտի, վէ պու տիւննէվի հիւ-

„ քիւմէթտէն հանկը շէյքի իշինէ եարար,  
„ եախօտ քէնտիսինէ շու եա պու թարղիլէ պիր  
„ մէնֆաաթ հասըլ իտէր իտէ, օնու այնը Բաթ-  
„ րիք կիսի տէրիւհտէ վէ իճրա իտիւպ, զու-  
„ սուր Միլլէթէ բաճի օլան իշլէրտէն ասլա զայտ  
„ իթմէտի:

„ Էյէր Հասունեան Գերապայծառ Միլլէթին  
„ Բաթրիյի վէ Մէճլիտի օլմատըղընտան, Պասլը  
„ Աալի պանա եազայօր, պէնտէ իճրա էթմէյէ  
„ մէճպուրում տէրսէ, հաղճա քէնտիսինէ աիւ-  
„ շէն պու տուր քի, Պասլը Ալիյէ պիր Թազրիբ  
„ իտիւպ. պէն Բաթրիք տէյիլիմ, Բուհանի մէ-  
„ մուրում. Միլլէթէ էմրը պույուրուն քի, Բաթ-  
„ րիքլէրինի վէ մէճլիտլէրինի նասպ իթսինլէր,  
„ պէն պու մէսուլիյէթի ի զէրիմէ ալամամ տէ-  
„ սին: Նասըլքի իշինէ կէլմէյէն պաղը շէյլէր  
„ իշինն պէօյլէ տէմէքտէ աիր տէնիր:

„ Հասունեան Գերապայծառ Միլլէթի ասլա  
„ տիւշիւնմէյիպ քէնտի աթոռունու տիւշիւ-  
„ նիւր. վէ իթմէր քի՝ միլլէթ տէմէք, աթոռ  
„ տէմէք Ելսուն: Պունուն իշին մէկթէսլլէր պի-  
„ նալար, վարիտաթլար իլէ աթոռունա թազ-  
„ վիյէթ վէրիպ. վէ միլլէթին հէր նէվի վա-  
„ րիտաթընը մասուրա իլէ քէնտի խաղինէսինէ

„ազըտըս, միլլէթէ անճադ պիր չու վայտըղ  
սու պըրագըր \* :

„Հասուն Գերապայծառ Ֆուքարայը սէվ-  
մէզ . վէ հաթտա գօվար: Գերապայծառա եա-  
նաշմաք իչիւն պիր թագըմ էթտէն գալէլէր  
և թապիալարտան կէչմէք լազըմ կէլիր: Վէ  
պունճա միշքիւլաթտան սօնղրա, հիչ պիր Ֆու-  
գարա — պէն գարըշմաճ, չիմէ փեհրոհէնիչ փեհն աէն

---

\* Երեսուն և երեք տարի Գազզիայի Վիօնեան ըն-  
կերութենէն քանի քանի հազար ոսկի լիբա. և քանի  
միլիօն զուրուչ եկաւ և: Պօլսոյ թեմին համար. ահա  
տարած կան նոյն ընկերութեան հաշուողքերուն  
մէջ: Այսչափ ստակը ինչ եղան, ուր գացին ամենեկին  
մէկը չը գիտէր: Մայրապետաց Վանքը, և աղջկանց  
գպրոցը իրէն մեծ եւ՛-եւ մը եղաւ. Ատակներուն ձե-  
ռօք կենդանեաց և մեռելոց ինչքերը հոն ժողովե-  
ցան: Մի և նոյն Խաֆտանճի Անտօնը, որ իր գլխա-  
ւոր և հաւատարիմ գործակալնէ, Էվգաֆ—և Մէր-  
կէմէնէրը—ինչչափ արդեօք մարդիկներուն անունը  
և մականունը առնելով, որպէս թէ այն ամէն ընչ ց  
երկրի, տան, և կրօնակաց բուն Տէրը ինքն է, կառ-  
նու, և կամ կը ծախէ: Այսպէս յափշտակուեցան ինչք  
ժառանգաց Հաճի Գաւթեան Յալսեփ Ապիսկապո-  
սին: Այսպէս յափշտակուեցան ինչք ժառանգաց  
Շիման օղլու Լօրէն Աղային որդւոց տուները և խա-

« պաշկա ճէվապ պլամամըշորը քէնտիսինտէն: \*\*  
« Պուռնուն մուղայիրի Գերապայծառ զէնկինլէրի  
« բէք սէվէր, օնլարա պէօյիւք ըայէթ կէօսաե-  
« րիր, վէ հէր հալլէրինէ կէօզ գարայըպ խա-  
« ղթըրլարնա տօզանմազ իսթէմէզ, օնլարա  
« միւտահանէ իտիւպ, Ֆուգարայը չիյներ, Հա-  
« սուն Գերապայծառ էքսէրը քահանայլարը  
« մուամէլթը թահզիրլիյէ իլէ գուլլանըր, վէ

---

նութները. երբոր նոյն խափտանձին մտեալ Մօրեր-  
նուն տեղ կենդանի կլիներ տանելով, բոլոր ինչքերը  
Գեր. Հասունին ձեռքը յանձներ էր: Մակայն այս  
ամէն արգարութեան զէմ գործուածները հոս զանց  
կընեմ, ուրիշ մը ձգեցիւմ, Գեր. Հասունին իր գան-  
ձին վաղցուցած հարստութեանց մէկն ալ՝ Հօզոր  
Նղբայրութեանց հաշիւն է, մ'նաւանդ Աստուածաժ-  
նայ, և ուրիշ այլ և այլ Նղբայրութեանց հաշիւները,  
որոնք որ մինչև ցայսօր ժողովրդէն գաղանի է: Բայց  
մենք ինչպէս որ զուրցեցինք, այս մասը հիմկու հիմայ  
մէկ զի կը ձրգենք:

---

\*\* Գեր. Հասունին Քեռայր Չօպանեան Գրիգոր  
Աղայն, իր տունը. և բոլոր էջեան մեկ տեղ երուե-  
լով, վեց եօթը զաւակներով յողորմելի վիճակ, և ի  
վերջին աղքատութեան հասնելով, աչքերը արցուն-

աշխարհականլարը քահանատան եիքսէք  
թու թու պ' բուհանի կիւրիւհինի աիւնեկվի  
մուվաճէհէսինաէ թէնգիլ իտէր:

Հասունեան Վերապայծառ Վօլէրա հազ-  
գընտա, նէ բուհանիճէ նէ աիւնեկվիճէ հիչ  
պիր թէտպիր գուլլանմատը: Քէնտիսի պաշ  
օլու պ' նէ ֆուգարա իչիւն պիր ագճէ թօփ-  
լատը, նէ տէ ախէր աիւրիւ պիր մուավէնէթ  
կէօտէրտի: Վէ պու վէճհ իլէ հէր հիւքիւ-  
մէթ ի տէրիւհաէ իտիւպ, անճաղ պէօյլէ պիր  
մուխաթարա վաղթընտա նուֆուսունու վէ  
հիւքիւմէթ ինի գուլլանմաղ լաղըմ կէլիւր լիքէն:

---

բով լեցուած, Հասուն Վերապայծառին ոտքը կիջնաւ,  
և իր հուսահատած վիճակին ճար մը անկէց խլնդ-  
րած ժամանակ. Վեր. Հասունը ինձմէ ինչ բան կը  
խնդրես՝ ըսելով խտիւ կը պատասխանէ: Չնա՝ կսէ,  
կերակուր կսիէ, փողոցէ ի փողոց ծախէ, և սրգոցդ  
հաց ճարէ: Այս խիստ և անգութ պատասխանը Հան-  
գուցելոյն սիրտը այնողէս վերաւորիւ էր, որ մինչև  
մահուան օրը աչքի արցունքներով իր բարեկամաց  
կը պատմէր. ինչպէս որ կենդանի իր դաւակներն աչ  
կը վկայէն: Ասկից կրնատ հետեցընել օտար աղքա-  
տաց անոր ցուցուցած դուխ և խնամքին չափը:

„վազի՛նիսի պիլէ օլմատը: Աէ՛նն սէնէ քէնտի  
„թէյսիրի իլէ նասպ օլունան Ֆուզարախանէ  
„մէմուրլարը մուխաթարա վազտընտա հէր  
„պիրի պիրէր թէրա՛նի սավուշուպ, վէ Ֆու-  
„զարանըն իհթիաճաթընը գայտ իւ հաճէթ  
„իթմէյիպ, պիւթիւն եիւքիւ էսկիտէն գալան  
„պիր իքի քիշի իւղէրինէ պրրագտըլար, վէ օն-  
„լար տա եէթիշտիքլէրինէ եէթիշլիպ, գուսու-  
„րու էօյլէ եիւզ իւսթիւնէ պրրաղըլար:

„Հասուն Վերասպայճան . . . . պու շի-  
„քէնայէթ ումումիտիր, վէ պու տա օղատա-  
„րատագ սահիհ տիր քի, իմզա իլէ թագաթիմ  
„իթմէք լաղըմ կէլսէ, բէք աղատամ արշարտա  
„գալաճագտըր : . . . . Պէօյլէ տէրտ վէ  
„իշթիքեա գալպլէրտէ գալտըղը հալտէ, օրատա  
„պու մայա էքշիր, գապարըր վէ նակէհան  
„էօյլէ պիր բաթլաք վէրիր քի, էվատ վէ փէ-  
„տէր պիր պիրինէ խասմ օլուպ, պիր թաղըմ  
„թէէսսիւֆ խաթիճէք էսկի հալլէր եէնի պիր  
„գուվվէթ իլէ զուհուր խաթուպ, էլիշիքտէ օլան  
„շու մուհապպէթ թէքրար խուսումէթէ  
„թահվիլ օլունա պիլիբ:

# 37.

1. Գ եր. Հաստանին կիւղիկէն լեւոյն Տէջ Տեջամհոս-  
լեւանը:— 2. Ուլեբբորդ Պեպրոս կալուղիկէսի: Ընդ  
Գ եր. Հաստանին հեպ դաշնորդուելու. և իրեն Տահը:—  
3. Ս. Վալեբիան զԵղիսիսպոսներ: յընտրուլեանն ար-  
գիւղելը. և Գ եր. Հաստանին կալուղիկէս ընտրուլը:  
Ս. Պապին Գրոսած Լաւղլը:— 4. Գ եր. Հաստանին է  
Հաստան էրլուը. և կալուղիկէս հաստապիւը. դարձ Նորո  
է Կ. Պօլին: և իրեն օրհնուլեան հանդէսը:

1. **Ինչպէս որ վերը պատմեցինք, երբոր այս** ժամանակ ո՛չ Ազգապետ Պատրիարք կար, ո՛չ Ազգային ժողով, ո՛չ իշխանութիւն և ո՛չ զօրութիւն մը մնացեր էր, և Գ եր. Հաստանը իր ամէն ուզած հրամանադիրերը Բ. Գուռնէն կրնադունէր, և ինքնիշխան կը տիրէր, այնուհետև սկսաւ առանց արգելքի կերպ, կերպ ճամբայներով կիլիկիոյ Պատրիարքական թեմը արշաւելու պատրաստութիւններ տեսնել:

**Առաջին ի գործ դրած հնարքը այս եղաւ,** որ նոյն Պատրիարքին, Զմեռան, միաբաններէն մէկ քանի հատը որսաց: Ասոնք Հոսովային ազերսադիր գրեցին, և երկու Աթոռոյն միու-

Թեանը համար հիմակուրնէ գեր. Հասունին  
Կաթողիկոսական յաջորդութիւնը խնդրեցին:

Այս միութենէն Ազգիս մեծամեծ բարիք  
ճագիլը պատճառեցին: Երբոր այս առաջարկու-  
թիւնը Հռովմայէն ութերորդ Պետրոս Գրի-  
գոր Կաթողիկոսին հաղորդուեցաւ. իսկոյն պա-  
տասխան տուաւ, թէ այդ իշխանութիւնը ա-  
մենեին իմ ձեռքս չէ, այլ Արիւնկիոյ Պատրիար-  
քական Աթոռոյս բոլոր Եպիսկոպոսաց կամքէն  
կախուած բան մի է, որոնց իրաւունքը ես իմ  
զիւսոյս չեմ կրնար բռնաբարել և այլն: Պատ-  
րիարքին այս բանաւոր զրու թեանը վրայ Հռովմ  
համոզեալ, ալ անկէ ետե զանիկայ չը պնդեց:

Իսկ Գեր Հասունը երբոր տեսաւ, որ այս  
հնարքը ոչինչ ելաւ, ապա սկսաւ Կաթողիկո-  
սարանին թեմական Եպիսկոպոսաց քաղաքա-  
կան գործքերուն անդգալի եղանակաւ Բ. Գրան  
ձեռօք արգելք դնել: Եւ որովհետե քաղաքա-  
կան ազգային Պատրիարք չի կար, խեղճ Եպիս-  
կոպոսունք՝ Գեր. Հասունին փափաքանացը յար-  
մար, կը հարկադրէին, անոր ղիմելու: Սակայն  
այս պարագայիս մէջ տես ինչ կերպ ձամբայ  
կը բանէ: Մէկ կողմանէ անոնց գործողութիւնը  
հարեանցի կերպով մը անխնամ կը թողու:



պատճառելով թէ ինքն քաղաքական Պատրիարք  
չէ: Միւս կողմանէ Կ. Պօլիս զանուող էմպեր  
Միարանից. և կամ աշխարհականաց ձեռք  
կաթողիկոսական թեմին մէջ եղողներուն խոր-  
հուրդ կուտայ, որ իրենց աղերսագրով ուղղակի  
իրեն գիմէն, որպէս զի կերպով մը այն թեմին  
ժողովուրդը իրենց կաթողիկոսէն, և սեփհա-  
կան Հովիւէն պաղեցնէ, իբր թէ իրենց ժողո-  
վուրդը հանդիպած քաղաքական հարստահա-  
րութենէ պաշտպանելու տկար և անկարող են:

Եւ իրօք ալ երբոր իր քմացը յարմար ժո-  
ղովրդեան Մահչի աղերսագիր մը կրնդունէր,  
նոյն ժամանակը այն ի գործ կը դնէր, որպէս  
զի իր համարմունքը, և ազդեցութիւնը ան  
միամիտ ժողովրդեան առջև մեծցընելով զա-  
նոնք իւր իշխանութեան ներքև ընդունելու  
ձամբայ բանայ: Եւ իրաւցնէ այնպիսի խեղճ ժո-  
ղովուրդ մը այսպիսի ներքին արուեստակեալ  
հնարագիտութիւնը Նախագահէմը ոչ երբէք  
յուսալով, և ոչ ալ զանիկայ իմանալու կարո-  
ղութիւն ունենալով, իր համարմունքը Պեր-  
Հասունին վրայ կաւելցընէր, և իրեն սեփհա-  
կան Առաջնորդ Հովիւներուն ցուրտ աչքով  
նայելու կսկսէր: Այս բանիս բուն ներքին պատ-

ճաճատը նոյն ինքն Հոովմ ալ չի գիտնալով,  
Գեր. Հասունին խոհեմական կառավարութե-  
նէն թերեւս առաջ եկած կը կարծէր: Բայց  
Գեր. Հասունը ասոնք ինչչափ ձեռքի տակէն կը  
գործէր, անկէ ետեւ յայտնի ալ գործելու սկսաւ:  
Ամասիոյ թեմը, և Խարղրերգին թեմը իր շըր-  
ջականերովը մեկ անգ Պատրիարքին ձեռքէն  
յափշտակելու ելաւ: Այսչափ տարիներէ ի վեր  
Ամասիոյ թեմին վրայ Արքեպիսկոպոս ձեռնա-  
դրուած, և հիմակ ալ դեռ կենդանի Խալի-  
պեան Իգնատիոս Արքեպիսկոպոսը Գրապղոնին  
երեկեան Առաքել Եպիսկոպոսէն սաստիկ յան-  
դիմանութիւններ ընդունելով, անկեց կարտաք-  
սուի. և այսպէս ողորմելի Խալիպեան ծերունին  
կը բռնադատուի հնգետասանամեայ հովուած  
• իր թեմը ձգել, և ի թոխսթ քաղաքը քա-  
շուիլ: Ո՞ր մէկը պատմեմ. ահա՛ այս խաղա-  
ղութեան պաշտօնեայնեքը հանապաղ խոովու-  
թիւն սերմանելու ելեր էին:

Գերերջանիկ Պետրոս Բ. Գրիգոր Աթոզի-  
կոսը տեսնելով, Գեր. Հասունին իր Աթոզը  
կործանելու համար ի գործ դրած տեսանելի  
և անտեսանելի լարած դարանները, յԱտուած  
անդը իր բողոք յոյ՛ր կը դնէ, որ ինքն միայն է

ի չարեաց բարիք հանել: Եւ ստոյգ այս ժամանակ Աստուածային յաջողութեամբ Բարձրապատիւ Փոխարքայ Ծուատ Բաշայն Գամասկոսի ապստամբութեան պատճառաւ Պէրութ կերթայ յամին 1860:

Գերերջանիկ Կաթողիկոսը Բարձրապատիւ Ծուատ Բաշային միջնորդութեամբ ի Կ. Պօլիս Բ. Դրան առջև իւր Կլիկիկոյ Պատրիարքական Աթոռոյն քաղաքական գործոցը համար փոխանորդ մը կարգելու. և առանց Գեր. Հասունեանին միջամտութեանը ուղղակի Բ. Դրան հետ բանակցելոյն արտօնութիւնը կընդունի: Եւ այսպէս Նահապետեան շ. Եղիա Վարդապետը ի Կ. Պօլիս իւր քաղաքական փոխանորդը կը կարգէ. զորնոր Բ. Դուռն ալ մեծ հաճութեամբ կընդունի, ինչու որ զանխիայ շատ ժամանակէ ի վեր կը ձանձնար.

Գեր. Հասունը իր լարած գաղտնի հարազատութեան սաստիկ մեծ հարուած մը ընդունելով կսկսի հիմայ ալ ուրիշ մէկ ձամբով մը ձեռնարկուած գործոյն յաջողութիւնը տկարացընելու աշխատիլ: Այսինքն զՀայր Եղիա Վարդապետը փոխանորդութենէն հանել տալով. դարձեալ Կաթողիկոսական գործքերը Բ.

Գրան առջև կազն ի կաղը երթալով իր վախճանին վերադին հասնի: Աստի վասն այսր զՀռովմ՝ ձեռք կառնու, և այսպէս Բրօրականտան Գ. Վաթոզիկոսին կը գրէ, որ Հ. Նղիա վարդապետի մը պէս պատուար որ անձը, իրր անարժան և վնասակար այնպիսի պաշտաման, իւր փոխանորդութենէն հանէ: Գերերջանիկ Վաթոզիկոսը, խելամուտ ըլլալով Գեր. Հասունին այս լարած մեքենային, պէտք եղած պատասխանը Նախագահ Քարտինալին կը գրէ, իսկ զՀայր Նղիան դարձեալ առաջին փոխանորդութեան պաշտամանը մէջ կը հաստատուի:

Գեր. Հասունը տեսնելով Վաթոզիկոսական թեմերուն դորձքերը ըստ կարգի յառաջ կերթան, սկսաւ Վաթոզիկոսարանի Միարանից մէջ Աերքին դժտութիւն սերմանել: Վաթոզիկոսին իշխանութենէն իր Քահանայները հեռացրնել: Նախագահական իշխանութեան ներքեւ մանալ ազդոյներուն ձեռքի տակէն օղնել: Իսկ մանողները պաշտօններու, և իշխանութեանց հասցրնել, որպէս զի ուրիշներն ալ անոնց հետեւելով ան թեմին հօղևոր կառավարութիւնը տկարանայ:

Գեր. Հասունին միւս ալ հնարքը, ջանալ

Թէ Գ. Կաթողիկոսը և թէ իր թեմական Եպիս-  
կոպոսները նկուն և անկարող վիճակի մէջ  
օտար ազգաց ճանչցընել:

Գերերջանիկ Կաթողիկոսը անոր այս հը-  
նարքին առջև առնելու համար 1863-ին ա-  
տենները զԱղեքսանդրեան Միջայել Երուսաղե-  
մայ Արքեպիսկոպոսը Բարիզ քաղաք կը յու-  
ղարկէ: Այս քաջ և իմաստուն Հովիւը Գաղ-  
ղիոյ Տերութեան մեծամեծ Պաշտօնատեարց, և  
Վեհախառ երրորդ Նարօլէօն Կայսեր առջևը  
շնորհք պտաւ, որ և ժամերով իւր հետը խօ-  
սակցելով Հռովմէական Հայոց Կիլիկիոյ Պատ-  
րիարքական Աթոսը ճանչցաւ, և անդաման-  
դեայ Լէզէոն պատուոյ նշանիւ զԳեր. Կաթո-  
ղիկոսը պատուեց:

Բայց ասոնք Գեր. Հասունին սրչափ մեծա-  
մեծ հարուածներ տուին, և իր նախանձք ինչ-  
չափ կրկնապատկեցին, որ այնչափ աշխատու-  
թեամբ Եւրոպիոյ, նա մանաւանդ Գաղղիոյ առջև  
դինքն միայն Հայ Կաթօլիկ Ազգը ներկայացը-  
նող ճանչցուցած էր: Բայց ինչ օգուտ, Գեր.  
Հասունին դրդմամբ նա ինքն Միջայել Արքեպիս-  
կոպոսը Բրօքսէլիստային սաստիկ հրամաններէ՛ծ

սրարտաւորուած կը բռնադատուի ժամ մը յառաջ Գաղղիայէն շուտով դուրս ելլելու:

✓ 2. Գերերջանիկ Կաթողիկոսը տեսնելով իր Աթոռը կործանելու համար ոտխնին հանապազօրեայ լարած որոգայթները, իր Ապիսկոպոսներուն հետ մէկ տեղ խորհելով, Ակեղեցւոյ մի միայն բարութիւնը դիտելով, որոշեցին՝ թէ այս երկուց Աթոռոց, այսինքն Կիլիկիոյ Պատրիարքական, և Կ. Պօլսոյ Նախագահական երկու Իշխանութեանց մէջ սէր և խաղաղութիւնը՝ ի շինութիւն հաւատացելոց և ի սպայծառութիւն Ակեղեցւոյ, հաստատուն պահելու համար Գեր. Հասունին հետ մէկ բանակցութիւն մը բլլայ: Արով երկու Աթոռք ըստ պայմանացն, զոր Կաթողիկոսն իր Արքեպիսկոպոսներովը շինած էր, իրարու հետ միանան: Գեղեցիկ մտածմունք:

Աւստի վասն այսր Գերերջ. Կաթողիկոսն առանձինն զԱղեքսանդրեան Միքայել Արուստակմայ Արքեպիսկոպոսը կարգեց. այր յաջող բանիւ և զրով. քաղաքազետ և խոհեմ հանձարովն զարգացած: Արդ՝ Աղեքսանդրեան Միքայել Արքեպիսկոպոսն յամին 1865, այն ինչ սկսած էր Գեր. Հասունին հետ այս բանիս վը-

րայօք խօսիլ, և ահա այս ժամանակ անողորմ  
ախտն Քօլերա Աղեքսանդրեան Միքայել Աբբեպիս-  
կոպոսին հետ մեկ տեղ՝ Պատրիարքական փո-  
խանորդ Նահապետեան Է. Եղիա Վարդապետն  
ալ իջոյց ի հող մահու: Այս բօթալից գոյժը  
երբոր Գեր. Կաթողիկոսին հասաւ, դառնացաւ  
յանձն իւր իջոյց յաջացն գետօրէն զարտա-  
սուս, և իր քովը չըկար մէկ մը, որ մխիթա-  
րէր զանմխիթար և դառնացեալ իւր սիրար:  
Ապա Վերին Նախախնամութեան երկիր եպագ.  
և ըստ խղճի իրեն յանձնուած Աստուծոյ ժո-  
ղովուրդը արդարութեամբ հովուելու և սաշտ-  
սանելու համար, և յաւետ Եկեղեցւոյ օգուար  
փրնտուելով, իր առջի բարի դիտաւորութեամբ  
սկսած գործը. այսինքն երկուց Աթոռոց իրա-  
րու հետ միաւորութեանց բանակցութիւնը յա-  
ռաջացրնել:

Ուստի Գեր. Կաթողիկոսը այս բանիս հա-  
մար իրեն փոխանորդ կարգեց զԳազանձեան Ան-  
տիօքայ Աբբեպիսկոպոսը, Անտոնեան Ռիտին  
Ընդհանրական Աբբայն, և զՀալէպեան Ներսէս  
Վարդապետ, Սեփաստիոյ Աբբեպիսկոպոսը. որոնք  
որ այս ժամանակ իրենց գործողութեանց պատ-  
ճառաւ ի Կ. Պօլիս կը գտնուէին: Արդ ասոնք

հազիւ մէկ քանի անգամ բանակցութիւն ըրին  
Գեր. Հասունին հետ, որ այս ժամանակ ըստ  
ամենայնի կեղծաւորեցաւ: Աւ վերոյիշեալ Արք-  
եպիսկոպոսները ինչպիսի որ ալ կուզէին այս ըրած  
բանակցութիւննին ժամանակէն առաջ հասա-  
րակութեան չի հրատարակել, կերպ կերպ ան-  
տեղի հետեութեանց պատճառ չը տալու հա-  
մար, այնչափ ալ Գեր. Հասունը ձեռքի տակէն  
զանիկայ կը հրատարակէր, և իր արբանեակները  
կը գրգռէր, որ այս միութիւնը չուզէն, և ի  
Հռովմ գանգատներ գրեն, Գերերջանիկ Աթո-  
ղիկոսին այս բարի դիտաւորութեանցը, շատ մը  
ձախող և ծուռ մեկնութիւններ տալով:

Իսկ երբոր այս ամեն սկզբնական գործո-  
ղութիւնները դեռ անկերպարան գրիցը մէջ  
էին, ահա ութերորդ Պետրոս Աթողիկոսը, և  
Հռովմէական Հայոց Ալիլիկիոյ Պատրիարքը առ  
Աստուած կը փոխուի, թողլով ի սուգ և ի  
մեծի արամութեան իրեն սիրելի բոլոր Գղերը,  
և զժողովուրդը: Հանգուցեալ Գերերջանիկ Ա.  
Աթողիկոսին անգիւտ, չքնաղ, անշահասէր  
հեղ, ցած, հիւրասէր, Աստուածասէր և աղ-  
քատասէր վարքը գրելու կը թողունք իրեն Միա-  
բանից ըստ ամենայնի Հասարակութեան հա-



դորդելու համար: Աւ քանզի հանդուցեալ կաթոզիկոսը գրէ թէ այսօր ի Վիքանան, ի Վանս Սրբոյն Աստուածածնայ (Զմմառի), նստող կիլիկիոյ Պատրիարքաց վերջինը եղաւ, ուստի մեր ընթերցողաց զիտութեանը համար բոլոր Պատրիարքաց ցանկը հոս տեղը ղնելու պատշաճ կը համարինք:

Հռովմէական Հայոց, Ընտրեալ կաթոզիկոսը, և կամ Պատրիարք կիլիկիոյ:

Արրահամ առաջին Պետրոս ի 14 Նոյեմբերի 1740:

Յակովբ երկրորդ Պետրոս ի 2 Հոկտեմբերի 1749:

Մեքայեւ երկրորդ Պետրոս ի 11 Յունիսի 1753:

Բարսեղ չորրորդ Պետրոս ի 19 Նոյեմբերի 1780:

Գրիգոր հինգերրորդ Պետրոս ի 29 Ապրիլ 1788:

Գրիգոր վեցերրորդ Պետրոս ի 17 Յունիսի 1812:

Յակովբ եօթներրորդ Պետրոս ի 8 Յունիսի 1841:

Գրիգոր ութերորդ Պետրոս ի 25 Յու-  
նիսի 1843:

Երրորդ ութերորդ Պետրոս, Գրիգոր Կա-  
թողիկոսը և Կիլիկիոյ Պատրիարքը ի 28 Դեկ-  
տեմբերի 1865 հանգեաւ ի Տէր. առաջիկայ  
միաբանքն Կաթողիկոսարանին ի պարապորդու-  
թեան Աթոռոյն ըստ սովորութեան իւրեանց  
ի ժողով գումարեցան, այս ժողովոյն մէջ ըստ  
հաճութեան և հաւանութեան Կասպարեան  
Բարսեղ Նախագահ Արքեպիսկոպոսին քուէար-  
կութեամբ ընտրեցաւ Տեղապահ Դաւթեան  
Սերովբէ վարդապետը:

3. Արդ՝ յետ մահուան հանգուցեալ Կա-  
թողիկոսին երրորդ բոլոր թեմական Արքեպիսկո-  
պոսները ըստ վաղեմի սովորութեան իւրեանց  
ի յընտրութիւննորոյ Պատրիարքին կը պատ-  
րաստուէին ի Վիրանան երթալու: Ահա՛ Ասո-  
րեստանի Պապական Փոխան—Նուիրակը, և  
Երուսաղեմայ Վատին Պատրիարք, Տէր Յովսէփ  
Վալէրկան Կաթողիկոսարանին ամեն թեմա-  
կան Արքեպիսկոպոսաց առանձին, առանձին ի  
5 Փետրվարի 1866, թուղթ կը գրէ, որով և  
Ս. Պապին կամքը իրենց կը յայտնէ, այսինքն  
առ ժամս դադարել Պատրիարքին ընտրութե-

նէն: այլ սպասել Անոր նոր հրամանին: \* Ապա վերոյիշեալ Վատին Պատրիարք, Մ. Վալէրիան դարձեալ առ իւրաքանչիւր Արքեպիսկոպոսունս ի 7 Մարտի 1866 թուղթ կը գրէ, և իրենցմէ տեղեկութիւն կը խնդրէ, ի դատարկութեան Աթոռոյն Տեղապահին ընտրութեան օրինաւոր եղանակին վրայ: Բայց անոնց պատասխանին չը սպասելով, իրեն ըստանձնեալ Վերին իշխանութեամբ ի 15 Մայիսի զԴաւիթեանը իր Իշխանութենէն վար կառնու, անոր տեղը զՆազարեան Մամպոյ (Մէրտինի) Արքեպիսկոպոսը տեղապահ կը կարգէ ի պատճառս վիճից յուզելոց Տեղապահ Գաւթեանին և Գասպարեան Բարսեղ Ապիսկոպոսին մէջ. ընթերցողները կրնան թիւրութեամբ գուշակել, թէ այս յուզուած վիճին բուն իսկական պատճառը ինչ էր արդեօք:

Չեմ կրնալ պատմել այս ժամանակ Գեր. Հասունին ի Պօլիս, ի Հռովմ և ի Ղիւրանան, ի գործ դրած հետաքնները, և լարած որոգայթները, զորոնք հեռագրական թելերը զիշեր ցո-

---

\* Այս առաջին անգամ է, որ Ապիսկոպոսները կարգիւրին իրենց իրաւունքը ի գործ զընելին: Նը-

րեկ իրենն արբանեկաց հաղորդեցին: Եւ այսօպէս ամեն բանը առաջուց ի կարգի դրնելէն զերջը, Մ. Վալերկան ի 14 Յուլիսի ձեռամբ Գ. Նազարեան Տեղապահին ամեն կիլիկիոյ Արքեպիսկոպոսներուն թուղթ կը գրէ, և նոր Պատրիարքին ընտրութեանը համար ժողովելու ազատ ըլլայնին ի գիմաց Ս. Պապին իրենց կը ծանուցանէ:

Նպիսկոպոսունք առ հասարակ տարտամ վիճակի մը մէջ կը գանուէին, և թէպէտև գրէ թէ ամենք ալ երկուց Աթոռոց միութեան փափաքող էին և Նկեղեցւոյ խաղաղութիւնը միայն կը դիտէին. բայց Գեր. Հասունին վրայ ալ այնչափ վստահութիւն և ապահովութիւն չունէին: Այս պատճառի համար էր, որ Բերիացի (Հայէպցի) Նպիսկոպոսները իրենց մէջ գրէ թէ Իրոշած էին առ ժամս Աթոռոց միութեան գործը մէկ զի թողլով, դարձեալ կիլիկիոյ Աթոռոցն Նպիսկոպոսներէն մէկը ընտրեն: Իսկ մնացածները տարտամ և անորոշ վիճակի մէջ կը տատանէին: Եւս առաւել երբոր կը մտա-

---

մանապէս ի ընտրութեան Պատրիարքին Նպիսկոպոսաց ժողովոյն մէջ Ս. Պապին փոխանորդին զալ նրասիւր առաջինը եղև:

Տէին, որ եթէ զԳեր. Հասունը չընտրեն՝ զըլուխնին փորձանքէն ազատելիք չունին. ինչու որ Գեր. Հասունը իւր փափաքին հասած ըլլալով, հարկաւ իր ամեն ուժովը նորանոր անզգալի հարուածներով կիլիկիոյ Աթուր կործանելու պիտի աշխատի: Ուստի յերկուց չարեաց փոքրագոյնը ընտրելով, յաւէտ Գեր. Հասունին ընտրութեանը կը հակամիտէին:

**Ա**փսոս, որ ետքը ողորմելիները իմացան՝ սր անգիտութեամբ յերկուց չարեաց մեծագոյնը ընտրեց են:

**Ա**յսպիսի տրամադրութեամբ Նպիսկոպոսունք երբոր ի սիւնհոգոս պիտի մանէին, ահա նոյն օրը Առաքելական փոխան — նուիրակ, Մ. Վալէրկան կուգայ, և ժողովոյն մէջ իբր Նախագահ կը բազմի: Եւ Հռովմային հրամանը ձայնիւ անոնց կը յայանէ. այսինքն կրաւորական ձայնէն զրկուելին, կեսարիոյ Արքեպիսկոպոս Հաճեան Յովհաննէս Վարդապետը, և Խոռխոռունի Ղևոնդ Վարդապետ Մելիտոնոյ Արքեպիսկոպոսը: Նոյնպէս կաթողիկոսարանին ամէն միաբանները առ հասարակ կրաւորական ձայնէն կարգիլէ, որոնք որ Նպիսկոպոս չէն ձեռնադրուած: Վասն զի երկիւղ կար՝ որ ի գիտու-

Թեան, յիմաստութեան և յառաքինութեան մէջ յառաջ դացող Մխարաններէն թերևս մէկը կընտրուի: Ապիսկոպոսները՝ այսպիսի արգելքներ իրենց կեանքերնուն մէջ չէին տեսած, զըլուխնին ծռեցին այս հրամանին ալ: Ապա Մ. Վալէրկան շնորհաբար իրեն յանձնուած ուրիշ հրահանգներն ալ Սիւնհոդոսին հաղորդելէն վերջը, ընտրութեան մտնելու հրամայեց:

Ապիսկոպոսունք քիչ մը ժամանակ ինքն իրենց մըտմբային. Առաքելական Նուիրակին խօսքերը կըռեցին, և իւրաքանչիւր Ապիսկոպոս իրենց թեմերուն մէջ Գեր. Հասունին կողմանէ խաղցուած խաղերուն և լարուած մեքենայներուն արդէն ծանօթ էին, և անոնց առջևը առնելու միջոցներէն յուսահատած, վերջապէս ութ ժողովական Ապիսկոպոսներէն հինգ կամ վեց հատը մխարանեցան, և ի 2/12 Սեպտեմբերի 1866, ի ներկայութեան Մ. Վալէրկայի Կ. Պօլսոյ Նախագահ, Տէր Անտոն Հասուն Արքեպիսկոպոսը Վիլիկիոյ Պատրիարքական Աթոռոյն վրայ իններորդ Աեարոս Կաթողիկոս ձայնիւ ընտրեցին:

Այս ընտրութեան երկուց և երից ժողովական Ապիսկոպոսաց աժգոհութիւնը արժէք

մը չունեցաւ. և ոչ ալ այսպիսի անզգայի տարածայնութեան ժամանակ ըստ օրինաց Առաքելական Նուիրակը քուէարկութիւն ընել տուաւ:

**Արդ՝** իսկոյն ի նմին վայրկենի հեռազիրները աշխարհքիս չորս կողմը, յարևելս և յարևմուտս աւեակեցին Գեր. Հասունին Ախլիկիոյ Աթոռոյն վրայ Պատրիարք ընտրուիլը: Ապա ամենայն Սիւնհոգոսական Ապիսկոպոսունք՝ Թ. Պիոս Պապին թուղթ մը գրեցին, և իրենց ընտրութիւնը Անոր ծանուցին, այս օրինակ

ՊԵՐԻԿԱ ԵՐԱՆՆԵԱՂ ՀԱՅՐ:

ՊԽՈՆԱՐՀԵԱՂ ի համբոյր Ս. ռաիցգ ձեռնադրուչ Ապիսկոպոսք Հայոց Աթոռիկեայց Պատրիարքութեան Ախլիկեայ, յայտ առնեն մեծարանօք Սրբութեան Չերում, եթէ օրհնութեամբ Երանութեանդ ժողովեալք յաւուրըս յայտոսիկ ի Ղիբանան վասն կանոնական ընտրութեան յաջորդի երջ. յիշ. հանգուցելոյ Մեծարդոյ Պատրիարքի Գրիգորի Պետրոսի Ը. և հասուն խորհրդով զամենայն առաւելութիւնս, եթէ զհոգեկանս, և եթէ զժամանակաւորս զմտաւ ածեալ. որ յաճախիցեն Աթոռիկէ Եկեղեցւոյ Հայոց, և ամենայն ազգին ի միաւորութենէ երկուց հոգե-

որ իրաւարանութեանց՝ որ են ի նմա, յա-  
ռաջընթաց ազօթիւք, և մատուցմամբ Արքայ  
Պատարագաց, ի նոցունց իսկ Ապիսկոպոսաց և ի  
Կղերականաց իւրեանց վասն ընդունելոյ զլոյս  
յԱստուծոյ, միաբան հաւանութեամբ, ինքնա-  
յօժար կամօք ընտրեցին և հրատարակեցին  
զլեծարգոյ Անտոն Հասունեան զԱրքեպիսկո-  
պոս և զՆախագահ Կ. Պօլսի ի Պատրիարք  
Կիլիկեայ, անուամբ Պետրոսի Թ. յաջորդ իրաւանց  
և ուսանչնաշնորհութեանց Նորին հանգուցելոյ Պապ-  
ընտրել իւրեանց:

Կանոնական դործ ընտրութեանս այսո-  
րիկ փակի ի սմին ամենայն խոնարհութեամբ,  
թողեալ Մեծարգոյ Վալէրկայի՝ Պատրիարքի  
Ներուսաղէմի և Առաքելական Նուիրակի յԱս-  
որիս, յայանել Արքութեան Չերուժ զմանր  
հանգամանս:

Ուրախացեալք ի Տէր վասն յաջողու-  
թեան դործոյս յօգուա կաթողիկէ Եկեղեցւոյ  
Հայոց, խնդրէն ի Արքութենէ Չերմէ խոնարհ  
աղաչականքս, զի հաճեացի պսակել զգործս  
զայս Առաքելական Սրհնութեամբ:

Աստուած՝ որ զանչափ դործս հոչակա-  
ւորս և արժանիս յաւիտենական յիշատակաց



« Կառարեաց յերջանիկ Քահանայապետութեան  
« Սրբութեան Ձերոյ, պահեաց Նրանութեան  
« Ձերում զվերանորոգութիւն ազգի Հայոց Աս-  
« թողիկեաց, որ օրհնեսցէ ի յաւիտեան զբարե-  
« րարութիւն Հայրական խնամոց Սրբութեան  
« Ձերոյ, յորժամ յիմաստութենէ Ձերմէ ըն-  
« կալցի զկարգ և զվայելչութիւն միութեան,  
« եթէ յիրաւարանութեան, և էթէ ի բարե-  
« կարգութեան:

« Այսպիսի են եռանդուն ուխտք աղաչա-  
« կան ձեռնադրողաց, և այս նպատակ խորհր-  
« ղոց նոցա հրապարակելոյ: Սակայն՝ յայննեն  
« և զայս ցանկութիւն իւրեանց, թէ հաճեսցի  
« Նորընտիր Մեծարգոյ Պատրիարքն փութալ,  
« որչափ հնար իցէ, և զալ ի Աիրանան առ ու-  
« նելոյ զԱթոռ Պատրիարքութեան և կատարե-  
« շոյ զհանգէս ազգային ծիսի ի վայելչութիւն  
« նորին Աթոռոյ և ի մխիթարութիւն այնոցիկ,  
« որք ընտրեցին և ձեռնադրեն:

« Եւ խօնարհեալ վերստին ի համբայր Սուրբ  
« Ոսիցդ խնդրեն մեծաւ հպատակութեամբ  
« ՂԱ արեւլական օրհնութիւն: \*

---

\* Բառ առ բառ այս նստուածք օրինակուած է

• Ի Լիբանան լերին. ի 13 Սեպտեմբեր ամսեան 1866:

• Խոնարհ ծառայք և հնազանդ որդիք

• Մեղքոն վ. Նազարեան. Արքեպիսկոպոս Մամպուոյ, և Առաքելական Պատրիարքական փոխանորդ:

• Գրիգորիոս վ. Պալկեան Արքեպ. Բերիոյ:

• Ինքնատիոս վ. Քալըպճեան Արքեպ. Ամասիոյ:

• Պետրոս վ. Արելեան Արքեպ. Գերմանիոյ:

• Յակոբ վ. Պահտիարեան Արքեպ. Տիգրանակերտի:

• Յովհաննէս վ. Հաճեան Արքեպ. Կեսարիոյ:

• Ղևոնդ վ. Խոսխոռունի Արքեպ. Մելիտինոյ:

• Բարսեղ վ. Գասպարեան Արքեպ. Կիպրոսի:

Այս թուղթը ի Հռովմ գրելէն վերջը, նոյն Եպիսկոպոսունք Գեր. Հասունին ալ գիր մը գրեցին, և քիչ մը ետքը Ամասիոյ, Կեսարիոյ և Կիպրոսի Իգնատիոս, Յովհանն, և Բարսեղ Եպիսկոպոսունք անձամբ եկան ի Կ. Պօլիս ի շնորհաւորութիւն նորոգ ընտրելոյն:

---

1867 Յուլիս ամսոյն մէջ Բրօքահանտային տպարանը տպուած տետրակէն

**Չեմ** կրնար ըստ բաւականին զրով պատմել Քեր. Հասունին զգացած ուրախութիւնը, երբոր երեք Արքեպիսկոպոսունք Սիւնհոզոսին կողմանէ իր ոտքը եկած տեսաւ: Վերջապէս այսքան տարիներէն վերջը Պատրիարքութեան հասնելու համար ըրած ջանք ու աշխատանքը, և կերպ կերպ ի գործ դրած հնարքները այսօր ի գլուխ ելած և պրահուած կը տեսնար:

**Ազգայինք** տեսնելով այս երկուց Աթոռոց միաւորութիւնը, երկու պատճառի համար մեծապէս ուրախացան: Մէյմը՝ որ Քեր. Հասունը կըսէին, իր վախաքանացը և փառասիրութեան ծայրը հասած ըլլալով, զոնէ այնուհետեւ իւր բնթացքը կը փոխէ, և ըստ Աստուծոյ կառավարութեան մը ձեռք կը զարնէ: Եւ երկրորդը՝ Կիլիկիոյ Աթոռոյն իրաւանցը Կ. Պօլսոյ նախագահական թեմն ալ հաղորդ պիտի ըլլայ: և կորսնցուցած իրաւունքները նորէն ձեռք պիտի բերէ:

**Ուստի** այսու ակնկալութեամբ իրաւցնէ ամէն մարդ կուրախանայր, և երջանիկ օրեր տեսնելու կսպասէր: Եւ Քեր. Հասունեանին ուրախակցութեան գացողները այս վերոյիշեալ բարութիւնները իրեն յիշած ժամանակնին, ամե-

նուն մի և նոյն պատասխանը կուտար, մեծին և պզտիկին, Եկեղեցականին և աշխարհականին. այսինքն, Լեւ որ Հանգուցեալ Ասեղիկոնի իրաւունքն էր շատ Հասմ փոքր փոքրիւս-Լիւն իւր ևս համեայ ընել, և համ պահեցընել. ամենին յանջո չեմ ասնայր, իմ Նախագահու-Լիւնս ինչի Բաւան է: Ասանկ խօսեցաւ Բ. Տիւղ Միհրան Պէյին հետ. ասանկ խօսեցաւ Բ. Կէօչէք Յակոբ Էփէնտիյին հետ, և ասանկ խօսեցաւ Տալութ Յ. Յակոբ Էփէնտի, Տամաթ Յովհաննէս Էփէնտի, և ուրիշ մէկ շատ մարդիկներու հետ:

**Ե**ւ երբոր այս եկող երկու Եպիսկոպոսներուն հետ դէպ ի Հոսմ ճամբայ պիտի ելլէր, ահա՛ դրէթէ օր մը առաջ Հոսմայէն իրեն պատուէր կուգայ առ ժամս իր ճանապարհորդութենէն դադարիլ, և առաջիկայ տարւոյն մէջ, Սրբոց հաստատութեան ժամանակ հոն գալ:

**Գ**եր. Հասունը Հոսմային այ՛ անակնունելի բռնած ընթացքին վրայ քիչ մը սկսաւ երկրաշիւ, և իրեն ձեռասուն և օգնիչ աշակերտաց վրայ կասկածիլ: Ուստի ան Կիլիկիոյ երկու Սրբեպիսկոպոսները համոզեց, և առանց մէկումը դիտնալու, ամենայն դաղանութեամբ յանկարծ

գանոնք ի չօրով՝ առաքեց: Իսկ այս բարեմիտք  
պէ՛ս ու՛ճօ անձինք չօրով՝ հասնելով, և Գեր-  
չասունին իրենց հաղորդած հրահանգին պէս  
շարժելով. և շատ անգամ Ս. Պապին աղերս և  
աղաչանք մատուցանելով, վերջապէս հրաման  
կրնդունին Գեր. շասունին ի չօրով՝ գալուն:

4. Արդ այս հրամանը իրեն հասնելուն  
պէս, ի 2/16 փետրվարի 1867 շաբաթ օր. Ազա-  
րեան Ստեփան վարդապետին հետ մեկ տեղ  
շուտով գէպ ի չօրով՝ ճամբայ կելլէ: Ախիկիոյ  
Նպիսկոպոսները զԱզարեան վարդապետը իրեն  
հետը տեսածնուն պէս մեծապէս շփոթեցան,  
ինչու որ անոր վրայ իրենք հիմնական կաս-  
կած ունենալին յայտնի իրեն ալ ըսեր էին:

Չերկրնցնեմ խօսքս, շասուն Գերապայ-  
ծաոր, ինչպէս որ առաջուց մէկ քանի ան-  
գամ ի չօրով՝ երթալով հոն ամեն բան գաղ-  
տնի գործեց, ըստ այսմ այս Պատրիարքու-  
թեան ժամանակն ալ ամեն իր ըրած գործքերը  
ամենայն կերպիւ գաղտնի պահեց: Եւ որով-  
հետև Ախիկիոյ ամեն Նպիսկոպոսաց ի չօրով՝  
գալերնին չեք ուզէր, ասոր համար իր տեղա-  
պահ Թիլքիեանին ձեռօք անոնց կը ծանու-  
ցանէ. թէ իւրաքանչիւր Նպիսկոպոս իր ճամբուն

Ճախբը ինքն պիտի հողայ. զիտնալով որ ա-  
նոնցմէ շատերը աղքատ են, և չեն կրնար Քա-  
հանայապետին ընդհանուր հրաւիրանացը հա-  
մեմատ ի մեծի հանդիսին Հարիւրեակին, և  
Սրբոց հաստատութեանը ներկայ գտնուիլ, որով  
և իրեն ի գործ դրած հնարքներուն ալ ար-  
գելք չըլլան: Բայց քիչ մը ետքը երբոր ասոնք  
լսեցին որ Նախագահը իր բոլոր թեմական Նախ-  
կոպոսները ի Հռովմ կը կանչէ, ասոնք ալ ճամ-  
բայ կելլէն, և շուտով ի Հռովմ հասան:

Բրօքականտան ասոնց ամենուն մէկ բնա-  
կարան մը կը ցուցընէ: Բայց այս բնակարանին  
մէջ բնակողաց զիրքը շատ նշանաւոր բան մի  
էր: Ինչու որ առջի սանդուխէն վեր ելած ժա-  
մանակ, ահա Ազարեանին սենեակը զիմացդ կել-  
լար, որ ելողը, մըտնողը, կը դիտէր ուռուպեան  
Սարկաւազին հետ մեկ տեղ: Ասկէց վրայէ վրայ  
երկու և երեք կարգ սանդուխներէն վեր ելլե-  
լով սրահին մէջ ոտք կոխած ժամանակ, ահա  
զիմացդ անմիջապէս Գեր. Հասունին սենեակը  
կը տեսնուէր, որ սրահին գլուխը բըռներ կե-  
ցեր էր, որպէս զի տեսնէ՝ թէ ո՞վ, և որպիսի  
մարդ կուգայ Նախկոպոսաց, զորոնք որ ի ներ-  
քին կողմն սրահին կարգաւ տեղաւորեր էր:

Այս երկու արթուն պահապանաց աչքերէն չէր կրնար մէկը ամենեին ինքն զինքն ազատել: Եւ ինչպէս որ վերը պատմեցի, ամեն բան ամենայն զաղանուծեամբ և ի ծածուկ կը գործուէր: Կսեն՝ թէ օր մը Քասպարեան Բարսեղ Արքեպիսկոպոսը Գեր. Հասունին հարցուց, թէ այս Ազգային մեր գործողութիւնները ինչպէս արդեօք պիտի վերջանան: Անոր այսպէս պատասխան տուաւ: Ենզբայր՝ ըսաւ, ես ալ չեմ գիտեր, բան որ չեն ըսեր, բան մը չեն հարցըներ: Հանդիսին մէկ քանի օր մնաց. անկեց ետքը ես ի Կ. Պօլիս պիտի դառնամ: Ասոր հակառակ Ազարեան Ստեփան վարդապետը զրէ թէ ամեն շոգինաւով իրենց բարեկամաց թէ իր կողմէն, և թէ Գեր. Հասունին բերնէն անդադար թուղթեր կը գրէր, սիրտ կուտար, և կը յորդորէր, որ անանկ որսուտ ու մուտ խօսակցութեանց ամենեին մի՛ հաւատայք: Ս. Պապը մեզի սիրով ընդունեց, ամեն բան ի կարգի է. և ինչպէս որ թէ դուք և թէ մենք կը բաղձայինք, ըստ այնմ անկեց Եւսեօյն առջի Կիլիկիոյ Պատրիարքաց և կաթողիկոսաց իրաւունքները, և առանձնաշնորհ մունքները Սուրբ Աթոռը առաւելօքն հանդերձ շնորհեց, և այլ ևս պիտի շնորհէ:

Ազարեան՝ Վարդապետին այսպիսի գրուած թուղթերը դեր ևս ոմանց քովը դեռ կը գըտնուին: Արդ Ս. Պապը Հանդիսէն երկու օր առաջ ի <sup>15</sup>/<sub>27</sub> Յունիսի, Կիլիկիոյ Արքեպիսկոպոսները, Մխիթարեանց երկու ԱբբաՏայրերը, և Նախագահական թեմին Եպիսկոպոսները իրեն կանչեց: Եւ կիլիկիոյ Արքեպիսկոպոսաց զՆեր. Հասունը երկու Աթոռներուն միաւորու թեամբը Պատրիարք ընտրելնին ընդունեց. սակայն սահեակեալ խօսքն ալ անոնց ըսաւ:— Բայց ե՞նչ Բողոքո՞ւմ. ու ի՞նչ փոփոխե՞մ, այլ աճեմնին չե՞մ Բանադարսէր, դարձեալ ի՞նչե՞մ Լեւ Բնաւ չե՞մ սորիցէր ՂԶԵՂ, ուսի՞ մտցն ի՞նչ փոփոխե՞մ, որ Ձեր Աղփային Եպիսկոպոսաց ընտրութեանը համար Սուրբ Աթոռայն երեք անջինք առ շարժումն:

• Եպիսկոպոսունք երբոր այս անակնունելի խօսքը Ս. Պապին բերնէն լսեցին, արմնացան մընացին: Եւ ոմանք ան ժամանակ սրտապնդեալ կը պատրաստուէին պատասխան տալու, խնդրոյն անհնարու թիւնը, և յարեկլս մեծամեծ խոսվու թեանց պատճառ ըլլալը ցուցնելով. նոյն ատեն շուտով Պեր. Հասունը (որուն հան տեղը ամենեկին իրեն չեր վերարերիր) յառաջեց ու ըսաւ.— Երկն երանեալ Հայր, քանի որ Ձեր Սրբա-



Եւանը այսպէս էր Բողոքաց, եւ էր փոփոսի, ո՞վ է ոն, որ  
Ձեր Բողոքանաց հոգիաւորները պիտի լինէին էլ ինչպէս  
վասն զի Ձեր փոփոսի Բեռնի հրամանէ. — կսէ, և այս-  
պէս բոլոր Եպիսկոպոսաց բերանը կը զոցէ: Ինչու  
որ այս կարգադրութիւնը ինքն զեր. Հասունը  
առաջուց Բրորականտային առաջարկաց և ըն-  
դունել տուած էր: Եւ այս Եպիսկոպոսաց ընտ-  
րութեան կարգադրութեան վրայ զեր. Հասու-  
նեանին ինչչափ իրեն գոհ ըլլալը, ինքն իրեն  
բերնով ի 12 Յուլիի 1867 Պալիուն ընդու-  
նած օրը առաջի Ս. Պապին իր շնորհակալու-  
թիւնը մատուցած ժամանակը յիշելով այն վե-  
րոյիշեալ Յունիսին <sup>15</sup>/<sub>27</sub> երդ օրը կըսէ:

Պ՞վ մեծի բարենշան աւուրն, որոյ համ-  
բաւ գովութեամբ ընթանայցէ ցժամանակս  
յեախնս, ի սմին շնորհեցաւ ինձ և համօրէն  
Եպիսկոպոսացս Հայոց, առ զերկզմանաւ Առա-  
քելոց լսել զձայն Պետրոսի, որ Քեւ խօսի, և  
խոստովանիլ յայանապէս առաջի Քո Սրբու-  
թեանդ զհաւատս, զհլութիւն, և զմեծա-  
բանս մեր, ոչ միայն հրամանաց Քոց, ոչ եւ  
յորդորանաց եւ Բողոքանաց որպիսի: Յայնմ ժամու թէ  
այսպէս արժան իցէ ասել. ցնճացան ոսկերք  
Հարց մերոց առաջնոց, որք ծնան զմեզ ի Քրիս-

տոս Աւետարանաւ. և առանձին ոսկերք Մեծին Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և ցուցին թէ չեմք նոցա որդիք անհարազատք» —\* :

Ասկէ ետե Գեր. Հասունը՝ իրեն հետ մէկ տեղ առնելով նազարեան Մելքոն Արքեպիսկոպոսը, և ազարեան Ստեփան Վարդապետը, շուտով Բարիզ քաղաք զնաց: Իսկ Վ. Կայսրը հոն չբլլայով, մէկ քանի օրէն ճամբայ ելաւ, որպէս զի ի Կ. Պօլիս, Աստուածաճնայ վերափոխման օրը ըստ Ազգային ծիսի կաթողիկոսական օրհնութիւնը ընդունի. որուն համար ամեն Եպիսկոպոսունք Մայրաքաղաքիս մէջ կսպասէին: Կսպասէր անհամբերութեամբ և ժողովուրդը նոր Պատրիարքին զալստեանը. աներկբայ յուսալով, որ ասկէ ետե այս երկուց Աթոռոցն միաւորութեամբ երջանիկ օրեր պիտի սեանէ: Ինչու որ՝ ինքնիրենց կրսէին, թէ Գեր. Հասունին փառափրութեան չափը ալ լցաւ. ասկէց ուրիշ բան մը չի մնաց, որ անոր ալ հասնելու արժան և անարժան միջոցներու ձեռք զարնէ:

---

\* Այս հատուածը Գեր. Հասունին Պատրիարքութեան հաստատութեանը համար Բրօքալանտային տպարանը Լատիներէն և Հայերէն տպուած տետրակին մէջը է: Երես 43. 1867:

**Այլ** բարեսիրտ և անոխակալ ժողովուրդը չէր գիտէր բնաւ իր գլխոյն եկածը, վասն զի այս ժամանակ իւր ամէն Ազգային փառքերէն մերկացեր էր. և հարիւր երեսուն տարուան Կիլիկիոյ Հռովմէական Հայոց Պատրիարքական Աթոռը իր առջի ԺԴ. Բէնէտիկոս Պապին հաստատեալ ամէն իրաւունքներէն զատուեր էր. Ինչպէս որ քիչ մը ետքը յայտնապէս պիտի տեսնենք:

**Բայց** տակաւին նոյն ժողովուրդը անգիտութեամբ իր արևելեան բարեմտութեան մէջ շարունակուելով, ինքնիրենց Ազգայինք ոմանք կը ժողովին, և նորընտիր Աթոռիկոսը գիմաւորելու համար, մէկ քանի Եկեղեցական, և աշխարհական անձեր մինչև ի Վառնա յուղարկելու կը խորհին: Եւ ահա ի 7/19 Օգոստոսի, յաւուր երկուշաբթի Գեր. Հասունը ի Կ. Պօլիս կը հասնի, որուն գիմաւորելով յամենայն կարգէ և յաստիճանէ Եկեղեցականք և Աշխարհականք կը բերեն իրեն Հայրապետանոցը:

**Եւ** ըստ յառաջագոյն հրաւիրանացն յառաջիկայ յաւուր կիւրակէի, ի 13 Օգոստոսի, ի ասնի Վերափոխման Ատուածածնի, յեկեղեցւոջն Ատուածամօր, ամենայն Ազգք և ազլինք

ի հանդէս կաթողիկոսական օրհնութեան զեր-  
շասունին խուռն ընթացան: Եկեղեցւոյն աջա-  
կողմեան դասին բերանը չորս սիւնի վրայ ոսկե-  
զօծ փառաւոր գմբեթ մը շինուած էր, և ինքն  
Նորընտիր կաթողիկոսը բոլորովին օտար, և ար-  
տաքոյ ծիսի նորաձև բիլոն մը զգեցեալ, և մե-  
տասան Ազգային Եպիսկոպոսներով եկաւ, իր  
Աթոռը բազմեցաւ: Եւ հանդիսն ալ սկսաւ:

Արդ երբոր ամեն Ազգային Արքեպիսկոպո-  
սունք և Եպիսկոպոսունք Առաքելական փոխա-  
նորդը, և այլ Ազգայ Եպիսկոպոսունք պար առեալ  
էին կաթողիկոսին չորս կողմը. և ահա բոլոր ժո-  
ղովրդեան աչքերը տնկած կը նայէին, որ անոնց  
մէջ Սուքիաս Արքեպիսկոպոսը չըկայ: Աստի չա-  
փազանց հոգատարութեամբ մը Եկեղեցւոյն մէջ  
սնոր բացահայտութեանը վրայ հարց ու փորձ կը-  
նէին: Աւերբոր Գասին մէջ կայնող Եկեղեցական-  
ներէն ոմանք վեր ի վերոյ իմացան, որ Գերբըջ-  
կաթողիկոսը Եկեղեցիէն զՎազանձեան Սուքիաս  
Արքեպիսկոպոսը արտաքսէր է և վրոնտեր է-  
նոյն ատեն Եկեղեցւոյ մէջ շքշքնկոց մը կելլար.  
այլ շատերը դեռ չէին կրնար եղածին հաւա-  
տալ: Ապա իմացուեցաւ՝ որ ստոյգ Հանդիսին  
վերահայտուն Առուսպեան Սարկաւազը իրեն

որուած պատուերին համեմատ Գեր. զազան-  
ձեանին Նպիսկոպոսական զգեստները չընդունե-  
լով մերժեր և ետք յուզարկեր է:

Իսկ Գեր. Գազանձեանը երբոր սահմաննալ  
ժամուն Նկեղեցին գալու կը պատրաստուէր, ահա  
ծառայն զինքը կը զիմաւորէ, և եղածը իրեն  
կը պատմէ: Ողորմելի Աբքեպիսկոպոսը անոր ա-  
մենեւին չի հաւատար, ինքն իրեն հոս սխալ-  
մունք մը կայ կսէ, շուտով իր Միաբաններէն  
մէկ քահանայ մը Ս. Կաթողիկոսին կը յուզարկէ,  
եղածը իրեն իմացընելու համար: Բայց այն քա-  
հանայն Կաթողիկոսին սենեկին դուռը գոց կը  
դանայ: Դուռը կը փակսէ, բացող չըլլար. ա-  
սանը կանցնի, ժամանակը կը հասնի, Նպիսկո-  
պոսունք զգեստաւորելու կսկսին: Եւ ինքն Կա-  
թողիկոսն ալ զգեստաւորած ժամանակ յան-  
կարծ մէյժ ալ դուռը կը բացուի, և այս քա-  
հանայն պահարանին մէջ պասահածը իրեն  
կիմացընէ: Կաթողիկոսը նեղսրտու թեամբ մը ու  
յանդիմանողական կերպով— Հիմայ այսպիսի հարց-  
ճանչի ժամանակ չէ ես պատրուի պիտի ելլամ, Գնո՛  
Բարսեղ Նպիսկոպոսին հարցաւր. — կըսէ, և դուռն ալ  
քահանային երեսին կը գոցուի: Խեղճ՝ քահա-  
նայն կերթայ, Բարսեղ Նպիսկոպոսին կը հար-

ցընէ, թէ Սուքիաս Արքեպիսկոպոսին հանդի-  
սին ներկայանալու համար արգելք մը կայ ար-  
դեօք: Իսկ Բարսեղ Եպիսկոպոսը իր սրտին ցա-  
ւովը արգելք մը չըլլալը յայտնելէն ետեւ, միայն  
զԱնիկայ Կաթողիկոսին չուզելը անոր կիմացընէ:  
Բայց այս գայթակղութիւնը վերցընելու հա-  
մար մէյմը ես երթամ Կաթողիկոսին հետը դար-  
ձեալ խօսիմ կսէ: Այս ժամանակ Ռուսուպեան  
Սարկաւագը զԵպիսկոպոսները ժամանակէն ա-  
ռաջ զգեստաւ որելու կը փութացընէ, հանդէսն  
ալ կսկսի: Եւ այսպէս Գազանձեան Է. Սուքիաս  
Անտիօքայ Արքեպիսկոպոս, և Անտոնեան Ռի-  
տին ընդհանրական Արքահայրը իբրև հերետի-  
կոսապետ, և կամ աղանդապետ Ատուծոյ Եկե-  
ղեցւոյն մէջ չընդունուիր, բովանդանկ հասա-  
րակաց ուրախութեան օրը, ի տրամութիւն և  
ի գայթակղութիւն բոլոր ժողովրդեան, և ա-  
մենայն օտար ազգաց և ազանց: Իսկ այս դի-  
պուլաւաւ աւելի սարսափելին այն է, որ այս  
վայրկենին մէջ Գեր. Հասունը ըստ Տերունա-  
կան պատուէրին բնաւ երբէք չէր յիշէր, թէ  
Գազանձեան Արքեպիսկոպոսը իրեն վրայ խէթ  
մը ունենայ. սակայն ինքն՝ ահաւոր խորհրդոյն  
չի մերձենալէն առաջ, իրեն բնածին ի խորոց

դառնացեալ սրտին խոտասրտու թիւնը և անգը՝  
թու թիւնը յակամայ կամս դուրս ժայթքե-  
լով, և իր սրտմտու թեան բարկութիւնը անոր  
վրայ թափելով, և առաջի աշխարհի զանմեղն  
և զանպարտն ուղելով յառակ նշաւակի կա-  
ցուցանել. ապա ինքն ալ ահա՛ կը պատրաս-  
տուի որորմած գթած և մարդասէր Հօրն Ամե-  
նակալի սպասաւորութեամբ բազմութեան երկ-  
րային և երկնային Հրեշտակաց զԱնմահ գառն  
Աստուծոյ հաճոյական պատարագ մատուցա-  
նել: Արպէս զի նա ինքն Բարձրեալն Աստուած  
որդւոց մարդկան հետ հաշտուի:

Հոս ընթերցողները տակաւին իրենց մտքի  
շփոթութեան և երկբայութեան մէջը մնացին,  
թէ արդեօք ինչ մեծ յանցանքի համար Վեր-  
Հասունը յեկեղեցիէն Սուբիաս Արքեպիսկոպոսը  
դուրս արտաքսեց. որ իր յանկարծական ծանր  
հիւանդութեան պատճառաւ չկրցաւ Ս. Քա-  
հանայապետին Հանդիսին առաջիկայ գտնուիլ:  
Արդարև յայտնի, և որոշ պատճառ մը չի կար,  
բայց եթէ, ըստ իմ կարծեացս այս միայն պիտի  
ըլլայ. այսինքն, որովհետև ինչպէս որ տեսանք  
(թիւ 23. և 31) Վեր. Հասունը Ալէնէտկոյ Յ.  
Մխիթարեանները յանիրաւի առաջի ազգայնոց,

և առաջի բոլոր օտար ազգաց այլ և այլ ճամբաներով անուանարկ, անոնց անունը մէկ ստիկընել ուզեց: Նոյնպէս և Վիէննայի Մխիթարեանց ԱբբաՏօր ընտրու թեան ժամանակ իրեն ազգուութեամբ Բրօբականտային ձեռօք Ռենան Հ. Պօղոսը, և Սպենեան Հ. Քերովըէն կրաւորական ձայնէն զրկելով, իր ուզած անձը ԱբբաՏայր ընտրել տուէր էր: Ապա Ազգային Միաբանութիւններէն կարգը Անտոնեանց հասաւ: Որոնց հետ որ Հանգուցեալ Բ. Պետրոս կաթողիկոսը Աստուածային սիրով վերջին աստիճան կապուեցաւ. և յօգուտ Եկեղեցւոյ իրենց ԱբբաՏայրը Անտիոքայ Աթոռոյն վրայ Աբբեպիսկոպոս ձեռնադրեց. և նոյն թեմբ Անտոնեան Ռեխտին շնորհեց, իրենց մէջ յաւիտենական ուխտ խաղաղութեան և դաշինս հաստատելով: Արդ՝ այս ցանկազն Միաբանութիւնը Գեր. Հասունին աչքին փուշ եղաւ, և սիրտը վիրաւորուելով իրեն նախանձը կրկնապատկեցաւ. ուստի կաթողիկոսական իշխանութեան հասնելուն պէս՝ զանոնք ալ կործանելու համար զգալի և անզգալի այլ և այլ որոգայթներ լարեց: Ինչպէս որ այս անգամ հրապարակաւ ալ յայտնեց ի աժդոհութիւն, և ի դայթակղու-



Թիւն բոլոր ժողովրդոց : Իսկ այս վերջին եղած  
զործքին տղեղու թիւնը ծածկելու և ինքնզինքն  
արդարացրնելու համար Գեր հասունը, և իր  
արբանեկաց ձեռք ալ կերպ, կերպ շինծու լու-  
րեր ժողովրդեան մէջ կը ցրուէր: Ոմանք կը-  
սէին՝ թէ Սուքիաս Գերապայծառը երկուց  
Աթոռոց միութեանը հակառակ ըլլալուն հա-  
մար, իր հրաւերը չընդունելով շանդիսին ներ-  
կայ գրանուիլը չէ ուզած: Մէկ քանի միամիտ-  
ներն ալ կը հաւտացրնէին՝ թէ ինքն Գեր. Հա-  
սունը այսպէս ընելու համար Հռովմայ Գահէն  
պատուէր ընդունած ըլլալով պարտաւորուած  
է. սպա թէ ոչ ինքն Հռովմայէն պիտի պատ-  
ժուէր: Ոմանց ալ կըսէին՝ թէ Սուքիաս Գե-  
րապայծառը Հռովմայ Գահին անհնազանդ ըլ-  
լալով արժան չէր կաթողիկոսի օրհնութեան  
մէջ անոր գլխոյն վրայ ձեռք դնէ: Ասոնց նման  
շատ մը թշնամական, սուտ զրպարտութիւններ  
տարածելով փոխանակ ժողովուրդը հանդար-  
տեցրնելու, աւելի դայթակղութեան պատճառ  
կըլլար:

Գեր. Հասունը երբոր այս անարգանքը Ան-  
տոնեան Ուխտին Արբահօրը հրապարակաւ հա-  
տոյց, ան առնն բոլոր Անտոնեանները իրենց Ար-

բահայր Սուքիաս Արքեպիսկոպոսին հետ մեկ տեղ Պիոս Թ. Սրբազան Քահանայապետին արգարադատ Ատենին բողոքեցին:

Անոնք իրենց դատը տեսնելու ըլլան, մենք ալ մեր պատմութեանը դառնանք:

### 38.

1. Սեղան: ԱՆՏՈՒՄԻՍԻՆ և խորհրդոյնս:— 2. Ազգային ժողով յԵղիսիոպոստանն:— 3. Ժողով է ասան ՄԸՄԸՆ ՊՕՊՈՍ ՊԷՆԻՆ:— 4. Ընդհանուր ժողով յԷՔԷՂԵՆ յին ՈսկեՔերանի. և ողբերագիր է Գոսան:

1. Արդ կաթողիկոսական օրհնութեան հանդիսէն վերջը ամենքն ալ վեր ելան, և մեծափառաստ սեղան նստեցան: Թէպէտ և հոն շատ Ազգայիններէն հրաւիրուած էին, սակայն առաւօտեան պատահմունքին պատճառաւ շատերուն սիրաբ վերադարձելով ձգեցին գացին: Իսկ սեղանին վրայ գինիներով շատ մը այլ և այլ բարեմաղթութիւններ ընելէն վերջը, կարգը ի կենդանութիւն բոլոր Գաւառական Ապիսկոպոսոց եկած Ժամանակ, վարի կողմէն ձայն մը լըսուեցաւ: . — այլ ո՛չ վասն որդւոյն էրստեան. —

այս խօսքը հասարակաց ծիծաղը աւելի շարժեց,  
և այսօժ իծաղին պատճառը մինչև Գեր. Հասու-  
նին հասնելով ուրախալից սրախ ժպտեցաւ:

Արդ՝ Գեր. Հասունը մէկ քանի օրէն Ազա-  
րեան Ստեփան վարդապետը իրեն կաթողիկոսա-  
կան Աթոռակալ կարգեց: Իսկ իրեն Ատենադպիր՝  
Յօլաս Յովհաննէս վարդապետը: Եւ Պատրիար-  
քական Աթոռոյն համար առ երեսս ժողովմը  
կարգեց, ութ անգամէ բաղկացեալ. այսինքն:

Ա. Ազարեան Ստեփան վարդապետ. իրեն  
խորհրդակիցը.

Բ. Յօլաս Յովհաննէս վ. ասիկա իր կողմը  
շահելու համար.

Գ. Քիւբեղեան Յովսէփ վ. ասիկա հրա-  
ժարելով, անոր տեղը կիւղէլ Յովհան-  
նէս վ. անցաւ.

Դ. Մաղաքեան Ամբրոսիոս վ. իր արբա-  
նեակը.

Ե. Պօրճօնեան Յովսէփ վ. իր ամեն կամաց  
երկրպագուն.

Զ. Ազաչըրաքեան Տիմոթէոս վ. ասիկա  
հրաժարելով առ ժամանակ մի, անոր  
տեղը Մաղաքեան Պօղօս վ. իր արբա-  
նեակը անցաւ.

Է. Անդրէաս Վ. (զմմատոցի) այր անձանօթ Պօլսոյ գործողութեանց.

Ը. ձիհանեան Պօղօս Վ. (զմմատոցի) ծեր, և անկար, քիչ օրէն հանգաւ ի Տէր:

**Ազգին** մեծամեծներէն մէկ քանի հատը իրեն կողմնակից, և աւելի զանոնք իրեն հետը շերտիւ կապելու համար, մէյմէկ պատճառաւ Հռովմայէն ութ, և կամ տասն անձանց Սյրոյն Աղբեստորոսի պատուոյ նշանը բերել առաւ. որոնք էին. Նաղլը քճեան Պետրոս Էփէնտի, Կէօչեան Յակոբ Էփէնտի, Սինապեան Գասպար Պէյ, Կիւղէլ Յարութիւն Էփէնտի:

**Այս** չորս անձը Ռսկերերան Եկեղեցւոյն շինութեանը համար կարգած էին: \*

**Գործեալ** հետեւեալ անձանց ալ վերոյիշեալ պատուոյ նշանը բաշխեց, այսինքն. Տիւ-

---

\* Ռսկերերանին շինութեանը համար յանձնարարական ժողովը ութ անգամէ բաղկացեալ էր. Արդաստնցմէ Գեր. Հասունը ինչո՞ւ մնացած չորսին անունները մտցրէ ինչպէս Երեմեան Անտոն Ազայն, Տաթևթ Կարապետ Ազայն, և Ապտուլլահ Միքայէլ Էփէնտին. որոնք որ թէ աշխատութեամբ և թէ դրամով առաջիններուն հաւասար էին թերևս, մանաւանդ Ապտուլլահանը: Ասոր պատճառը ընթերցողները ազէկ զիտեն:

զեան Յովհաննէս Պէյլին, Կէօչէեան Յարութիւն  
Էֆէնտիին, Ալահվերտի Յովհաննէս Էֆէնտիին,  
Հասունեան Անդրէաս Էֆէնտիին, և Քոյունմ  
ձեան Պետրոս Էֆէնտիին:

2 Արդ՝ Գեր. Հասունը Հռովմայէն դառնալէն վերջը երկու ամիսի չափ իր ամէն զործքերը ի ծածուկ կարգի դնելէն ետքը, իր ստորագրութեամբ բոլոր ազգայնոց հրաւիրանաց թուղթ կը յուղարկէ ըստ այսմ օրինակի:

ՄԵՄԱՊԱՏԻՒ ՏԷՐ.

«Բարձրագոյն Դռնէն եկած Պապիւս Կառլոս Գ-ի  
կարգալու, և ազգային զործոց անօրէնութեանը կարեւոր եղած ժողովք մը կազմելու համար, կը խնդրեմ՝ որ առաջիկայ ուրբաթ օրը ամուս քսանին, ժամը 5-ին, Պերա Կաթողիկոսարանս հրաւիրուած ընդհանուր ժողովքին հրամմելու բարեհաճիք:

1867 Հոկտեմբեր 13.

Աղօթարար Չեր

Անտոն Պետրոս Թ. Պատր. Տանն  
Կիլիկիոյ. Կաթող. Հ. Ո:

Այս հրաւիրանաց թուղթերը երբոր բոլոր հասարակութեան մէջ ցրուեցաւ. խնդրոյն

Հասարակաց շրշունքն ալ ի միասին սկսաւ: Եւ որովհետեւ մինչև այս օրերս զեր. Հասունը դեռ չէր հրատարակած Հռովմայէն ընդունամ իր Աթոռիկոսութեան Անդակները, որոնք որ ի 12 Յուլիոսի 1867, Բրօրականտային տպարանը տպուած էր. վասն այսորիկ թէ կղերը և թէ ժողովուրդը առ Հասարակ նոր եղած կարգադրութեանց հաստատութեան վրայօք տակաւին բան մը չէն գիտեր:

Արդ՝ երբոր վերոյիշեալ զեր. Հասունին հրատարակեաց թղթոյն միջ իրեն ընդունամ Պատրիարքական Աթոռիկոսութեան յիշուելոյն պէս բոլոր Ազգը տակն ու վրայ եղաւ, և մեծապէս խռովեցաւ: Վասն զի բոտ միշտ հիմն, և առաջին կանոնադրութեան համեմատ ընդհանուր Ազգային ժողովոյն քուէարկութեամբ Ազգապետ Պատրիարքը ընտրելէն վերջը, բոլոր ժողովականաց, Ակեղծցական և աշխարհականաց ստորագրութեամբ իրենց Մեծապետին Յ. Կրան ներկայացընելով, որուն վրայ Տերութեան որոշողութիւնը, և Այս սերական հաստատութիւնը ընդունելէն վերջը, իր Պատրիարքական Աշխատութիւնը կը վարէր ժողովուրդը և բոլոր Ազգը այս Ազգային կանոնը աղեկ գիտնալով, իրենց քիչ մը ժամանակ

առաջ ունեցած երկրայութիւննին փառասե-  
լով, դարձեալ առջի միտքերնուն մէջ հաս-  
տատուեցան: Բայց չէին բնաւ համազուիլ. թէ է  
ի՛նչպէս գեր. Հասունը առանց գիտութեան Ազ-  
գին կարող եղեր է Պաարիարքական Պէ-  
ճեօքը բերելու:

Արդ ի 20 Հոկտեմբերի, իբր հարիւր յի-  
սուն անձինք եկեղեցականք և աշխարհականք  
յԱպիսիոպոսարանը ժողովեցան: Ի գլուխ ժո-  
ղովարանին երեք կարգ պատուանդանին վրայ  
փառաւոր աթոռ մը գրուած էր: Նորընտիր Կա-  
թողիկոսը կարմրագոյն վերարկու զգեցեալ՝ թա-  
գաւորակերպ եկաւ բազմեցաւ: Աս պատուան-  
դանաւ նորին նստեցան երկու Արքեպիսկոպոսք,  
և երկու Ապիսկոպոսք: Եւ Գեր. Հասունը իր  
խօսքը այսպէս սկսաւ:

«Ողջոյն Ձեզ Բարձրապատիւ Պէ, և ԵՊՃՆ-  
տիններ: Շատանցունէ կուզէի և կը փափաքէի  
«Ձեզ հետ խօսակից ըլլալու, բայց գործերուս  
«մեծ զբաղմունքը չը ներկցին զանիկայ կատարե-  
«լու. մանաւանդ՝ որ մէկ քանի անձինքներ Եւրո-  
«պիոյ կողմերը երթալով, զիս նորոգ վարձան »:

\* Այս խօսքը Բ. Տիգ. Միհրան Պէլին, 6 Մ. Չա-

„Երբոր վեցերորդ Պետրոս Գրիգոր կաթողիկոսը, յամին 1840-ին հանգեաւ ի Տէրան ատեն Կ. Պօլսոյ ժողովուրդը Ս. Պատրիարքին աղերսագիր մը գրեցին՝ ըսաւ, Պատրիարքական Աթոռը Նախագահական Աթոռոյն հետ միացընելու աղաչեցին: Բայց ան ատեն Ս. Պատրիարքը պատասխան տուաւ, որ թերեւ մինչև հիմա ի Ղիւրանան Կիլիկիոյ Եպիսկոպոսները իրենց սովորութեան համեմատ Պատրիարքնին ընտրած ըլլան: Ուստի այդ Չեր խնդրոյն գործադրութիւնը ուրիշ մէկ յարմար ժամանակ ձրգու իր մեղի աւելի պատշաճ դատեցաւ և այլն և այլն:

„Արդ՝ անցած տարի երբոր Ռեթերորդ Պետրոս կաթողիկոսը հանգեաւ ի Տէր, Եպիսկոպոսները ժողովքի նստելով, Կ. Պօլսոյ Նախագահը իրենց վըայ Պատրիարք ընտրեցին, և երկու աթոռները միացնել ուղեւնին ալ մէկ տեղ Հռովմօյի ծանուցին: Ս. Պատրիարք յառաջագոյն այս միութեան համար Կ. Պօլսոյ

---

միջ Յովնաննէս Էֆէնտիին համար էր, որոնք որ Տերութեան գործողութեանց համար ի Բարսիզ քաղաք երթալով, այս օրերս դեռ նոր դարձեր էին:



Ժողովրդեան բաղձանքը զխանալով, զմեզ ի  
Հոռով քաղաք կանչեց: Եւ զմեզ ինչչափ Պատ-  
րիարքական իշխանութեամբ հաստատեց նէ  
ալ. բայց ըստ նոր կարգադրութեան Եպիսկո-  
պոսոսաց ընտրութիւնը միշտ իրեն պահեց երեք  
անձ իրեն առաջարկելով: Եւ այս կանոնը չէ  
թէ միայն մեր Ազգին արուեստաւ, հասպա բո-  
ւոր ազգաց ալ, որոնք որ զայն կարգադրու-  
թիւնները հիմակուրնէ ընդունեցին: \* Երբոր  
Կ. Պօլիս դարձանք, Կաթողիկոսական հան-  
դէսնիս կատարելէն վերջը, թեմական Եպիս-  
կոպոսները իրենց թեմերնին շղացած, իրենք  
Կ. Պօլսոյ նախագահը Կիլիկիոյ Կաթողիկոս  
ընտրելնին Բ. Կրան ծանուցանելով, Պատրիար-  
քական Ահումեռն իրեն հաստատութիւնն ալ  
խնդրեցին. զորն որ այսօր հարկաւոր դատեցի  
Ձեր առջին կարգացրնելու:

Երբոր Գեր. Հասունը Ահումեռն կարգացուե-  
լոյն կը հրամայէր, Բ. Տիւզ Միհրան Պէյը,—  
Գերապայծառ Տէր՝ ըսաւ, շնորհք ըրէք Պէ-

---

\* Մարտի, և Մէլքիթ պատրիարքները այսնոր  
կարգադրութիւնը ամեննին ընդունեցին, Իսկ Յոյն  
Մէլքիթ Ազղը այս բանիս համար ազգովին բողո-  
քեցին:

առաջ կարգացուելէն առաջ մէկ բան մը ունիմ  
հարցընելու: Հռովմ՝ ըսիք, ըստ առաջին ազ-  
գային սովորութեանը համեմատ կաթողիկո-  
սին ընտրութիւնը դարձեալ Եպիսկոպոսաց ձը-  
գած է: Արդ թէ որ Հռովմ՝ Եպիսկոպոսաց ընտ-  
րութիւնը իրեն սեփհականներ է, ապա կաթո-  
ղիկոսին ընտրութիւնն ալ նոյնպէս ինքը պիտի  
ընէ. ինչու որ վերջապէս յանցանել ժամա-  
նակաց Հռովմայէն ընտրեալ Եպիսկոպոսները  
նորընտիր կաթողիկոսը պիտի ընտրեն: Եւ այս  
կարգադրութիւնը դուք իրրեւ շնորհք ընդու-  
նեք էք, բայց ես յայտնի կը տեսնեմ, որ Ազ-  
գիս այսչափ հարիւր երեսուն տարի ի դործ  
դրած իրաւունքները բոլորովին փձացեր է, —  
Բ. Միհրան Պէյին այս հարցմանը Գեր. Հա-  
սունը թոյլտուելով, և կակաղելով պատասխան  
տուած ժամոնակի, անդիյէն Գասպար Պէյը սա  
Պէտառա՛ ըսաւ, մէկ անգամ մտիկ ընենք, ետքը  
ամենուն վրայ խօսինք:

Պատրիարքական Պէռաթը քանի կը կար-  
գացուէր, ժողովականք առ հասարակ ի բար-  
կութիւն բրդէին. ինչու որ չէ թէ միայն առջի  
Ազգապետ քաղաքական Պատրիարքաց տրուած  
Պէտառա՛ն յար և նման էր. այլ և առաւելօքն

Հանդերձ ազգին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բոլոր ընչից տիրելէն ի զառ, ամենայն լիազոյն զօրութեամբ ինքնիշխան զազգը ըստ կամի վարելու իշխանութիւնը ձեռքը առած էր: Յայնժամ Բ. Միհրան Պէյը՝ ՚՚Հոգևոր Տէր, ըսաւ, քիչ մը առաջ Ազգիս այսչափ տարուան ի գործ դրած կաթողիկոսական իրաւունքը ոչնչացած ըլլալը յայտնի տեսանք. իսկ հիմայ ալ Ազգիս քաղաքական իշխանութեան փրձանալը տեսնելով, մեր անձին այսչափ անարգութեանը բնաւ չենք կրնար համբերեր: Ապաքէն Տերութեան առջին Ազգին պատասխանատուները մենք ենք. և այսչափ տարիներէ ի վեր Ազգիս ծանրութիւնը բարձեր ենք, ապա առանց հաճութեան և զիտակցութեան թէ մեր, և թէ Ազգիս մեծամեծ իշխանաց այսպէս զազանի Պատրիարքական Պէտրոսեան առնելնիդ, ուրիշ բանի համար չէ, բայց եթէ, զմեզ հոսժողովեր էք, սրպէս զև զմեզ անարգելով մեր վրայ ծիծաղէք: Արդ՝ ի՞նչ իրաւամբք ան կողիսկոպոսները՝ որոնք որ չեն կրցեր իրենց հարիւր երեսուն տարուան իրաւունքնին պահել, Ազգիս քաղաքական իշխանութիւնն ալ յափշտակելու ելեր են: Ո՞ւր է Ազգասպետական իշխանութեան հաս-

տատու թեանը համար Բ. Գրան ներկայացուցած ընդհանուր Ազգին որդու հաղաբը: Եւ արդ որովհետեւ Ձեր օրը Ազգիս այս երկու իշխանութիւնները այսպէս ոչնչացան և փճացան բոլորովին, ապա ասիէց ծագելու ամեն չարիքներուն պատասխանը դուք Աստուծոյ առջին տուէք՝ — ըսելով, Բ. Միհրան Պէյը ժողովքէն ելաւ գնաց: Ասոր ետեւէն մէկ շատ մեծամեծներ նրմանապէս ելան գացին, ասոնք ալ Գեր. Հասունին երեսը ուրիշ բան չըսին, բայց եթէ այս միայն խօսքը, այսինքն ՝ Գերապայծառ այս ամեն ազգակործան խռովութեան պատասխանը Աստուծոյ առջին դուք տուէք ՝:

Երբոր ժողովականաց կիսէն աւելին դուրս ելան, խորին լուծիւն մը մնացողներուն վրայ ախրեց: Ապա Գեր. Հասունը՝ ըսաւ ՝ կերեի որ ՝ Միհրան Պէյը չը կրցաւ մեր ըսածը աղէկ մը ՝ իմանալ: Սուրբ Աթոռը մեր Ազգին համար ՝ հրամայած Եպիսկոպոսաց ընտրութիւնը, ուրիշ շնորհակցան Ազգաց համար ալ նոյնպէս ՝ ի ժամանակին ի դործ պիտի գնէ: Իսկ ան ՝ Եպիսկոպոսները՝ որոնք որ գմեղ Ալիկիկոյ Աթոռոյն վրայ Պատրիարք ընտրեցին. Բ. Գրան ալ

„Ճանուցին: Եւ Բ. Գուռն ալ Պատրիարքական  
„Պետարէլ մեզի շնորհեց:“

Հոն աեղը մնացող մէկ քանի շողոքորթող-  
ներ, մանաւանդ Թընկրտ Յովհաննէս Եփէնափն՝  
ըսին:— Գեոսպայծառ Տէր՝ Ձեր Սրբութիւնը  
ամենեին չը վշտանայ Ձեր պատուական Ան-  
ձին այսպէս անարգելու համարձակելուն վրայ-  
որովհետեւ ոչ իրենց զուրցածը զիտեն, և ոչ  
իրենց խօսքին չափը—: Միւս կողմանէ Առա-  
քել Եպիսկոպոսը բարկութեամբ մը կսէ „Մենք  
իրենցմէ շատ ազէկ զիտենք մեր իրաւունքնե-  
րուն պաշտպանելոյն կերպը, և զանոնք պաշտ-  
պանեցինք ալ „—: Եւ ըստ այսմ մէկ քանի ան-  
միտք մարդիկներ իրենց ազիտութեամբը սկսան  
բարբաւել հեզնական եղանակաւ, — Ազգիս Պատ-  
րիարքութիւնը ի՞նչ է ըսին և այլն և այլն . . . :

Ասոնց ամենուն Գասպար Պէյը պատաս-  
խան տուաւ և ըսաւ „— Մեր շողեւոր և Մարմնա-  
ւոր երկու Ազգային իշխանութեանց բոլոր իրա-  
ւունքները յայտնապէս կորսըված ըլլալը աես-  
նելով . ալ մեզի ուրիշ բան չէ մնացեր, բայց  
եթէ երթալ, և մեր տան անկիւնին մէկ կողմը  
քաշուիլ, և եղած կորստեան վրայ արցունք-  
նիս թափել „—: Ապա Գասպար Պէյը Գեր. Հա-

տունին հարցուց. թէ արդեօք կրնանք մէյմը տեսնել Ձեր վերոյիշեալ թուղթերը. այսինքն յամին 1840-ին Ազգին գրած, և անոր պատասխան տուած Ս. Պապին թուղթերը, որոնցմով գիտնանք՝ թէ զանոնք ստորագրողները անտակն որոնք են եղեր: Գ.եր. Հասունը պատասխան տուաւ. թէ կրնաք տեսնել, օրինակները մեր Ապիսկոպոսական Կիւանը պահուած են:

— Ապա Գ.եր. Հասունը առ հետեւեալ խօսքերով ժողովոյն այսպէս վերջաւորութիւն մը բրաւ: «Այս օրուան օրս՝ ըսաւ, Հայազգի Աթօթիկները հարիւր քսան հազարի շարի կը հասնին: Ասոնցմէ մեզի գէ՛մ հակառակողները առ առաւելն Մայրաքաղաքէս միայն տասն և հինգ հազար հոգի հազիւ են: Այլ կը փառփառէի՞ որ ամենքն ալ մէկ սիրտ, մէկ հոգի մեզի հետ միարան բլլան, ինչու որ ան ատեն գործքերը աւելի դիւրութեամբ առաջ կերթան: Բայց ի՞նչ և իցի Աստուծոյ թիւնը այսպէս կամեցեր է, ի փոխմանի անոնք ալ օր մը կու գան, մեզի հետ պիտի միանան: Անչորպէս որ Քրիստոս ճէրն մեր քարոզած ժամանակը, շատերը իրեն քարոզող թեկանք չէին հաւատար. բայց ետքը հաւատացին: Ամենա»

„սիւս ստանք ալ հարկաւ որ օր մը պիտի դան-  
դարձեալ մեզի հետ պիտի միանան՝ ըսելով  
ինքն ոտք ելաւ, և ժողովն ալ մեծ տրամա-  
թեամբ լուծուեցաւ: Արդ՝ ասոր վրայ Ազգը  
դարձեալ սկսաւ խռովիլ: Հոս հոն ժողովքներ  
ընել. քիչ մը ժամանակ առաջ երեցած Ազգին  
առերևոյթ հանդարտութիւնը դարձեալ խռո-  
վութեան փոխեցաւ, դարձեալ նորանոր տրու-  
մութեանց մէջ ընկղմեցաւ: Հիմակ հասկը-  
ցանք՝ կըսէին, թէ հանգուցեալ Նիկողայոս  
Պատրիարքին մահուանէն վերջը ինչո՞ւ Ազգը  
չի կրցաւ Ազգայեան Պատրիարք մը ընտրելու:  
Ասոր համար քանի՞, քանի անգամ աշխատե-  
ցանք, ամեն անգամին կերպ կերպ ճամբանե-  
րով զանիկայ արգիլեց, և չթողուց մեզի Ազ-  
գայեան Պատրիարք մը գնենք: Արպէս զի առանց  
մեր գիտութեան մէկ գալանի հնարքով մը զա-  
նիկայ ընքն յախշտակէ և այլն:

Իսկ Ազգիս Մեծամեծներէն սկսեց, Մըրըս  
Պօղոս Պէյ, Կէօչէեան Բակար Էֆէնաթ, Գաս-  
պար Պէյ, այս գիշեր (20 Հոկտեմբերի) առան-  
ձինն գացին յԱպսխասպասարանք, ուր ներկայ  
էր Գեր. Հասունը, մէկ երկու Ապսխասպաներ, և  
մէկ քանի քահանայք: Ասանց հետ Ազգային

իրաւանց՝ մանաւանդ քաղաքական մասին, բրա-  
նարարութեան վրայ շատ մը խօսեցան: Աւ այս  
ամէն շարեաց և խառնութեանց առջևը առ-  
նուելոյն հնարքը մեկ տեղ մտածել ըսած ժա-  
մանակնին, ասոնց Առաքել Նպխիտոսոսը պա-  
տասխան կուտայ՝: «Թէ այս Ձեր ըսածը մեր  
ամենեւին հոգը չէ: Ի՞նչ կուզեննէ թող ըլ-  
լան, երթան բաժնուին մեզմէ հեռանան. մենք  
մեզի մնանք. անոնք իրենց հոգինին թող կո-  
րըքտեան ճամբուն մէջ ձրզեն: Բայց զՁեզ կը  
խոշտանք որ Ձեր հոգւոյ փրկութեանը հա-  
մար ասանկ անկրօն, և ուղղափառ Աթո-  
ղիկի մը անվայել խնդիրներու մէջ չի մանաք  
ևայլն»: Բայց ակս դուն՝ թէ ի՞նչ ժամա-  
նակ հասանք, ժողովուրդը բռնարարուած իրա-  
ւունքները պաշտպանել ուղելուն համար, մա-  
նաւանդ քաղաքական Պատրիարքական իշխա-  
նութեան, ահա՛ Նպխիտոսոս, մը իրրև անկրօն,  
և անօրէն կը զրպարատուի: Կսկ նոյն դիշեր դա-  
ցողները դարձեալ հարցուցին. թէ արդեօք  
կրնանք մենք Հռովմայէն խնդրել առջի Աթո-  
ղիկոսական իրաւունքները: Ամենքն ալ պատաս-  
խան տուին՝ թէ կրնաք դուք խնդրել, բայց  
մենք չենք կրնար անոր մէջ միջամուխ ըլլալ:



Եւ ասոնց վրայ մէկ շատ խօսակցութիւն ընկ-  
լէն վերջը իրարմէ բաժնուեցան:

3. Ապա Ազգիս Հինգ Մեծամեծ անձինք,  
Մըսրլեան Պօղոս Պէյ, Կէօչէյեան Յակոբ Էֆէնտի,  
Ալիքսանին Տիւղ Տիրան Պէյ, Սինապեան Գասպար  
Պէյ, և Կիւղէլ Յարութիւն Էֆէնտի իրենց ստո-  
րագրութեամբը ի 3 Նոյեմբերի 1867. բոլոր  
զԱզգը՝ Մըսրլեան Պօղոս Պէյին տունը ի յըն-  
դանուր ժողով Հրաւիրեցին: Այս ժողովոյն մէջ  
Տավութ Յ. Յակոբ Էֆէնտին գեղեցիկ և ազ-  
դու ատենաբանութիւն մը ըրաւ, մի ըստ միոջէ  
յառաջ բերելով, երբոր Տերութեան կողմանէ  
պաշտօնական եղանակաւ իրեն ի Վիրանան զըտ-  
նուած ժամանակ, Հանգուցեալ Վաթողիկոսին  
հետ այս միութեան համար ըրած խօսակցու-  
թիւնները, ետքը հոս դալով Գեր. Հասունին  
հետ նոյն միութեան վրայ եղած խօսակցու-  
թիւնները պատմեց: Եւ ետքը ինքն Վաթողի-  
կոս ընտրելոյն պատճառաւ ի Հռովմ գացած  
ժամանակ իրեն զուրցած խօսքը յիշեց, այսինքն  
թէ — «Հանգուցեալ Վաթողիկոսին իրաւունք-  
ներէն պահաս մէկ բան մը չստնելէս ի զատ,  
աւելի ալ առնելու պիտի աշխատիմ» — ըսաւ  
ինձի իր բերնովը նոյն ինքն Գեր. Հասունը, (Տա-

վութեանին այս խօսքը ժողովոյ մէջէն շատերն ալ հաստատեցին, որ նոյնը իրենց ալ զուրեր է): Ապա հիմա հուան թէ հոգեւոր իշխանութեան իրաւունքները, և թէ Ազգապետական իշխանութեան իրաւանց փճանալը մէկիկ, մէկիկ բացայայտ ժողովականաց ցուցոյց: Ասոր ետեւէն Սաղրղ Յովհաննէս Եփէնաին հզօր պատճառաբանութեամբ Ազգային բոլոր իրաւանց ոչընչանալը հաստատեց: Ապա ընդհանուր ժողովը եղածներուն վրայ աղեկ մը խորհելէն և խօսելէն վերջը. — Ազգին էրբո, ներքին և արտաքին իշխանութեանց իրաւունքը բանաբարս ըլլալը — վըճուեց: Եւ ասոր դարմանը մտածելու համար քուէարկութեամբ ինը անձինք ընտրելով մէկ յանձնաժողով մը հաստատեցին, որոնց յանձնեցին մէկ ամսուան մէջ հոգեւոր և քաղաքական երկու Ազգային իշխանութեանց բռնարարուած իրաւունքները որոշելով, զանոնք դարձեալ ընդհանուր ժողովոյն առաջարկեն իրենց խորհրդածութեամբ: Եւ քուէարկութեամբ ընտրեալքն ստանք են:

1. Մըսրիկան Պօղոս Պէյ:
2. Կէօշէկան Յակոբ Եփէնաի:
3. Ալիքսանեան Տիւղ Տիրան Պէյ:
4. Չամիչ Յովհաննէս Եփէնաի:
5. Պէտան Պէյ:

6. Յավութ Յ. Յակոբ Էֆէնտի, 7. Սինապեան  
Գասպար Պէյ, 8. Մըսրէան Անտոն Պէյ, 9. Սա-  
զըզ Յովհաննէս Էֆէնտի,

Ապա ընդհանուր ժողովոյն այս հաստա-  
տութեան արձանագրութիւնը ամեն ժողովա-  
կանք ստորագրեցին, բաց ի թընկըռ Յովհաննէս  
Էֆէնտիէն, որ ես՝ ետքը կը ստորագրեմ ըսելով,  
ժողովքէն ելաւ գնաց: Արովհետեւ նա ինքն  
յառաջուց ան Պատրիարքական Պէ-  
րագրութիւնը երեք անգամ ընկելով, Գեր. Հա-  
սունին յուզարկած էր:

Արդ վերոյիշեալ հաստատեալ ժողովը նախ  
և առաջ յԵպիսկոպոսարանէն խնդրեց Գեր.  
Հասունին կաթողիկոսութեան հաստատու-  
թեանը համար ի 12 Յուլիսի 1867, Բրօքա-  
կանտային տպարանը տպուած տետրակը, զոր-  
ոնք մինչև ցայս ժամանակ չորս ամիս ամե-  
նեին չէր հրատարակած: Եւ երկրորդ Գեր.  
Հասունէն խնդրեց այն թղթոյն օրինակը, զոր-  
նոր ի 20 Հոկտեմբերի յազգային ժողովոյն մէջ  
յիշեց, թէ 1840-ին Կ. Պօլսոյ ժողովուրդը  
երկու Աթոսոյ միութեանը համար ի Հռովմ  
դրած ըլլայ, ինչպէս որ նոյն տպեալ տետրա-  
կին մէջն ալ յայտնապէս կը յիշուի (երես 22):

Արդ՝ ինչպէս որ վերը պատմեցինք, ընդհանուր ժողովոյն մէջ Ազգը այն յիշած թղթոյն օրինակը իրմէն ուզեց մէկ անգամ տեսնել. Գեր. Հասունը յայնժամ պատասխան տուաւ, թէ՛ շոք ողէ՛, Թե Եղիսիօպոստոնոն Դիւանէն հոնէ՛՛, քեզէ ցոյց չուրա՛մ: Եւ յանձնարարական ժողովը անոր այս խոստմանը վրայ հիմնած, նոյն յիշած թղթոյն օրինակը խնդրեցին: Ան ասէն խօսքը փոխեց. — կարծեմ՝ ըսաւ, Ազգապետական ղիւանին մէջ պիտի ըլլայ, հոն փնարուեցէք — : Ասոնք այնպիսի թուղթ գրուած չըլլալը ինչպիսի ստոյգ գիտէին, ի վերայ այսր ամենայնի Ազգապետական Դիւանը տակն ու վրայ ըրին, հոն և ոչ այն թղթոյն վրայօք յիշատակ մը գտան: Ապա ծերունի կենդանի մեծամեծ իշխանաց, և երեսփոխանից հարցուցին. և տեղեկացան՝ թէ այսպիսի թուղթ ի Հռովմ րնաւ գրուած չէ: Զարմանալի՛, և միանգամայն զայթակղելի ղիպուած:

Գեր. Հասունը ընդհանուր ժողովոյն մէջ Ազգին կողմանէ ի Հռովմ թուղթ գրուած ըլլալը կը պնդէ, և Հասարակութիւնն ալ չը գրած ըլլալը կը հաստատէ: Իսկ Հռովմ ալ նոյն հաստատութեան անտրակին մէջ յայտնի

բառերով զայս կրօնէ — Դայս մի ու թիւն Աթո-  
ւոյն կաթողիկեայ Հայք Կ. Պօլսի բազում ան-  
գամ խնդրեալ էին, և խնդրեցին իսկ թախան-  
ձանօք ըզ նոյն Միութիւնն ի բարեյիշատակ Նա-  
խորդէն մերմէ, և ի Գրիգորէ վեշտասաններորդէ,  
և ի Մէնջ —: Բայց Կ. Պօլսոյ ժողովուրդեան ան  
ժամանակէն կենդանի եղողները այնպիսի թուղթ  
գրելին բնաւ երբէք չեն գիտեր: Եւ աւելի զար-  
մանալին, և ոչ ալ Պիոս իններորդին՝ ասանկ  
մէկ Ազգովին խնդիրք մը ընելին կը յիշեն:  
Վասն զի մօտ ժամանակին գործ ըլլալով, հա-  
րիւրին իննսունը հարկաւ զանիկայ պիտի գիտ-  
նային. ուր ընդհակառակն մէկ բերան կա-  
ղաղակեն՝ թէ այսպիսի թուղթ գրած չենք, և  
ոչ ալ լըսած: Այլ թէ Գեր. Հասունը այն վե-  
րոյիշեալ ընդհանուր ժողովոյն մէջ ի՞նչ պատ-  
ճառաւ արդեօք լռեց Պիոս իններորդին գրուած  
թուղթը յիշատակելու, որ աւելի ազգու և  
զօրաւոր էր, և ասոր հակառակ անոր ակը  
1840-ին կեղծեալ շինծու թուղթը կը յիշա-  
տակէ: Վասն զի ինքը ազէկ զիտէր, որ ժողո-  
վականք ի մի բերան երեսէն վեր պիտի պո-  
ռային, թէ մենք այնպիսի թուղթ Պիոս Բ. ին  
ամենեին չեմք ուղղած. որով իրեն ստու թիւնը

չարաչար հրապարակաւ պիտի խայտառակուէր:

Ապա ուրեմն Պիոս Թ. ի<sup>նչ</sup>նչպէս կրնայ բռնել—  
Դևոյն յանձնէ ի յորդէջն . . . Եւ ի Մէնջ—» Ասոր  
վրայ ըլլալիք խորհրդածու թիւնը խիստ փա-  
փուկ, և յոյժ ծանրակշիռ են: Ասան զի քանի  
որ Կ. Պօլսոյ ժողովուրդը սոռոյդ դիտէ, որ բնաւ  
զրաժ չէ առ Պիոս Ս. Քահանայապետն, պէտք  
է ուրեմն հետևեցընել թէ կամ Ս. Պապը սուս  
կը զուրջէ Եւ ի Մէնջ ըսելովը, և կամ յանուն  
Կ. Պօլսոյ ժողովրդեան սուս և շինծու թուղթ  
Ս. Քահանայապետին ներկայացընող մը պիտի  
ըլլայ: Առաջինը բնաւ իսկ միաքերնէս ալ չանց-  
նիր: Իսկ երկրորդը ո՞վ ըլլալը յայանի է, որ  
ասանկ խարէու թեամբ թուղթեր յարմարցընե-  
լով, և ներկայացընելով, երկուց Աթոռոց միա-  
նալովը իր բաղձամեայ աշխատութիւնը պիտի  
պսակուէր, և իւր փառասէր ակնկալութեան  
և ջանիցը ի ծայրն հասնելով, ի վերջին կոր-  
ծանումն Ազգին Պետրոս իններորդ անուամբ կա-  
թողիկոս պիտի ըլլար: Ի<sup>նչ</sup>նչպիսի արդեօք մինչև  
ցայսօր ասանկ խարէական և շինծու թուղ-  
թերով իրենց դիտած վախճանին հասեր են  
մեծամեծ մնասիւք Ազգիս:

Եւ իրօք ալ Գեր. Հասունին մեծ օգուտ

ըրաւ այս շինծու աղերսագիրքը որովհետև Ս. Քահանայապետը նոյն հաստատութեան Տեա-  
րակին մէջ կրտէ, — ՊԱՂ պատճառք ծանունք  
ն է օրինուորք խոչընդոտն ի կատարումն իւրոյն  
նոցա եզեն: Սակայն յամին 1859 տնօրինեցաք,  
ն զի ի պահատիլ Հովոյ ի Պատրիարքական Աթո-  
ոսոյն Այլիկիոյ, դադարեալ կացցէ ընարութիւն  
նորոյ Պատրիարքին (երես 22) — Եւ դարձեալ  
Ս. Քահանայապետը նոյն շինծու աղերսագրին  
վրայ հիմն զնելով կրտէ — Որում (Միութեան  
ներկուց Աթոսոց) այնչափ ուժգին աղաչա-  
նօք . . . . և կաթողիկեայ Հայք Կ. Պօլսի  
նցանկային, հաստատել կամեցաք (յերես 23) :

ԱՂ թէ Կ. Պօլսոյ ժողովուրդը այսչափ  
մեծ, և յայտնի խաբէութեան ինչպէս ուրեմն  
կրցաւ լուռ կենալ, և ի Հոովմ չը բողոքեց:  
Հասարակութիւնը լուռ չի կեցաւ, բայց այն-  
չափ գայթակղած և զզուած էր Հոովմին ըն-  
թացքին վրայօք, որ և ոչ արժանի սեպեց պաշ-  
տօնական բողոքով իր արդարացի գանգաւը  
յայտնելու: Սակայն հոս մեր խորհրդածու-  
թիւնները վերջացրնելով, դառնանք յանձնա-  
րարական ժողովոյն: Ասոնցմէ հմուտք և բա-  
նիրունքն Գեր. Հասունին Պատրիարքութեան

Հատատութեանը համար տպուած տեսակը կարգացին: Եւ մինչև ցհանգուցեալ Ը. Պետրոս Գրիգոր Կաթողիկոսին օրը ի գործ վարուած իրաւանց և իշխանութեանց մէջ, և հիմակուան Գեր. Հասունին ընդունած իշխանութեանց մէջ եղած բոլորովին տարբեր զանազանութիւնները ըստ յետագայ օրինակի ի գիր առին:

Ա Ռ Ա Ջ Ի Ն:

Պատրիարքական Աթոռոյն պարսպ մնացած ժամանակը, վանքին մէջ դանուող Միաբանները Տեղապար:ը կընտրէին: Կամ թէ սովորաբար Առաջակայից հաւանութեամբը Հանգստեցեալ Կաթողիկոսին Աթոռակալը Տեղապար կը հաստատէին:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ:

Առաջին Պետրոս Աբրահամ Կաթողիկոսին ընտրութիւնը ազգային ժողովով Եպիսկոպոսներէն, Բա



### ՀԻՄՆԻԿՈՒԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

Այս անգամ ութերորդ Պետրոս Կաթողիկոսը երբոր հանգեաւ. Տեղապահ ընտրեցաւ Դաւթեան Սերովբէ վարդապետը:

Իսկ Ասորեստանի Պապական փոխանորդ Մ. Վալերկան ի 15 Մայիսի զանիկայ վար կառնու, և անոր տեղը Նազարեան Մեղզոն Եպիսկոպոսը „Առաքելական Պատրիարքական փոխանորդ“ անուամբ կը կարգէ, որ այսպիսի բան մինչև ցայսօր ամենևին չէր պատահած:

### ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

„Պատրիարքական Աթոռոյն պարապ մընացած ,ժամանակ, ան որ Եպիսկոպոս չէ, տեղապահին ընտրութեանը համար վիճակ չը նետէ:

Այս անգամ երբոր Ը. Պետրոս Կաթողիկոսը հանգեաւ, նոյնպէս Պապական փոխանորդը Մ. Վալեր-

հանայ և աշխարհականներէն եղաւ: Եւ այս կերպ  
ընտրութիւննին իրենց ստորագրութեամբը յ. Գ. Բե-  
նետկտոս Ս. Պապին ծանուցին. որ և Անիկայ ալ  
հաստատեց, և Պապինը իրեն յուզարկեց: Իսկ ետքի  
ժամանակները ի լիբանան Հայոց Ազգէն մարդ չի  
գտնուելոյն, Եպիսկոպոսները միայն ժողովելով կա-  
թողիկոսին յաջորդը կընտրէին:

### Ե Ր Ր Ո Ր Դ.

Մինչև նախօր կաթողիկոսին ընտրութեանը հա-  
մար Եպիսկոպոսները միայն կը ժողովէին: Եւ այն  
Սիւնհոգոսին մէջ զուրսէն մարդ մը չէր մտնար:

### Զ Ո Ր Ր Ո Ր Գ.

Նորընտիր Պատրիարքները նոյն ատեն, իւր-  
իւր հրահրելով: Եւ յետոյ Հռովմային կը ծանուցանէին:  
Եւ ընտրեալը նոյն ժամանակ իր կաթողիկոսական  
իրաւասութիւնը կը զործ անէր:

կան ամեն կիլիկիոյ արքեպիսկոպոսներուն ի 7 Փետր-  
վարի 1866: թուղթ կը գրէ, և առ ժամս զնտրու-  
թիւնը Նոր կաթողիկոսին կարգիլէ: Եւ ետքը ի 14  
Յուլիսի Նազարեան Տեղապահ Եպիսկոպոսին կը  
հրամայէ նոր Պատրիարքին ընտրութեանը համար  
ժողովիլ:

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ (երես 15):

„Պատրիարքին ընտրութեանը համար միայն Եպիս-  
կոպոսները վիճակ ձըզեն: Քահանաները և ժա-  
ռանդաւորները ամենեին յընտրութեան միջամուխ  
չըլլան: Իսկ աշխարհականները ամենեին ոչ մէկ  
պատրուակաւ, և ոչ պատճառանօք ընտրութեան  
մէջ մաս ունենան:

Այս անգամ (յերես 2) Ս. Պապին փոխանորդ  
Մ. Վալերկան ինքն իրմէն եկաւ, և Եպիսկոպոսաց  
ժողովոյն մէջ Նախագահ նստաւ:

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ (երես 15)

„Նորընտիր Հայոց Պատրիարքները, քանի որ ըստ  
ստվորութեան Առաքելական դահէն ընդունուած և  
հաստատուած չեն, Պատրիարքական Աթոռը կարող  
չըլլան նստելու, և իրենց Պատրիարքական վիճակին

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ.

**ԿԻԼԻԿԻՅ Պատրիարքները մէկ այրիացեալ թեմին վրայ զանոնք Եպիսկոպոս կը ձեռնադրէին. զորոնք որ նոյն այրիացեալ Աթոռոյն Եկեղեցականք և աշխարհականք իրենց կը ներկայացընէին.**

„մէջ ոչ իրաւունք մը. և ոչ ալ իրաւասութիւն մը, ու-  
„նենանս:

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ (յերես 16)

„Իսկ Եպիսկոպոսաց ընտրութեանը համար, Ս.  
„Պապը այս կարգը պահուելուն հրամայեց: Պատ-  
„րիարքական վիճակին մէջ քանի անգամ թեմ մը  
„պարսպ կը մնայ, Պատրիարքը ամէն Եպիսկոպոս-  
„ները ի ժողով կանչէ, և իրենց ան Սիւնհոդոսէն  
„երեք եկեղեցականներ առաջարկեն, որով Ս. Քահա-  
„նայապետը անոնցմէ աւելի արժանաւորը, և պատ-  
„կանաւորը ընտրելով, զանիկայ դատարկ Աթոռոյն  
„վրայ կարգէ:

„Բայց Ս. Քահանայապետն ամենեկին չի տարա-  
„կուտիր, թէ ան Եպիսկոպոսները ջանան Ս. դա-  
„հին այնպիսի արժանաւոր Անձինքներ առաջարկել,  
„որոպէս ղէ ծայրագոյն Քահանայապետն ըստ պարտաճի  
„առտօքելտիտն պաշտաման իւրոյ չը ստիպուի զսարել ճը,  
„Եւ և յառաջարկուածներէն չըլլայ, ղէպիտիոդոս ընտրել,  
„և դատարի Ֆնայած Աթոռոյն վրայ զանի իւրագի:

„Եւ այն Եպիսկոպոսոց ընտրութեան Սիւնհոդոսին  
„Քործքը (յերես 18) Առտօքելտիտն Ս. Պապին նուի-  
„րտիլին չէտօք Տարածման Ստրէ ժողովոյն յաղարիւն,  
„որպէս ղի ծայրագոյն Քահանայապետին գերադոյն  
„դատաստանին ներքեր ձըզեն:

ԵՅԹՆԵՐՈՐԴ. (յերես 6)

Երբոր Կիլիկիոյ Աբքեպիսկոպոսները ի  $\frac{2}{11}$  Սեպտեմբերի 1866, ընտրեցին զգեր. Հասունը Պատրիարք ի վերայ Տանն Կիլիկիոյ, յովորդ տէնայն իրտանց և տանջանորհոթեանց Նորին հանգուցելոյ Պատրիարքի իւրեանց, Զնոյն զրեալ ի  $\frac{2}{18}$  սեպտեմբերի ծանուցին Ս. Քահանայապետին:

Գեր. Հասունը հոս տեղի ըրած երդումով ինչչափ ազգային եկեղեցիներ, և նախրական տեղեր կան, այսինքն ազքատանոց, հիւանդանոց, և դպրոցներ ունին, ասոնց ամենուն իրենց եկամուտներովը մէկ տեղ մի միայն Տէրը Հռովմային Աթոռը կը ճանչնայ:

Ասոնց Ազգային հիւարկութեանց իրաւունքը (ևս բատրոնաթումբ) կը ոչնչացընէ, և անոնց Տէրը զՀռովմ միայն ճանչնալոյն առաջի Աստուծոյ երդում ալ կընէ:

Ուր ասոր հակառակ թէ Կիլիկիոյ Աթոռի սոցիոսները, և թէ Կ. Պօլսոյ Նախադահները ըստ օրինաց Եկեղեցւոյ այսպիսի ինչքերուն և եկամտից վրայ միաբան խորհրդակցութեամբ ամենեցուն՝ իրենց իշխանութիւնը կը վարէին:

ԳԵՐ. ՀԱՍՈՒՆԻՆ ԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ (Եր. 35):

„Իսկ Գեր. Հասունը, բոլորովին արեմտեան Պատ-  
րիարքաց նման, Պալիունը ընդունելէն վերջը, Ա.  
„Պապին սուջին ծունր դնելով, և անոր ռաից համ-  
„ըոյր մատուցանելով, կերզնու առաջի Աւետարանի  
„Աստուծոյ, և կրտէ . . . . . Հինգ տարուան մէջ մէկ  
„անգամ գերեզմանի առաքել ց անձամբ այց ելլամ.  
„Չեր Սրբութեանը, և Չեր Յաջորդաց բոլոր Հովուա-  
„կան պաշտամանս համարը տամ:

„Աւ բոլոր ինձի յանձնուած Կղերիկսաց և ժո-  
„ղովրդեան հոգւոց փրկութեան համար, և Պատրիար-  
„քական վիճակիս բարեկարգութեանը վերաբերեալ.  
„նեբուն համար ալ ընդունած առաքելական հրաման-  
„ները լըրջմտութեամբ զանոնք ամենքը պիտի կա-  
„տարեմ:

„Առանց Հռովմայ Քահանայապետաց հաւանու-  
„թեան իմ Եկեղեցեացս վերաբերեալ զստացուածները.  
„և կամ իմ Պատրիարքութեանս մէջ զտնուած բոլոր  
„Եկեղեցեաց զստացուածները չը պիտի վաճառեմ. չը  
„պիտի պարզենեմ, և ի գրաւ չը պիտոր դընեմ, և կամ  
„զանոնք ոչ բնաւ պիտի օտարացունեմ:

„Թէ որ օտարացունելու որ ըլլամ, կամիմ նոյն  
„ատեն բանադրանքի մէջ անկանիլ:

Յանձնարարական ժողովը երբոր այս մեծ  
տարբերութիւնը որ տեսաւ, վերջին աստիճան  
խռովեցաւ. ինչու որ աղեկ զիտէր, թէ ըսա

կոնդուկի Բենեդիկտոս ԺԳ. ի ամէն արևելեան  
Ազգերը և Պատրիարքները Ս. Աթոռոյն հետ  
որչափ յարարերութիւն ունի, այսինքն — սոսկ  
ի հաւատոյն, ի բարի վարս և ի բողոքելն առ-  
նա—» և ասոնցմէ ուրիշ իրենք ըստ ամենայնի  
ազատ և ինքնիշխան են: Եւ իրենց Եկեղեցւոյն  
վրայ կատարեալ իշխանութիւն և իրաւա-  
սութիւն ունին: Ասոր հակառակ տեսան որ  
Գեր. Հասունը սոսկ անուամբ միայն Պատրիարք  
եղած է, ըստ որում իրեն իշխանութիւնը ժո-  
ղովրդապետի մը իշխանութենէն աւելի չէ: Երեն  
նախորդք Հանգուցեալ Կաթողիկոսները ի կարգի  
Արևելեան Ազգաց Պատրիարքաց կարգն էին:  
Իսկ հիմայ ինքն Արևմտեան Պատրիարքաց կար-  
գին մէջ վերջինը նշանակուած է զիրքերուն մէջ:

Արդ՝ երբոր ասոնք Յանձնարարական Ժո-  
ղովոյն մէջ կարգացուեցան, երկու կարծիքի  
բաժնուեցան: Մեծագոյն մասը կը պնդէր՝ թէ  
առ ժամս մեզի պէտք է ամէն բանէն առաջ  
քաղաքական Ազգապետական Իշխանութիւնն իս  
ձեռք ձրգենք, նորէն մեզի Ազգապետ Պատրիարք  
մը ընտրենք: Իսկ միւս կողմանէ Հասունեանք  
կը պնդէին՝ թէ յայս նուագ թողուլ զԳեր.  
Հասունն ի քաղաքական իշխանութեանը մէջ:



և ի Հռովմայէն պահանջել մեր բռնաբարուած Ազգային իրաւունքները և այլն: Ասոնց առջինները կը պատասխանէին՝ թէ այս խնդիրը լուծելու համար շատ ժամանակի կարօտ է. մենք հիմայ մեր քաղաքական իշխանութեանը գործողութեանց միտք զնենք: Եւ այս խնդրոյն որոշողութիւնը ընդհանուր ժողովոյն ձըղեցին:

4. Արդ ի 3 Դեկտեմբերի 1867, Ոսկերեւան Եկեղեցւոյն մէջ ընդհանուր Ազգային ժողով մը եղաւ: Ուր Նախագահ նստաւ Ալիքսանեան Տիւղ Տիրան Պէյը: Սինապեան Գասպար Պէյը ժողովրդեան ծանոյց իրենց երկու կարծիքի բաժնուելին. ինքն երկրորդ կարծեաց Տէր և հակամիտեալ էր, այսինքն յայտնուագ թողուլ զԳեր. Հասունն յիւրում քաղաքական իշխանութեան մէջ, ու ետքը ամենքնիս՝ ըսաւ, մէկ տեղ աշխատինք բռնաբարուած իրաւունքնին ձեռք բերել և այլն և այլն:

Ապա Սազըղ Յովհաննէս Եփէնտին մի առ մի յայտնեաց, ինչ որ տեսան իրենց տետրակին մէջը, առջի և հիմակուան Պատրիարքական իշխանութեանց մեծ խտիր և զանազանութիւնը. և ասոնք ըսելէն վերջը իրեն խօսքը կը վերջացընէ, — թէ ամէն բանէն առաջ պէտք է Ազգին

առ այժմ քաղաքական բանարարուած և յա-  
փշտակուած մեր իշխանութիւնը ձեռք բերե-  
լու աշխատինք, և զանիկայ միշտ և հանապազ-  
բ. Գանէն խնդրենք և այլն:

Ամեն ժողովականք ի մի բերան գոչեցին՝  
թէ քաջ է խորհուրդը Ասդրղ Եֆէնտիին: Ուս-  
տի որոշեցին որ ժամանակ չը կօրսունցընելով  
Բ. Գրան աղերսագիրը տան:

Ապա ի 11 Դեկտեմբերի 1867, Ազգայինք  
իբենց աղերսագիրը Բ. Գրան առ ին որոյն օրի-  
նակը այսպէս էր:

»Մարուզը չաքէր քեմինէլէրի աիր քի.  
»Մաթպուշի միւքէրրէմ վէ մու Ֆախխա-  
»մըմըղ օլան Փատիշահը մէքեարիմ իքթ ինահ  
»էֆէնտիմիզ հազրէթլէրինին զիրի ձէնուհը  
»մատայէթիսէնիսլէրինտէ պուլունան պիրճիւմէ  
»Խրիսթիւնան միլլէթլէրինէ մին էլգատիմ իթա  
»վէ իհասան պուլուլմուշ օլան միւսասատաթ  
»վէ իմթիւազաթէ ձէմաթը աճիզանէմիզ սա-  
»յէի մէրհամէթվայէի հազրէթի Փատիշա-  
»հիտէ, շինտիցէ գատար նայիլ վէ մաղհար օլա-  
»րազ, սերբիսդորոս հիւրմէթլու Հասուն Եֆէնտի  
»մուախիսէրէն Աիլիկիա Բիւզոպոսլարը թարա-  
»Ֆընտան միւնհալ օլան Աիլիկիա Բաթրիքիք

տեանի Կաթողիկոսը զուսնա ինժ իխապ օլու-  
նուպ, իշ պու մէմուրիսէթ ինի հաշմէթ լու-  
րարա հազրէթ լէրի բէսմէն թաստիդ իլէ պէ-  
րասպէր, քէնտուսինի պիլ ճիւմլէ Երմէնի Գա-  
թ Օլիքլէրինէ Կաթողիկոս նասպ իյլէ մէսի իւզէ-  
րինէ, էֆէնտիի միւշարիլէյ հ Րօմատան ավտէթ  
իլէ, կէչէն շէհրի թըշրինի էվլէլին եիկիր-  
մինձի ճումաս կիւնիւ, պազը բէհասպին վէ  
միւթ էպէրան վէ էսնաֆտան միւրէ քքէպ պիր  
մէճլիս ազտու թէշքիլ իլէ, մէմուրիսէթ ի մէզ-  
քիւրէնին իւ հտէսինտէ թէգարբուր իթտի-  
կինի իլան իյլէտիկի սրբատա, գրասթ իթ-  
տիրմիշ օլտու զու պէրաթը Ալի մէպլինտէն  
Կիլիկիա բիադորոսլարընըն իսթիուասը վէճ հ  
իլէ, միլլէթի շաքիրանէմիզ Խսթանսպօլ բաթ-  
րլիքլիկինին տախի էֆէնտիի միւշարիլէյ հին  
իւ հտէսինէ իսպլէ պույրու լտու զու միւսթէ-  
պան օլմուշ իսէտէ, նէգտը հազայիգ վիսթաը  
շապրէթ ի Խըտիվ էֆիսէմիլէրինտէ վարէսթէի  
իշթիպաս օլտու զու իւզրէ, հէր միլլէթ ին  
բասթրիկի ինթ իխասպը միլլէթ ճէ իճրա օլուն-  
տու գտան սօնրա, ճանիպի Պսպը — տիլէ պա  
մաս հզէրի ումումի արզ օլունմազ, վէ պունուսն  
իւ զէրինէ շէրէֆսուտուր իտէն Կրասէյլի Սէ-

նիյէի հազրէթի Միւլիւքեանէ մուծիսինձէ,  
քաթրիկի նասպու թայնին պույրուլմագ ու  
սուլը գատիմէ իճապընտան օլուպ, միլլէթի  
աճիզանէմիզ բաթրիքլիկի չէնտ սէնէտէն պէ-  
րու միւնհալ իքէն, մահզա Վիլիկիա կաթո-  
ղիկոսու ինթիխապընա մէմուր վէ սալիհ օլան  
փիսկոպոսլարըն ինհա վէ իսթիտասը իւզէ-  
րինէ, իշ պու մէմուրիեթ էֆէնտի միւշա-  
րիլէյհ թարաֆընտան տէրիւհտէ օլունմուշ  
օլուպ, պու փիսկոպոսլարըն իսէ, քէնտիսինի  
խսթանպօլ բաթրիկի ինթիխապ իթմէնէ գա-  
թան հապդ ուսէլահիեթլէրի օլմանաճաղը  
տէրքեար օլտուլու ճիհէթլէ, պէօյլէ պիր ին-  
թիխապըն էօթէտէն պէրու մէրի իւլ իճրա  
օլան վէ բաթրիք ինթիխապընա տայիր շիմ-  
տիեէ գատար շէրէֆսուտուր իտէն էվամիրի  
այլիյէ իլէ թաստիզ վէ թէյիտ պույրուլան  
ուսուլէ թէվֆիզան, վուզու պուլմուշ պիր  
ինթիխապ մագամընտա թու թուլմանաճա-  
ղընտան, վէ պունտան գաթի նազար, Տէր-  
սէնտէթ սերփիսկոպոսլարընըն ձէմասթը ա-  
ճիզանէմիզ թարաֆընտան ինթիխապը մին  
էլ գատիմ քիլիսէձէ մէրի օլան հուզուգու-  
մուզ խթիզաընտան իքէն. միւշարիլէյհին միլ-

լէթի չարիրանէմիզին ուսուլն վէճհ իլէ բէյ  
վէ մէտխալի օլմագսըզըն, ումումի կաթողիկոս  
նասայ օլունմասը իլէ հուգուգու. մէզքիւրէ  
իխլալ օլունտուղու միսիլու, Ալիլիկիս Աթո-  
ղիկոսու ինթիխասայընս մէմուր օլան փիսկոպոս-  
լարըն էօթէտէն պէրու ճարի օլան ուսուլու.  
ինթիխասայ վէ թայեինլէրինտէ տախի, Բօմս  
թարաֆընտան պագը միւհիմմ թաղեիրաթէ  
գարար վէրիլմիշ օլուպիշ պու. թաղեիրաթ  
իզթիզասընճա պէր վէճհի մարուզ կաթողի-  
կոսու ինթիխասայ իտէն փիսկոպոսլարըն աստէ-  
թա Բօմսճա ինթիխասայ օլունսճաղը ճի-  
հէթլէ, պիլ ախըրէ կաթողիկոս տախի Բօմս  
թարաֆընտան ինթիխասայ օլունմուշ օլսճա-  
ղընտան, էկէր միլլէթի աճիզանէմիզ կաթո-  
ղիկոսլուգ մէմուրիեթի բուհանիեէսի տէվ-  
լէթի ալիեէ մէմուրիեթի մէսայէսինտէ օլան  
միլլէթ բաթրիքլիլինտէն այրըլմամագ լաղըմ  
կէլսէ. Նսթանպօլ բաթրիկի տախի Բօմսճա  
ինթիխասայ վէ թայեին օլունմուշ օլսճաղը  
շէօյլէ տուրսուն, բաթրիք ինթիխասայ վէ ազլի  
մուամէլաթը, մին էլգաաիմ Սալթանաթը սէ-  
նիեէ իլէ քէնտու թէպաայը սատըղասը սէյ-  
նինտէ ճէրէեան իթմէքտէ իքէն, շու հուլաէ

• քօմանըն միւնթէխասպ վէ մէմուրու պիթ-  
թապի կերէք աւվլէթի Ալիսէ վէ կերէք միլ-  
լէթի աճիլանէմիզին տայիրէի նուֆուզ վէ  
նէզարէթի խարիճինաէ պուլունաճաղընաան,  
— վէ պիս իքի եիւզ եէթմիշ իքի սէնէսի ձէ-  
մագիլ ախրը էվայիլինաէ նէշր ու իլան պույ-  
րուլան իօլահասթ Ֆէրմանը ալխինաէ, մէմու-  
լիքի մահրուսէյի Շահանէաէ պուլունան իքիս-  
թիեան վէ սայիր թէպապայի զայրի միւսիմէ  
ձէմասթ լէրինէ, էօթ էտէն պէրու իթա վէ իհ-  
սան պույրուլմուշ օլան մուաֆիաթ վէ իմթիս-  
ղաթ թաղրիր վէ իպղա օլունուպ, բաթրիք-  
լէրին էլհայլէթիւ հաղիհի ճարի օլան ու-  
սուլը ինթիլասպիյէլէրինին իսլահ օլունմասը  
միւնտէրիճ օլտուղունտան. — վէ էֆէնտիի միւ-  
մայիլէյհէ իսթանապօլ սերրիսգօրօսու նասպը  
թարիխինտէն չէնտ սէնէ սօնրա, Ֆիյ պէշ  
րէճէպ պին իքի եիւզ եէթմիշ եէտի թա-  
րիխի իլէ իթա պույրուլան պէրաթը ալխի  
րու հանի վէ ձիւմանի մատտէլէրի պաշղա պաշ-  
ղա օլմաք իզթիզա խտէրէք, ումուրը ձիս-  
մանի վէ բուհանիեէյի ճամի օլան մասպա-  
հասթ լարա տայիր Պասպը Ալիսէ թաղտիմ օլու-

նաճաք թաղը իրէրի, բաթրիք իւն պաշ բխ-  
գոպոս թարաֆլարընտան պու՛նտան պէօյլէ  
միւշթէրէ քէն թաղտիմ օլունմասը, վէ սըրֆի  
ու մուրը մէզՏէպիսէյի եալընըզ պաշ բխ-  
գոպոսու միւմայլիէյՏին վէ ճիւմանի իշլէրի  
տախի բաթրիք պուլունանլարըն ինՏա կյլէ-  
մէսի մէսթուր օլտուղունտան վէ միլլէթի չա-  
քիրանէմիզ իմթիեազաթընըն մու Տաֆազա-  
սընը մէվտուի տէսթի մէրՏամէթ վէ ատա-  
լէթի սէնիսէի Տաղըթի Փատիշասի պիլտի-  
կիմիզտէն, էֆէնտիի միւշարիլէյՏ Տէր—Սաա-  
տէթ բաթրիքլիկինի միլլէթի աճիզանէմիզին  
մուաֆիաթը մարուզէսինէ քեամիլէն մուղա-  
յիր օլարագ, միլլէթճէ ինթիխասպ ուսուլի  
ասլա վէ զաթան իճրա օլունմագսըզըն, Տէր  
նասըլ իսէ իսթիՏասլ իթմիշ օլտուղուն-  
տան, վէ պինաէն ալէյՏ միւշարիլէյՏ բաթ-  
րիք մէշու իմիզ մագամընտա թանըյամանեա-  
ճաղըմըզըն վէ պիլ ճիւմէ խուսուսաթը մէշ-  
րու Տէնին արղու իֆատէսինի մաթպույիէթի  
սէնիլէսի իլէ միւպասի վէ միւֆիթէխի օլտու-  
ղունմուզ տէվլէթի պէնտէվիէրվլիմիզէ տէր-  
քեար օլան Ֆէրիզէի ուպուտիսէթ վէ սա-  
տագաթ վէ իսթիզամէթիմիզ իզթիզասըն-

«տան ատտ իթտիկիմիդոէն, վէ կերէք քիլե-  
«սէճէ վէ կերէք միլլէթճէ օլան իմթիյազա-  
«թըմըզա էասսէն խալէլ կէլմիշ օլտուզու միլ-  
«լէթի չաքիրանէմիզճէ պունտան ագտէմ ճէմ  
«օլունմուշ օլան մէճլիստէ միւթէպէրան վէ  
«էսնաֆը միլլէթ թարաֆընտան պիլ իթթի-  
«հաթ պէնան օլունուպ, մուախիսէրէն սախի  
«ագա օլունան մէճլիսի ումումիտէ մուաֆիաթը  
«միլիեէի չաքիրանէմիզին խպասը իչին, մէլճայի  
«լութֆուաթըֆէթ օլան Սալթանաթը սէ-  
«նիեէնին շիմէի քէրիմէի ինայէթքէարի վէ թէ-  
«պասբէրվէրիլէրինէ իլթիճա գըլընմասը պա-  
«սլընտա իթթիֆագ օլունմուշ օլտուզունտան,  
«միլլէթի աճիզանէմիզին ուսուլ ու մէրիյէյի  
«դատիմէյէ թէվիֆիզան, բաթրիքի ինթիխասպ  
«գըլընմասընըն բուխսաթ վէ միւսասատէսի իլ-  
«թիմասը իլէ պէրապէր, էվվէլ պէ էվվէլ ֆէր-  
«մանը ալի մէզքիւրտէ մէսթուր օլտուզու վէճհ  
«իլէ, բաթրիքլիք ուսուլու ինթիխասպիյէսի իս-  
«լահ օլունմագ իչին, միլլէթճէ պիր գօմիսիօն  
«ագտի գըմնընտա իճասպ իտէն էվամիրի ալիեէնին  
«իթա վէ իստար պույրուլմասը նիյազ վէ իսթիւր-  
«համընը մութէզամմին իշ պու մահգէրի ա-  
«ճիզանէմիզ թէրգիմ վէ թագաիմ գըլընտը, օլ-



նպաստէ վէ հէր հալտէ էմրու Ֆէրման վէլու թ Ֆ  
ոու ի հասանը հազըէթը մէնէհ իւլ էմրինտիր:

### 39.

1. Բ. Ֆուտի Բաշային խօսուիցու-լիւնը: — 2. Գա-  
լուստ Մ. վալէրիէային ի Կ. Պօլիս: — 3. Ժողով Տե-  
ծած ի խմանայ: — 4. Անընդունելի տասաշորիտ-լիւն  
Մ. վալէրիէային: — 5. Կոնրաի Գեր Հասաւնին, և իրեն  
Ճանապարհորդու-լիւնը:

1. Ազգայինք երբոր այս վերոյիշեալ ա-  
ղերսագիրը Բ. Գրան տուին. Գեր. Հասունը և  
Թընկըռ Յովհաննէս Էֆէնտին իրենց վերջին  
ճիգն թափեցին, և Գաղղիացւոց Գեոպանատան  
հզօր պաշտպանու թեանը ապաւ ինեցան: Ապա  
Արտաքին գործոց Պաշտօնեայ Բ. Ֆուտի Բա-  
շային օգնու թիւնը խընդրեցին և աղաչեցին որ՝  
զԱզգայինները իրեն կանչելով հրամայէ անոնց,  
որպէս զի իրենց պնդած խնդիրէն ետք կենան:

Արդ՝ Բ. Ֆուտու Բաշայն ի 13 Գեկտեմ-  
բերի 1867, յետագայ զԱզգային իշխանս իրեն  
պալատը կանչեց:

Տիւղ Միհրան Պէյ. Թընկըռ Յովհաննէս  
Էֆէնտի. Մըսրլը Պօղոս Պէյ. Կէօչեան Յակոբ  
Էֆէնտի. Եաղլը քճեան Պեարոս Էֆէնտի. Ալիք-

սանեան Տիւղ Տիրան Պէյ. Կէօչէեան Յարու-  
րու թիւն Էֆէնտի. Չամիչ Յովհաննէս Էֆէնտի.  
Ալլահհէրուտի Յովհաննէս Էֆէնտի. Տավութ Յա-  
կոր Էֆէնտի. Սինապեան Գասպար Պէյ. Լնտա-  
ղեան Յովհաննէս Էֆէնտի.

**Բ.** Պաշտօնեայն ասոնց սկսաւ իր խօսքը  
զրուցել. որոյն համառօտ իմաստը այս էր: «Թէ  
«Հռովմ, և թէ Բ. Գուռն՝ ըսաւ, իրենց զործքը  
«ըրեր, լըմնցուցեր են: Միայն ժողովրդեան իրա-  
«ուունքը բռնաբարուած մնացեր է: Աւ ստոյգ որ՝  
«ժողովրդեան այս բռնաբարուած իրաւունքը  
«ձեռք բերելու համար, մեզի ի՞նչ որ պէտք է  
«ընել, զանիկայ անհրաժեշտ կը պարտաւորինք ի  
«զործ գնելու: Ըստ իս Հռովմային հետ պէտք է  
«մէկ Բօնօրօքալեօ մը, զաշնադրու թիւն մը ընել.  
«թէ որ այս բանիս համար Տերութեան կող-  
«մանէ մէկ Երևափոխան մը ի Հռովմ յուզար-  
«կելու հարկաւոր ըլլայ, պէտք է Տերութեան  
«անոր ծախքը հոգալ, և զանիկայ առաքել:  
«Թէ որ այս զործոյս համար ինձի ևս պէտք  
«ըլլայ հոն երթալ, երթամ պիտոր. որով այս-  
«չափ ժամանակ մեր հպատակ Ազգաց խռովու-  
«թեան պատճառը մէկ օնդամ արմատէն խլու ի»:

**Բ.** Պաշտօնէին այս խօսակցութիւնը Գիր.

Հասունին յականջը հասնելով սաստիկ խռովեցաւ: Ասան զի ինքն դաղանի գողունի Ազգապետական Իշխանութիւնը յափշտակելուն համար Ազգը Բ. Գրան գիմեց: Եւ այս յուզուած քաղաքական բռնաբարուած իրականց պատճառաւ, վերջապէս խնդիրը Հոռովմայի Իշխանութեան չափաւորութեան վրայ եկաւ, հասաւ որով ըստ իմիք Գեր. Հասունին արձակ ձեռքերն ալ բոլորովին պիտի կապուէր:

Արդ՝ այս Ազգային խռովութեանց լուրերը երբոր ի Հոռովմ հասաւ, Պաշտօնատեսարք Գեր. Հասունին վրայ սաստիկ բարկացան: Նախ՝ վասն զի Գեր. Հասունը երբոր այս ժամանակ ի Հոռովմ գնաց, Ախլիկիոյ Պատրիարքութեան տեղ. Ա. Պօլոյ Պատրիարքութիւնը ու ժղին խնդրեց, զորն որ Հոռովմ իրենն բոլորովին զլացաւ:

Երկրորդ՝ Հոռովմային Պաշտօնատեսարքները Գեր. Հասունին հարցմանը աջապէս պատասխան տուէր էին, թէ Գուն Ազգին Քաղաքական Իշխանութիւնը մի խնդրէր, հետամուտ մի ըլլար, ըստ կամաց Ազգին վարուէ:

Ապա երբոր Հոռովմ լըսեց և իմացաւ, որ Գեր. Հասունը առանց գիւտութեան և հաւա-

նութեան Ազգին գաղտնի ճանապարհաւ Կայսերական Պէռաթիւ Ազգապետական իշխանութիւնը ձեռք ձրգեր է, և այս պատճառաւ Ազգը Տերութեան բողոքած ըլլալուն համար, Տերութիւնն ալ պարտաւորեր է միջամուխ ըլլալ, և ներքին հոգևորական խնդրոց որոշողութեան լուծուելոյն հնարքը մտածել: Ասոնք կրտսմ, ամեն եղածները երբոր Հռովմ լըսեց, սաստիկ զայրացաւ, և խստիւ գրելով հրամայեց, որ ժամ մը յառաջ Ազգապետական իշխանութեանէն հրաժարի:

2. Եւ որովհետեւ Գեր. Հասունին կաթողիկոս ընտրուելոյն առաջին պատճառ, և գլխաւոր աշխատող թէ ի Վիբանան, և թէ ի Հռովմ եղաւ Ասորեստանի Ս. Պապին փոխանորդ Մ. Վալերկան. ուստի Հռովմ զանիկայ շուտով ի Կ. Պօլիս յուղարկեց:

Մ. Վալերկան ի <sup>5</sup>/<sub>17</sub> Փետրվարի, 1868, ի Մայրաքաղաքն հասնելով, պաշտօնական եղանակաւ Հռովմային պատուերները Գեր. Հասունին իմացուց. այսինքն առաջին՝ Հռովմայի Ատենին մեծապէս տհաճութիւնը առանց Ազգին գիտակցութեան ինքն իրեն Ազգապետական իշխանութիւնը ձեռք ձրգելոյն վըայ. երկրորդ՝

ժամ մը յառաջ Ազգին քաղաքական Իշխանութենէն հրաժարիլ :

Այսպիսի անակնունելի, ծանր և դժուարին պարագայից մէջ տես դուն Գեր. Հասունին բըռնած խորագէտ ընթացքը: Տերութեան առջին մէկ կերպ, Ազգին միւս կերպ, իսկ Հռովմայի առջին ալ ուրիշ կերպ երևեցաւ:

3. Արդ այս դառն ժամանակ Գեր Հասունը իր հաւատարիմ խորհրդակից թընկըռ Յովհաննէս Էֆէնտիին հետ խորհուրդի նստեցաւ: Եւ նախ առաջին օտար, հզօր Իշխանութեանց ապաւինեցաւ: Ապա Բ. Ֆուատ Բաշային զթութեանը բոլորովին յանձնուեցաւ: Աւստի Գեր. Հասունը ըստ հրամանի Նորին իսկ Բ. Ֆուատ Բաշային ի 3 Մարտի, յաւուր կիւրակէի տան և վեց Անձինք ազգիս երևելիներէն իրեն յեպիսկոպոսարանը հրաւիրեց. որոնց որ յառաջուց Բ. Ֆուատ Բաշայն առանձին առանձին ամենուն թուղթ ալ գրած էր: Այս ժողովոյն մէջ Գեր. Հասունը հրապարակաւ ծանոյց՝ թէ ինքն Ազգապետական Իշխանութենէն իրեն հրաժարականը Բ. Գրան տուած է:

Այս հրաժարականը, ինքն միայն բերնով կը զուրցէր, մինչդեռ իր ծոցէն ընդունած Ազ-

գապետական Պէռաթը մատմը չէր բաժնէր: Եւ ժողովականաց աւելի խելքերնին չը հասնելու բանը այս էր որ Բ. Ֆուատ Բաշայն թէ առանձին իշխանաց գրած թղթոյն մէջ, և թէ Գեր. Հասունին ի 12 փետրվարի վասն գումարման վերոյիշեալ ժողովոյն գրած թղթոյն մէջ ամենեւին Գեր. Հասունեանին հրաժարման վրայօք բառ մը չը յիշատակելով, սոսկ միայն Եպիսկոպոսաց ընտրութեան վրայ, և Ազգային դպրոցաց, Հիւանդանոց, և Ազգատանոցին վերայօք իրենց մէջ որօշած կարգադրու թիւննին Բ. Գրան ծանուցանելը կը հրամայէր:

Թէ որ Գեր. Հասունը՝ ինչպէս որ ինքն կը զուրցէր, ստոյգ Ազգապետական իշխանութեան հրաժարած ըլլսր, և Բ. Գուռն ալ ընդունած չըլլար, հարկ էր՝ որ նոյն պաշտօնական գրած թղթոց մէջ Բ. Ֆուատ Բաշայն անոր հրաժարման վրայօք ալ յիշատակութիւն մը պիտոր ընէր: Մանաւանդ որ ինքն քաջածանօթ էր Ազգին ուրիշ խնդիրներէն աւելի առ ժամն Ազգապետական իշխանութեան յափշտակուելոյն վրայ զայրայած և խռոված ըլլալը:

Ար մնայ հիմա մեզի տեսնել Մ. Ղալերկային ձեռօք Հռովմայի առջին Գեր. Հասունին բանե-

ցուցած հնարքները: Եւ որովհետեւ Գեր. Հասունը աղէկ ճանչցած էր Մ. Վալերկային ունեցած երեք տկար յատկութիւնները, որոնցմէ առաջինն և զլիսաւորը էր իր ինքնահասանութիւնը, որով կարճէր՝ թէ ինքն միայն ամեն բան զիտէ, և ամեն գաղտնեաց կը թափանցէ, և թէ ուրիշ մը կարող չէ զինքը խաբել: Երկրորդն էր՝ իր շահասիրութիւնը: Եւ երրորդը իր փառասիրութիւնը էր:

Ուստի Մ. Վալերկան ի Կ. Պօլիս կը հասնի, չը հասնիր Գեր. Հասունը անմիջապէս իրեն կը վազէ: Ինքն կելլէ Ազարեան Վարդապետը կը մտնէ, ասիկայ կը բաժանուի, միւս արբանեակ մը կուզայ: Անանկ որ քանի մը օր շարունակ Մ. Վալերկային քով մեր Ազգէն ուրիշ մարդ չէր տեսնուէր, Բայց եթէ Գեր. Հասուն, Ազարեան Վարդապետ և իրենց արբանեակները: Բաց ասկէց Գեր. Հասունը Քաղքիս մէջ բնակող ձիգվիթ քահանայները վաստրկած ըլլալով, անոնց միջնորդութեամբն ալ ուզածին սէս տրամադրել առաւ: Եւ այս այնչափ յայտնի է, որ այս օրերը Բերայի մէջ զարմանալի տեսարան մը կար, այսինքն Մ. Վալերկային քովն գեռ չգացած, յառաջագոյն ի Ասթողիկոտարան կեր-

Թային, անկէջ կարևոր հրահանգները ընդու-  
նելու համար: Այս ծիծաղելի երթևեկութիւնը  
ինչպիսի հասարակաց հետաքրքրութիւնը շար-  
ժելով, խօսակցութեանց և տրանջանաց պատ-  
ճառ կըլլար, ի վերայ այսր ամենայնի Վեր. Հա-  
սունեանին փոյթը չէր, բաւական էր որ Մ.  
Վալերկան նախապաշարուի և իրեն ղիտմանցը  
համաձայն տրամադրուի. և ինչպէս որ իրօք ալ  
յաջողեցաւ: Վասն զի այս օտարական իշխա-  
նաւորը տեղւոյն լեզւոյն, անձանց և սովորու-  
թեանց բոլորովին անճանօթ, այնպէս կը կար-  
ծէր՝ թէ այն առաջին օրերը իրեն երթևե-  
կողները իրենք իրենց ինքնաշարժ կուզան, և  
խօսածնին ու թելադրածնին իրենց մտաց  
և համոզմանց ծնունդք են. և ըստ այսմ ան-  
խոհեմութեամբ մը ի կողմն Վեր. Հասունին  
մոքին մէջ գահավէժ դատաստան մը կրնէր:  
Եւ ետքը թէ միւս կողման, և թէ անկողմնա-  
սէր անձանց յայտնած ճշմարտութեանցը կամ  
բնաւ ականջ չէր իտար, և կամ իր առջի լը-  
սածները իրր աւետարանական ճշմարտութիւն  
անոնց կը քարոզէր: Իսկ երբոր Վեր. Հասունին  
անպատեհ գործքերը առջևը կը դրուէր, ան-  
ճոռնի մեկնութիւններով զԱնիկայ պաշտպա-



նելու կաշխատէր. և երբոր խիստ յայտնի անկարգ գործողութեանց մեկնութիւն չը կրնալով տալ, իրաւունք ունիք՝ ըսած ժամանակն ալ, չըլլայ թէ ինքն առաջուց Գեր. Հասունէն խարուած սեպուի, տակաւին Անոր կողմը կը տաշէր: Վասն զի Գեր. Հասունը Մ. Վալերկային շահասիրութիւնը սնուցանելու ալ ծամբայ գտաւ. Օսմանեան Տերութեանէն առաջին կարգի պատուոյ նշան ընդունել տուաւ: Իսկ անոր փառասիրութիւնը զսնազան կոչունքներով ու հացկերոյթներով սնոյց: Եւ այսպէս Գեր. Հասունը այն վիճակին բերաւ հասցուց զՄ. Վալերկան, զորնոր վատութեամբ խոնարհեցոյց իր թելադրութեան ու դիտմանցը համաձայն ի Հռովմ յայտարարութիւն գրել տալու:

4. Գեր Հասունը ուրիշ խարէութիւն մը ալ Մ. Վալերկային կը ընեցոյց. որուն ձեռօք Հռովմային ալ ևս: Որովհետեւ Գեր. Հասունը, և իրենները կը ցանկային, որ իրենցմէ կաթողիկոսական Աթոռոյն քով երկու Նախկոպոս գրանուի, որպէս զի կիլիկիոյ Նախկոպոսաց և Գղեր ազգեցութիւնը բոլորովին դադարի. և իշխող կառավարութիւնը միայն իրենց ձեռքը մընայ, իսկ ուրիշները իրենց իբր ծառա-

յո՛ւ գեղի շրջան: Աւտի այս շարաբուհստ իրեն  
գիւտին արտաքին գեղեցիկ կերպարանք մը տա-  
լով: Մ. Վաթրկան ի Կ. Պօլիս շեկած Ազա-  
րեան Վարդապետին ձեռքը Ազգին Մեծամեծ-  
ներուն կառաջարկէ. իբր թէ Կ. Պօլսոյ ժողո-  
վրդեան ընտրութեամբը երկու Ասիականացուներ  
անմիջապէս Կաթողիկոսական Աթոռոյն քովը  
կարգուին: Անոնց խորհրդով և որոշողութեամբը  
Գեր. Հասունը գործէ, որպէս զի ժողովուրդը  
անօր բռնական կասալարութենէ ազատի և  
Կաթողիկոսի ընտրութեան միջնալ այն երկու  
Ասիականացուներն ստիպանու թեամբը ձայն ու-  
նենայ: Ասոնք ամենքն ալ Գ. Ազարեանին բա-  
ցատրութիւններն էին: Ազգին Մեծամեծ իշ-  
խանները աղէկ գիտնալով, որ այս առաջար-  
կութիւնը ուղիղ հողուով չէ, և իրենց գիտ-  
մունքը ու ներքին սրտածառը խիստ ասորեր է,  
բայց ի բաց մերժեցին:

Արդ՝ այս նոյն առաջարկութիւնը Գեր.  
Հասունը և իրեն կողմնակիցները Մ. Վաթր-  
կային կը թելադրեն, իբր մի միայն միջոց Կ. Պօլ-  
սոյ ժողովուրդը դո՛հ ընկու: Ազգովի Մ. Վա-  
թրկայն ալ ասանց առաջաց ստուգելու միամբ-  
ասօրէն, և կամ վստահութեամբ կը խաբուի և

անոնց այս թելադրութիւնը իբր Կ. Պոլսոյ Ժողովրդեան փափագ, և խաղաղութեան միակ միջոց Հռովմային կառաջարկէ: Եւ Հռովմ ալ իւր սովորական դժովը կը բարեհաճի: Մ. Վալերկան այս հաւանութիւնը Հռովմայէն ընդունելոյն պէս իսկոյն իրեն կը կանչէ Բ. Ալեքսանտեան Տիւղ Տիրան Պէյը, որոյն ուրախութեամբ մը իբր մը խիթարական լուր կը հաղորդէ: Այս ի՞նչ զարմանալի տեսարան Հասունեան որոզայթին: Գեր Հասունը զՄ. Վալերկայն կը խարէ, և ասիկայ ալ զՀռովմ:

Իսկ Բ. Տիրան Պէյը նոյն ասան ժպտելով Մ. Վալերկային պատասխան կուտայ ու կըսէ:  
«Քէ այդ առաջարկութիւնը չէ թէ Հռովմային  
«շնորհմունքն է, այլ Գեր. Հասունին և իրեն  
«արբանեկաց ծնունդն է, զորն որ կամխաւ Ազ-  
«գիս առաջարկած և անընդունելի եղած էր:  
«Եւ կը զարմանամ՝ զարձեալ կըսէր Տիրան Պէյը,  
«թէ ի՞նչպէս զՉեզ հաւասարեցերեն, և Գուր  
«ալ Գեր. Հասունին կամքը՝ իբր շնորհմունք Ս.  
«Պապին, մեզի կը յայանէք:

«Ազգին առաջին և գլխաւոր խնդիրը Ազ-  
«գայեաական Ռչխանութեան փայ է, որ հնուց  
«ի վեր իրեն միայն սեփհական նախրական

իրաւունքն է: Հիմայ Դուք կըսէք՝ թէ ահա  
Գեր- Հասունը ընդունած Ազգապետական իշ-  
խանութեան հրատարականք տուէր է: Ասի-  
կայ ինչպէս կըլլայ, քանի որ Կ. Պօլսոյ Պատ-  
րիարք տիտղոսիւ նոյն քաղաքական իշխանու-  
թեան գաղտնի, գողունի ընդունած Պէռաթը  
տակաւ իր ծոցը անփոփոխ կը պահէ, և նոյն  
իշխանութիւնը կը վարէ: Իսկ Ազգին երկրորդ  
խնդիրը, ըստ որում Գեր- Հասունը Կիլիկոյ  
Պատրիարքաց յաջորդեց- սոպա Առաջին Պետ-  
րոս Արրահամ Կաթողիկոսին Բենէտիկոս Ժ. Գ.  
Ս. Պապին տուած կոնդակին կատարեալ գոր-  
ծադրութիւնը կը խնդրէ: Այլ ի վերայ այսր  
ամենայնի ևս առանձին, մասնաւոր անձ մի եմ,  
և Ազգիս կողմանէ Նրեփոխականութիւն ալ չու-  
նիմ այսօր այս խնդրոյս վրայօք պատասխա-  
նելու:

Վերջապէս այս Մանճաղամիտն Մ Վալեր-  
կայն չկրնալով Մայրաքաղաքիս Հայազգի Կա-  
թօլիկաց յուզված վիճին և խնդրոց լուծում  
մը տալ, և Հոսովնայէն իրեն հրաման գալոյն  
պատճառաւ ելաւ իր թեմը յերուսաղեմ գնաց:

5. Արդ՝ ինչպէս որ յայտնապէս տեսանք,  
այս Ժամանակ Ազգային գործողութիւնները


բողբոյվին տարաամ, և անորոշ վիճակի մէջ մնացեր էին, և Ազգին ընդհանուր տժգոհութիւնը, և խռովութիւնը ի վերջին ծայրը հասած ըլլալով, ահա՛ Գեր. Հասունը ի 18 Օգոստոսի, Վերափոխման Սուրբ Աստուածածնի օրը, ամեն Եկեղեցեաց մէջ մէյ մէկ Կոնդակ կարգացնել տուաւ, որոյն օրինակը այսպէս էր:

ՊԱստուածախնամ անքնին Տեսչութեան Տնօրէնութեամբը ժամանակէ մը ի վեր մեր յտկարութեան ուսոց վերայ ուղղափառ Ազգիս յրազմազրազ գործոց ծանրութիւնը ամփոփուելով, երբ հոս Պատրիարքական Աթոռս յկը գտնուինք թէ ներքին, և թէ արտաքին յգործքերը կարգի դնելու զբաղած, և փառք յինամոյն Աստուծոյ. որ բարեսիրացդ գործակցութեամբը Աստուածապահ վիճակիս կարևոր յգործքերը քիչ շատ բարեկարգեցան: Հիմակ յուրիշ նոր, բայց արդէն քաջածանօթ հարկ մը զմեզ կը ստիպէ հասարակաց հայրութեան յսիրոյն խնամքը տարածել, ինչպէս որ ցարդ յմերձաւորացդ, նոյնպէս հեռաւորաց ալ վերայ և այլն . . . . . :

Այս Կոնդակները երբոր Եկեղեցեաց մէջ կը կարդացուէր, ժողովուրդն ալ զուհզազունք

դուրս ելլալով մեկվմեկու կը զուրցէին՝ թէ այս  
մարդը Աստուծոյ Եկեղեցւոյն մէջն ալ այսչափ  
յայտնի սուտ զուրցելու կը յանդգնի և այլն. . . :

**Այլ** աւանդ և եղնուկ այն ողորմելի ժո-  
ղովուրդոց, որոնց խաղաղութիւնը ի խռովու-  
թեան փոխելու համար ի 22 Օգոստոսի 1868  
մտեալ ի շոգենաւ ճանապարհորդեաց զէպի  
յԱզեքսանզրիա Եզիպտոսի, և ուսկից պիտի  
անցնի երթայ ի Ղիբանան, ի նախկին Կաթո-  
ղիկոսական յաթոռ \* :



---

\* Այս 39 երորրդ թիւը Յիսուսեանց Չիլիթա  
Քաթօլիքա տեսրակին մէջ (տես յառաջին թիւը)  
բոլոր զիղած ստութիւնները կը խայտառակէ, և ամեն  
պատմաձնները բոլորովին չինձու և անհիմն ըլլալը  
կը ցուցնէ :

— 515 —

## 40.

### ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Եւ արդ ինչպէս որ յառաջին թիւը, յառաջարանութեան մէջ խոստացեր էինք, ահա՛ գեր. Հասունին Քահանայութենէն սկսելով մինչև իրեն կաթողիկոսութեան ժամանակ երեսուն և հինգ ամեայ վարած խռովայից Քաղաքականութիւնը պատմեցինք. որ այսչափ ժամանակ կ. Պօլսոյ և շրջակայ գաւառաց Հռովմէական Հայերը ո՞րչափ տառապեցան, և անհնարին թշուառութիւնս կրեցին. զորոնք զլիաւորաբար տասն երեւելի տեսարաններուն մէջ յայտնապէս տեսանք:

Առաջին Տեսարան. երբոր գեր. Հասունին ոտքերը ի կ. Պօլիս կոխեցին, մարած կայծերը նորէն բռնկեցընելով Ազգին մէջ անհնարին շուփոթ, աղմուկ, երկպառակութիւն, և քսութիւն ցանկել սկսաւ:

Երկրորդ Տեսարան. գեր. Հասունին Աթոռակալութիւնը. որոյն մէջ տեսանք, առաջին նախագահին օրը անոր ի գործ դրած հնարք-

ները, միջոցները, և բազում նեղութեամբ Գեր-  
Նուրիճանին կենդանւոյն ի գերեզման իջնալը:  
Եւ Գեր. Մարուշին ժամանակ կերպ, կերպ  
հնարքները, և զԳաղատիայ խռովելը, և գաղտնի  
օգնիչ Եպիսկոպոսութեան հասնելոյն ի դործ  
վարած միջոցները:

**Երրորդ Տեսարան.** Գեր. Հասունին օգնիչ  
Եպիսկոպոսութիւնը, զորն որ առանց զխակ-  
ցութեան Ազգին գաղտնի, զողունի ձեռք ձը-  
գելով, և ի Հռովմայ իր ամեն ուզած հրա-  
հանգները ընդունելով ի Կ. Պօլիս դարձը. և Ազ-  
գապետական իշխանութեան հետամուտ ըլլալը:

**Չորրորդ Տեսարան.** Գեր. Հասունին. Ազ-  
գապետ Պատրիարքութիւնը: Այս իշխանու-  
թեանը մէջ Ազգային ամէն օրէնք և կանո-  
նադրութիւնները փճացընելը, իրեն ինքնիշխան  
Տեսրոթական կառավարութիւնը:

**Հինգերորդ Տեսարան.** Գեր. Հասունին Նա-  
խագահութիւնը: Այս ժամանակ իբր Նախա-  
գահ, և Ազգապետ քաղաքական Պատրիարք  
ինքնիշխան տիրելը: Համազգեաց ընկերութեան  
պատճառաւ զԱզգը անհնարին խռովելը: Երկո-  
տասանից Ազգային ժողովոյն հաստատութեան  
հակառակիլը, զԱզգը երկու քի բաժնիլը, երկ-



պառակութիւնները սաստկացուցանելը, և որպէս զի ինքն անոր հաստատութեանը հաւանութիւն չըտայ, քաղաքական Պատրիարքութեանէն ինքնակամ հրաժարիլը:

Վեցերորդ Տեսարան. Գեր. Հասունին երրորդ անգամ ի Հռովմ՝ երթալը. զՍէլվեանը Ազգապետ ընտրել տալը. անոր ձեռօք Աղքատանոցին Խշխանաց վրէժը առնուլը. շինծութիւթերով ի Հռովմ՝ ներկայանալը: Եւ վասն հոգևորական Սեբեոս Աղգին, և վասն Վրէժինդրոս Սեբեոս Աղգոյն Միտրանոս Սեբեոս ինքնակամ մերկանալը և հրաժարիլը յամենայն Նախագահական Աթոռոյն յիշխանութեանց և յիրաւանց \* : Նա

---

\* Գեր. Հասունը յամին 1849 (տես ի թիւն 20) յատենի Հռովմայ իր ստորագրութեամբը առաջարկած գրուածին մէջ սա յետագայ նշանաւոր խօսքը գրուցեր էր, այսինքն—, «Թեմական Եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը՝ ըսաւ, ինչչափ իմ նախագահական իշխանութեանս սեփական իրաւունքն է ալ, ի վերայ այսր ամենայնի իմ կամօքս, և իմ բոլորովին հաճութեամբս այս իրաւունքէս կը հրաժարիմ, ի նշան Սուրբ Աթոռոյն օրչափ յարուած ըլլալուս, և Հռովմէական Սուրբ Եկեղեցոյն ուղղափառ վարդապետութեան ջատագով կենալոյս և այլն . . . —»:

խաղաճական խեղճ իրմեն բոլորովին ազատ և անկախ ի վեց թեմական յԱպիսկոպոսունս բաժնելը. գաղանի գիշերային Ապիսկոպոսները օծելը, մեծամեծ խռովութեանց և գայթակղութեան Ազգաց պատճառ ըլլալը. Տերութիւնները, և իշխանութիւնները մեկզմեկ անցընելը:

**Եօթներորդ Տեսարան.** Մխիթարեան չարամատեանը. Աստուծոյ ժողովրդեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ կրած անհնարին տառապանքը և թշուառութիւնները: Մ. Իլէրօ լատին Արքեպիսկոպոսին հետ թշնամանալը. այս պատճառաւ չորրորդ անգամ ի Հռովմ կրթալը, և առջինէն աւելի իրեն խորխտ դարձը. չարամատենին պատճառաւ Ազգապետ Պատրիարքաց փոփոխումը. գիշեր ցորեկ Ազգային ժողովքներուն գումարուիլը, և ետեէ ետե աղերսագիրներուն գրուիլը, և ահա շփոթ մեծ և խռովութիւն անհնարին:

**Ութերորդ Տեսարան.** Գեր. Հասունը իր Հոգևոր իշխանութեանը համար Տերութենէն ընդունած Պէռաթը: Ազգին քաղաքական իշխանութեան փճանալուն ջանալը. և միշտ Ազգապետին ընտրութեան հակառակիլը:

**Իններորդ Տեսարան.** Գեր. Հասունին ի Նի-

լիկիա Պատրիարքական Թեմը արշաւելը. հոն  
անհնարին խռովութիւններ սերմանելը:

Տանկերորդ տխուր, ողբալի, և եղերեր-  
զութեան ճեսարան. Գեր. Հասունին Կաթո-  
ղիկոսական ընտրութիւնը. Նախագահական  
Աթոռոյն յար և նման. այժմ Պատրիարքական  
Աթոռն ալ ամենայն իրտանոց և յտանհնաշնորհու-  
թեանոց բոլորովին մերկացրնելը. ի Կ. Պոլիս իրեն  
դարձը: Առանց զիտակցութեան Ազգին գաղանի,  
գողունի Ազգապետական Պատրիարքութեան Պէ-  
ռաթը ձեռք ձրգելը: Եւ այսպէս ողորմելի Ազ-  
գիս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ վերջին մա-  
հացու հարուածը տալով կենդանւոյն ի գե-  
րեզման իջուցանելը, և յախտենական Թշուա-  
ռութեան և տառապանաց մէջ զանիկայ զլոր-  
ցրնելով, վէժ մի մեծ ի վերայ ողորմելի Ազգիս  
կը Թաւալեցուցանէ, որպէս զի չորացեալ ոսկրո-  
տիքն անգամ ևս անշարժ կացցէ մնացէ:

Ահա քեզի Հասունեան Քաղաքականու-  
թեան տանն երեւիլի ճեսարանները, լեցուած  
Հայազգի Կաթողիկոս տառապանօք, Թշուառու-  
թեամբք ողբովք, արտասուօք, և անհնարին  
շիտթութեամբք: Խաղաղութեան պաշտօնեայն  
երեսուն և հինք տարուան մէջ չկրցաւ մէկ

տարի մը գոնէ հանդարտութեամբ և առանց կրոււոյ իր իշխանութիւնը վարել, մէկ խօսքով՝ Գեր. Հասունին իշխանութիւնը չէ թէ միայն Հայազգի կաթողիկոսաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ յառաջադիմութեան արգելիչ եղաւ, այլ աւելի ցաւալին այն է՝ որ ընդհանուր Ազգիս յետախաղացութեան մեծապէս պատճառ ըլլալոյն ամեն իմաստուն և քաղաքագէտ անձինք կը վկայէն:

Բայց ես հոս տեղս Հասունեան քաղաքականութեան վերջ տալ ուզելով, երկու խօսք ալ բոլոր գաւառական Արքեպիսկոպոսաց, և Եպիսկոպոսաց Ազգիս կը պարտաւորիմ զըուցելու:

Դուք ո՞ր Աստուածարեալ Հայրապետք. Դուք որ գ. Գեր. Հասունը ընտրեցիք — «Յոջորդ իրաւանց և առանչնորհուլեանց Ուլեբրորդ Պետրոսի Գրեգորի Կաթողիկոսի և Պատրիարքի Տանն Կիլիկիոյ» —: Եւ դուք դարձեալ (այն անգիտութեամբ ըրիք) Բ. Դրան Ձեր թագրիրը ներկայացուցիք, և մեծաւ անիրաւութեամբ Ազգիս միայն յատկացեալ և իրեն սեփհական Ազգապետական իրաւունքը յափշտակեցիք, որով այսչափ խռովութեանց և մեղաց պատճառ եղէք: Ապա ըստ խղճմտանաց Ձեր վրայ անհրաժեշտ պարք մը կայ.

և Չեզի միայն կը մնայ այս յաւիտենական նախատինքը և անարգանքը՝ որուն մէջ Գեր. Հասունը իր խորագիտութեամբը զՉեզ զլորեց, Չերանուան վրայէն սրբելու պիտի ջանանք. թէ որ հաւատք ունիք, օրէնքը գիտէք, իրաւունքը կը հասկընաք, և ճշմարիտ կրօնքը կը ճանչնանք: Ապա թէ ոչ երգմնազանց կը սեպուիք, ինչու որ Գուք զատ, զատ երգում ըրիք Պատրիարքական Աթոռոյն ամեն իրաւանց ամբողջութեանը վրայ, ուստի թէ ննջեցեալները, և թէ կենդանիները Չեզի դէմ կը բողոքեն:

Եւ ահա՛ Պիոս իններորդին հրամանովը քիչ ժամանակէն յազգային ժողով պիտի գումարուիք: Երկիւղը, վախը, և մարդկային ակնածութիւնը մէկ դի ձըգեցէք: Գուք Աստուծոյ զօրութիւնը և իմաստութիւնը Չեր օգնութեան կանչելով, երբոր Ազգը ի մի սիրտ և ի մի հոգի ի բաց թաւալեցուցանէ զվեմն զայն մեծ, զգլորեալն ի Գեր. Հասունէն, անատեն Գուք Աստուածային շունչ մը փրչելով չորացեալ և ցրուեալ Ազգիս ոսկերացը վերայ, որով իրարու հետ կըպելով, ջղովք զօրանան, և մարմին զգենուն, յար և նման առաջին հոգեւոր պայծառութեան և կատարելութեան մէջ

մտնան, ինչպէս մեր Նախնեաց Արքայ Հարց ժամանակը, որով ամենքնիս մեկ տեղ խաղաղութեան և ճշմարտութեան Տէրը յաւիտեան օրհնենք:

---

ՀԱՅԱԶԳԻ ԿԱԹՈՒԻԿԱՅ ԸՆՏՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍՔ, ԵՒ ՊԱՏՐԻԱՐԻՔ ԿԻԼԻԿԻՈՅ:

Արրահամ Առաջին Պետրոս. ընտրեալ ի 14 Նոյեմբերի . . . . .	1740
Յակոբ Երկրորդ Պետրոս. ընտրեալ ի 2 Հոկտեմբերի . . . . .	1749
Միքայել Երրորդ Պետրոս ընտրեալ ի 11 Յունիսի . . . . .	1753
Բարսեղ Չորրորդ Պետրոս. ընտրեալ ի 19 Նոյեմբերի <sup>1</sup> . . . . .	1780
Գրիգոր Հինգերորդ Պետրոս. ընտրեալ ի 19 Ապրիլի . . . . .	1788
Գրիգոր Վեցերորդ Պետրոս. ընտրեալ ի 17 Յունիսի . . . . .	1812
Յակոբ Եօթներորդ Պետրոս. ընտրեալ ի 8 Յունիսի . . . . .	1841
Գրիգոր Ութերորդ Պետրոս. ընտրեալ ի 25 Յունիսի . . . . .	1843

**Հատուն Անտոն Իններորդ Պետրոս ընտ-**  
**րեալ ի 2 Սեպտեմբերի . . . . . 1866**

---

ՀԱՅԱԶԳԻ ԿԱԹՈՒԼԻԿԱՅ Կ. ՊՕԼՍՈՅ ԲԱԺՆԻՆ  
ՎՐԱՅ ԶԵՌՆԱԴՐՈՒԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՅԱՆԿԸ:

**Առաջին. Սէրասեան Աթանաս**  
**Վարդապետ . . . . . Յամին 1758**

**Երկրորդ. Մըսրէան Անտոն Վար-**  
**դապետ . . . . . » 1779**

**Երրորդ. Սօֆեալեան Սահակ**  
**Վարդապետ . . . . . » 1784**

**Չորրորդ. Դարձեալ Մսրէան Ան-**  
**տոն Վարդապետ . . . . . » 1806**

**Հինգերրորդ. Փափազեան Գևորգ**  
**Վարդապետ (տե՛ս ի թիւն 4) . . . . . » 1827**

---

ՀԱՅԱԶԳԻ ԿԱԹՈՒԼԻԿԱՅ Կ. ՊՕԼՍՈՅ ՆԱԽԱԳԱ-  
ՀԻՑ ՅԱՆԿԸ:

**Առաջին Նախագահ ի 15 Փետրվարի 1830**  
**Նուրիճանեան Անտոն Վարդապետ — Տէս ի**  
**թիւն 6:**

Երկրորդ Նախագահ ի 2 Փետրվարի 1838.  
Մարուշեան Պօղոս վարդապետ Տես ի թիւն 9:

Երրորդ Նախագահ ի 6 Օգոստոսի 1848.  
Տես ի թիւն 12:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՒԼԻԿԱՅ ԱԶԳԱՊԵՏ ՔԱՂԱՔԱ-  
ԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔԱՅ ՅԱՆԿՐ.

Առաջին Ազգապետ ընտրեալ 1830 ի 22  
Գեկեաճերերի. Զուքուրեան Յակոբոս վարդապետ:  
վախճանեալ ի 17 Ապրիլի 1834. տես ի թիւն 7:

Երկրորդ Ազգապետ Պատրիարք ընտրեալ  
յամի 1834. Զուխաճեան Յարութիւն վար-  
դապետ: վախճանեալ ի 17 Ապրիլի 1835. տես  
ի թիւն 8:

Երրորդ Ազգապետ Պատրիարք ընտրեալ ի Մա-  
յիսի 1835. Էնքսէրճեան Լ. Գրիգոր վարդա-  
պետ ի Մխիթարեան Ուխտէ վենեայու. հրա-  
ժարեալ ի 15 Յունվարի, 1836. տես ի թիւն 8:

Չորրորդ Ազգապետ Պատրիարք ընտրեալ ի  
21 Յունվարի 1836. Եսայեան Լ. Կարապետ վար-  
դապետ ի Մխիթարեան Ուխտէ վենեակոյ. հրա-  
ժարեալ յամին 1845. տես ի թիւն 8:

Հինգերորդ Ազգապետ Պատրիարք ընտրեալ



յամին 1845. Հասունեան Անտոն վարդապետ-  
հրատարեալ ի Նոյեմբերի 1848. տես ի թի-  
ւին 11:

Վեցերորդ Ազգապետ Պատրիարք ընտրեալ  
ի 26 Նոյեմբերի 1848. Սէլլիւան Յովհաննէս  
վարդապետ. հրատարեալ ի 4 Սեպտեմբերի  
1852 տես ի թիւն 17:

Եօթներորդ Ազգապետ Պատրիարք, ընտ-  
րեալ ի 12 Նոյեմբերի 1852 Կահանեան Հ. Նի-  
կողայոս վարդապետ Յանտոնեան Ուխտէ. հրա-  
տարեալ ի Դեկտեմբերի 1860. տես ի թիւն 28:

---

ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՄԲ ԸՆՏՐԵԱԼՔ. ԵՒ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԱԻ ՀԱՄՏԱՏԵԱԼՔ  
ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎՈՅՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԵՐԵՍ-  
ՓՈՒԱՆԻՅ ՏԱՆԿԸ:

Առաջին ընտրեալ Երեւոյնումքն. 1849,  
ի Սեպտեմբերի. տես ի թիւն 19:

1. Տիւղ Միհրան Պէյ: 2. Ալասհվերաի Աբ-  
րահամ Ամիրայ: 3. Թընկա Յովհաննէս Եփէնաի:  
4. Գըլըր Վիջէն Աղա: 5. Կէօչէկան Յարու-  
թիւն Եփէնաի: 6. Քույումճեան Յովհաննէս  
Աղա: 7. Սինապեան Յրան Աղա: (Աղա Պէյ):  
8. Սինապեան Գասպար Պէյ: 9. Տէօլլէթ Յէյ-

րատ Աղա: 10. Հասունեան Մուսա Չէլէպի:  
11. Կէօչէեան Թովմա Աղա: 12. Մանիէլեան  
Յարութիւն Աղա:

---

Երկրորդ անգամ ընտրեալ վեցեքին Երես-  
փոխանքն, 1855 ի 2 Մարտի. տես ի թիւն 33:

Աստիճակ.

1. Կէօչէեան Յարութիւն Էֆէնտի: 2. Սի-  
նապեան Աղա Պէյ: 3. Սինապեան Գասպար Պէյ:  
4. Հասունեան Մուսա Չէլէպի: 5. Տէօլվէթ  
Ֆէյրատ Աղա: 6. Կէօչէեան Թովմա Աղա:

Նորէն ընտրութեանը.

7. Ալիքսանեան Տիւղ Տիրան Պէյ: 8. Պէտան  
Պէյ: 9. Տամաթ Յովհաննէս Աղա: 10. Պիլէ-  
զիքճի Յովհաննէս Աղա: 11. Թնկո Բուզիկ Աղա:  
12. Թօփուզ Պետրոս Աղա:

---

Երրորդ անգամ ընտրեալ վեցեքին Երեսփո-  
խանքն. 1857 ի 13 Ապրիլի. տես ի թիւն 33:

Աստիճակ.

1. Ալիքսանեան Տիւղ Տիրան Պէյ: 2. Պէ-  
տան Պէյ: 3. Տամաթ Յովհաննէս Աղա: 4. Պիլէ-

գիկճի Յովհաննէս Աղա 5. Թնկա. Բու. զիկ Աղա:  
6. Թօփուզ Պեարոս Աղա:

Նորէն ընտրածնէրը:

7. Կէօչէեան Յովսեփ Էֆէնտի: 8. Չամիչ Յով-  
հաննէս Էֆէնտի: 9. Սինապեան Աղա Պէյ: 10  
Տամաթ Մկրտիչ Աղա: 11. Շէրպէթեան Քէ-  
րովբէ Աղա: 12. Տէօլվէթ Ֆէյրատ Աղա:

Չորորդ անգամ ընտրեալ վեցեքին երեսփո-  
խանքն. 1858 ի 25 Մարտի. տես ի թիւն 33:

Աստժի՞նքն.

1. Չամիչ Յովհաննէս Էֆէնտի: 2. Սինա-  
պեան Աղա Պէյ: 3. Տամաթ Մկրտիչ Աղա: 4.  
Շէրպէթեան Քերովբէ Աղա:

Նորէն ընտրածնէրը.

5. Կէօչէեան Պօղոս Էֆէնտի: 6. Երամեան Ան-  
տոն Աղա: 7. Սամանճեան Մկրտիչ Աղա: 8.  
Կիւզէլ Յարութիւն Աղա: 9. Ապտուլահ Մի-  
քայէլ Էֆէնտի: 10. Գըլճը Սիմոն Աղա: 11. Թո-  
բոսեան Աստուածատուր Աղա: 12. Մազլումեան  
Անտոն Աղա:

1861-ին վերջերը Ասոնք ամենքն ալ յը-  
րուեցան:

Ազգային քուէարկութեամբ ընտրեալ, և

Կայտերական Տրովարտակով Հաստատեալ առ  
ժամանակեայ Տասն Երեսփոխանքն. 1863 ի 16  
Սեպտեմբերի, տես ի թիւն 36:

1. Պէտան Պէյ: 2. Կէօ, Էեան Յակօր ԷՖէնտի:  
3. Չամիչ Յովհաննէս ԷՖէնտի: 4. Քասպար  
Պէյ: 5. Տավութ Յակօր ԷՖէնտի: 6. Մըսրէան  
Անտոն Պէյ: 7. Սազրզ Յովհաննէս ԷՖէնտի:  
8. Կիւզէլ Պետրոս ԷՖէնտի: 9. Թնկո Բուզիկ  
ԷՖէնտի: 10. Շէրպէթեան Քերովէ ԷՖէնտի:

---

ԿԻՒԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ, Ժ.Բ.  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ:

Յաղեքսանդրիա եգիպտոսի, յերուսաղեմ,  
Յանտիոք, ի Բերիա, ի Մամպուտ, ի Տիգրա-  
նակերտ, ի Մէլիտինէ Կապաթովկոյ, ի Սե-  
րաստիա, յԵւզոկիա, ի Կեսարիա, ի Ղերմանիկ,  
Յատանա:

---



Կ. ՊՕՒՍՈՅ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԹԵՄԱ-  
ԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՎԻՃԱԿՆԵՐԸ:

Ի Պուրսա, ի Գաղատիա, ի Դրասպիլօն, ի  
Կարին, Յարզուլն, ի Խարղըքերզ:

Երեւ	Տող	Սկիզբ	Ուղիղ
12	6	Հովմէական	Հովմէական
17	24	զԱզգային	Ազգային
28	19	որ կը փառաւորուի	կը փառաւորուի
35	1	Ենքսէրճեան	Էնքսէրճեան
39	2	Վերապէս	Վերջապէս
39	20	ի սուք	ի սուգ
47	10	կը պօռայ	կը պոռայ
49	10	խօսամունքներ	խոսամունքներ
55	1	Արխողոմէն	Արխողոմին
59	17	Գեր.	Գեր.
„	18	Շիշմանեան	զՇիշմանետն
„	„	Աստարճեան	զԱստարճեան
62	16	համառօտեալ	համառոտեալ
85	4	մօտենալ	մօտենալ
95	6	կայսեր	կայսեր
99	18	կայսեր	կայսեր
102	5	ան ժամանակ	ան ժամանակ
107	24	Մութվէլի	Մութէվէլի
122	24	ղատտերնին	ղատերնին
128	7	որմերը	որմները
„	17	ինչպէս	ինչպէս
151	1	կրճի մը	կրճի մը
179	20	և անպատիւ ըլ- լալէն	և անպատիւ ըրած ըլլալէն
185	24	71010	71011
190	17	վախճան	վախճան
197	6	թուղթս ու մէկ	թղթոյս մէկ

Նշան	Տող	Սկիզբ	Բառեր
198	11	տեղեկացացներս	տեղեկացածներս
209	6	Հանաչէր	ճանաչէր
213	7	ղրպարտութիւններէն	ղրպարտութիւններ են
216	7	սայ	սա
221	20	գումարին	գումարն
227	16	Հեր	Ձեր
233	14	գրուեալ	գրուեցալ
238	4	կէսին	կըսն
241	23	նորէն	նորերէն
253	9	ձրգելով	ձը ձրգելով
273	16	ընդ	ըստ
290	13	բէյնէ	բէյինէ
..	21	վախէթ	վառխէթ
296	9	պապէթ	պատէլ
318	14	Սատրամաղ	Սատրաղամ
324	18	Ի 19	Ի 29
325	23	ճանցաւորներուն	ճանցաւորներուն
330	9	այս ես	այլ ես
331	15	անթիւր	անթիւ
332	21	բողոքը	բողոքողը
341	10	Առաքելական	Առաքելան
352	8	խժոխային	զժոխային
376	3	1845	1848
384	6	տպագրութեամբ	տպագրութեամբ
389	17	Ս. Կարապետ	Ա. Կարապետ
392	14	ինչու	ինչու

Երեւ	Տող	Աբալ	Ուղիղ
394	19	սյու	սյա
402	13	յետևեցան	հետևեցան
423	6	և	վէ
425	14	հուսահատած	յոյսահատած
432	22	կառավարութիւնը	կառավարութիւնը
437	14	երկրորդ	երրորդ
445	20	համբոյր	համբոյր
452	2	ղեր	թեր
464	4	հանգաւ	հանգեաւ
466	9	չէն	չէին
469	24	բողոքեցին	բողոքեցին
472	2	հազարը	մահազարը
474	15	Եւ	Ես
475	1	հարկաւոր	հարկաւ
476	11	հոգւոյ	հոգւոց
477	19	ընտրելոյն	ընտրուելոյն
478	1	ժողովոյ	ժողովոյն
478	12	իրաւունքը	իրաւունքները
"	"	ԸԱՎԸՍ	ԸԱՎԸ
479	1	Յալութ	Տալութ
483	22	վերջացնելով	վերջացնելով
490	11	եկամուաներով	եկամուաներով
493	17	իրաւունքնին	իրաւունքնիս
"	20	իրենց	իրենք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 БИБЛИОТЕКА

